1537
220
569-գ
ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Государственная Библиотека
7/XI 1922
783-ա
№18

ՅԱՆԿ

ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

Տրօհեալ յերիս մասունս.

Ցորս պարունակին նախ համառօտութիւնք հարկաւոր գիտելեաց հնոյ կտակարանի: Ապա վասն գալստեան և տնօրինութեանն փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի: Եւս և վասն Ընօրհական օրինաց. և սահմանի հաւատոյ ընդ հանրական սրբոյ Եկեղեցւոյն Քրիստի:

Ի Հայրապետութեան Սրբոյ Էջմիածնի Տ՚ Եփրեմայ՝ Սրբազանականտար Կաթուղիկոսի ամենայն Հայոց:

Ի յառաջնորդութեան Ռուսաստանու Տ՚ Յօհաննու Արհի Էպիսկոպոսի և Կաճառերէ:

Հրատարակեալ ՚ի հին և ՚ի նոր տպագրութենէ հակիրճ և պարզ ոճիւ աշխատութեամբ Գէորգեան Մրբազան Ջահկեցոյ Խօճենց Երիտասարդացոյ:

****

Տպեալ ՚ի Բարձրագոյն Հրամանաւ Հաստատեալ Տպարանի Ց. Յօհաննիսեան Ն. ամարհաճագի:

Ց-ի Տեառն 1819:

՚Ի ՍԱՆԿՏՊԵՏԲՈՒՐԳ:

22

Եւ սոյն բանք հոգեշահք՝ առեալ 'ի յումեմնէ վերոյ յիշեալ մեծահամբաւ գիտանական յառնէ բանի Տն սպասաւորէ 'ի Աճաշունչ կտակարանաց հնոց և նորոց՝ տեսանելով մեր արդ՝ վայելուչ ազգի և սրբոյ Եկեղեցւոյ՝ վ̅ս̅ մերովս իսկական ձեռամբ և կնքով ստորագրեցաք 'ի հաւանական վկայութիւն ։

Յովհաննէս Արք Եպիսկոպոս
Հայոցս Բուսաստանու ։

1814. Սեպտ. 8։
'Ի Ս. Պետրբուրգ ։

Համառօտ զեկուցմունք առ բարեմիտ ընթերցօղս:

Վարդապետն Եկեղեցւոյ սրբազան Առաքեալն Պօղօս՝ գրէ առ Եբրայեցիս։ Բազում մասամբք և բազում օրինակօք խօսեցաւ Ած ընդ հարս մեր մարգարէիւք։ 'Ի վախճան աճուրցս այսոցիկ խօսեցաւ ընդ մեզ որդւովն։ Խօսեցաւ մարգարէիւք ԸՆ հարս մեր. այսինքն. ընդ հնոյ ամբոխին. զի հաճատալով խոստմանցն Այ՝ մարթասցին վերծանել զնախապատրաստութիւն խորհրդոց մարմնառուեն բանի իւրոյ յաճիտենականի, և տնօրէնուեն նորին։ Եբր. գլ. 1. 1. և 2։

Իսկ 'ի վախճանի խօսեցաւ ընդ մեզ որդւովն, զի ժամանելով հաճատովք 'ի փրկութիւն՝ գտանիցեմք զճանապարհ կենացն յաճիտենականի։ Վասն այնորիկ (ասէ նոյն սրբազանն) պարտ է մեզ առաճել ևս ունկնդիր լինիլ (այնց) բանիցն ասացելոց՝ զի մի երբէք նուազիցուք ('ի ճշմարտութիւն։) Եբր. գլ. 2. 1։

Եւ զի համայն ասուիքն այնոքիկ բովանդակեալ գտանին 'ի հին՝ և 'ի նոր կտակարանս. պատկան համարեցայ համառօտ իմն գրութիւն արտահանել 'ի նոցունց զհարկաճոր գիտելիս օրինացն Այ՝ և նկարագրել 'ի սոյն Ցանկ Կտակարանաց անոճանեալ գլրք-

կան, տրոհելով յերիս մասունս։ Նախ վասն բանից հնոյ կտակարանի, որ իսկզբանէ ծի մինչև 'ի վեց դարս գրեցան յաղագս հնոյ Ամբոխին Ա՛յ։ Երկրորդ՝ վասն 'ի սկզբան եօթներորդի դարուն՝ յորում բանն Ած Մարմին էառ. և ամենասուրբ տնօրէնուր իւրով փրկեալ զազգս մարդկան, կոչեաց նոր կտակարանաւն զհրէայս և զհեթանոսս 'ի լոյս հաւատն սրբոյ Աւետարանի ճշմարտութեան. և արար զամենեսին նոր ի՛էլ. և նոր Ամբոխ Ա՛յ։ Երորդ՝ վ՛ս արդեանց նորոյս Ընորհական օրինաց. և սահմանի հաւատոյ ընդհանրական սրբոյ եկեղեցւոյն Քս՛ի. որք են ճշմարիտ հաւատացեալք իւր։

Բայց սոյն գրքուկ՝ ո՛չ վասն այլ ինչ իմիք աշխատեալ եղև 'ի համբակ գրչէ իմմէ՝ եթէ ոչ՝ վասն կրթութեան նորավարժ մանկանց մերաղնէից, այսու դիտմամբ. որ զկնի ուսանելոյ նոցա ուղիղ ընթերցումն շարադասեալ բառից. այսինք գրեանց. Յարգի վարժաապետք նոցին՝ եթէ արժան վարկիցեն, նոյն ժամայն բարեհաճեալ տայցեն զսա յընթերցումն այնց մանկանց։ Եւ ո՛րքան կարելին է աշխատիցին, զի սրամիտքն 'ի նոցունց բարւոք 'ի միտ առնուցուն. զի հաստատ տպաւորեալ յիշողկանութեան իւրեանց. յետոյ սակաւ առ սակաւ յառաջանալ նոցա և յիմացուածս բանից, դիւրաւ կարիցեն վերծանել զմիտս Ածաշունչ գրեանց. նաև ա՛մ հարկաւոր գիտելեաց սրբոյ հաւատոյս Քրիստոնէականի։ որ յոյժ առաւել քան զամենեսին, այս է կարի հարկաւոր ամենեցուն։

Իսկ և սրբակրօն քահանայք մեր, (որք ըստ մարգարէին մաղաքեայ. գլ. 2. համար. 7: հրեշտակ Տն ամենակալի անուանին՝, և օրէնս խնդրին 'ի բերանոյ նոցա:) թէև ներհմտացեալ են 'ի գիտութիւն Ածայինս և չունին կարօտութիւն այսպիսի համբակօրէն գրուածոց. սակայն վասն դիւրութեան՝ և պատրաստ 'ի մի վայր ժողովեալ գոլոյն 'ի սմա ոչ սակաւ հարկաւոր գիտելիք հաւատոյ՝ վասն անուսումն եղեալ Քրիստոնեայ եղբարց. եթէ հաճոյ թուիցի ինքեանց՝ բարեհաճիցին և նոքա 'ի միտ առնուլ. և ուսուցանել անուս խոստովանաորդւոց իւրեանց. նաև ջերմեռանդ հաւատացեալ ժողովրդականաց, որքան և ծանրութիւն աշխատանաց որ իցէ ինքեանց:

Քանզի թուի ինձ թէ նոքա յաւէտ քան զվարժապետս պարտականք են ուսուցանելոյ. ըստորում դէտք և հովիւք կացուցեալ են յեկեղեցւոջ յանձնառութիւն իւրեանց. և նոցա է յանձնեցեալ ժողովուրդն Այ 'ի մարզել զնոսա 'ի գիտութիւն հաւատոյ և օրինաց. և զգուշացուցանելով կրթել և վարժել զամենեսին 'ի վարս Առաքինականս, և դարձուցանել 'ի գնացից անօրէնութեան. ըստ Եզէկ. գլ. 3. Համ. 17. ց' 22: որովք և ոչխարք հօտին, գտանելով զարօտս, և գոլով բուծեալք և յագեալք պարէնիւք հոգևորական գիտութեան. ոչ ցրուին 'ի փարախէ իւրեանց. և ոչ ևս գնան յայլ ուրեք որոնել զդարման հոգւոյ: Եւ այսպէս բառնին տրտունջք, կագք, և

խռովութիւնք ընդ այնոցիկ՝ որք յափշտակէն զոչխաքս իւրեանց, և վայելեն զասրն և զկաթն նոցին ։ Արդ եթէ ապախորժ թուՀի ինքեանց սոյն ասութիւնք իմ, գոնէ վասն աշխատանացս անբասիրս առնելով՝ նեքել համարձակութիւն աղաչեմ ։

****

12804



Զարմանային ամքն՝ որք լսէին՝ ինմանէ ընդ
իմաստութիւն և ընդ պատասխանիս նր ։

Հուկ". 46. 47.

ՑԱՆԿ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

Տրոհեալ յերիս մասունս։

Յորս պարունակին նախ համառօտութիւն հարկաւոր գիտելեաց Հնոյ Կտակարանի. ապա վասն գալստեան և տնօրենութիւն Փրկչին մերոյ Յս̅ի Ք̅ս̅ի։ Եւս և վասն Ընորհական օրինաց. և սահմանի հաւատոյ ընդհանրական Եկեղեցւոյն Ք̅ս̅ի։

Մասն առաջին։

Պատուիրեաց Ած ամբոխի իւրոյ 'ի գիրս 2. Օրին. 32. 7։ Հարց ցհարս քո՝ և պատմեսցեն քեզ. ցծերս քո՝ և ասասցեն քեզ։ Քանզի թարց հարցման և պատասխանւոյ ուսուցչի, գրեթէ ո՛չ է կարելի դիւրաւ ստանալ հմտութիւն իմացուածոյ Ածային գրեանց. ոպ̅ և սրբազան Առքեալն Փիլիպպոս 'ի հարցանելն սբ̅յ ներքինւոյն Եթէօպացւոյ, գիտիցե՞ս արդեօք զոր ընթեռնուցուսդ։ Պատասխանեաց. զիա՞րդ կարացից գիտելթէ ոք ոչ առաջնորդեսցէ ինձ։ Վ̅ս̅յ և մեք յարմար համարեցաք ընդ այսու հարց ու պատասխանական ոճիւ շարադրել զայս փոքրիկ գրքուկ 'ի կրթութիւն նորավարժ մանկանց, որ սկսանի նախ 'ի Հնոյ Կտակարանէ։

ԳԻՐՔ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ։

Դար առաջին։

'Ի սկզբան Ծի. 4000 ամօք յառաջքան զծնունդն Ք̅ս̅ի։

ՊՐԱԿԱ։

Յաղագս լինելութիւն ընդհանուր Ծի՝ և ա̅մ գոյից. մի միայն կամեցողութ̅բ, և բանիւն Ա̅յ։

Ա

Հարց. Սոյն աշխարհ 'ի յաւիտենից էր այսպէս, թէ յետոյ ստեղծաւ:

Պաս. Անեղ անսկիզբն, անժամանակ և անվախճան ինքնագոյ էակ, կամ է յաւիտենական, է մի միայն ինքն Ած. իսկ միւս ամ գոյք և ծ՝ ստեղծուածք. այսինքն արարածք են 'ի ժամանակի:

Հ. Ո՞վ արար զաշխարհս՝ և զամ գոյս նորա:

Պ. Անեղ և ինքնագոյ Արարիչն Ած ստեղծօղն երկնի և երկրի, արար:

Հ. Մի թէ յառաջ ո՞չ գոյր իր ինչ:

Պ. Ած միայն ինքն էր, և այլ իր ո՛չ գոյր. զի ինքն ինքեան բաւական է. և չունի բնաւ կարօտութիւն այլոյ իրի:

Հ. Ապա վասն ի՞ր արար զսոսա:

Պ. Զի կամեցաւ հաղորդել զբարութիւն իւր՝ նա և յարարածս. և զբօսնուլ 'ի նոսին:

Հ. Որո՞վ արար զսոսա:

Պ. Անեղ և համագոյ Բանիւն իւրով. այսինքն. Եղիցի ասելովն:

Հ. Ի՞րբ արար զսոսա Ած. և քանի՞ ամք են:

Պ. 'Ի ստեղծմանէ Ադամայ՝ մինչև 'ի ծնունդն Քս՝ի, 4000 ամք թուեն ժամանակագիրք. և 1808 ևս անտի մինչև ցայժմ, որ գրեմք սոյն գիրք, լինին 5808 ամք, որ եղեալ է ծս, ըս մերոյս հաւատոյ:

Հ. Յաւիտեան մնա՞յ այսպէս սոյն ծ:

Պ. Ո՛չ. այլ կատարած և նորոգումն լինելոց է. բայց զժամանակն ո՛չ ոք գիտէ՝ բաց 'ի միոյն Ա՛յ՝ որ արար զայս ամ. զի 'ի կամս նորա կախեալ կան ամ ինչք:

Հ. Միայն զայսոսիկ արար որք երևի՞նս, թէ աներևոյթ ինչ ևս արար:

Պ. Արար և զաներևոյթս. զորս զգալի մարմնաւոր աչօք ո՛չ կարեմք տեսանել՝ զի ոգեղէնք. այսինքն հրեղէնք են, և կոչին հրեշտակք. և են ինն դասակարգութ̄ք. այսինքն. Սերօբէք. Քերօբէք. Աթոռք. Իշխանութ̄ք, Տէրութ̄ք, Զօրութ̄ք, Պետութ̄ք, Հրեշտակապետք, և Հրեշտակք։ Գոն նաև դևք։

Հ. Ոպ̄ի՞ արարածք են այդոքիկ դևք։.

Պ. Շար հրեշտակք կոչին, զի ասեն վարդապետք եկեղեցւոյ. թէ սոյն ոգեղէնք 'ի նախնումն ունէին երկոտասան դասակարգութ̄ք. յորոց 'ի վերին դասակարգութ̄ց՝ երեք դասք նոցա, վասն առաւել փառաց և լուսաւորութ̄ իւրեանց հպարտացեալ ապստամբեցան յԱյ՝ կամելով հաւասարիլ նմա. որոց և բարկացեալ Ած արտաքսեաց յերկնից. որք և խաւարեալ կորուսին զփառս և զլուսաւորութ̄ս՝ և եղէն անդնդային չարք. և վ̄ անզղջութ̄ իւրեանց՝ անկան 'ի յաւիտենական դատապարտութ̄. և կոչեցան դևք և սատանայ. որոց գլխաւորն անուանեցաւ բելիար. կամ սադայէլ. և կամ բեէզվեբուզ։

ՊՐԱԿԲ.

Յաղագս ստեղծման երևելի ա̄մ եղական գոյից. ևս և վ̄ անբան կենդանեաց. և մարդոյ։ Ծննդ. գլ. 1։

Հ. 'Ի սկզբանն՝ զի՞նչ ստեղծեաց Ած։

Պ. Գրէ սբ̄զանն Մօսէս. իսկզբանէ արար Ած զերկին և զերկիր. և երկիր. (զոր հելլէնք և լատինք գաօս ասեն։ Եբրայեցիք և Արաբացիք ղումր կոչեն, և մեք անդունդք ասեմք. որ է երկրագունտըս այս)։ Էր աներևոյթ և անպատրաստ, և խա-

Բար՝ ի վերայ անդնդոց՝ և ՚ոդի ԱՄ շրջէր ի վր ջրոց. այսինքն՝ ի խաւարի գոլով գնտոյս՝ էր աներ_ևոյթ և խառնեալ. այսինքն շիոիեալ իր ի մի ան_կերպաբան ծանկեալ՝ ի ջուրց. զոր Աճ եղիցի բանիւն իւրով բաժանեալ՝ ի յայտ կացոյց. զոմ երևելի արարածս։

՚. Մեանգամայն միով ասուած իւրով արար զսոսա. թէ միջոցիւ ժամանակի։

Պ. Թէև համանգամայն կարօղ էր առնելոյ մի միայն բանիւ. բայց կամեցաւ որ ի մէջ վեցից աւուրց կարգաւ լրացուսցէ զգործս իւր։

՚. Ցառաջնում աւուր զինչ արար։

Պ. Ցառաջնում աւուր միաշաբաթու այսինքն կիւ_րակէի. ասաց Աճ եղիցի լոյս, և եղև. և բաժա_նեաց ի մէջ լուսոյ և խաւարի. այսինքն ի մէջ տունջևան և գիշերոյ՝ Ինչ ասեն թէ ի սոյն լուսոյ գոյացան երկինք, և հրեշտակք. այսինքն ամոդեղինք։

՚. Ցերկրորդում աւուր զինչ արար։

Պ. Երկնի ասաց հաստատուճի. և բաժանեսցին ջուրք. որոց զնուրբ մասն վերայուցեալ անջրպետեաց հաստատուբն. և զներքինն մասն՝ ի մի ժողովեալ կոչեաց ծով. (յորմէ երևանեն գետք, անձրևք, յօղք՝ աղբիւրք, և լիճք, և դառնան՝ ի նա). և երևե_յաւ չամաքն, զոր կոչեաց երկիր։

՚. Ցերրորդում աւուր զինչ արար։

Պ. Բուսուսցէ երկիր՝ ասաց դնառս սերմնաբերս, և ղմեմ տունկս և զպտուս բանջարեղինաց. որոց և տոհմալ սերմն ի ազգի՝ օրհնեաց զնոսա ասելով և՝ ի բազմանալ։

՚. Չորրորդում աւուր զինչ արար։

Պ. Երկնին ասաց լուսաւորիլ՝ ի հաստատուճ. և եղէն

Արեգակն, և լուսին, և ամ աստեղք ։

Ը. Ընդերորդում աւուր զի՞նչ արար ։

Պ. Ասանկն ջուրք ասայ զեռունս շնչոյ կենդանեաց. և եղէն ձկունք՝ կէտք, և մարդունք. նաև թռչունք թեւաւորք. և տուեալ ամենեցուն զերմն ու ազգի՝ օրհնեաց զամենեսին բազմանալ ՚ի ջուրս. և յոդն։

Ը. ՚Ի վեցերորդի աւուր զի՞նչ արար ։

Պ. Նախ ասայ հանոյ երկիր գամ չորքոտանիս զգա_ զանս՝ զանասունս, և զսողունս. և սդ ևս տուեալ սերմն ու ազգի օրհնեաց զամենեսին ածիլ և բազ_ մանալ ՚ի վր երկրի ։ Ու եաես Աճ զամ զոր ինչ արար. զի բարի են, և յոյժ բարի (քայց տակաւին անկատարք) ։ Ապա ասայ, արասցուք մարդ ու պատկերի և նմանութեն Մերում. և իշ_ խեսցէ ձկանց ծովու, և թռչնոց երկնից. և անաս_ նոց երկրի՝ և ամ սողնոց՝ որք սողին ՚ի վր երկ_ րի ։ Ու արար զմարդն, ու պատկերի Ամ արար զնա. արու և էգ արար զնս. և օրհնեալ ասաց, աճեցէք և բազմայարիւք և լցէք զերկիր. և տի_ րեցէք դմա. և իշխեցէք ձկանց ծովու, և թռչնոց երկնից. և անասնոց՝ և ամ սողնոց երկրի ։ Ու ամ խոտ սերմանելի և ամ փայտ որ ունիցի չեն_ քեան պտուղ սերմանելոյ, ձեզ լիցի ՚ի կերակուր։ Ու եղև երեկոյ և եղև վաղորդեան, օր վեցերորդ։ Ու կատարեցան երկինք և երկիր. և ամ զարդ նոցա ։ Ու կատարեաց Աճ զգործս իւր, և հան_ գեաւ յաւուրն եօթներորդի յամ գործոց իւրոց զոր արար։ Ու օրհնեաց զօրն եօթներորդ, և սըր_ բեաց զնա. որ է օր շաբաթու. զի ՚ի նմա հանգեաւ Աճ յամ գործոց իւրոց ։

ՊՐԱԿԳ։

Յաղագս յատուկ ճառի ստեղծման մարդոյ. և թէ որո՞վ եղև մարդն պատկեր և նմանի Այ։ Ծնն. Գլ. 2։

Հ. Ո՞ա՞ եղև մարդն պատկեր և նմանի Այ։

Պ. Գրէ յատ-կապէս սրբազանն Մօսէս։ Եւ ստեղծ Տէր Ած զմարդն. այսինքն զԱդամ հող յերկրէ. և փչեաց յերեսս նորա շունչ կենդանի. և եղև մարդն յոգի կենդանի։ Ահա այսու փչման շնորհիւ եղև մարդն պատկեր Այ. որով նշանակեաց զվերստին ծնունդն 'ի հոգւոյ. զոր Քս՝ յայտնեաց Նիկոդեմոսի։ Յօհ. 3.

Հ. Ո՞ւր բնակեցոյց Ած զմարդն։

Պ. Ասէ սուրբ գիրն. և տնկեաց Տր՝ Ած զդրախտն եդեմ յարևելս։ Եւ բուսոյց անդ յերկրէ զա՞մ ծառ գեղեցիկ 'ի տեսանել, և քաղցր 'ի կերակուր. և զծառն կենաց 'ի մէջ դրախտին, և զծառն գիտութե՞ բարւոյ և չարի։ Եւ գետ ելանէր 'ի դրախտէն ոռոգանել զնա, և բաժանիւր 'ի չորս յառաջս. որք էին Փիսովն, Գեհովն, Տիգրիս. և Եւփրատ։ Եւ 'ի դրախտի անդ եդ Ած զմարդն 'ի գործել զնա և պահել։ Եւ պատուիրեաց նմա ուտել յա՞մ ծառոց. բայց 'ի ծառոյն գիտութե՞ բարւոյ և չարի՝ ասէ մի՛ ուտիցէք. զի յորում աւուր ուտիցէք մահու մեռանիցիք։ Եւ զի միայնակ էր Ադամ. ասաց Տր՝ Ած, ո՛չ է բարւոք մարդոյդ միայն լինիլ. արասցուք դմա օգնական ը՞ դմա։ Եւ էած առ Ադամ զա՞մ գազանս վայրիս և զթըռչունս երկնից՝ տեսանել թէ զի՞նչ կոչեսցէ զնոսա։ Եւ կոչեաց Ադամ անուանս ա՞մ անասնոց՝ և ա՞մ թռչնոց երկնի, և ա՞մ գազանաց. բայց Ադամայ

ո՛չ գտաւ օգնական նման նմա։ Եւ էարկ Տ̄ր Ած թմրութ̄ի 'ի վ̄ր Ադամայ և ննջեաց. և էառ զմի 'ի կողից նորա. և ելից ընդ այնր մարմին, և շինեաց զնա 'ի կին, և էած առ Ադամ։ որ 'ի զարթնուլն տեսեալ զնա ասէ. այս այժմիկ ոսկր յոսկերաց իմոց. և մարմին 'ի մարմնոյ իմմէ. սա կոչեսցի կին (այսինքն այրուհի). զի յառնէ իւրմէ առաւ. վասն այսորիկ թողցէ այր զհայր և զմայր իւր՝ և երթիցէ զհետ կնոջ իւրոյ։ Եւ եղիցին երկուքն 'ի մարմին մի. և էին երկոքեանն մերկ, Ադամ և կին իւր. և ո՛չ ամաչէին։

ՊՐԱԿԴ։

Յաղագս պատուհիրազանցութ̄ մարդոյն, և արտաքսեցման ն̄ր 'ի դրախտէն. և վճռոյ մահու։ Ծնն. գլ. 3։

Հ. Երկար մնացի՞ն Ադամ և կին իւր 'ի դրախտի անդ։

Պ. Որքան որ յանմեղութ̄ էին՝ կային 'ի դրախտին. բայց օձն՝ որ իմաստնագոյն էր քան զա̄մ գազանս երկրի. հարցեալ ցկինն գիտաց զիսկական պատուհերն Ա̄յ, որ վ̄ս չուտելոյ միայն 'ի պտղոյ ծառոյն գիտութ̄ բարւոյ և չարի էր. ասէ ցկինն՝ ո՛չ է պտուղդ այդ թոյն մահու. այլ զի գիտէր Ած. որ մինչ ուտիցէք բանայցեն աչք ձեր. և լինիք դուք ևս իբրև զԱծ կարօղք 'ի ճանաչել զչարն և զբարին (վ̄ս և արգելեաց). կամելով կնոջն լինիլ իբրև զԱծ. և հայեցեալ 'ի ծառն զի բարի էր 'ի կերակուր. և հաճոյ աչաց հայելի, և գեղեցիկ 'ի տեսանել. էառ և եկեր. և ետ առն իւրում ը̄ իւր՝ և կերին։ Եւ բացան աչք երկոցունցն. և գիտացին զի մերկք էին, արարին իւրեանց սփա-

ծանելիս. այսինքն ծածկոյթս 'ի տերևոյ թզենւոյ և ծածկեցին զամօթոյս իւրեանց։

Եւ մինչ եկն Ած ընդ երեկս 'ի տեսանել զնա, թաքեան յանտառս ծառոց։ Եւ 'ի կոչելն Այ թէ Ադամ ո՞ւր ես. Պատասխանեաց Ադամ, Տր լոհայ զձայն գալոյ քո՝ և երկեայ. քանզի մերկ էի և թաքեայ։

Եհարց Ած, ո՞ պատմեաց քեզ թէ մերկ ես. մի թէ կերեր 'ի պտղոյն զոր պատուհիրեցի քեզ անտի և եթ չուտել. կերէր արդեօք 'ի նմանէ։ Ասէ Ադամ, կինս այս զոր ետուր ցիս. սա ետ ինձ և կերի։ Եւ ասէ Ած ցկինն, զի՞արդ արարեր զայդ։ Եւ կինն ասէ. օձն խաբեաց զիս. (իբր այսու բանիւք անմեղ ցուցեալ զինքեանս՝ զարարչագործութիւն Այ պատճառ բերին, և մեղայ ո՛չ գոչեցին. զի կլեալ էին զթոյնն հպարտուեա)։ Յայնժամ բարկացեալ Այ, անէծ զօձն և ասէ. անիծեալ լիջիր դու յա՜մ անասնոց՝ և յա՜մ գազանաց երկրի. 'ի վր՜ լանջաց և որովայնի քո գնասցես. և հող կերիցես զա՜մ աւուրս կենաց քոց։ Եւ եդից թշնամութիւն 'ի մէջ քոյ՝ և 'ի մէջ կնոջդ. 'ի մէջ զաւակի քո. և 'ի մէջ զաւակի դորա. դու սպասեսցես նորա գարշապարի. և նա սպասեսցէ քում գլխոյ։ Եւ ցկինն ասէ. բազմացուցից զտրտմութիւն քո. և ցաւօք ծնցիս զորդիս. և եղիցի դարձ քո առ այր քոյ (այսինքն միշտ կարօտ՝ և ենթ հնազանդութեա առն քոյ լիցիս.) և նա տիրեսցէ քեզ։ Եւ ցԱդամ ասէ. փոխանակ զի լըուար ձայնի կնոջ քոյ և կերեր։ Անիծեալ լիցի երկիր 'ի գործս քոյ. փուշ և տատասկ բուսուսցէ քեզ. աշխատանօք և քրտամբք երեսաց քոց կե-

ըմբռնես զնոյց քոյ, մինչև հող էիր՝ և ՚ի հող դարձ-
ցես։ Ուր կոչեաց Ադամ անուն կնոջ իւրոյ (ըստ
Եբրայականին Հաւա. որ է Յուդա. այսինքն կեանս.)
զի նա է մայր ամ կենդանեաց։ Ուր զգեցուցեալ
նոցա հանդերձս մաշկեղէնս արտաքսեաց ՚ի դրախ-
տէն և քնակեցոյց զնոսա հանդէպ դրախտին
փափկութեան։

Հ. Զինչ եղև ծառն կենաց որ ՚ի կերին ՚ի նմա-
նէ. զի մի մեռանիցէին։

Պ. Զայս միայն ծանուցանէ մեզ Սբ գիրն, Թէ հրա-
մայեաց Աստ Քերովբէից հրեղէն սրով շուրջա-
նակի պահել զճանապարհ ծառոյն կենաց. զի ահա
եղև (ասէ) Ադամ իբրև զմի ՚ի մէնջ գիտելոյ զլաւ
և զգաւխ. գուցէ ձգիցէ զձեռն իւր, առնուցու ՚ի
ծառոյն կենաց կերիցէ և կեցցէ յաւիտեան։

Հ. Արդ էր դրախտն եդեմ, և կայ տակաւին մինչև
յայժմ։

Պ. Զայս և եթէ զրէ մարգարէն Մովսէս. Թէ տնկեաց
Տէր Աստ զդրախտն յԱրևելս. բայց զտեղին ոչ
յիշէ. և ոչ ոք գիտաց զհաստատին. և զանազան
են զսմանէ կարծիք յԱստուածոյ։ Իսկ հաւանական
է այն զոր ասեն ոմանք՝ լինիլ ՚ի բարձրն Հայս ՚ի
վեր լերանց կորդուաց. զոր տաճկերէն Քիւրտիս-
տան ասեն վս ականց Եփրատ և Տիգրիս և այլ
գետոց՝ որք ելանեն ՚ի ստորոտից այնոյ լերանց.
և աւիրեցաւ ասեն ՚ի ջրհեղեղէն։ Իսկ ոմանք
յայնպիսի բարձրագոյն տեղւոջ լինիլ ասեն, որ
ջրհեղեղն ոչ եհաս անդ. և կայ տակաւին մինչև
ցսոսօր և այլն. բայց ստոյգն միայն Աստ գիտելի։

ՊՐԱԿԵ։

Յաղագս սերնդոց Ադամայ՝ և բազմանալոյ ազգի մարդ-
կան 'ի վերայ երկրի. և վասն չարանալոյ նց։ Ծնն.
գլ. 4. և 5։

Հ. Յետ ելանելոյ Ադամայ 'ի դրախտէն, զի՞նչ եղև
նմա։

Պ. Նախ ծնաւ նմա կային. և ապա Հաբէլ։ Կային էր
երկրագործ. և Հաբէլ հովիւ խաշանց. որոց 'ի
մատուցանելն զպատարագս, Ած ոչ հաճեցաւ 'ի
պատարագն կայենի՝ զի ոչ էր բոլորով սրտիւ, և
ընկալաւ զպատարագն Հաբիլի։ Եւ կային նախան-
ձեալ սպան զեղբայր իւր զՀաբէլ։ Եւ Ած անի-
ծեալ պատժեաց զկային. որոյ սերունդք ևս չա-
րացեալ անհաճոյք եղէն Այ, և կոչեցան որդիք
մարդկան, յորոց Ղամէք՝ վեցերորդն զարմի կայե-
նի, սպան զհաւն իւր զկայէն։ Այս Ղամէք եղև
առաջինն որ էառ զերկուս կանայս. յառաջնոյն որ
կոչիւր Ադդա՝ ծնան Յօբէլ. որ եղև հայր 'ի
վրանս բնակողաց, և խաշնարածից. և Յօբալ որ
հնարեաց զերգս և զքնարս, որ է սազ։ Եւ յերկ-
րորդ կնոջէն որ կոչիւր սիլլա. ծնաւ Թօբէլ.
որ էր ճարտարապետ դարբին պղնձոյ և երկաթի.
և քոյր նորա Նոյեմայ, (որ եգիտ զարհեստ ոստայ-
նանկութեն այսինքն ջուլհակութեն ասեն։)

Հ. Եղև՞ Ադամայ և այլ զաւակ։

Պ. Զկնի սպանման Հաբէլի, ետ նմա Ած զՍէթ.
(որ ը կերպարանաց և ը պատկերի Ադամայ եղև
ասէ ոբ գիրն, և ոչ ը Այ. զի մեղանչեալ էր
Ադամ. որ թէև էր բարի զաւակ. սակայն ենթ
սկզբնական մեղաց. որ և փոխանակ Ադամայ լի-

նելոց էր հայր յետագայ մարդկանց. որով և միսի-
թարեցաւ Ադամ. որոյ սերունդք առ ժամանակ
ինչ հաճոյ եղեալ Այ՝ կոչեցան որդիք Այ. և
յորդւոց Սէթայ սերեցան ամ մարդիկ որք են 'ի
վ՝ երկրի. քանզի զչարացեալ սերունդս կայենի՝
ընդ հետևեցելոց նց՝ զարմից սէթայ՝ ջնջեաց Ած
ընդհանուր հեղեղաւ. որ ո՛չ մնաց 'ի նոցանէ և
ո՛չ մի՛։

Հ. Քանի՞ ամաց էր Ադամ յորժամ ծնաւ նմա
Սէթ. և քանի ամ եկաց։

Պ. Հարիւր երեսուն ամաց էր յորժամ ծնաւ ըզ
Սէթ. և ապա ծնաւ այլ ևս ուստերս և դստերս,
և մեռաւ 930 ամաց։

Հ. 'Ի Սէթայ ևս ծնան զաւ՛ակք. և սերեցան՞ որդ-
ւոց յորդիս։

Պ. Սէթ ծնաւ՛ զենօս յամի Ադամայ. այն է Ծի 225։
Եւ ապա զայլ ուստերս և դստերս, և մեռաւ
912 ամաց։

Ենօս ծնաւ զԿայնան յամի Ադամայ 325. և
զայլ ուստերս և դստերս, և մեռաւ 905 ամաց։
զսմանէ ասէ ս՝բ գիրն, թէ սա յուսացաւ կոչել
զԱծ. այսինքն միշտ կարդալ զԱնունն Այ։ Ծնն։
3. 26։ Կայնան ծնաւ զՄաղաղիէլ. յամի Ադամայ
365. և զայլ ուստերս և դստերս. և մեռաւ 910
ամաց։

Մաղաղիէլ ծնաւ զՅարեդ. յամի Ադամայ 460.
և զայլ ուստերս և դստերս. և մեռաւ 895 ամաց։

Յարեդ ծնաւ զԵնօք. յամի Ադամայ 622. և
զայլ ուստերս և դստերս. և մեռաւ. 962 ամաց։
Ենօք ծնաւ զմաթուսաղայ, յամի Ադամայ.
682. և զայլ ուստերս և դստերս. և փոխեցաւ

365 ամաց · զի հաճոյ եղև Այ և փոխեաց զնա այլ ուրեք և ոչ գտանիւր։ Եւ հաստատեն Թէ զնաց ՚ի դրախտն· և կայ անդ մարմնով կենդանի մինչև ցկատարած ՏԻ։ Մաթուսաղայ ծնաւ զ՚Ղ ամէք յամի Ադամայ 874· (այս ոչ է այն ՚Ղ ամէք զոր սպան զկայէն)· ապա ծնաւ և զայլ ուս տերս և դստերս և մեռաւ 969 ամաց· 5 ամօք յառաջքան զհեղեղն։ Ղ ամէք ծնաւ որդի յամի ՏԻ 1056։ Ցետ մահուանն Ադամայ 126 ամաց, և անուանեաց զնա Նոյ· (որ Թարգմանի դադարումն և հանգիստ·) և զայլ ուստերս և դստերս, և մեռաւ 753 ամաց· 29 ամօք յառաջքան զՋրհեղեղն· աՀ ամենեքեան բաց ՚ի Նոյէ՝ տեսին զԱդամ· և խօսեցան ընդ նմա մինչ կենդանի էր։

Ա՛· Ա՛ւ կ՚ըսէ միայն վը Նոյի ասէ որդի ՚ըք գիրն, և ոչ վը միւսուց նախահայրց։

Պ· Քանզի ՚ի ծննդենէ միւսուց նախահարց, տակաւին կենդանի էր Ադամ· և ՚ի ծննդեան Նոյի մեռեալ էր· և զի սերունդք միւսուց՝ կորնչելոց էին հեղեղաւ· և վերստին սերելոց էին մարդիկք ՚ի Նոյայ· ուստի և ՚ըք գիրն որդի անուանեաց զնա· ԼՔԸ Թէ որդի մեռեալ հօրն Ադամայ· որ փոխանակ նորա լինելոց էր երկրորդ հայր մարդկանց։ Եւ մանաւանդ որ Նոյ օրինակ էր Քրիստոսի· ըստ մարգարէական բանից հօր ԼՒՐՈՑ Ղ ամէքայ· Թէ սա հանգուցցէ զմեզ ՚ի գործոց (այսինքն յանօրէնութենէ) ձեռաց մերոց՝ և ՚ի տրտմութենէ· և յերկրէ զոր անէծ ՏԻ Ա՛։ Եւ Նոյ եղեալ հինգհարիւր ամայ, ամուսնացաւ ընդ Նոյեմզարայ ՚ի դստերաց զարմի ԱՀԹայ· յորմէ և ծնաւ զերիս որդիս· Ցաբեթ·

Սեմ. և Քամ։ հարիւր ամօք յառաջ քան զընդ-
հանուր ջրհեղեղն։

ՊՐԱԿ Զ։

Յաղագս ը հանուր ջրհեղեղի՝ և փրկուե Նոյայ հմյն-
հանդերձ իւրայնովք. և ը ամ տեսակօք անբան կեն-
դանեաց։ Ծննդ. գլ. 6 և 7։

Հ. Վասն էր էած Ած ընդ հանուր ջրհեղեղ 'ի վ ը
ամ երկրի։

Պ. Քանզի յաւուրս Նոյայ. սերունդք Սէթայ՝ որք
անուանեալ էին որդիք Այ, տեսեալ զդստերս
մարդկանց՝ այսինքն զարմից կայենի. զի գեղեցիկք,
և պճնեալ շպարեալք էին, առին 'ի նոցունց իւր-
եանց կանայս, և հետևեցան նոցին չարութեց։
Եւ տեսեալ Այ որ ամ մարդ խորհէր 'ի միտս
իւր 'ի խնամս չարին. (այսինքն միշտ ուտել և ըմ-
պել. կանայս առնուլ և արանց լինիլ. ը բանի
Տն)։ Ասէ ցՆոյ՝ որ միայն էր արդար և ոբ. Մի
մնասցէ Հոգի իմ 'ի մարդկանդ այդմիկ յաւիտեան,
վ ը լինելոյ դոցա մարմին. այսինքն վ ը միայն զմարմ-
նոյնն խորհելոյ, և ջնջեցից զդոսա յերկրէ. զի
ստրջացայ զի արարի զմարդն։ Եւ պատուիրեաց
Նոյի կազմել տապան. այսինքն նաւ. որոյ զձևն,
զերկայնութի և զլայնութի, զխորութի և զբարձ-
րութի հանդերձ մեծութբն՝ ինքն եցոյց Նոյի։ Եւ
հրամայեաց առնել 'ի նմա ներքնատունս, միջնա-
յարկս՝ և վերնայարկս։ Եւ յամ գազանաց՝ սող-
նոց. և յանասնոց. և 'ի թռչնոց հաւուց մուծա-
նել 'ի նմին. յանսրբոց նոցին երկուս երկուս.
արու և էգ. և 'ի սրբոց յանասնոց և 'ի հաւուց

Թուենոց սէց եօթն եօթն արու և էգ։ Եւ ինքն
ևս մտանել ՚ի տապանն երիւք որդւովք՝ և կնաւ
իւրով. և երիւք կանամբք որդւոց իւրոց՝ զի ապ-
րեսցին ՚ի հեղեղէ։ Եւ Նոյ էր 600 ամաց. յոր-
ժամ մտին ՚ի տապանն։ Եւ Աճ փակեաց զնա
յարտաքուստ։ Յայնժամ եկն քառասուն տիւ. և
40 գիշեր անձրև սաստիկ. զի սահանք երկնից բա-
ցան. և երկիր պատառեալ զեղան ջուրք ՚ի վեր.
և ծածկեալ զերկիրն ամ բարձրացան ՚ի վեր հըն-
գետասան կանգնաւ ՚ի գլխոց բարձրաբերձ լերանց.
և հեղձան ամենեքեան. և ոչ ինայ ՚ի վ՚ը երկրի
շունչ կենդանի. բայ յայնցանէ որք էին ՚ի տա-
պանի անդ։

Ը. Արդեօք յորում կողման եմի. կամ ո՞ւր շինեաց
Նոյ զտապանն։

Պ. Հաճաստի ինչ չէ գրեցեալ ուրեք. բայց սուրբն
մեսէս խորհեացեր, գրէ յԱպգրուեթ իւրում. թէ
անդ ասի շինեալ Նոյայ զտապանն, ուր կառուցաւ
յետոյ քաղաքն Անտիոք. յորում և նախ կոչեցան
անդ Հաճաստացեալք Քրիստոնեայ։

Ը. Որքան ժամանակ տևեալ ջուրն ՚ի վ՚ը երկրի։

Պ. Հարիւր քսան օր ինայ ջուրն ՚ի նոյն բարձրու-
թեան, և ապա սկսաւ նուազել ՚ի 150 աւուրս։
Իսկ յեօթներորդի ամսեանն նստաւ տապանն ՚ի
Հայաստան եմի ՚ի լերինս Արարադայ ՚ի լեառն՝ որ
այժմ կոչի մասիս։ Եւ ՚ի սկզբան մեռասաներորդի
ամսեանն՝ երևեցան գլուխք լերանց։ Եւ յետ քա-
ռասուն աւուրց արձակեաց Նոյ զագռաւն. որ գնա-
յեալ անկաւ ՚ի գիշակերութի. և ոչ դարձաւ
(յօրինակ ագահ. և եհասէր արանց։) Եւ յետ եօթն
աւուրց արձակեաց զաղաւնին, որ ոչ գտեալ հան-

գիստ ոտից՝ դարձաւ յետս։ Եւ Նոյ դադարեալ եօթն օր ևս՝ կրկին արձակեաց զաղաւնին. որ դարձեալ ը՝ երեկս՝ ունէր շիւղ ձիթենւոյ 'ի բերանի իւրում (իբր աճետիս թէ ցածուցեալ են ջուրք։ Եւ դադարեաց աճուրս ևս եօթն, և վերստին արձակեաց զաղաւնին. որ ո՛չ ևս դարձաւ 'ի տապանն. և գիտաց Նոյ թէ ցամաքեալ է երկիրն։ Եւ եղև 'ի վեցհարիւրերորդի և 'ի միում ամի կենաց Նոյի. և 'ի սկզբան 1657 ամի Ծի. 'ի վախճան առաջին դարուն, իսպառ ցամաքեցաւ երկիր 'ի ջուրց հեղեղէ։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ։

Դար երկրորդ.

'Ի 1657 ամի Ծի. 2343 ամօք յառաջ քան զծնունդն Քս՝ի։

ՊՐԱԿ Ա։

Յաղագս նորոգութ՝ Ծի. և վ՝ վերստին բազմանալոյ մարդկան. ևս ա՝մ կենդանեաց օրհնութ՝ ։ Եւ ևս և վ՝ նշանաց ուխտի և հաշտութ՝ Ա՝յ ընդ ա՝մ կենդանեաց. Ծննդ. գլ. 8 և 9։

Հ. Ա՞րբ ել Նոյ 'ի տապանէն հանդերձ իւրայնովք. և համայն կենդանեօք։

Պ. 'Ի 601 ամի կենաց Նոյի. և 'ի 1657 ամի Ծի 'ի սկզբան երկրորդի դարուն. հրամանաւն Ա՝յ՝ ել Նոյ և կին իւր. և որդիք Նոյայ և կանայք նոցին, (խորհրդաւոր մուտ, և խորհրդաւոր ելք). և արձակեաց Նոյ զա՝մ կենդանիս, որք էին 'ի տապանին։

Հ. Յորժամ ելին 'ի տապանէն. ո՞ւր բնակեցաւ Նոյ իւրայնովքն։

Պ. Հանգեալ էր տապանն ի մասիս լեառն Արարադայ. և Նոյ իջեալ ի լեռնէն ի գաշտն՝ կոչեաց զանուն տեղւոյն նախնջուան. (ըստ յերելոյ Յովսեփոսայ հրէի պատմչի). և մատոյց անդ զողջակէզս ի սրբոց կենդանեաց, զոր հաճեալ ընկալեալ Աստ, վերստին օրհնեաց զամենեսեան աճիլ և բազմանալ ի վեր երկրի։ Եւ ասաց ցՆոյ՝ եղիցի ահ և երկիւղ ձեր ի վեր ամ գազանաց. և անասնոյ՝ և սողնոյ երկրի. և ամ թռչնոյ երկնից, և ձկանց ծովու. զորս ետու ընդ ձեռամբ ձերով։

Աստ ներեաց Աստ ուտել մարդոյ զմիս կենդանեաց. բայց զդայր լինել հրամայեաց յուտելոյ զարիւն ընդոյն նոցա։ Եւ ասա եդ ուխտ հաշտութեան ընդ Նոյ, ոչ եւս ածել ընդհանուր հեղեղ ի վերայ երկրի. տալով նշան հաշտութեան զծիածանն։ Ընդէց ասէ զվկղէն իմ յամպս, և եղիցի ձեզ նշան խաղաղութեան և հաշտութեան իմոյ ընդ մարդկան. և ընդ ամ կենդանեաց։

Ա. Զինչ նշանակէ ծիածանն. զոր աղեղն անուանեաց Աստ։

Պ. Աղեղն ասաց՝ ոչ ըստ իրին, այլ ընդ ձևոյն. որ ի գործի ինչ ի ձև ծիածանի, յորմէ ալեակմամբ նետիւ՝ հարեալ խորտակեն զվշնամին։ Իսկ ընդ իրին ի ծիածանն, որ հիւրիկ եւս կոչի. զի ունի վշտրեսին գոյնս. այսինքն հրաշէկ կարմիր, կապուտակ և կանաչ. զոր աղեղն անուանեալ ասաց ցՆոյ. այս եղիցի նշան հաշտութեան և խաղաղութեան իմոյ ընդ մարդկան, որով յայտնեաց Նոյի՝ թէ զգանն իմ (զՔ) եդից յամպս մարմնոյ իբրև աղեղն. որ նետիւ խաչի իւրոյ խորտակեսցէ զվշնամին ձեր։ Եւ իբրև ծիածանի զեղեցիկ տեսլեամբ ընդիւք

գունովք իւրովք. այսինքն Հրաշէկ Աճուրդն. և կարմիր արեամբն. և կապուտակ ջրովն մկրտուեր. (որք բղխեցան ՚ի վիրէ կողի իւրոյ յայրուածն մեզ և ՚ի լոճացումն). և կանաչ՝ ուր և անարատ մարմնաւուԼթեն հաշտեցուսցէ զնս ընդ մարդկան։ Իւր կամ ընդ երիս ԱՀեռաւանական վարդապետուեց լուսաՀորեալ զազգս մարդկան, արասցէ խաղաղութիւն յերկինս և յերկրի, և ՀեռաՀորոց և մերձաՀորոց ԱՀետաբանեսցէ զփրկուԼէն, ըստ գրելոյ սրբազան Առաքելոյն Պօղոսի։ Դարձեալ քառիւս աղեղան՝ նաև զնկուցանէ Աճ, որ թէև ՚ի նշան հաշտուԼթէ և խաղաղուԼթեան եդի յամպս՝ ոչ ևս ջրով ապականել զերկիր. սակայն վերստին յաՀնօրինիլ և ՚ի չարանալ մարդկան՝ ահա աղեղն իմ երեւեալ է յամպս, և սուր իմ սրեալ՝ և նետք իմ այրեցելովք են գործեալ. առ ՚ի պատժել զամպարշտուԼթիս նոցա, յարուցանելով զնոսա ՚ի պատերազմ ՚ի վերայ միմեանց։ Մխանգամ խօսեցաւ Աճ, և երկուս զայս լոՀաք։

ՊՐԱԿՐ։

Ծաղկս տնկելոյ Նոյայ զայգի. և օրհնելոյ զԱկամ և զՑաբեթ՝ և անիծելոյ զՔանան։ Իւս և վասն մահուս Նոյայ։ Գլ. 9։

Հ. Արբր և զայլ երևելի խորհրդաՀոր գործ ինչ, սէ Նահապատն Նոյ։

Պ. Տնկեաց անդ զայգի, ուր այժմ ևս կոչի Արկուռի. և ՚ի ռամկայ Ակռի։ Իւ արբեալ ՚ի գինւոյ նորին, մերկացաւ ՚ի տան իւրում և ննջեաց։ Իւ տեսեալ Քամ Հայր քանանու զմերկուԼէնն Հօրն՝ այսպէս պարծեալ պատմեաց եղբարց իւրոց

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ
С.С.Р.Р. Ա.Կ.Պ. Ս. Ս. Ս. Ռ. Ս. Ս. Ս. Ռ. Ս. Ս. Ս. Ռ

նոքա Սէմ և Յաբեթ առեալ հանդերձս 'ի վերայ թիկանց իւրեանց, գնացեալ յետս յետս ծածկեցին, և ոչ տեսին զմերկութիւն հօր իւրեանց։ Եւ Նոյ սթափեալ 'ի գինւոյն, օրհնեաց զսէմ և զյաբեթ ասելով՝ օրհնեալ Տր Ած՝ Ած Սեմայ։ Ընդարձակեսցէ Ած Յաբեթայ, և բնակեսցի 'ի տան սեմայ։ Եւ անիծեաց զսերունդս Քամայ այսու բանիւք. անիծեալ քանան մանուկ. և եղիցի ծառայ եղբարց իւրոց։

Հ. Զի՞նչ խորհուրդ յայտնեցաւ մեզ սովիմբ։

Պ. Ոպ տապան նորա էր նշանակ սրբոյ Եկեղեցւոյն Քս̄ի. յորոյ արտաքոյ ոչ գոյ ումեք փրկութիւն։ Այսպէս և այգւով յայտնեցաւ մեզ սոյն խորհուրդ. թէ Բանն Ած տնկեաց այգի զմարդկայինս բնութիւն, և մարդեղութիւն արբեցաւ 'ի գիւոյն այնմիկ. և ննջեաց մերկ 'ի մահ խաչի ամբոխի տան իւրոյ, և այպն եղև 'ի Քամայ անհաճատէ։ Եւ իբրև յարեաւ Ածաբար, օրհնեաց զհաւատացեալս 'ի տանէ Սեմայ, յորմէ զարմէ ընկալեալ էր մարմին, և էր Ած. այսինքն մեսիայ Սեմայ։ Եւ զսերունդս Յաբեթի կոչեալ 'ի հաճատս՝ բնակեցոյց 'ի տան Սեմայ առնելով զնոսա նոր իէլ, վասն հաճատով ծածկելոյ նոցա զմերկութիւն այն։ Եւ անիծեալ դատապարտեաց զանհաճատ մանուկն Քանան. այսինքն զայնոսիկ որք ոչ վերծանեալ զխորհուրդ մերկացելոյն 'ի խաչին յիմարութիւն համարելով՝ մնացին յանհաճատութեան. ը այնմ թէ՝ որ ոչ հաճատայ 'ի նա, արդէն իսկ դատապարտեալ է. և բարկութիւն Ա՛յ մնայ 'ի վր նորա։ Յօհ. 3. 36։

Հ. Ցետ ջրհեղեղին. հրաբան ժամանակ ևս եկաց ՚ի կենի, սուրբ Նահապետն Նոյ։

Պ. Երկայ Նոյ զկնի ջրհեղեղին՝ այլ ևս 350 ամս ՚ի հայաստան Ծի. և մեռաւ 950 ամաց. և թաղեցաւ ՚ի Նոյոտն կոչեցեալ տեղւոջ. ՚ի 2006 ամի Ծի։ Ուր նոյեմ զարայ կին նորա թաղեցաւ անդ՝ ուր ասէ Մարանդ. այսինքն մայր անդ. ըստ հաճաստի պատմուճեր հայոց։

ՊՐԱԿ Գ։

Ցաղագս սերնդոց որդւոց Նոյի. և վասն Աշտարակաշինուճեր, և բաժանման լեզուաց, ազգաց՝ և երկրից։ Ծննն. գլ. 10. 11։

Հ. Ուր բնակեցան որդիք Նոյի, և սերունդք նոցա մինչեն ՀԱԾապաշտուճեր։

Պ. Որդիք Նոյի ևս բնակէին առ ժամանակ ինչ ՚ի Հայաստան Ծի. բայց յետոյ ՚ի բազմանալ որդւոց և խաշանց նոցա յաճուրս փոքրկայ. որ էր հինգերորդն Սեմայ, բաժանեցան յայլ և այլ տեղիս ՚ի սահմանս հայաստանեայց։ Ուստի ևս ՚ի 1757 ամի Ծի. բաժանեալ գնացին ՚ի միջագետս ՚ի դաշտն սենաար. և անդ կալան բնակուճեր. ընդ որս էր և մեր քաջ նահապետն Հայկ որդի Թորգոմայ, որդւոյ Գամիրայ, որդւոյ Ցաբեթայ։ Ուր գոլով ամենեցուն մի ազգ, մի սիրտ, և մի լեզու. միաբանեալ խորհրդով գոռոզ հակային Ներբովթայ. որ և ասի Ռէլ՝ (կամ տիտան). որ էր ՚ի քամայ. որդի քուշայ. որդւոյ անիծելոյն Քանանու. կամեցան աշտարակ կանգնել բարձր մինչև յերկինս (,,Այս այն Ռէլէ. որ ըստ գրուճեր խորհնացան՝ կամեցաւ միահեծան լծագաւորել ՚ի վե-

ամենեցուն, և նոհաճեաց ընդ իւրև զբազումս)։ Իսկ վերոյիշեալ մերս Հայկ՝ նշկահեալ վտարանջեաց 'ի նմանէ և եկն որդւովք՝ Թոռամբք, և համայն ընտանեօք իւրովք՝ կրկին 'ի կողմանս Հայաստան Ծի, ուր էր Նոյ. և այլ բազմութիւք բնակչաց, որոց 'ի վերայ գալն Բէլայ 'ի պատերազմ մեծաւ զօրու, քաջաբազուկ արին Հայկ սպան զԲէլ. և ինքնիշխան եղեալ տիրեաց բոլոր Հայաստան Ծի. յորմէ և բնակիչք տեղւոյն՝ և սերունդք իւր կոչեցան Հայք։ Նաև Արամեան, յանոհանէ Արամ Թոռանէ Հայկայ")։ և մինչ հետևէին 'ի կանգնել զաշտարակն այն, բարկացեալ նոցա Ած՝ էջ ինքնին 'ի կործանել զաշտարակն. ուր և խառնակեալ բաժանեաց զլեզուս նոցա յեօթանասուն և յերկուս. ուստի և տեղին կոչեցաւ Բաբիլօն, այսինքն խառնակութիւն. զի անդ խառնակեցան լեզուք նոցին, 'ի 1812 ամի Ծի. 146 ամօք յառաջ քան զմահն Նոյի։ Յայնժամ անտի ևս ցրոհեալ բաժանեցան յայլ և այլ հեռաւոր տեղիս. և տիրեցին երկրից. անոհամբ զանազան ազգաց, մանաւանդ թէ զկնի մահուան Բէլայ։ Եւ մոռացեալ զնոյ՝ և զորդիս նորա զհաւս իւրեանց՝ մոռացան նաև զաներևոյթ Արարիչն Ած. և անկան իբր ամենեքին 'ի կռապաշտութիւն. և պաշտեցին զգալի արարածս, և զտարերս։ Եւ սակաւք էին. այսինքն որդիք Նոյայ. և առ ընթեր նոցա եղեալ թոռունք, որք յիշէին և պաշտէին զԱծ։

ՊՐԱԿԴ։

Յաղագս անկանելոյ մարդկան 'ի կռապաշտութիւն։

Հ. Վասն էր եղև որ մարդի կունելով զլոյս բանա-

կանուխեն՝ այնքան մոլորեցան, մինչ զի մոռացեալ
զԱրարիչն Աստուած. պաշտեցին զգալի արարածս, և
զձեռագործս իւրեանց։

Պ. Յանօթութենէն անեղեալք ձշմարտին Այր, ոչ է
արգասիք միայն բանականութեան. քաղցումն բանա-
կանութենին թարց զգայականին ոչ ինչ կարէ ձա-
նաչել։ Նոյնպէս Աստուած ոչ երբէք անկանի ենէթ զգայու-
թեան. թէ և զգալի արարածովքս իմացեալ լինի
իբրև ի հայելւոջ։ Այլ պարտ է ունել նաև
զաղբեցութենէն և շնորհս Աստուածային փչման հոգւոյն.
թարց որոյ ոչ ոք կարէ ասել Տէր Յիսուս. քան Առա-
քելոյն. նաև քան փրկչին, թէ ոչ ոք գայ առ իս՝
եթէ ոչ Հայրն իմ երկնաւոր ձգեսցէ զնա։ (,,Ուս
վասն սոյնոյ Աստուածային հոգւոյ՝ որ ի չարանալ մարդ-
կանց թէև ասայ Աստուած. մի հնասցէ հոգի իմ ի
մարդկանդ յայդմիկ յաւիտեան. վասն լինելոյ դուցա
մարմին. այսինքն լոկ շնչաւոր. բայց առ խոկգա-
նէ ընտրեալս. մերթ ընդ մերթ շնորհէր. և խոստա-
ցաւ Յովհելայ մարգարէիւ կրկին շնորհել ամենայն
ձշմարիտ հաւատացելոյ ի հետն Քրիստոս. թէ յա-
ւուրս յետինս հեղից ի հոգւոյ իմմէ ի վերայ ամ
մարմնոյ. այսինքն մարմին լինելոցն կորուսանողաց
զհոգին և զլատակելն Այր. որք հաւատալով ի
Քրիստոս Աստուած. վերստին ստանայցեն՝ և նկատցեն ի
Յանօթութենէն ձշմարտի անեղեալքն Այր։) Լուսոյ
և յերկրորդի գարուն մինչ զկնի կործանման աշ-
տարակին Բաբելոնի. ուր լեզուք անդ եղելոց
խառնակեալ ոչ իմանային զձայն իրերայ, քա-
ժանեալ տարածեցան ի զանազան կողմանս Երի.
և հեռացեալ ի Նոյէ (յորում գոյր Հոգի Այր).
և յորդւոց նորին. սկսան հետևիլ զգայութեց

և կամաց իւրեանց 'ի տիրելութիւն երկրից, և 'ի փափկութիւն մարմնոյ՝ և 'ի վայելչութիւն ծի։

Եւ ապա սակաւ առ սակաւ մոռացան զաներևոյթն Ած արարիչն երկնի և երկրի. և փոխանակ նորա պաշտեցին զգալի և զերևելի արարածս՝ իբրև զԱծս՝ որք երթայցեն առաջի իւրեանց. ոմանք զտարերս՝ ոմանք զարեգակն և զլուսին, և զայլ աստեղս և զզօրութիւն երկնից, վասն 'ի վերուստ ազդեցութեաց և ներգործութեաց նոցին։ Եւ այլք զբռնաւուրս և զթագաւորս, և կամ զհուժկու հսկայս, և կամ զգիտունս՝ և զերևելի օգտաւէտ իրաց հնարօղս։ Եւ յետոյ ըստ մեծի մասին, ընկալան զսուտ Ածս 'ի Այբուբենական նշանագիր անդրէից Եգիպտացւոց. որով վարեալք լինէին նոքա նախքան զգտումն հասարակ Այբուբենական տառագծից. որոց արական և իգական. և կամ այլ կենդանեաց պատկերաց զնշանակութիւն՝ իսպառ կորուսեալ 'ի հնարիլն հասարակ տառից, սկսան զանազան սուտ և առասպել պատմութիւն հնարել բանաստեղծք նոցա, մանաւանդ թէ յունաց. 'ի դովեստ մտացածին քաջ և զօրաւոր արանց, և գեղեցիկ վավաշ կանանց, բազմակերպ առեղծանելեօք զոր Մէթալօժիա կոչեն, որոց բանից հաւատացեալ ռամկաց, և ազդմամբ դիւին Ածացուցեալ պաշտէին։ Եւ անտի տարածեալ առ ամ ազգս ընդհանուր երկրի, սկսան ամենեքին այլ և այլ անուանակոչութիւն պաշտել ըզսուտ Ածութիւն, կանգնելով զկռածուս՝ ձուլածուս, և զկոփածու կուռս. կամ դրօշեալս. այսինքն պատկերս. և իւրաքանչիւր ազգ ըստ ախորժից իւրոց՝ լի ստութիւն առասպելական վիպասանութիւն

յօրինեալ պաշտէին զնոսա, մանաւանդ թէ զախ-
տըս իւրեանց իբրև զԱծս, որոց 'ի տօնի նաւա-
կատեաց. ոմանք զեղխենային գինւով 'ի պատիւ
Պաքքօյի չաւծոյն գինւոյ. ոմանք վավաշօրէն շա-
ղաշարէին 'ի պատիւ Ափրոգիտեայ չաւծուհոյն
հեշտութեան՝ որ կոչիւր վենէրէ։ Եւ այլք զայլ իմն
խեղկատակութիւնս առնէին վասն միւսուց չաւծոց.
որք բազումք էին զանազան անուամբ ըստ զանա-
զանութեան ազգաց. զորս մի ըստ միոջէ յիշել չէ աս-
տէն տեղի. առ որոց և զոհէին զանասունս՝ և
զմարդիկս, նաև իսկական զաւակունս իւրեանց։

Եւ ապա այնքան մոլորեցան՝ մինչ զի զգա-
զանս՝ զվիշապս, զանասունս, և զսողունս, նաև
զծառս՝ և զքարինս, և զդետս, զաղբիւրս և զլիճս.
զորս տեսեալ էին յիշեալ յայբուբենական նշա-
նագիր յանդրէս եգիպտացւոց, Աճացուցեալ պաշ-
տէին։

Քանզի կորուսանելով զհոգին ԱՅ՝ խաւարեալ
էր նաև լոյս բանականութեան նոցին. ոպ և տեսա-
նեմք աչօք մերովք՝ զբազումս 'ի նոցունց կռա-
պաշտից տակաւին մնացեալ նարդենիս. որք թէև
ունին զմեծ իմն բանականութիւն 'ի մարմնային զգալի
յիրս և յիրակութիւնս, բայց զրկեալք գոլով 'ի
շնորհաց Աճային փչմանէ՝ եղեալեն լոկ շնչաւոր
և զգայական կենդանի, ըստ սրբազանին դաւթայ.
թէ հաւասարեցան անասնոց անբանից և նմանեցան
նոցա. վոյ և ո՛չ կարեն ընկալնուլ զհոգին ԱՅ։
Քանզի շնչաւոր մարդ՝ ո՛չ ընդունի զհոգւոյն ԱՅ.
զի յիմարութիւն է 'ի նմա։ 1. Կորնթ. գլ. 2. հմր.
14։

ԳԻՐՔ ԵՐԵՔ.

Դար երրորդ:

'Ի 2083 ամի Ծի. 1917 ամօք յառաջ քան զծնունդն Քս̄ի,

ՊՐԱԿԱ:

Յաղագս կոչման Աբրահամու հօրն հաւատոյ: Ծնն. գլ. 12: 13:

Հ. Արդ՝ որովհետև Ծ ա̄մ լցեալ էր անա̄ծ կռապաշտութ̄ի. ապա ո̄պ եղև որ Եբրայեցիք ծանեան զՃշմարիտ Ա̄ծն աներևոյթ:

Պ. Ըստորում սոյն կռապաշտութ̄ի յառաջացաւ 'ի թելադրութ̄է օձակերպ դիւին, թէ լինիցիք իբրև զԱ̄ծս: Եւ Ա̄ծ կամելով պատժել զնա. խոստացաւ թէ զաւակ կնոջն խորտակեսցէ զգլուխ ն̄ր:

Դիտելով Այ լրացուցանել զխոստումն իւր. ետես զԱբրահամ որդի Թարայի՝ որդւոյ Նաքօրայ, որդւոյ Սերուքայ. որդւոյ Ռագուայ, որդւոյ Փաղեկայ, որդւոյ Եբերայ 'ի զարմէ Սեմայ. (որ ընկալեալ էր զօրհնութ̄ի հօր իւրոյ Նոյայ. և կենդանի էր տակաւին "). Այր իմաստուն և ենթակայ Ա̄ծային շնորհաց. որ ճանաչեալ զստութ̄իս կռոց՝ հաւատայր լինել Ա̄ծ մի աներևոյթ. Արարիչ ընդհանուր տիեզերի: Որոյ հայրն Թարայ ևս՝ գարշեալ 'ի զազիր վարուց Քաղդէացւոց՝ և հեռացեալ 'ի նոցունց, բնակէր 'ի խառան 'ի միջագետս Ասորւոց ընդ նաքօրայ՝ և ընդ Աբրահամու որդւովք, և ընդ Ղ օտայ որդւոյ առանայ թոռամբ իւրով. զի Առան հայր Ղ օտայ՝ մեռեալ էր 'ի կենդանութ̄ի հօր իւրոյ Թարայի: Եւ յետ մեռանելոյ Թարայի. 'Ի 2083 ամի Ծի 'ի սկզբան

երրորդի դարուն, կոչեաց Ած զԱբրահամ, և ասէ. Ել յերկրէ քումմէ, և յազգէ քումմէ, և եկ երկիր զոր ցուցից քեզ. (եթէ ոք ոչ թողցէ զհայր՝ զմայր՝ զեղբայր՝ զկին, և զորդի, և զտուն, և զայգի, և եկեսցէ զկնի իմ, չէ ինձ արժանի)։ Ահաւասիկ Աբրահամ, անսաց բանի Ճշմարտին Այ. և առեալ զսառայ կին իւր՝ և զամ ընտոծինս, և թողեալ զերկիր իւր՝ և զազգատոհմս՝ եկեալ 'ի Պաղեստին յերկիր քանանացւոց. բնակեցաւ 'ի սիւքէմ։ Եկն ընդ նմա և Ղ՝ օտ որդի Առանայ եղբօր Աբրահամու ընտանեօք իւրովք, և բնակէին 'ի միասին։ Ապա եկն 'ի բեթէլ և եհար զխորան իւր։ Եւ Ած երևեալ նմա անդ՝ ասաց. զաւակի քում տաց զերկիրս 'ի ժառանգութիւն։ Եւ Աբրահամ շինեալ անդ սեղան՝ կարդաց զանուն Այ, և գնացեալ բնակեցաւ յանապատի։

Եւ իբրև եղև սով երկրին՝ չոհեաց յեգիպտոս. և 'ի Ճանապարհին պատուհիրեաց սառայի ասել ցԵգիպտացիս, թէ քոյր եմ Աբրահամու. զի մի (ասէ) վասն գեղեցկութեան քոյ սպանցեն զիս։ Եւ իբրև մտին յեգիպտոս, տեսեալ նոցա զի կին գեղեցիկ էր յոյժ. գովեցին զնա առաջի փարաւօնի։ Եւ նորա հրամայեալ տարան զնա 'ի տուն իւր՝ իբր թէ քոյր Աբրահամու։ Բայց Ած պատժեաց զփարաւօն. որ կոչեալ զԱբրահամ ետ նմա զկին ի՛ր, և ասէ. 'ի բաց գնացէք աստի, և յուղարկեաց զնոսա համայն ընչիւք իւրեանց. և բազում ստացուածովք. և զՂ՝ ոտ ընդ նոսա։

Դարձեալ Աբրահամ յերկիր քանանացւոց մեծաւ հարստութեամբ, անասնովք, Արծաթով՝ և ոս-

կլուվ և ծառայիւք. և բնակեցաւ ՚ի բերթել ուր էր խորան նորա զառաջինն։ Յս Ղ֯օտայ և էր արջառ և ոչխար և անասուն բազում. և ՚ի լինել մարտ ՚ի մէջ հովուաց նոցա։ Ասէ Աբրահամ ցՂ֯օտ, մի՛ եղբարք եմք մի՛ լիցի կռիւ ընդէս և ընդ քեզ. և ընդ հովուաց մերոց. ահա երկիրդ առաջի քո է, մեկնեայ կինէն, եթէ դու յաջ երթիցես՝ ես յահեակ. և եթէ դու յահեակ՝ ես յաջ։ Յս տեսեալ Ղ֯օտայ զկողմանսն յորդանանու, զի յուռեթի էր. գնաց բնակիլ ՚ի սոդոմ որոյ բնակիչք չար էին և մեղաւոր առաջի ԱՄ յոյժ։

Յս յետ մեկնելոյ նՂ. ասէ Ած ցԱբրահամ. քեզ տայ զերկիրդ և զաճակի քում, զորս բազմայուսիյ իբրև զաճազ երկրիդ։ Յս Աբրահամ չուեալ բնակեցաւ առ կաղնեառն մամբրէի՝ որ էր ՚ի քեբրոն. և շինեաց անդ սեղան ԱՄ։

ՊՐԱԿՐ.

Ցաղագս պատերազմելոյ Աբրահամու, և ազատուլեաց Ղ֯օտայ. և օրհնելոյ մելքիսեդեկայ զԱբրահամ։ Ծննն. գլ. 14. 15։

Հ. կայքն յայնժամ և այլք՝ որք պահէին տակաւին զյիշատակ Հմարտին ԱՄ։

Պ. Յր ՚ի ժամանակի այնմիկ Մելքիսեդեկ. այսինքն թագաւորը սաղիմայ. որ էր և Քահանայ ԱՄ բարձրելոյ։ Յս բաց ՚ի նմանէ՝ յոյժ սակաւք էին, որք իսպառ չէին մոռացեալ զյիշատակն ԱՄ՝ թէև պաշտէին զկուռս. մանաւանդ թէ նոքին, որք էին ՚ի զաւմէ սեմայ, որ կենդանի էր տակաւին։ Այլ Աբրահամ առաւել քան զամենեսին ՚ի բոլոր սրտէ

հաճատացօղ և պաշտօղէր միոյն Ա՛Յ, զկնի Մել-
քիսեդեկայ. կամ սեմայ։

Ը. Քանի՞ ամայ էր Աբրահամ մինչ կոչեցաւ Ա՛Յ։

Պ. Աբրահամ էր հօրմանասուն և հինգ ամաց. և սա-
ռայ կին իւր. վաթսունևհինգ։

Ը. Պ՚օտ և ս հաճատացեր Ա՛Ն. և տակաւին ունէր
սէր ընդ Աբրահամու։

Պ. Պ՚օտ թէև բնակէր ՚ի սոդոմ ՚ի մէջ չարաց.
բայց Արդար էր և հաճատացեր զԱ՛Ն, և էր միշտ
սիրելի Աբրահամու. մինչ զի յորժամ չորք թա-
գաւորք այնու կողմանց եկին ՚ի պատերազմ ՚ի վր
հնգից թագաւորացն սոդոմայ՝ գոմորայ՝ և բաղա-
կայ Արքայի ազգաց. և Ադամայեցւոց Արքայի. և
սեգորայ. և յաղթեալ փախուցին զայսոսիկ հնգե-
սին թագաւորս. և յաճարի առեալ գերեցին զբնա-
կիչս քաղաքաց սոցին. ընդ որս էր և Պ՚օտ հա-
մայն ընտանեօք և ստացուածովք գերեցեալ, որ
իբրև լուաւ Աբրահամ թէ գերի վարեցաւ Պ՚օտ.
համարեաց զընտծինս իւր զաս 318. (ըստ թուոյ
սրց Հայրապետացն Նիկիոյ՝ ընդդէմ Արիոսի). և
գնացեալ սպան զչորեսին յաղթօղ թագաւորս՝
և զզօրս նոցա. և թափեալ զնոսմ գերիս՝ և զաղխս
նոցին. ընդ նոսին և զՊ՚օտ համայն ընտանեօք և
կայիւք նորա. և դարձոյց զամենեսին առ տեառս
իւրեանց, ոչ ինչ առնլով ՚ի նոցունց. զի մի ասէ-
ցեն թէ մեք մեծացուցաք զԱբրահամ. բայց որ-
չափ որ կերին ընտծինք իւր. և մասն ինչ ևս քա-
ժին էհան վասն այլոց՝ որք եկեալ էին ընդ հն-
քեան. նաև տասանորդս էհան Մելքիսեդեկայ,
որ և էր քահանայ Ա՛Յ բարձրելոյ. (զորմէ բազում
ռաբբիք հրէից. և Քրիստոնեայ մեկնիչք Աճա-

շունչ գրոց հաճաստեն լինիլ Սէմ որդի Նոյայ:) որ 'ի դառնալն Աբրահամու 'ի կոտորածէ անտի. ել ընդ յառաջ նորա հացիւ և գինճով, և օրհնեաց զնա: Եւ Աբրահամ ետ նմա տասանորդս յամէ աճարէ զորս փրկեալ էր:

Հ. Ունէր Աբրահամ զաճակս, որոյ տալ զերկիրն խոստանայր Ած:

Պ. Դեռ չունէր և ոչ մի զաճակ. քանզի կին նորա սառայ ամուլ էր: Բայց յետ բանիցս այսոցիկ. եղև բան Տն առ Աբրահամ 'ի տեսլեան, և ասէ. մի երկնչիր. ես վերակացու եղէց քեզ. և վարձք քո բազում եղիցին յոյժ: Եւ ասէ Աբրահամ Տր Տր զի՞նչ տացես ինձ. զի ես անորդի կորնչիմ. (որ իմանի՝ թէ թարց Մեսիայի կորնչիմ). և որովհետև ոչ ետուր ինձ զաճակ. Եղիազար դամասկացի ընտոծինն իմ ժառանգեսցէ զիս: Եւ վաղվաղակի ձայն Այ եղև առ նա և ասէ. դա ոչ ժառանգեսցէ. այլ որ ելանէ 'ի քէն, նա ժառանգեսցէ զքեզ: Եւ հանեալ արտաքս ասէ. հայեաց ընդ երկին, ոպ անթիւ են աստեղք. այնպէս բազում եղիցի զաճակ քո: Եւ Հաւատաց Աբրահամ Այ. և համարեցաւ նմա յարդարութի: Ապա ասէ ցնա Ած. գիտելով գիտասջիր, զի քեզ տաց զերկիրդ զայդ 'ի ժառանգութի. բայց պանտուխդ եղիցի զաճակ քո օտար երկրի. և տառապեցուսցեն զնա ամս չորեքհարիւր. բայց զազգն յորում ծառայեսցեն՝ դատեցից ես. և յետ այնորիկ ելցեն բազում ստացուածովք: Եւ դու երթիցես առ հարս քո խաղաղութբ սնեալ 'ի բարճոք ծերութե: Եւ 'ի չորրորդում ազգի դարձցին այսրէն. զի չև ևս է լցեալ մեղք Ամուրհացւոցն: Յաճուր այն-

միկ եդ Տր ուխտ ընդ Աբրահամու և ասէ. զաւակի քում տաց զերկիրդ զայդ 'ի գետոյն Եգիպտացւոց. մինչև 'ի գետն մեծ Եւփրատ:

ՊՐԱԿԳ:

Յաղագս ծննդեան իսմայէլայ. և ուխտի թլփատութեան. և խոստմանն Այ զիսահակ 'ի սարայէ: Ծնն: գլ. 16. 17:

Հ. Եղև Աբրահամու զաւակ ԸՍ խոստմանն Այ:

Պ. Այո. բայց ըստորում սառայ ամուլ էր և ոչ ծնանէր. և ունէր եգիպտացի աղջիկ մի աղախին Ագար անուամբ. զնա ետ Աբրահամու ասելով, որովհետև արգել զիս Տր 'ի ծնանելոյ. մուտ առ աղջիկդ իմ. զի արարից ինձ որդի 'ի նմանէ. և ունկնդիր եղև Աբրահամ բանի նորա: Եւ իբրև յղացաւ Ագար. արհամարհեցաւ տիկին իւր յաչս նորա: Եւ սառայ հաւանութբ Աբրահամու չարչարեաց զնա. և Ագար փախեաւ յերեսաց նորա: Եւ հրեշտակ Տն գտեալ զնա յանապատի ասէ. դարձիր առ տիկին քո. և հնազանդ լեր ընդ ձեռամբ նորա: Ահաւասիկ յղի ես. ծնցիս որդի. և կոչեսցես զանուն նորա իսմայէլ. բազմացուցանելով բազմացուցից զնա, և եղիցի այր վայրագ. ձեռք նորա յամենեսին. և ձեռք ամենեցուն 'ի նա. և յանդիման ամ եղբարց իւրոց բնակեսցի: Եւ Ագար կարդացեալ զանուն Տն դարձաւ առ տիկին իւր. և ծնաւ Աբրահամու որդի. և կոչեաց զանուն նր իսմայէլ: Եւ Աբրահամ էր 86 ամաց: Եւ մինչ եղև Աբրահամ իննսուն և ինն ամաց. երևեցաւ նմա Ած, և ասէ. ես եմ Ած քո. լեր հաճոյ առաջի իմ և անարատ: Եւ եդից զուխտ

իմ ընդիս և ընդ քեզ. և բազմացուցից զքեզ յոյժ: Եւ այս է ուխտ իմ զոր պահեսցես ընդիս և ընդ քեզ. և 'ի մէջ զաւակի քո յազգս իւրեանց: Թլփատեսջիք զմարմին անթլփատութեան ձերոյ. մանուկ ութօրեայ թլփատեսցի ձեր. և ամ արու յազգս ձեր. ընտոծինն և արծաթագինն, և օտար եկամուտն և՝ որ ոչ իցէ 'ի զաւակէ քումմէ թլփատեսցի: Եւ ամ արու որ ոչ թլփատեսցի յաւուր ութերորդի՝ սատակեսցի անձն այն յազգէ քումմէ. զի ցրեաց զուխտն իմ:

Աստ օրհնեաց Ած և զՍարրայ և ասէ. օրհնեցից զնա. և տաց քեզ 'ի նմանէ որդի. և եղիցի յազգս, և թագաւորք 'ի նմանէ եղիցին. անկեալ Աբրահամ 'ի վերայ երեսաց իւրոց՝ ծիծաղեցաւ 'ի սրտի իւրում, եթէ հարիւր ամենի լինիցի որդի. և սարրայ իննսնամեայ ծնանիցի. և ասէ ցԱծ. Տր ահա իսմայէլս այս կեցցէ առաջի քո: Եւ ասէ Ած ցԱբրահամ. ահա Սարրայ կին քո ծնցի քեզ որդի, և կոչեսցես զանուն նորա Իսահակ. և հաստատեցից զուխտ իմ ընդ նմա ուխտ յաւիտենական. և ընդ զաւակի նորա յետ նորա: Իսկ վասն իսմայէլի, ահա լուայ քեզ. և օրհնեցի զնա. և աճեցուցից և բազմացուցից յոյժ. և երկոտասան ազգ ծնցի: Բայց զուխտ իմ հաստատեցից ընդ Իսահակայ զոր ծնցի քեզ Սարրայ 'ի ժամանակի այսմիկ 'ի միւսում տարւոջ: Եւ վախճանեաց խօսիլն ընդ նմա. և վերացաւ Ած յԱբրահամէ:

Եւ էառ Աբրահամ զորդի իւր. և զամ ընտոծինս և արծաթագինս, և զամ արս որք ընդ նմա էին, և թլփատեաց զմարմին անթլփատութեան

նոցա: 'Ի ժամանակի յաւուր այնմիկ թլփատեցաւ Աբրահամ, և որդի նորա իսմայէլ:

Հ. Քանի՞ ամաց էին Աբրահամ, և իսմայէլ մինչ թլփատեցան:

Պ. Աբրահամ էր իննսուն և ինն ամաց. և իսմայէլ որդի նորա երեքտասան ամեայ մինչ թլփատեցան: (Եւ 'ի սմանէ առին մահմետականք գոլով մահմետի 'ի զարմէ իսմայէլի. որ 13 ամեայ թլփատեն զորդիս իւրեանց):

Հ. Ջի՞նչ օգուտ 'ի թլփատութէ՞:

Պ. Թլփատութի՞ և անթլփատութիւն ինչ ոչ օգտէ ասէ Առաքեալն. այլ միայն ուխտ ընդ Այ, և նշան թէ զատեցեալ 'ի կռապաշտից՝ յարեցեալէ հաւատով առ Աճ:

ՊՐԱԿԴ:

Յաղագս հիւրընկալութե՞ Աբրահամու զԱճ. և կրկին խոստումն Իսահակայ. և վասն կործանման սոդոմայեցւոց: Եւ Հսերնդոց Ղ՞օտայ. գլ. 18. 19:

Հ. Շարութի՞ք սոդոմայեցւոց մնա՞ցին անպատիժք. և զի՞նչ եղև Ղ՞օտայ որ բնակէր ընդ այնց չարաց:

Պ. Սոդոմայեցիք ը՞ արժանեաց իւրեանց պատժեցան. և Ղ՞օտ վասն իւրոյ արդարութե՞ փրկեալ ապրեցաւ, ը՞ գրելոյ սուրբ գրոյն. որ 'ի 2107 ամի Ծի, մինչ Աբրահամ 'ի Քեբրօն առ կաղնեաւն մամբրէի նստէր 'ի միջօրէի առ դուրս խորանի իւրոյ. ետես և ահա երեք Արք գային. (որ էր Բանն Աճ երկու հրեշտակօք: Աբրահամ ետես զօր իմ և ուրախ եղև): Եւ ընդ յառաջ նոցա երկիրեպագ և ասէ. Տ՞ եթէ գտի շնորհս առա-

ջի քո. մի զանց առներ 'ի ծառայէ քումմէ։ Այլ
առից սակաւ մի ջուր՝ և լուասցեն զոտս ձեր. և
զովասջիք ընդ ծառովս։ Եւ առից հաց և կերիջիք.
և երթիջիք զճանապարհ ձեր։ Եւ նոքա հաճե-
ցան։ Եւ գնացեալ Աբրահամ ասէ ցՍարրայ՝
փութա՛ և թրեա՛ գրիւս երիս ալեր, և արա՛ նկա-
նակս։ Եւ ինքն ընթացաւ և էառ յանդեայ.
այսինքն յերամէ. կամ 'ի հօտէ. դէր և մատաղ
որթ. և ետ ցպատանին, և փութացոյց վաղվա-
ղակի հասուցանել։ Եւ էառ կոգի և կաթն, և
զորթն զոր հասոյց, և եդ առաջի նոցա՝ և կերին.
և ինքն կայր առաջի նոցա ընդ ծառովն։

Եւ ասեն ցնա. ո՞ւր է Սարրա կին քո. և նա
ասէ ահաւանիկ 'ի խորանի անդ է։ Եւ ասէ. դար-
ձեալ եկից առ քեզ 'ի ժամանակի այսմիկ 'ի սոյն
աւուրս, և ունիցի որդի սարրա կին քո։ Եւ սար-
րա ունկն դնէր յետուստ խորանին։ Եւ զի ծե-
րացեալ էր Աբրահամ. և ինքն պառաւ և պակա-
սեալ 'ի կանանցն օրինի, ծիծաղեցաւ ընդ միտս
իւր և ասէ ցինքնին. մինչև ցայժմ որ չեղև, այժմ
զիա՞րդ լիցի. որ ես պառաւ եմ, և Տ՟ր իմ ծե-
րացեալ է։ Եւ ասէ Տ՟ր ցԱբրահամ. զի՞ է զի
ծիծաղեցաւ Սարրա ընդ միտս իւր և ասէ. թէ
արդարև ծնանիցիմ, զի ահա ես պառաւեալ եմ.
մի թէ տկարանայցէ առ յԱ՟յ բան, 'ի ժամանակի
այսմիկ դարձայց առ քեզ 'ի սոյն աւուրս. և եղի-
ցի Սարրայի որդի։ Ժխտեաց Սարրա և ասէ թէ
ո՛չ ծիծաղեցայ. քանզի երկեաւ։ Եւ ասէ ո՛չ այդ-
պէս է, այլ ծիծաղեցար։ Եւ յարուցեալ անտի
արանցն հայեցան ընդ յերեսս սոդօմայեցւոց և

գոմորացւոց. և Աբրահամ երթայր ընդ նոսա յուղարկել զնոսա։

Եւ ասէ Տ֊ր, մի թէ թաքուստ ինչ եղէ յԱբրահամէ ծառայէ իմմէ զոր առնելոց եմ։ Այլ Աբրահամ լինելով եղիցի յազգ մեծ. և ի նա օրհնեսցին ամ֊ազգք երկրի։ Եւ ահա աղաղակ սոդոմայեցւոց և գոմորացւոց յաճախեաց. և մեղք նոցա բազմացան յոյժ։ Եւ արդ իջեալ տեսից. եթէ ըստ աղաղակին նոցա որ եկն հասանէ՝ վճարեսցեն. ապա թէ ոչ՝ զի գիտասցից։ Եւ դարձեալ անտի արանցն եկին ի սոդոմ, և Աբրահամ կայր առաջի Տ֊ն։ Եւ սկսաւ խնդրել թէ գուցէ լինիցին ի նոսին իսուն Արդարք. շնորհեսցէ վասն նոցա զլատիժ քաղաքացն այնոցիկ։ Հայր ասաց Ած ի վախճանի, եթէ եղիցեն ի նոսին տասն արդարք՝ ոչ կորուսից զնոսա վասն տասանցն։ Եւ գնաց Տ֊ր ի նմանէ. և Աբրահամ դարձաւ ի տեղի իւր։

Գ

Գնացին երկու հրեշտակքն ի սոդոմ ընդ երեկս. և Լ֊ովտ որ միայն էր անդ արդար. տեսեալ զնոսա՝ բռնադատեալ տարաւ ի տուն իւր. և արար նոցա ընթրիս։ Եւ մինչեւ ի քուն մտեալ էր նոքա. արք քաղաքին յերիտասարդաց մինչեւ ցծերս, համայն ժողովրդոք պատեցին զտունն. և կոչեալ զԼ֊ովտ ասացաք՝ խնդրէին տալ ինքեանց զարան զի գիտասցեն։ Եւ յաղաչել Լ֊ովտայ՝ և ի խոստանալն զերկոսին կոյս դստերս իւր տալ նոցա փոխան արանցն. նզդա սպառնացան և նմա, և մերձ էին խորտակել զդուրսն։ Եւ հրեշտակքն կորզեալ զԼ֊ովտ ի ձեռաց նոցա փակեցին զդուռնն. և Տարին զնոսա կուրութիւն։ Եւ ասեն Լ֊ովտ եթէ

գոյ քո աստ 'ի քաղաքի այսմիկ որդիք. կամ փե-
սայ, կամ դստերք. Հա՛ն 'ի տեղւոջէ աստի. զի
կործանելոց եմք զքաղաքս զայսոսիկ: Եւ Ղ՝օտ
և խօսեցաւ ընդ խօսնարանց. այսինքն ընդ նշանա-
ծից դստերց իւրոց. և նոքա ծաղր արարին զնա:

Եւ իբրև առաւ՛օտ եղև՝ կալան հրեշտակքն 'ի
ձեռանէ Ղ՝օտայ և կնոջն, և երկուց դստերց նո-
րին. և եդին զնոսա արտաքոյ քաղաքին, և ասեն.
ապրեցո՛ զանձն քո. մի՛ դառնայցես յետս. և մի՛
կացցես յա՜մ կողմանս երկրիդ. զերծի՛ր 'ի լեառն
գուցէ ընդ նոսա ըմբռնիցիս: Իսկ Ղ՝օտ աղաչեաց
մտանել մի 'ի փոքրիկ քաղաքացն այնոցիկ՝ որ
մերձ էր. զի գուցէ ասէ ո՛չ կարիցեմ հասանել
'ի լեառն: Եւ ասեն արասցուք ողորմութի՛ վասն
քո քաղաքիդ այդմիկ. փութա՛ անկանիլ առ նա:
Վասն այնորիկ և Ղ՝օտ կոչեաց զանուն քաղա-
քին սեգօր: Արեգակն ծագեցաւ, և Ղ՝օտ եմուտ
'ի սեգօր: Եւ Տ՜ր տեղեաց յերկնից հուր և ծը-
ծումբ. և այրեալ կործանեաց զչորեսին քաղաքսն
զայնոսիկ (որք էին, սոդօմ. գօմոր. Ադամա. և
սեբոյիմ:) Եւ կինն Ղ՝օտայ դարձեալ հայեցաւ
յետս. և եղև արձան աղի:

Եւ Ղ՝օտ երկուցեալ բնակիլ 'ի սեգօր. ել
'ի լեառն երկոքին դստերբք և հայէր անտի. և
բնակեցան յայրի միում. ուր դստերք նորա կար-
ծելով թէ ո՛չ ոք մնաց այր 'ի վերայ երկրի, խոր-
հեցան յարուցանել զաւ՛ակս. և յառաջին գիշերի
արբուցեալ հօր իւրեանց, երէց դուստրն՝ ննջեաց
ընդ նմա. և յղացեալ ծնաւ զՄօվաբ. յորմէ և
սերեցան մօվաբացիք: Ապա յերկրորդում գիշերի

դարձեալ արքուցին նմա . և կրտսեր դուստրն
ննջեաց ընդ նմա . և յղացեալ ծնաւ զԱմմոն .
յորմէ և Ամմոնացիք :

ՊՐԱԿԻ :

Ծաղագս Ծննդեան խաչակաց. և մատչելոց զոհ ԱՄ
և օրհնելոց ՚ի նմանէ : Լուս և վե մահու Սարրայի և
ամուսնուլեաւ խաչակաց. նաև վե Քետուրայ հարճին
Աբրահամու. և վե մահու սրբոյ նահապետին: ԻԵ. ԻԵ :

Ե. Սրբը ծնաւ ՚ի սարրայէ խոստացեալ զաշակէն
խաչակ :

Պ. ՚ի ԻԱՕԸ ամի Ծի դոլով Աբրահամ հարիւր ամեայ՝
և Սարրայ իննսնամեայ ծնաւ զաշակէն խոստացեալ՝
և ՚ի թլփատեն զնա յաւուր ուԹերորդի ը հրա-
մանի Ա., անուանեցին զնա Իսահակ . որ իբրև
աճեալ հատաւ ՚ի ստենէ, տեսեալ Սարրայի զի
որդի աղախնոյն Իսմայէլ խաղայր ընդ որդւոյ իւր-
ուն Իսահակայ, Ասէ ցԱբրահամ . ՚ի բաց հան
զաղախինդ և զորդի դորա . զի մի ժառանգեսցէ
ընդ որդւոյ իմում Իսահակայ (տես ՚ի՛ք զմեկնուլեաւ
սրբոյն Պօղոսի. գաղատաց. 4. ԻԹ. ՅՕ: Լու խիստ
Թոուեցաւ բանն առաջի Աբրահամու : Իսկ Ա-
ստէ ցնա. մի խիստ Թոուեսցի քեզ. զամ զոր ինչ
ասիցէ քեզ Սարրա՝ արասցես ը բանի նորա . զի
ի Իսահակաւ կոչեսցի քեզ զաշակ . բայց զորդի ա-
ղախնոյն արարիցյ յազգ մեծ. զի սերմն քո է :

Ծարեաւ Աբրահամ ընդ առաւօտն՝ և տո-
եալ նոցա պաշար հաց՝ և ջուր տկաւ. և արձա-
կեաց զնոսա : Լու գնային նոքա ընդ անապատն .
և ՚ի պակասել ջրոյն՝ ձայն բարձեալ մանկանն լայր.
և Ագար մեկուսացաւ ՚ի նմանէ, զի մի տեսցէ զմահ

նորա: Իսկ Ած լուաւ ձայնի մանկանն. և հրեշ-
տակ Տն ձայնեալ յերկնից, եցոյց ջրհոր ջրոյ կեն-
դանւոյ. և ասէ ցԱգար. արի՛ արբո՛ մանկանն և
զօրացո՛. զի բազմացուցից զնա և արարից ազգ
մեծ. չոգաւ Ագար ելից զտիկն և արբոյց մանկանն,
և էր Ած ընդ նմա: Եւ աճեցեալ եղև աղեղնա-
ւոր, և բնակէր յանապատին փառանու. և մայր նր
էառ նմա կին յերկրէ իւրմէ յեգիպտոսէ:

Հ. 'Ի զարգանալ Իսահակայ՝ որո՞վ հաճեցաւ Այ. և
ընկալաւ զօրհնութիւն:

Պ. Մինչ եղև իսահակ իբր քսան և վեց ամեայ.
կամեցաւ Ած փորձել զհաւատն Աբրահամու, և
զհնազանդութիւն իսահակայ. մանաւանդ թէ կամե-
ցաւ յայտնել նոցա զխորհուրդ խաչելութեան Քսի.
և զհնազանդութիւն նորա կամաց հօրն յաւիտենա-
կանի: Հրամայեաց Աբրահամու տանել զիսահակ
'ի լեառն զոր ցուցցէ նմա. և անդ զենուլ և զո-
հել զնա Այ: Եւ մինչ ելանէին նոքա 'ի լեառն.
(զոր հաւաստեն թէ էր գողգոթայ). Իսահակ ինք-
նին բարձեալ էր զփայտն (զխաչն.) ասէ. Հայր
ահա փայտ յուս իմ. և հուր և սուր 'ի ձեռին քո.
ո՞ւր է ոչխար ողջակէզ: Եւ նա ասէ. Ած տեսցէ
իւր ոչխար ողջակէզ ո՛րդեակ: Եւ իբրև եկին 'ի
տեղին զոր ասաց Ած. զգաց Իսահակ, որ հրամա-
նաւն Այ ինքն լինելոց էր ողջակեզ, յօժարութիւն
պարաւանդեցաւ 'ի կապիլ և զոհիլ Այ: Եւ
Աբրահամ էր ահա 'ի մխել զսուրն՝ արգել զնա
հրեշտակ Տն և ասէ. մի՛ մխեր զձեռն քո 'ի պա-
տանեակդ: Եւ եցոյց նմա խոյ. այսինքն արու ոչ-
խար մի կախեալ յեղջերացն (այսինքն զՅս կա-
խեալ յերկուց ձեռացն 'ի խաչին.) 'ի ծառոյն սա-

քեակայ. և հրամայեաց զայն զենուլ։ Աստէն յոյժ հաճոյ եղեալ Աճ յերկոցունց, կրկին օրհնեաց զԱբրահամ. ընդ նմին և զիսահակ։ Իւ վերակրկնեաց թէ ՚ի զաճակի քում. այսինքն, Ցեհէ Քեհէ. օրհնեսցին ամ ազգք երկրի։ Իւ ահա վասն այսորիկ հաճեցաւ կոչել և Աճ Իսահակայ. որպէս և էր Աճ Աբրահամու։

Հ. Ցետ ծննդեանն իսահակայ, եկեալ սարրա ՚ի քաղաքն ամս։

Պ. Լրեսուն և եօթն ամ ևս եկաց սարրա յետ ծննդեանն Իսահակայ, և մեռաւ ։27 ամաց։ Իւ Աբրահամ ալծալծոյ գնեալ զագարակն եփրոնի քետացւոյ ՚ի քեբրօն. և յայրի նորա թաղեաց զսարրայ։

Հ. Աբրահամ ամուսնացոյց զիսահակ. և ուստի՞ եւս բերել նմա կին։

Պ. Զկնի մահուան Սարրայի, կոչեաց Աբրահամ զեղիազար դամասկայի զընտռին իւր, և երդմնեցոյց զնա ՚ի վերայ երանաց իւրոց՝ իբր առ Մեսիայն, որոյ ը մարմնոյ սահմանեցեալ էր լինիլ նմա հայր։ մատ. գլ. ։ հմի ։ ոչ առնուլ կին իսահակայ ՚ի դստերայ քանանայեցոց. այլ երթալ ՚ի միջագետս ՚ի քաղաքն Նաքորայ եղբօր իւրոյ, և անտի բերել նմա կին յազգականաց իւրոց։ Իւ նորա հնազանդեալ պատուիրի Տ՟ն իւրոյ՝ երթարձ ՚ի տանն ուղղունս նորա զընծայս, և յամ քարուքեանց երկրին, և գնացեալ սպասաւորաք հանդերձ ՚ի քաղաքն Նաքորայ՝ նստոյց զուղղունս արտաքոյ քաղաքին առ ջրհորովն, յորմէ գայլն աղջկունք հանել զջուր։

Իւ ասէ, Տ՟ Աճ յաջողեա ինձ այսօր. և արա

ողորմութիւն Տն իմոյ Աբրահամու: Ահաւասիկ ջըր-
հոր ուր դստերք քաղաքիս գան հանել զջուր:
Եւ եղիցի կոյս մի որում ասացից տուր ինձ ըմ-
պել 'ի սափորոյդ. և ասասցէ ա՛րբ՝ և ուղտուց
քոց ևս արբուցից, գիտացից թէ զայն աղջիկ պատ-
րաստեցեր ծառայի քում Իսահակայ: Եւ մինչչև
լրացուցեալ էր զբանս այս 'ի մտի իւրում. եկն
Ռեբեկայ դուստր բաթուիլի որդւոյ նաքօրայ եղ-
բօր Աբրահամու կոյս գեղեցիկ տեսլեամբ յոյժ,
և ունէր սափոր յուս իւր՝ զոր ելից ջրով:

Խնդրեաց եղիազար ըմպել. իսկոյն մատոյց
աղջիկն և ասէ. ա՛րբ Տր, և ուղտուց քոց ևս ար-
բուցից: Եւ իբրև դադարեցին ուղտքն ա՛մ յըմ-
պելոյ. ետ եղիազար աղջկանն գինտս ոսկեայ յա-
կանջս, և ապարանջանս ոսկիս 'ի ձեռս նորա. և
եհարց թէ ո՞յր դուստր իցէ. և թէ գո՞յ 'ի տան
իւրեանց տեղի իջևանի ինքեանց և ուղտուց իւրոյ:
Պատասխանեաց կոյսն, դուստր եմ ես բաթուէլի
որդւոյ նաքօրայ. և յարդ և խոտ է մեզ. և գոյ
տեղի իջևանաց. ուրախ եղև եղիազար և երկիր-
եպագ Ա՛յ:

Եւ ընթացաւ աղջիկն 'ի տուն պատմել հօր՝
և եղբօր իւրոյ լաբանայ: Եւ նոքա իբրև լուան
և տեսին զընծայսն, լաբան եղբայր աղջկանն եկն
առ այրն՝ և հրաւիրեալ զնոսա տարաւ ուղտուքն
'ի տուն իւրեանց: Եւ իբրև եդին սեղան, նախ-
քան ուտել ինչ. պատմեաց նոցա եղիազար, թէ
ուստի՞, և կամ վասն է՞ր եկեալ էր. և թէ ո՞ա
յաջողեաց նմա Տր զխորհուրդս սրտի իւրոյ: Եւ
նոցա լուեալ վասն Աբրահամու, և որդւոյ նորա
Իսահակայ. ուրախ եղէն յոյժ և ասեն, 'ի Տէ

ել իրդ այդ. ո՛չ կարեմք հակառակ ինչ չար ասել բարւոյ։ Ահաւասիկ Ռեբեկա ա՛ռ և գնա՛. և եղիցի կին որդւոյ Տ՚ն քոյ՝ որպէս և խօսեցաւ Տ՚ր։ Յայնժամ եհան եղիազար զանօթս ոսկւոյ և արծաթոյ. և հանդերձս վասն Ռեբեկայ. և ետ ընծայս եղբարց նորա, և մօրն։ Ապա կերին և արբին. և ընդ առաւօտն հաւանութ՚ն Ռեբեկայ, օրհնեալ արձակեցին. այսինքն ուղարկեցին զնա ա՛մ ընչիւք իւրովք ընդ ծառային Աբրահամու, և ընդ արանց նորա. որ ժամանեալ առ Իսահակ սիրեցաւ՝ 'ի նմանէ. և Իսահակ մխիթարեցաւ վ՚ն մահուան սարրայի մօր իւրոյ։

Հ. Յետ մահու սարրայի՝ էա՞ռ Աբրահամ և զայլ կին։

Պ. Էառ Աբրահամ և զայլ ոմն կին քետուրայ անուամբ. յորմէ ծնան նմա այլ ևս որդիք վեց. (յորոց վասն միոյն 'ի նոցանէ, որում անուն էր „Եմրան, գրէ սուրբն մօսէս խորենացի, և վարդան պատմիչ Հայոց՝ թէ 'ի նմանէ սերեցան Պարթևք. յորոց և եղէն թագաւորք Պարսից և Հայոց. Արշակունիք անուանեալք։ Որպէս և 'ի զարմէ իսահակայ Բագրատունիք թագաւորեցին 'ի Հայս. Ը՚ բանին Ա՚յ առ Աբրահամ, թէ թագաւորք ազգաց 'ի քէն ելցեն։) Բայց Աբրահամ նախ քան զմեռանիլ իւր՝ բաժին տուեալ իւրաքանչիւր որդւոց իւրոց՝ արձակեաց յԱրևելս, և այլ տեղիս. և միայն զիսահակ արար ինքեան ժառանգ։

Հ. Ա՚ս է՞ր զիսահակ ընկալաւ ժառանգ. և ո՛չ զայլ ոք 'ի միւս որդւոց իւրոց։

Պ. Քանզի միայն իսահակ էր զաւակ հրաշից. որ յամուլ՝ ծեր՝ և 'ի կանանց օրինէ դադարեալ յար-

գանտէ ծնանելով՝ օրինակ էր Մեսիային, որ ան-
սերմն յղութ՟ ’ի կոյս արգանտէ ծնաւ։ ուստի և
իսահակ օրհնեցեալ յԱյ՝ յատկացաւ նմա. որոյ
վասն և ասաց թէ իսահակաւ կոչեսցի քեզ զա-
ւակ. զի ’ի սերնդոց նորա գալոց էր Մեսիայն,
յորմէ օրհնիլոց էին ամ ազգք երկրի։

Հ. Քանի՞ ամաց մեռաւ սուրբ նահապետն Աբրա-
համ։

Պ. Հարիւր եօթանասուն և հինգ ամաց մեռաւ ՆԲ
նահապետն Աբրահամ. յերկրին քանանացւոց ’ի
Պաղեստին. զոր Իսահակ և իսմայէլ որդիք իւր
թաղեցին զնա յագարակին Եփրօնի քետացւոյ.
յայրի անդ՝ ուր էր շիրիմ սարրայի։

ՊՐԱԿ Զ։

Յաղագս ծննդեան Եսաւայ և Յակոբայ որդւոց Ի-
սահակայ. և գնելոյ Յակոբայ զանդրանակութի՟ եղ-
բօրն՝ և օրհնիլոյն ’ի հօրէն։ Գլ. 25. և 27.

Հ. յԻսահակայ ևս ծնա՞ն որդիք։

Պ. Քառասնամեայ էր Իսահակ. յորժամ էառ զռե-
բեկայ՝ որ ամուլ էր. և Իսահակ գոլով վաթսնա-
մեայ՝ աղաչեաց զԱծ, որոյ ձայնի լուեալ՝ յղացաւ
Ռեբեկայ. և խաղացին մանկունք յարգանտի իւր-
ում, և գնաց հարցանել ’ի Տէ։ Եւ Տր՟ ասէ
ցնա. երկու ազգ են յարգանտի քում. և երկու
ժողովուրդք յորովայնէ քումմէ զատցին. և ժո-
ղովուրդ զժողովրդեամբ ել և ել առնիցէ. և ե-
րեցն կրտսերոյն ծառայեսցէ։ Եւ իբրև լցան աւ-
ուրք ծնանելոյ, և էին երկու որդիք. ել որդին
անդրանիկ շառագոյն իբրև զմորթ թաւ. և ան-
ուանեաց զանուն նորա Եսաւ։ Ապա ել եղբայր

նորա՝ որ ունէր զձեռն վգալշասլարէ Լսահաչ. և կոչեաց զանուն նորա Յակոբ ։ Լև իբրև ածեցին երկոքեանքն, Լսահակ եղև հմուտ որսորդ, և Լսահակ սիրէր զնա. զի ախորժիւ ուտէր յորսոյ նորա։ Լև Ռեբեկկա սիրէր զՅակոբ վասն ընդատուն . այսինքն միշտ ՚ի տան լինելոյ նորա ։

Յաճախ միում ՚ի դառնալ Լսահաչ յորսոյ նօթի և նքլեալ . խնդրեաց Յակոբայ յոսկնա_ թանէն զոր եփեալ էր ։ Լև նա ասէ. եղիջ երդ_ ամբ վաճառես ինձ այսօր զանդրանկուլիւն քոյ վասն թանիս, տայ ։ Լև Լսաւ արհամարհեալ զանդրանակուլին վաճառեաց երդմամբ Յակոբայ։ (վասն որկորոյ . որ սակս և պիղծ անուանեցաւ ՚ի սրբոյն Պօղոսէ.) Լև Լսաւ գոլով ամաց քառաս_ նից՝ Էառ զերկուս կանայս ՚ի դստերաց քեռայրոց և խնայրոց , որք դառնացուցանէին զիսահակ, և զՌեբեկկայ։

Ի. Յակոբ որ գնեաց զանդրանկուլիւն եղբօրն, ժա_ ռանգեաց նաև զօրհնուլիւն հօրն՝ որ հետևեալ ան_ դրանկուլիւնն ։

Պ. Լ՚ուր ուրեմն մտադրուիլ զայս խորհուրդ ։ Իբրև ծերացաւ Լսահակ, և աչք իւր վատացան ՚ի տե_ սանելոյ. կոչեաց զԷսաւ և ասէ. որդեակ իմ, ահա ես ծերացեալեմ, և ոչ գիտեմ զօր վախճանի ի_ միմ ։ Ար զգործիսդ և զնացեալ արա որս վասն իմ , և պատրաստեա ինձ խորտիկ որպէս սիրեմ ես . և բեր զի կերից, և օրհնեսցէ զքեզ անձն իմ մինչչև մեռեալ իցեմ ։ Լև լուաւ Ռեբեկկա զոր ինչ խօսեցաւ Լսահակ ։ Լև Լսաւ գնաց ՚ի դաշտ, որսալ որս հօր իւրոյ ։

Լև ռեբեկկա պատմեաց Յակոբայ՝ և ասէ. լուր

ինձ, և գնացեալ 'ի դաշտն բեր երկուս ընտիր և
փափուկ ուլս. և արարից խորտիկս հօր քո՝ որպէս
և սիրէ. և մատուսցես նմա, զի կերիցէ և օրհնես-
ցէ զքեզ: Ասէ ցնա յակոբ. մայր իմ, Եսաւ
եղբայր իմ թաւ է՝ և ես լերկ. գուցէ շօշափես-
ցէ զիս հայրն իմ, և լինիցիմ առաջի նորա ար-
համարհոտ. և ածիցեմ 'ի վերայ իմ զանեծս՝ և
ո՛չ զօրհնութիւն: Ասէ ցնա մայրն, յիմ վերայ ա-
նէծքն այն որդեակ. բայց դու լո՛ւր ինձ, և արա՛
զոր ասեմս: Գնաց Յակոբ և էած զուլսն առ
մայր իւր. զորս արար խորտիկս որպէս սիրէր հայր
նորա: Եւ զգեցոյց զազնիւ պատմուճանն Եսաւայ.
և զուլենիսն պատեաց 'ի բազուկս՝ և 'ի մերկ պա-
րանոցի նորա. և տուեալ զխորտիկն և զհացն, և
առաքեաց առ իսահակ: Եւ Յակոբ գնացեալ ասէ.
հայր ես եմ Եսաւ անդրանիկն քո. (ըստորում
գնեալ էր զանդրանակութիւն.) բերի ահա զխորտիկն
որսոյ իմոյ, արի՛ և կեր. զի օրհնեսցէ զիս անձն
քո: Եւ իսահակ ասէ ցորդին իւր. զի՞ է զի վաղվա-
ղակի գտեր. և նա ասէ Տ՟ր պատրաստեաց: Եւ նա
ասէ. արի ե՛կ և շօշափեցից զքեզ. եթէ դու իցես
որդի իմ Եսաւ թէ ո՛չ. որոյ 'ի շօշափելն՝ ասէ.
ձայնդ ձայն յակոբայ, և ձեռքդ ձեռք Եսաւայ, և
օրհնեաց զնա և ասէ. մատո՛ առիս զի կերից: Եւ
իբրև եկեր, ասէ. մօտ ե՛կ և համբուրեա՛ զիս: Եւ
'ի համբուրելն Յակոբայ, էառ իսահակ զհոտ հան-
դերձից Եսաւայ, և օրհնեաց զնա և ասէ: Ահա
հոտ որդւոյ իմոյ իբրև զհոտ անդոյ լիոյ. այսինքն
բարգաւաճ արտոյ. զոր օրհնեաց Տ՟ր: Եւ տացէ
քեզ Ա՟ծ 'ի ցօղոյ երկնից՝ և 'ի պարարտութի՟ երկ-
րի. և բազմութի՟ ցորենոյ և գինւոյ: Եւ ծառայ-

ասցեն քեզ. և երկիրպագցեն քեզ իշխանք. և եղիցիս Տի եղբօր քումի. և երկրպագցեն քեզ որդիք հօր քոյ. որ անիծանիցէ զքեզ անիծեալ լիցի, և որ օրհնեսցէ զքեզ օրհնեալ։ (օրհնուածին որ ըստ ամի վերաբերի առ Ա՝եսիայն)։

Իւ իբրև եղ Յակոբ յերեսաց հօր իւրոյ, եկն Եսաւ յորսոյ՝ և արարեալ խորտիկս տարաւ առ հայր իւր, և ասէ. յարիցէ հայր իմ և կերիցէ, զի օրհնեսցէ զիս։ Ձարմացաւ իսահակ և ասէ. իսկ այն ո՞վ է՝ որ որսացեալ եբեր ինձ խորտիկ, և կերի և օրհնեցի զնա. և եղիցի օրհնեալ։ Իբրև լուոհաւ Եսաւ աղաղակեաց ՚ի ձայն դառնացեալ յոյժ, և ասէ. Հայր օրհնեա և զիս։ Իւ ասէ ցնա, եկն եղբայր քոյ նենդուածք. այսինքն խաբէուածք. և էառ զօրհնուածիս իմ։ Իւ նա ասէ. իրաւի կոչեցաւ Յակոբ. զի այս երկիցս խաբեաց զիս. էառ զանդրանկուածիս իմ, և արդ էառ նաև զօրհնուածիս իմ. և ձայն բարձեալ ելաց և ասէ. միթէ մի՞ է օրհնուածի քո. և ինձ ո՛չ թողեր ինչ։ Իւ իսահակ սարջացեալ. այսինքն. մրմռքեալ ասէ. որովհետև ամ օրհնուածք օրհնեցի զնա՝ և Տէր կացուցի ՚ի վերայ քո. ահա ՚ի պարարտուածե երկրի եղիցի քեզ բնակուածի. և ՚ի յօդից երկնից ՚ի վերուստ եղիցի օրհնուածի քո. և այլն։

Ա. Սոյն նկարագրական պատմուածի. զի՞նչ համանալի մեկնուածի և խորհուրդ ունի։

Պ. Լիովին խորհուրդ մարմնաւորութե և տնօրէնուածե բանին Աւ տեսանի ՚ի սմին։ Զի անդրանիկ մարդն առաջին Եսաւն Ադամ, ծնաւ ՚ի տէ ղ՚անիլին շառաջոյն. այսինքն շիկակարմիր. կամ արիւնային, որ է Ադամ. և թաւ մարմնային կրնիք։ Իսկ բանն

Աճ ամենասպարզ էութիւն, որ մարմնաւորեցաւն կալեալ զպարզսպարէ Յսահակ. այսինքն զմարդկային բնութիւն, ծնաւ երկրորդ Ադամ. կամ ճա-կոբ. այսինքն Յարդ, անուանեալ Ցո. լերկ այսինքն ազատ ի կրից ախտից. ըստ ամի անարատ։

Անդրանիկ մարդն Յսահակ. վասն միոյ ոսկնաթանկ պողպ վաճառեալ զանդրանկութիւն իւր. և երկրորդ Ադամ ճակոբն Ցո գնեաց զնա քառասնօրեայ պահեցողութիւն։ Ձայն երկնաւոր Յսահակ, պատուհիրեաց Յսահակ հին մարդոյն՝ որպէս և քերել խորտիկ հնազանդութիւն՝ զոր սիրէր, զի օրհնեսցէ զնա։ բայց կորուսեալ գոլով նորա պատուհիրանազանցութիւն զնդրանկութիւն զինչեալ հոգին ԱՀ և զպատիկն, գնաց ի դաշտ ճի որպէս, այսինքն. գնել իւղ վասն շիջեալ լապտերի իւրոյ։

Իսկ նորն ճակոբ՝ խնդրանօք մօրն՝ այսինքն մարդկային բնութիւն. կամաւ Ձօր և հաճութիւն Ձոգւոյն, էառ ի դաշտէ կուսին զերկուս ուլս ընտիրս և փափուկս (այսինքն զսիրտ սուրբ, և զհոգի հեղ և խոնարհ, զոր Աճ ոչ արհամարհէ։ Այլ համարի իբրև զպարարտ ճէթ ծաւութիւն լապտերի մարմնոյն. որով և ծաւաճ խոկ Ձոգի Տն ի վերայ իմ, վայ և էօճ խոկ զնս։) և պատրաստեալ խորտիկս հնազանդութիւն կամաց Ձօրն, (զի ոչ խնդրեմ զնամն իմ, այլ զկամս այնորիկ՝ որ առաքեացն զնս։) մատոյց նմա զնորտիկն սիրելի։ Իւ զի լերկ էր ի մարմնային ախտից՝ (ո ի ճենջ յանդիմանեսցէ զնս վասն մեղաց։) յայտնեաց մօրն մարդկային բնութիւն զանմեղութիւն իւր՝ ասելով. Թէ փոխանակ օրհնութեան, այսինքն պատուոյ և վայելչութեան, անէծս. այսինքն զչարչարանս՝ և զմահ

ածիցեմ ՚ի վերայ իմ, կախեցեալ զնայուհ. (որպ
թէև հոգիս յօժար է՝ բայց մարմինս տկար։) իսկ
մայրն մարդկային բնութիւն, քաջալերեաւ զօրա-
յուցանէր զնա հանգոյն հրեշտակին երևելոյ յերկ-
նից՝ մինչ ՚ի տապնապի էր։ Ղուկաս. ԺԲ. 43։
թէ չիմ վերայ անկեալքն այն. այսինքն չարչարանքն՝
խաչն, և մահն. դու լուր իմոյս հայցուածոյ, և հա-
ճանայ ՚ի փրկել զնս։ Յայնժամ յանձն առեալ
զգեցաւ զանձինս. այսինքն անմեղութիւն պատմուճանն
նշանակ մարմնոյ. և պատեցաւ ուրնի թաշարձիւ
մուշկով, մարմնոյն չարչարանացն կրիւք. զի նշա-
կերպարանեալ առ ընծիւր հօրն՝ մատուցանիցէր
զնորոգութիւն նորոյ ուխտի. որպ նայնն՝ թէև էր ձայն
բանին Յակոբայ. (որ ոչ յանձնէ իւրմէ ինչ խո-
սէր, այլ զոր ինչ լսէաւէր ՚ի հօրէ ղայն խօսէր։)
բայց ՚ի շօշափելին չարչարանաց, և ՚ի հոտոտելին
հնազանդութիւն, էր փոխանակ նշոյ. (շօշափե-
ցէք զիս և տեսէք. զի ոչ եմ լերկ. այսինքն
պարզ ոգի թարց մարմնոյ և ոսկերայ։) Այս և
Հայրն երկնաւոր խաչակ՝ հաճեալ ՚ի խոնարհու-
թիւն և ՚ի հնազանդութիւն նշաւ կնքելոյ
Յակոբայ բանի իւրոյ՝ օրհնեալ զնա, և ՚ի հոտոյ
հանդերձիցն Աստուածորդի մարմնոյն, նշաւ հոտ ան-
դոյ լինելոյ. այսինքն բազմութիւն յորինոյ հաճա-
տայելոյ. որք ժողովեալ են ՚ի շուխմարան սրբոյ
Յերեզեցւոյ վերնոյն Երուսաղէմ Աս-
տուածորդի արեանն հեղեցելոյ, որ յօղեալ յերկնից
պարարտեցուցանէ զերկիր. այսինքն զմարդիկ։ Ես
ամ ազգք և իշխանք ծառայեսցեն և երկիրպագ-
ցեն նմա. (զամ ինչ հնազանդ արար ՚ի ներքոյ
ոտից նորա. որպ և տուաւ ամ իշխանութիւն յեր-

կինս և յերկրի:) Եւ որ անիծանիցէ զնա՝ անի-
ծեալ եղիցի. (զի որ ո՛չ հաւատայ 'ի նա արդէն իսկ
դատապարտեալ է. և բարկութիւն Ա՛յ, մնայ 'ի վ՛ր
նորա:) Եւ որ օրհնեսցէ՝ այսինքն հաճատասցէ,
օրհնեալ եղիցի. և ունիցի կեանս յանձին իւրում.
որ թէև մեռանիցի կեցցէ:

Եւ իբրև դարձաւ յորսոյ մարդն ապստամբ
եսաւ 'ի հաճատս, և մատուցեալ խորտիկ հնազան-
դութեան պատոճիրանացն Ա՛յ, զըղջմամբ և լալով
խնդրեաց զօրհնութիւն, մորմոքեալ հօրն՝ պատոճի-
րեաց հնազանդիլ օրհնեալ որդւոյն (զի որ ո՛չ
պատոճէ զորդին, ո՛չ պատոճէ զՀայր զառաքիչն
ն՛ր.) և բնակիլ 'ի պարարտութեան երկրի սրբոյ Ե-
կեղեցւոյ. զի ընկալցի 'ի ցօղոյ շնորհաց հոգւոյ նո-
րին օրհնութիւն 'ի վերուստ, և եղիցի որդեգիր Ա՛յ
(Եւ որք հաճատասցեն յանուն նորա, ոյք ո՛չ յա-
րենէ՝ և ո՛չ 'ի կամաց մարմնոյ, և ո՛չ 'ի կամաց
առն, այլ յԱ՛յ ծնան:)

Արդ Յակոբն մարմնաւոր. այնու օրհնութիւն
հօրն, ստացաւ երկոտասան որդիս նահապետս եր-
կոտասան ցեղից. և ի՛էլ կոչեցեալ եղև հայր մե-
ծի բազմութեան ամբոխից: Նմնա՛ս և Յակոբն
հոգևոր սիրելի գոլով հօրն՝ օծեալ փրկիչ ան-
ոճանեցաւ. և ընտրեալ զերկոտասան Առաքեալս
'ի նստիլ յերկոտասան յաթոռ 'ի դատել զերկո-
տասան ազգն ի՛էլի. եղև հայր և Տ՛ր անհուն հա-
ճատացելոց:

Ահաճասիկ խորհրդաճոր իմացոճած Աճ՛ային
սուրբ գրոյն հնոյ կտակարանի. որոյ բոլորն ըստ-
ոճեր և օրինակէ նորոյս. զոր ը՛ն համբակ կարեաց

իմոյ՝ կալի՝ համառօտապէս համարձակեցայ գրել այ֊քանիկս ։

ՊՐԱԿ Ի։

Ցաղագս վախճանեան յակոբայ առ լաբան, և ամուսնութեանն նորա ։ և ծննդեան երկոտասան ցեղապետից։ և դարձի յակոբայ ։ Ի֊ս և վասն մահու իսահակայ։ գլ։ 28։ յ՝ 36 ։

Ա։ Զի՞նչ արար Ի֊սաւ Ցակոբայ՝ վասն տղոյ երկրորդի զլկանայց ։

Պ։ Իբրև ետես Ի֊սաւ, որ՝ ի զրկիլ յանդրանկութենէն զլկեցաւ նաև յօրհնութենէ հօրն խաբանօք յակոբայ, ոխացաւ նմա յոյժ ։ և յառաջագրեաց սպանանել զնա ։ Իսկ իմացեալ մօրն՝ խօսեցաւ ընդ իսահակայ ։ որոյ հաճանութենէ խրատեցին զյակոբ հեռանալ անտի և գնալ առ լաբան քեռի իւր, և ամուսնանալ անդ ։ և Ցակոբայ առեալ զօրհնութենէն նոցա եկ՝ ի Ճանապարհ ։ Ի֊ս հասեալ՝ ի տեղի մի ննջեաց։ և եւոես՝ ի տեսլեան սանդուխք (օրինակ խաչին Քեի։) բարձրացեալ յերկրէ յերկինս։ յորմէ հրեշտակք եկ և էջս առնէին, և Տէր հաստատեալ կայր՝ ի գլուխ սանդխոց խաչին ։ Ի֊ս ասէ ։ ես եմ Ա֊ն Աբրահամու և իսահակայ ։ մի երկնչիր զի զերկիրդ այդ քեզ տայ և զաճակիք քում։ և եղիցի զաճակ քո իբրև զաւազ երկրի ։ և օրհնեսցին՝ ի քեզ ։ և՝ ի զաճակիք քում ամենայն ազգք երկրի ։ Ի֊ս ես ընդ քեզ եմ յամ ճանապարհս քո՝ պահել զքեզ ։ և դարձուցից զքեզ յերկիրս այս ։ և ոչ թողից զքեզ մինչև արարից զոր ինչ խօսեցայ ընդ քեզ ։ Զարթեաւ յակոբ ընդ առաւօտն։ և կանգնեաւ անդ արձան, կոչեաց

զտեղին բեթէլ. այն է տուն Այ։ Եւ ապա գնաց 'ի խառան առ լաբան, որ էր եղբայր մօր իւրոյ Ռեբեկայ. որ ունէր երկուս դուստրս, անուն երիցուն Լիա. և անուն կրտսերոյն Ռաքէլ։ Եւ զի աչք լիայի գիճացեալ էին. և ռաքէլ գեղեցիկ էր յոյժ. յակոբ սիրահարեալ նմա՝ եդ պայմանս ընդ լաբանայ. ծառայել նմա եօթն ամ 'ի հովութեան. զի տացէ նմա փոխանակ վարձուց զռաքէլ 'ի կնութի։ բայց 'ի լրանալ եօթն ամաց՝ լաբան ետ նմա խաբանօք գիշերոյ զերէց դուստրն իւր զլիա. և խոստացաւ տալ նմա և զռաքէլ՝ եթէ եօթն ամ՝ ևս ծառայեսցէ։ Եւ յակոբ ծառայեալ նմա եօթն ամ ևս՝ էառ 'ի կնութի նաև զռաքէլ կրտսեր քոյրն լիայի։ (յօրինակ հրէից՝ և հեթանոսաց ընկալմանն Քս̄ի 'ի սուրբ Եկեղեցի իւր։)

Հ. Որդիք ծնա՞ն Յակոբայ 'ի կանանցս յայսցանէ։

Պ. Լիա ծնաւ նմա նախ զչորս որդիս. զռուբէն անդրանիկն. զՇմաւօն, զՂևի. և զՅուդայ. և դադարեաց 'ի ծննդոց։ Եւ զի ռաքէլ ամուլ էր՝ նախանձեալ լիայի, ետ զԲաղղայ նաժիշտ իւր առն իւրում յակոբայ. յորմէ ծնան Դան, և Նեբթաղիմ. իբր որդեգիրք ռաքելայ։ Զայն տեսեալ լիայի, ինքն ևս 'ի հեճուկս քեռ իւրոյ, ետ զելբայ աղախին իւր յակոբայ առն իւրում. որ 'ի նմանէ ևս ծնան Գադ. և Ասեր։

Յետ այսորիկ գնաց ռուբէն յանդն, և գտեալ խնձորս մանրագորաց եբեր առ լիա մայր իւր։ Տեսեալ ռաքելի՝ ասէ ցնա. տուր և ինձ 'ի մանրագորաց որդւոյ քո. (զի օգուտ էր որդեծնութե̄.) Եւ նա ասէ. ո՞չ է քեզ շատ զի առեր զայր իմ, մի թէ և զմանրագորս որդւոյ իմում առնուցուս։

Եւ ասէ ռաքէլ՝ ննջեսցէ ընդ քեզ զայս գիշեր փոխանակ մանրագորաց որդւոյ քոյ։ Եւ իբրև եկն յակոբ յանդէ այսինքն յադարակէ ընդ երեկս. և կամէր գնալ որպէս յեռանդն 'ի խորանն ռաքէլայ. ել ընդ յառաջ նորա լիա և ասէ. առիս մտցես այսօր. զի 'ի վարձու կալայ զքեզ վասն մանրագորաց որդւոյ իմոյ։ Եւ յակոբ ննջեաց ը նմա զայն գիշեր։ Եւ լոհաւ Ած լիայ, և յղացաւ. և ծնաւ յակոբայ որդի հինգերորդ. և կոչեաց զանուն նորա խաքար. որ է վարձ։ Եւ յղացաւ միւսանգամ և ծնաւ որդի վեցերորդ. և կոչեաց զանուն նորա զաբուղօն։ Եւ յետ այնորիկ ծնաւ դուստր մի, և անուանեաց զանուն նորա Դինա։ Եւ յիշեաց տէր Ած զռաքէլ. եբաց զարգանտ նորա, յղացաւ և ծնաւ յակոբայ որդի. և կոչեաց զանուն նորա Յօսէփ. ասէ յաւելցէ ինձ Ած որդի միւս ևս։ Եւ յետ ծննդեան յօսեփայ յառաջադրեաց յակոբ դառնալ 'ի տեղի իւր։

Հ. Ունէր յայնժամ յակոբ ստացուածս՝ որ յառաջադրեաց դառնալ 'ի տեղի իւր։

Պ. Տակաւին չունէր ինչ յայնժամ. այլ 'ի հայրենիսն իւր շատանայր. բայց իբրև զեկոյց լաբանայ աներ իւրում թէ կամի դառնալ 'ի հայրենին իւր. խնդրեաց լաբան զի առ ժամանակ ինչ ևս մնասցէ. քանզի օրհնեաց զիս (ասէ) Ած յոտին քում. և զի չորեքտասան ամ ծառայեցեր ինձ վն դստերացս. այժմ յայտ արա՛ զվարձ քո՝ և տաց քեզ։ Ասէ յակոբ. այս լիցին վարձք իմ։ Ահա ոչխարք քո՝ և այծք սպիտակք են. և խայտք և գորշք տակաւք. զատցուք զայնս։ Եւ այսուհետև 'ի սպիտակաց ո՛րքան խայտախարիկք և պիսակք, և գորշք

. ծնանիցին, նոքին եղիցին ինձ վարձք։ Հաճեցաւ լաբան այսու պայմանի, և պատուհասալ զնայոտսն, և զգնեսական ետ որդւոց իւրոց արածել. և զսպիտակն ելիծող ի ձեռս յակոբայ. զորս արածէր երիքօրեայ ճանապարհաւ բացեայ ի նոցունց։ Եւ էառ յակոբ գաճազան շերտ դալար ընկուզի և սօսւոյ, և կեղևեալ արտր նկարչեաս. և դնէր զգաճաղանսն զոր քերծոյր յաճազանսն ջրարբիից ջրոյն, և զկծեին խաշինքն ի գաճազանսն մինչ յղանային և գային ըմպել զջուրն, և ծնանէին գորշախայտ՝ և պիսակ՝ և խայտախարիճս։ Եւ որ ինչ ծնանէր սպիտակ աննշան. զգնես զատանէր լաբանայ. և զնըշանաճորս առնոյր վասն իւր։ Եւ օրհնեաց Աճ զյակոբ. և ի միջոյի վեց ամաց մեծացաւ յոյժ յոյժ. և եղէն նորա ոչխարք՝ այծք՝ և արջառք բազում յոյժ. և ծառայք և աղախնայք և ուղտք և էշք բազում։

Եւ լուսաւ յակոբ զբանս որդւոցն լաբանայ որք ասէին. էառ յակոբ զամ ինչս հօր մերոյ։ Եւ երեսք լաբանայ ևս՝ ոչ էին ըստ նմա որպէս երէկն և յեռանդն։ Եւ ասէ Աճ ցյակոբ, դարձիր յերկիր հօր քո, և յազգ քոյ. և ես եղէց ընդ քեզ։

Եւ կոչեալ յակոբ զիանայս իւր՝ խօսեցաւ ընդ նոսա յանդի անդ՝ ուր էին խաշինքն՝ և ասէ. տեսանեմ ես զերեսս հօր ձերոյ. զի ոչ են ընդիս որպէս յառաջն. Եւ Աճ պատուիրեաց ինձ դառնալ յերկիր ծննդեան իմոյ։ Ասեն ցնա. հայր մեր վաճառեաց քեզ զմեզ. և մեր այսուհետև ոչ գոյ բաժին և ժառանգութիւն ի տան հօր մերում. զայս զոր ինչ ասաց քեզ Աճ։ Եւ էառ յակոբ զիա-

նայս և զնմ ընտանիս և զստացուածս իւր և չոՀեաց. և անցեալ ընդ ուհան դիմեաց ՚ի լեառն գաղաադու: Ազդ եղև լաբանայ թէ չոՀեաց յա-կոբ. համայն աղխիւք իւրովք: Առեալ զեղ-բարս իւր պնտեցաւ զննի նորա ՚ի ձանապարհ եօթն աՀուրց՝ և եհաս ՚ի լեառն: բայց Աճ երև-եցաւ ՚ի տեսլեան գիշերոյ առ լաբան և ասէ. զգոյշ լեր յանձին քումմ խօսիլ ինչ անզգամուԹիւն ընդ յակոբայ:

՚ի տեսանել լաբանայ զյակոբ, զննի բազում բանիւ՝ ասէ. զնաՀրդ զդստերս և զՀոտունս իմ գաղտագողի առեալ փախեալ անմտուԹիւն. և ես կամէի առնել քեզ չար. բայց Աճ հօր քոյ պա-տուՀիրեաց ինձ առնել խաղաղուԹիւն ընդ քեզ: Արդ՝ դիցուք ուխտ ՚ի մէջ մեր՝ և ճետսցուք միշտ ՚ի բարեկամուԹիւն: Նա զնի ռաքէլ գողացեալ էր զտսկեայ կուռս հօր իւրոյ՝ և եդեալ ընդ պատա-տաւ (որ է փալան) ուղտու. նստէր ՚ի վերայ նոր ՚ի խորանի իւրում: զոր լաբան պահանջէր. և Յակոբ ոչ գիտելով զայն՝ ասէ. առ ոքաւմ և գտանիցէ՝ մեռցէ անձն այն: Որոնեաց զնա լաբան յամ տեղիս, և ոչ գտեալ ուրեք՝ եկն առ ռաք-քէլ: Նա նա ասէ. մի խնստ Թողեսցի քեզ հայր. զնի յօրինի կանանց գոլով՝ ոչ կարեմ կալ յոտին, և նա ոչ գտեալ յայլ ուրեք՝ դադարեաց յորո-նելոյ: Նա ապա կերին և արբին, և կարկառ քա-րանց կանդնեալ՝ եդին ուխտ հաշտուԹեան. և լա-բան դարձաւ կեաս. և յակոբ դիմեաց ՚ի ճանա-պարհ իւր:

Զ. Զինչ արար Ենսաւ յորժամ էտես զեղբայր իւր յակոբ:

*

Պ. Իբրև մերձ եղև յակոբ 'ի Պաղեստին, առաքեաց զարս 'ի լեառն սէիր՝ յորում էր բնակութիւն Եսաւայ, ասել ցնա. թէ ահա յակոբ ծառայ քո, դարձ արարեալ գայ առ քեզ ընտանեօք և ստացուածովք. դարձան արքն և ասեն. ահա եղբայր քոյ գայ 'ի սէիրայ չորեքհարիւր արամբք: Զարհուրեալ յակոբ ասէ. Տ̄ր Ած̄ Աբրահամու և ի-սահակայ հօր իմոյ, որ ասացեր ցիս. Երթ երկիր ծննդեան քո. և բարի արարից քեզ. ապրեցո՛ զիս 'ի ձեռաց Եսաւայ եղբօր իմոյ: Եւ զատուցեալ բաժանեաց զհօտս իւր յերկուս բաժինս. զի եթէ Եսաւ հարցէ զառաջինն՝ ապրեսցի երկրորդն:

Եւ էհան 'ի նոցունց զընծայս եղբօր իւրում 'ի բազում ջոկս. և պատուիրեաց առաջնոյն, և երկրորդին և հետևելոց ասել ցնա՝ 'ի հարցանելն, թէ ընծայք են ծառայի քում յակոբայ. և ինքն գայ զկնի մեր: Եւ 'ի նմին գիշերի էառ զերկուս կանայսն. և զերկուս աղախնեայսն, և զմետասան որդիսն, և զա̄մ որ ինչ իւրն էր. և անցոյց ընդ ձորն, և ինքն միայն մնաց:

Եւ ահա Այր մի մարտեաւ ընդ նմա մինչև ց'առաւօտ. և իբրև ետես թէ ո՛չ յաղթեաց նմա՝ բուռն էհար զամոլաջլէ. այսինքն սինիրէ զստի նորա, և ընդարմացոյց. այսինքն թուլացոյց զամոլաջիլ զստին, այսինքն պուտին, յակոբայ 'ի ըմբշամարտիլն, որ է 'ի կիւլէշ կամ քիւշտի բռնելն ընդ նմա, և ասէ. արձակեա՛ զիս քանզի այգ եղև. և յակոբ ասէ. ո՛չ արձակեցից զքեզ՝ եթէ ո՛չ օրհնեսցես զիս: Եւ նա ասէ. զինչ է անուն քո. և սա ասէ ց'նա յակոբ: Եւ ասէ ց'սա յայսմ հետէ

իսրայէլ կոչեսցի անուն քո. որ է Ածատես. կամ Ածարեալ. զի ժուժկալեցեր ընդ Ա՛Յ. և ընդ մարդկան զօրաւոր լիջիր։ Եհարց յակոբ և ասէ. պատմեա՛ ինձ զանուն քոյ. և ասէ զի՞ հարցանես զանուանէ իմմէ. և օրհնեաց զնա։ Եւ յակոբ կոչեաց զանուն տեղւոյն այնորիկ տեսիլ. զի տեսի (ասէ) զԱծ դէմ յանդիման և ապրեցաւ անձն իմ։ Եւ ծագեցաւ Արեգակն, և յակոբ կաղայր 'ի զստէ անտի։ վասն այսորիկ ո՛չ ուտեն հրէայք զամոլաջիլ պուտին մինչև ց'այսօր։

Ամբարձ յակոբ զաչս իւր՝ և ետես զի գայր Եսաւ եղբայր իւր չորքհարիւր արամբք։ Եւ զատոյց զմանկտիս 'ի լիա և յ'ռաքէլ, և յերկուս աղախնեայս կարգաւ. և ինքն անցեալ յառաջ եօթնիցս երկիրեպագ մինչև հասանիլն առ նա։ Եւ եսաւ ընթացեալ յառաջ գիրկս էարկ նմա և համբուրեայ. և անկեալ զպարանոցօք՝ լացին երկոքեանքն։ Եւ 'ի հարցանել եսաւայ վասն մանկանց. եկին և նոքա մարբք հանդերձ և երկր պագին՝ նմա։ Եւ նա համբուրեալ զամենեսին հաշտեցաւ ընդ նմա։ Եւ ոչինչ առեալ յընծայից անտի բաժանեցան 'ի միմեանց։ Եսաւ գնաց 'ի սէիր. Եւ յակոբ եկեալ բնակեցաւ 'ի սիւքէմ յանդիման քաղաքին։ Եւ ստացեալ զվիճակ յանդին յեմովրայ հօրէ սիւքեմայ հարիւր ոչխարի. եհար զխորան իւր, և շինեալ սեղան կարդաց զԱծ ի՞էլի։

Աստանօր սիւքեմ որդի եմովրայ բռնադատեաց զդինա դուստր յակոբայ. որ գնացեալ էր 'ի քաղաքն տեսանել զդստերս նոցա։ Որոյ ապայ 'ի խնդրելն զնա 'ի յակոբայ հօրէ նորա՝ 'ի կնութի։

Շ՞մաՀօն և ղևի եղբարք դ՞ինայի՝ նենգուԹ՞իւ հա-
ՀուԹ՞իւն յուղևալ ասացին. եԹ՛ ընդ Համայն ա-
բամ՞ք քաղաքին Թ՞լփատիք, տամք • զի ընդ ան-
Թ՞լփատից ո՛չ կարեմք առնել խնամուԹ՞իւ: Եւ զի
եամովը հայր սի՛ւքեամց իշլան էր քաղաքին • հա-
Ճ՞ոյց զամենայնին ողոք բանի՛ւք. և նոքա Համայն
Արուք քաղաքին Թ՞լփատեցան: Եւ մի՛նչ յեռօ-
րեայ ցաՀան էին, Շ՞մաՀօն և ղևի մտեալ ՛ի քա-
ղաքն, ՛ի սուր սուսեր՞ի մաշեցին զամ արուս նոցա:
և առեալ զքՀնա զքոյր իւրեանց՝ գերեցին զկա-
նայս և զաղՀկունս նոցա. և աՀարի առեալ զքա-
ղաքն, եկին ՛ի վրանս իւրեանց: Եւ ՛ի բարկ՞ան՞ալ
յակոբայ ՛ի վերայ շ՞մաՀօնի և ղևեայ, պատասխա-
նեցին, զի իբրև զքՀ՞ քարշեցին զքոյրն մեր:

Եւ չՀեալ անտի յակոբայ եկն ՛ի բեթէլ •
ուր երեան զտեսիլ սանդ՞ղոյ՝ և շինեայ ՛ի նմին
սեղան: Անդ կրկին երևեցաւ նմա ԱՆ և օրՀ-
նեայ զնա՝ և ասէ • ո՛չ ևս կոչեսցի անուն քոյ
յակոբ • այլ իսրայէլ եղիցի անուն քոյ: Եւ եմ
տէր ԱՆ քոյ. աճեսջի՛ր, և բազմասջի՛ր. ազգք և
ժողովուրդք ազգայ եղիցին իւրէն. և Թագաւորք
յերանայ քոյ ելցեն: Եւ զերկիրդ զոր ետու Աբ-
բահամու և իսահակայ քեզ տայ զնա. քեզ եղի-
ցի. և զսերմի՛ն քում յետ քո: Եւ վերացաւ ԱՆ:
Եւ ցակոբ կանգնեայ ՛ի տեղւոջն սեղան • ուր
խօսեցաւ ընդ նմա ԱՆ. և էարկ իւղ ՛ի վ՞ր նո՛ր:

Շ՞ուՀեայ ՛ի բեթէլայ. և իբրև մերձեցաւ մտա-
նել յերկիր էփրաթայ. ծնաւ ռաքէլ: Եւ դըժ-
ուա՞արածէն եղեալ մեռաւ • և Թաղեցաւ անդ ՛ի
բեթ՞ղՀեմ. և հայր մանկանն կոչեաց զանուն նո՛ր
բենիամ՞ին:

Եւ եղէն Յակոբայ որդիք երկոտասանք. որոց անուանք էին, Ռուբէն, Շմաւօն, Ղևի, Յուդայ, Դան, Նեբդաղիմ, Գադ, Ասեր, Իսաքար. Զաբուղօն, Յօսէփ, և Բենիամին. որք և եղէն երկոտասան նահապետք. երկոտասան ցեղիցն իսրայիէլի:

Հ. 'Ի սոցունց երկոտասան որդւոց ի՞էլի. յորոյ ցեղէ շառաւիղեցաւ Քս:

Պ. 'Ի ցեղէն Յուդայի ծագեցաւ փրկիչն Ծի. որպէս և գրի 'ի սուրբ Աւետարանի Մատթէ. և Ղուկաս. զի սուրբ նահապետն Յակոբ 'ի մահու իւրում յօրհնելն զորդիս իւր. Մարգարէացաւ հոգւովն Այ. 'ի տալն զօրհնութի՞ Յուդայի որդւոյ իւրոյ՝ թէ մի՞ պակասեսցի իշխան 'ի յուդայ. և մի՞ պետ յերանաց նորա. մինչև եկեսցեն հանդերձեալքն, (որք են թագաւորք 'ի տանէ դաւթայ.) և նա է ակնկալութի՞ հեթանոսաց. (որ է Մէսիայն Յս Քս: ծննդ. գլ. 49. հմ. 8. ց' 11.)

Հ. 'Ի դառնալն Յակոբայ, եգի՞տ կենդանի զհայրն իւր զիսահակ:

Պ. Այո՛. տակաւին կենդանի էր իսահակ 'ի դարձին Յակոբայ. որ յետ մահուան ռաքէլի՝ եկեալ 'ի Քեբրօն եգիտ զնա կենդանի. յորմէ և ընկալաւ կրկին օրհնութի՞ 'ի մահու նորա:

Հ. Քանի՞ ամաց էր Իսահակ, մինչ մեռաւ:

Պ. Հարիւր ութսուն ամաց մեռաւ Իսահակ. 'ի 2288 ամի Ծի. որ ընդ հօր իւրոյ Աբրահամու եկաց. 75. ամ. և ընդ Յակոբայ որդւոյ իւրոյ ամս 120: զոր Եսաւ և Յակոբ որդիք իւր թաղեցին զնա 'ի շիրմի հօր իւրոյ:

ՊՐԱԿ. Ը:

Յաղագս վաճառման Յօսեփայ յեգիպտոս՝ և լինելոյ նորա անդ երկրորդ փարաւոնի: Եւ իջանելոյ յակոբայ յեգիպտոս համայն ընտանեօք, և մահու նորա: և Յօսեփայ: գլ. 37. ց՝ 50:

Հ. Ո՞ւր կալաւ բնակութի՞ Յակոբ, զկնի մահուան հօր իւրոյ Իսահակայ:

Պ. Բնակէր Յակոբ համայն ընտանեօք յերկրին քանանացւոց՝ կանգնելով զվրանս իւր աստ և անդ, մինչև ց՝ իջանելն ընտանեօք յեգիպտոս:

Հ. Վասն է՞ր գնաց Յակոբ յեգիպտոս համայն ընտանեօք հանդերձ:

Պ. Էջ Յակոբ յեգիպտոս 'ի կատարումն բանին Ա՛յ. զոր ասաց Աբրահամու. որպէս գրեցաւ 'ի Պրակ. Բ: Թէ զաւակ քո պանտուխդ եղիցի յօտար երկրի. ուր տառապեցուսցեն զնա. և ապա ելեալ տիրեսցեն երկրին քանանացւոց:

Հ. Ո՞րպէս տնօրինեաց Ա՛ծ զկատարումն բանին իւրոյ:

Պ. Հիանալիք և անհասանելիք են 'ի մէնջ խորհուրդք նախատեսութե՛ն Ա՛յ. քանզի մինչ բնակէր Յակոբ յերկրին քանանացւոց Յօսէփ որդի նորա տակաւին մանուկ և գեղեցիկ. զոր հայր իւր յոյժ սիրէր. որոյ և ագուցեալ ծաղկեայ պատմուճան՝ պահէր միշտ առ ընթեր իւր. զերազս տեսեալ պատմեաց եղբարց իւրոց: նախ՝ Թէ 'ի միում դաշտի կապէաք զորայս, որայն իմ եկաց ուղ որդ. և որայքն ձեր երկիրպագին որայի իմոյ: երկրորդ, տեսանէի որ Արեգակն և լուսին մետասան

Աստղքք երկիրպագանէին ինձ։ Ու այս նախանձեալ եղբարւյ նորա՝ խնդրէին դնալուկ սպանանել զնա։ իսկ Հայրն՝ պահէր զբանն ի սրտի իւրում։

Ցետ ամսոյ մինչ եղբարքն արածէին զխաշինս հօր իւրեանց ի Հեռաւոր տեղիս. և Ցակոբ կամեցող լուր լինել առնուլ ի նոցանէ. առաքեաց զՑօսէփ պաշարիւք՝ ի տեսութիւն նոցա, և բերել ինքեան լուր։ Գնաց Ցօսէփ հարցանելով արանց ճանապարհին, որ իքրև տեսին զնա եղբայրքն զի գայր, խորհեցան սպանանել։ Բայց ռուբէն Անդրանիկ եղբայր նոցա՝ ապրեցուցանել կամեցող, ասէ. Մի թափաւորեսցուք զձեռս մեր յարիւն եղբօր մերոյ. ընկղեսցուք զնա ի գուբ մի անջրդի. ուր մեռանիցի անսոխաղ։ Ու հանեալ զծաղկեայ պատմուճանն արկին ի գուբ։ Ու մինչ ոչ էր անդ ռուբէն, և միւս եղբարքն նստեալ էին ուտել. անյանգէին ուղտուք վաճառականք իսմայելացիք՝ որք երթային յեգիպտոս։ Ցայնժամ խորհրդատուեցան Ցուդայի հանեալ զնա ի գբէն վաճառեցին իսմայելացւոց քսան դահեկանի արծաթոյ. ի ՃՀ86 ամի Ցհ. և յօսէփ էր ԺՀ ամեայ։ (Ահա ճասիկ խորհուրդ մատնութիւն Ցեի ի յուդայէ։)

Ու ի դալ ռուբենի՝ ոչ գտեալ զՑօսէփ ի գբին, պատառեաց զհանդերձս իւր՝ և ասէ. Ո՞ւր պատասխանի տացուք հօր մերոյ։ Ու խորհրդով ամենեցուն առեալ զծաղկեայ պատմուճանն թաթիւեցին յարիւն ուլոյ այծեայ. և յղեալ առ Ցակոբ ասեն. Թէ զայս գտաք ի ճանապարհին. զի գաղան չար եկեր զյօսէփ։ (Անօրէն հրէայք՝ ներկեցին զծաղկեայ զանարատ մարմինն Ցեի արեամբ նորա՝ և մատուցին հօր Ա՛՝ թէ գաղան

չար եկեր զՅՄ որդի քո։) Եւ հայրն սուգ էառ 'ի բազում աւուրս, և ոչ կարէր մխթարիլ։

Եւ իսմայէլացիք տարեալ զՅօսէփ յեգիպտոս՝ վաճառեցին Պետափրեայ դահճապետի փարաւօնի։ Եւ Ած օրհնեաց վասն յօսեփայ զՄմ տուն և զինչս դահճապետին։ Եւ նորա տեսեալ զիմաստութի և զշնորհս յօսեփայ՝ կացոյց զնա 'ի վերայ Մմ տան, և Մմ ընչից իւրոց, և յոյժ սիրէր զնա։ Իսկ վավաշ կին նորա տռփացեալ 'ի նա՝ զի յոյժ գեղեցիկ էր. բռնաբարեաց զնա զի ննջեսցէ ընդ ինքեան։ Եւ 'ի փախչիլ յօսեփայ, ձորձ իւր մնաց 'ի ձեռս նորա զոր կալեալէր։ որով և զրպարտեաց առն իւրոյ՝ թէ բռնի կամեցաւ լլկել զիս։ Եւ դահճապետին հաւատացեալ բանի կնոջն, բարկութ՝ մատնեաց զանմեղն Յօսէփ 'ի բանտ Արքունի մահապարտից։ ուր ետ նմա Ած շնորհս և իմաստութի. և հաճոյ եղեալ յաչս բանտապետին, կարգեաց զնա վերակացու բանտին և Մմ բանտարկելոց։ և եղև անդ իբր ամս երիս և էր Ած ընդ նմա։

Եւ մինչ էր 'ի բանտին իբր ամ մի, բարկացաւ փարաւօն 'ի վերայ ներքինեաց. այսինքն Պալատականաց իւրոց, և էարկ զնոսա 'ի բանտ. ընդ որս էին Մատակարարն և Տակառապետն փարաւօնի. և բանտապետն յանձնեաց զնոսա յօսեփայ. որ կայր 'ի սպասու նոցա։ Յետ քանի մի աւուրց երազ տեսին երկոքեանքն, և պատմեցին յօսեփայ։ Ասէ նախ տակառապետն, տեսանէի որթ առաջի իմ. որ ունէր զերիս ուռս կանաչս յոյժ. և երեք ողկոյզք խաղողոյ 'ի նոսա. զորս ճմլէի և լցեալ 'ի բաժակն փարաւօնի զոր ունէի 'ի ձեռին իմում,

և տայի ըմպել նմա։ Ասէ Յօսէփ երեք ուռքն, և երեք ողկոյզքն՝ երեք օրք են. յետ երից աւուրց դարձցիս անդրէն յառաջին իշխանութիւն քո 'ի պաշտօն փարաւօնի։ Եւ յիշեսցես զանմեղութիւն իմ առաջի նորա առնել ինձ ողորմութիւն. զի մանուկ Եբրայեցի եմ. որ գողացեալ զիս 'ի հօրէ իմմէ վաճառեցին. և զրպարտեալ մատնեցին 'ի բանտ։

Լուեալ Մատակարարին որ ուղիղ մեկնեաց, ասէ. Եւ ես տեսանէի. որ երիս խանս նաշհոյ ունէի 'ի գլուխ իմ. և 'ի վերնում խանի. այսինքն սուֆրայի. կամ խօնչայի. էր յամ կերլեաց զոր ուտէր փարաւօն. և թռչունք երկնից ուտէին զնա 'ի խանէ անտի՝ որ էր 'ի վերայ գլխոյ իմոյ։ Ասէ ց' նա յօսէփ. երեք խանքն երեք օրք են. յետ երից աւուրց բարձցէ փարաւօն զդլուխ քո 'ի քէն. և զմարմին քոյ կախեալ 'ի փայտէ թռչունք կերիցեն։ զկնի երից աւուրց իբրև կատարեցան մեկնութիւնք երազոց. որ գլխատեցաւ մատակարարն. և կացուցաւ տակառապետն յառաջին պաշտօն իւր, մոռացեալ զյօսէփ ոչ յիշեաց զնա։

Եւ յետ երկուց ամաց. այսինքն յերրորդի ամի բանտարկութեան յօսեփայ. զերազս ետես փարաւօն և սոսկացաւ յանձն իւր. և ոչ ոք գտաւ 'ի մոգուց և 'ի գիտաց որ մեկնիցէին։ Յիշեաց տակառապետն զյօսէփ. և զեկոյց փարաւօնի զեղեալսն։ Առաքեաց փարաւօն՝ և հանեալ զյօսէփ 'ի բանտէ՝ փոքրեցին զհերս նորա. և փոխեալ զպատմուճանն՝ կացուցին առաջի փարաւօնի։ Եւ փարաւօն պատմեաց նմա զերազս իւր. նախ՝ ասէ. թուէր թէ կայի առ յեզր գետոյն. յորմէ ելանէ-

ին եօթն գերք և փախուկ երթինք ։ և սրաճէջն
ի խաղի անդ։ այսինքն յանկեան միոյ գետոյն։ Իւ
ահա այլ ևս եօթն դժնդակք երթինք զպղերք և
վտիտք մարմնով ելանեին ի գետոյն ։ և ուտէին
զառաջին ընտիրսն ։ Զարթեայ և ննջեցի, և
դարձեալ տեսի, որ եօթն հասկք ելանեին ի մի-
ումն փնջի լիք և պեղեցիկք ։ Իւ այլ ևս եօթն
հասկք ապականեալք և խորշակահարք ելանեին
ճատ առ նոսա ։ և կլանեին զառաջինն հասկսն ։
Ասէ Յովսէփ ։ մի է երկոցունց մեկնութիւն զոր Ա-
ցոյց քեզ ։ որ եօթն ամք լինելոց են արդա-
սեօք երկրի յոյժ և յոյժ առատութիւն ։ և ասայ-
ս եօթն ամք ևս լինելոց են սաստիկ սով մեծ ։ որ
ոչ ևս յիշելոյ են զառաջինն եօթնամեայ լիու-
թիւնսն։ Արդ՝ կայո Այր իմաստուն։ որ ի լիութիւն
ամաց շահմարանեսցէ զարմիսս, և զգերբիս եր-
կրի։ զի կերակրեսցէ յեօթն ամս երաշտութիւն զըլ
ժողովրդոց երկրի քոյ ։ կարի հաճեալ փարաւոնի
ի մեկնութիւն երազոյ՝ և յիմաստութիւն յօսեփեայ ։
զնա ինքն կացոյց ի վերայ գործոյն ։ և երկրորդ
ինքեան արարեալ՝ կարգեաց իշխան ի վերայ ամ
ենիպատուոց ։ և հրամայեաց քարող կարդալ զի
հնազանդեսցին նմա ամենեքին, որպէս թէ ինք-
եան փարաւոնի ։ և կոչեաց զանուն նորա փսոմ-
փիթոմփիանէ ։ որ թարգմանի փրկիչ ծի ։ Իւ ետ
նմա զասանեթ դուստր Պէտափրեայ քրմի Արեգ
քաղաքի ի կնութիւն։ և նմա յանձնեաց զայն գործ
առնել որպէս և դիտէր ։ Իւ Յովսէփ շահմարա-
նեաց զանհուն մէթէրս պարենիցն յամն եօթն ի
լիութեան անտի ։

՝ի լինել սովու, և ՝ի քանան ոչ դտանիւր հաց։ լուեալ Յակոբ Թէ յեգիպտոս վաճառի ցորեան ։ առաքեաց զտասնեսին որդիս իւր յեգիպտոս՝ գընել ցորեան և բերել ։ բայց զբենիամին համա մայրն յօսեփայ ոչ առաքեաց ընդ նոսա ։ զի նո վաս մխիթարիւր փոխանակ եղբօրն ։

Եղբարք յօսեփայ եկեալ յեգիպտոս ներկայա ցան նմա։ և յօսէփ ոչ տուեալ նոցա ծանօթու թիւն՝ սպառնացաւ ետր լրտեսաց ։ և էարկ զնո ՝ի բանտ յաւուրս երիս ։ որոց յասելն Թէ մեք որդիք եմք միոյ առն Յակոբայ ։ և էաք երկոտա սան եղբարք, յորոցս միոն գազան չար եկեր ։ և միոն կայ առ ընդեր հօր մերում ։

Հրամայեաց Յօսէփ զի մաճօն եղբայրն Թո զուլ ՝ի բանտի։ զի ՝ի միւսանգամ գալստեան իւր եանց՝ բերցեն ընդ ինքեանս և զբենիամին ՝ի ստուգուլիւն բանից՝ զոր ասէին ։ և զմիւսս ար ձակեալ եւս նոցա ցորեան ։ և պատուիրեաց ա բանոյ իւրոյ՝ դնել զարծաթ նոցա զանխլաբար ՝ի քրձի իւրաքանչիւրոյ ։

Ժամանեալ նոցա առ հայր իւրեանոյ պատմե ցին զամենայն ։ Եւ ՝ի Թափել զցորեանն՝ գտեալ զարծաթս իւրեանց զարմացան ։ և ոչ գիտէին զի՛նչ խորհել ։ ՝ի գալ միւսոյ աշխն ստիպեալ ՝ի սովու ։ կրկին հրամայեաց Յակոբ որդւոց իւրոյ գնալ յեգիպտոս և բերել ցորեան Արծաթիայ, տանելով ընդ ինքեանց և զառաջինն Արծաթն ։ բայց զբենիամին ոչ կամէր յղել ընդ նոսա։ Իսկ նոքա հաղիւ հաղ երաշխաւորուԹիւ յուդայէ հա ձեցուցեալ զՅայրն՝ առին ընդ ինքեանս և զբե նիամին ։ և եկեալ յեգիպտոս յանդիման եղէն

յօսեփայ ընծայիւք ՚ի պղծոց երկրին։ Եւ նորա հանեալ զշմաշն ՚ի բանտէ, եւ նոցա սեղան՝ և արար պատիւս ըմպել արծաթի բաժակաւ իւրով։ Ապա հրամայեաց տալ ցորեան. և զարծաթսըն նոցա դնել կրկին գաղտ ՚ի քուրձս նոցա։ և զարծաթի բաժակն իւր դնել ՚ի քրձի բենիամինի։ Եւ երբև ելին ՚ի Ճանապարհ. հասին նոցա արտաքոյ քաղաքին արք յօսեփայ՝ որոնել զբաժակն իւր գողունի։ Եւ նորա ասեն, մեզի այնչափ գտանիցի գողունին։ Եւ երբ գտաւ ՚ի քրձի բենիամինի սոսկացան ամենեքին. և ասեն ցմիմեանս՝ այս ամենայն եկն ՚ի վերայ մեր վասն դաւաճանութեանն զոր արարաք անմեղ եղբօր մերոյ յօսեփայ. և բերեալ եղեն ամենեքին առ Յօսէփ. և նա ցուցանէր լեզ կամքն արկելով միայն զյանցաւորն բենիամին։ Մատեաւ յուդայ, և անկեալ յերկիր ասէ. Տէր լծող զդա, և զիս պատժեա ոչ և կամիս. զի երաշխի եմ ես հօր իմոյ՝ վասն դրա. և նա ՚ի դառնալ մերում եղէտ ՚ի տեսցէ զդա իսկոյն մեռանի։ Եւ յօսէփ ոչ կարելով արգելուլ զարտասուս իւր, եմուտ ՚ի սենեակն եւայ. և լուայեալ զերեսս՝ եզ արտաքս։ Ապայ ետ ծանօթութենէ մետասանից եղբարցն իւրոց. որք առ ահին անկեալ երկիրպագանէին նմա և լալով խընդրէին ընդունումն. ՚ի կատարումն երազոյն։ իսկ նա քաջալերս ետ նոցա մի երկնչիլ. այլ ուրախ լինել. զի Աճ արար զայս ամ։ և ասաց երթալ և բերել զՀայր իւր ամ ընտանեօք և ալխիք։ Ապա յայտնեաց յօսէփ փարաւոնի, և հրամանաւ նորին յղեալ կառս և գրաստս և զամ ընծայս. և զամ հարկաւորս ալեայս վասն Ճանապարհի ընդ

եղբարց իւրոց առ հայրն, և կոչեաց յեգիպտոս համայն ընտանեօք՝ անասնովք, և աղխիւք. զեկուցանելով թէ տակաւին հինգ ամ ևս տևելոց է սով սաստիկ. և մանաւանդ որ ինքն ևս յոյժ բաղձայ տեսանել և առնուլ զօրհնութիւն իւր։ Իմացեալ յակոբայ զկենդանութիւն և զփառաւորութիւն որդւոյն, լցաւ անճառելի ուրախութիւն. և հարցեալ Ա՛յ զոհիւք և պատարագօք. լուաւ 'ի տեսլեան որ ասէր. մի երկնչիր յակոբ իջանել յեգիպտոս. զի ես ընդ քեզ եմ, և հանից զքեզ անտի իսպառ։

Չուեաց Յակոբ 'ի քանանու ամ ստացուածովք և ընտանեօք. որք էին ոգիք եօթանասուն և հինգ. և էջ յեգիպտոս 'ի 2298 ամի Ծի։ Եւ Յօսէփ հրամանաւ փարաւօնի բնակեցոյց զնոսա 'ի Գեսեմ 'ի միում նահանգի Եգիպտոսի իբր սեպհական տեղի բնակութեան եղբարց իւրոց՝ և սերնդոց նոցին, և կերակրեաց զնոսա 'ի սովու։ Եւ զի Յօսէփ ամուսնացեալ էր ընդ Ասանեթայ դստեր պետափրեայ. Քրմի Արեգ քաղաքի. ունէր 'ի նմանէ երկուս որդիս զՄանասէ և զեփրեմ. որք օրհնութիւն Յակոբայ կարգեցան 'ի շարս երկոտասան ցեղապետից. Եփրեմ փոխանակ Յօսեփայ. և Մանասէ փոխանակ ղևեայ. զի ղևտացիք ըստ բանի սրբոյ նահապետին յակոբայ. ցրուեցան 'ի մէջ ի՞էլի, զորս Մօսէս կարգեաց փասն քահանայութիւն. ո՛չ տալով նոցա յատուկ ժառանգութիւն։

Եւ Յակոբ մերձեալ 'ի մահ՝ կոչեաց զորդիս իւր, տալ նոցա օրհնութիւն. գլ. խ՛թ. որոց իւրաքանչիւրոց ետ օրհնութիւն մարգարէական հոգւով,

և ծանոյց որ ինչ լինելոց է յապային ցեղից իւրեանց ։ որոյ երբ թէ յիշելով զարթաբս շմաճօնի և զնեայ՝ որ ընդ սկիզմանցիս վասն դինա քեռ իւրեանց՝ երկոցունց ՚ի միասին ասէ, շմաճօն և զնի եղբարք • կատարեցին զանիրաւութիւն ՚ի կամաց իւրեանց • (բայց յատկապէս վասն զարմին զնեայ խօսի. ըստորում ցեղն շմաճօնի կալեալ ժառանգութիւն, ոչ ցրուեցաւ ՚ի մէջ իսրայէլի ։) ՚ի խորհուրդս նոցա մի մտիլ անձն իմ • և ՚ի ժողովս նոցա. ոչ հաձեսցին միտք իմ։ (որով գուշակեաց զնորհուրդ և ժողով քահանայապետից և քահանայից՝ վասն սպանման Մեսիայի՝ և Աբաքելոց՝ և այլ հետևողաց նոցին։) Անիծեալ սրտմտութիւն նոցա, զի յանդուգն էր • և ոխութիւն նոցի, զի խիստ էր • բաժանեցից զնոսա ՚ի մէջ յակոբայ. և ցրուեցից ՚ի մէջ իսրայէլ։ ծն. 49. 7։ որ արդարև զինի մահուանն Յեի • ահա առանց ազգահամարութեան և թարց յայտնութիւն ցեղից իւրեանց՝ կան և ծնան միանձն ցայսօր ցրուեալք ՚ի մէջ հրէից. որոց յառաջին բաժանումն և ցրուեցումն՝ էր ապացոյց սոյնոյ վերջին իսկապէս, և մշտնջենապէս բաժանման և ցրուեցման իւրեանց։) Իսկ վասն Յուդայի յայտնապէս եցոյց • որ ՚ի ցեղէ նորին յառնելոց էին թագաւորք • և ՚ի նոյն թագաւորական ցեղէ մարմին առնելոց էր Մեսիայն ակնկալութիւնն հեթանոսաց։ Զկնոյ նաև զնշանս ժամանակի գալ ստեան նորա • որ դադարելոց էր իշխանութիւնն և թագաւորութիւնն ՚ի ցեղէ յուդայի. որպէս գրեցաւ ՚ի Պրակ. 7։ Յու զինի տալոյ օրհնութեանց յաբեալաւ առ հարս իւր ՚ի բարձրք ծերութեան։ Յու Յոսէփ հրամանաւ փարաւոնի տարեալ զմարմին նորա ՚ի

քանան. Թաղեցին 'ի շիրիմս հարց իւրոց առ ընթեր Աբրահամու և Իսահակայ: Եւ 'ի դառնալ իւրեանց յեգիպտոս. եղբարք Յօսեփայ պակուցեալք, և կրկին ներողութիւն առեալ 'ի նմանէ քնակեցան 'ի Գեսեմ. ուր բազմացան սերունդք նոցա յերկերիւր և տասն և 'ի հինգ ամս, և եղեն կարօղք հալածելոյ զԱմուրհացիս, և զայլ միւս ազգս քանանացւոց. և տիրել յերկրին այնմիկ ըստ խոստման Այ:

Հ. Որքան յամս եկաց յեգիպտոս սուրբ նահապետն յակոբ. և քանի ամաց մեռաւ:

Պ. 17 ամ եկաց Յակոբ յեգիպտոս. և մեռաւ 147 ամաց. 'ի 2315 ամի Ծի:

Հ. Յօսէփ քանի ամաց մեռաւ:

Պ. Յօսէփ գոլով 17 ամեայ վաճառեցաւ. և երեսնամեայ բարձրացաւ յիշխանութիւն եգիպտացւոց. և մեռաւ 110 ամաց. 'ի 2369 ամի Ծի. և թաղեցաւ 'ի տապանի յեգիպտոս: Եւ պատուհիրեաց որդւոցն իէլի հանել զոսկերս իւր յելանելն իւրեանց յեգիպտոսէ: (Արտահանեցան այսքանիկս 'ի գրքոյ Ծննդոց:)

ՊՐԱԿ. Թ:

Յաղագս տառապանացն իսրայէլացւոց յեգիպտոս և ծննդեան Մօսէսի և որդեգրութեան նր դստերն փարաւօնի. և վասն փախչելոյ նորա յերկիր մադիանաց:

Ելից. 1. 2:

Հ. Յետ Մահուան Յօսեփայ. ոմպէս կեին որդիքն իէլի յեգիպտոս:

Հ. Հովիւք խաշանց էին նոքա. և բարւոք վարէին

զկեանս իւրեանց՝ նաև զկնի մահուան Յօսեփայ ի ոչ սակաւ ամս։ Բայց յետոյ յարեաւ այլ փարաւօն որ ոչ ճանաչէր զՅօսէփ. և մոռացեալ էին զերախտիս նորա. և ոչ ևս ճանաչէին զՔրիստոնեայսն Աե. այլ պաշտէին զկուռս և զնոտիս. և յիշատակ Այ էր միայն ի մէջ եհլայացոց։ որք և բազմացեալ էին յոյժ։ որոց յաճախութեանն զգայեալ փարաւօնն՝ կրկեր կասկած. Թէ ի լինիլ ի միք պատերազմի, գուցէ յարիցեն և սրբա տանէ ընդ Թշնամիս. քանզի եգիպտացիք գարշելով ի նոյունց կուիլին և յաղթահարելին զնոսա։ վ որոյ և փարաւօն սկսաւ չարչարել և տառապեցուցանել՝ ծառայեցուցանելով ի գործ աղիւսակուԹե և կաւոյ. և այլ իւրայ ի պէտս կառուցմանց քաղաքաց. կամ սնդոց և այլ շինուածոց. բայց այսու ևս՝ ոչ կարաց նուաճել. զի օր ըստ օրէ աճէին և զօրանային։

Տեսեալ փարաւօնի որ ոչինչ օգտէ. խօսեցաւ ընդ սեպհօրայ և ընդ փուայ մանկաբարձաց եգիպտացւոց. զի ի ծնանիլ կանանց եբրայեցւոց՝ զէգս միայն ասլրեցուսցին, և զարուն սպանցեն։ իսկ մանկաբարձայ երկուցեալ Յ՚Այ. ոչ անսացին փարաւօնի. որոյ և օրհնեաց Աե։ Նա ի հարցանելն փարաւօնի, պատասխանեցին. Թէ կանայք նոցա ոչ են իբրև զկանայս եգիպտացւոց. զի նախ ծնանին, ապա կոչեն զմանկաբարձս։ Ցայսժամ փարաւօն հրամայեաց եգիպտացւոց. զի ամ նորածինն արու մանկտիս եբրայեցւոց արկցեն ի գետն. և զէգս ապրեցուսցին։

Ա. Ասացին ելեալք երկար ժամանակ ի մէջ այսպիսի սուաստանաց։

Պ. Կրեցին նոքա զայս ամ ջրելս, մինչև որ սրբա-
զան նախամարգարէն Մովսէս ևհան զնոսա յերկիլ-
տոսէ Աճայեն հկզբ և քարձր բանկաւ։

Ն. Ո՞վ էր այդ սրբազան նախամարգարէն Մովսես։

Պ. Մարգարէն Մովսէս էր ՚ի սերնդոց Աբրահամու
և յորդւոյն Յակոբայ. ՚ի զարմէ Դևեայ. որդի
ամրամայ. որդւոյ կահաթու որդւոյ ղևեայ. և ղևի
որդի յակոբայ էր 157 ամայ մինչ մեռաւ յե-
գիպտոս ՚ի 2385 ամի Ադ. որպ որդին կահաթ էր
յայնժամ 93 ամայ և որդի նորա ամրամ. 41
ամայ մինչ ամուսնայաւ ընդ Յոքաբեթայ որ էր
՚ի դստերոյ զարմի ղևեայ. և ունէր դուստր մի
Մարիամ անուն։ և մինչ ՚ի 2430 ամի Ադ ծնաւ
Ահարօն. և յետ երից ամայ՝ յորում արկանէին
եգիպտացիք զԱրուս՝ երբայեցւոյ ՚ի գետն, ծնաւ
և Մովսես ՚ի 2433 ամի Ադ։ Եւ սոյն գետարկու-
թիւն մանկանց դադարեցաւ զկնի մօհոճան նոյնպ
փարաւօնի։

Ն. Արկիր՞ն և զՄովսես ՚ի գետն. և կամ ձրպես ապ-
րեցաւ։

Պ. ՚ի ծնանիլ Մովսեսի, Ամրամ և Յոքաբեթ ծը-
նօղք նորա լաւութիւն զնա յամիս երիս։ Եւ զի
կայտառ էր մանուկն, անձարացեալ եդին զնա
յարկղ մի կպրեալ և արկին ՚ի խաղ մի գետոյ։
Եւ թեղմուտիս դուստր փարաւօնի՝ որ եկեալ էր
լուանալ և զբօսնուլ ՚ի խաղն անդ. տեսեալ զարկ-
ղըն հրամայեաց բերել։ Եւ բացեալ բանկն, ե-
տես զմանուկն զի լայր. խնդացաւ եաւ և ասէ,
՚ի մանկանց երբայեցւոց է դա։ Եւ քոյր մանկանն
որ դիտէր ՚ի հեռաստանէ տեսանել թէ զինչ
լինիցի մանկանն։ Եկն առ դուստրն փարաւօնի և

ասէ. կամիս զի կոչեցից կէն մի ոտնտուս ի կա-
նանց երբայեցւոց։ Եւ նորա ի հաճիլն, գնացեալ
էած զմայր մանկանն։ Եւ դուստրն փարաւոնի ետ
նմա զմանուկն սնուցանել և բերել ինքեան։ Եւ
իբրև հաստատեցաւ մանուկն՝ բերեր զնա մայր նո-
ւա դուստրն փարաւոնի. զոր ընկալեալ արար ինք-
եան որդեգիր. զի ամուլ էր։ Եւ կոչեաց զանուն նո-
Մովսէս. ասէ՝ ի ջրոյ հանի զնա. ըստ նշանակութե-
բառին եգիպտացւոց։ Եւ Մովսէս վարդացեալ՝ ի
տան դստեր փարաւոնի վարժեցաւ ամ իմաստու-
թեամբ եգիպտացւոց. և էր զօրաւոր բանիւք և
գործովք իւրովք։

Հ. Ո՞րքան ժամանակ ետաց Մովսէս ի տան դստեր
փարաւոնի։

Պ. Մինչև քառասնամեայ լինէր իւր ետաց ի տան
դստեր փարաւոնի. ուր ուսաւ բազում գիտութիւն,
և զանազան արուեստս եգիպտացւոց։

Հ. Ապա զի՞նչ արար Մովսէս, և ուր գնաց։

Պ. Յաւուր միում եւ Մովսէս ի տեսութիւն ազգի
իւրոյ եբրայեցի եղբարց. և ետես որ եգիպտացի
մի հարկանէր զոմն ի նոցանէ. հայեցեալ Մովսէս որ
ոչ ոք գոյր ի նոցանէ, սպան զեգիպտացին և թա-
ւեաց ընդ աւազաւք։ Եւ ի միւսում աւուր կրկին
եւ ի տեսութիւն եղբարց։ Եւ ետես որ երկու
հեբրայեցիք կռուհէին ընդ իրեարս. ասէ ցնոսա դուք
եղբարք էք, ընդէ՞ր զիրկք զմիմեանս։ Ասէ ցնա
միւն ի նոցունց. զի՞ է. մի թէ և զիս սպանանել
կամիս որպէս սպաներ երէկ զեգիպտացին։ Յոլ եղև
բանս այս փարաւոնի, և կամէր սպանանել զնա։
Եւ Մովսէս զսահիմարեալ փախեաւ յերկիրն մա-
դիամացւոց. ուր ամուսնացաւ ընդ սեպփիոբայ

դատեր յոթորայ Քրմի մադիամացւոց։ Եւ ինց անդ յամն քառասուն, եւ արածէր զխաշինս յոթորայ աներ իւրոյ ։ ուր եւ ծնան նմա երկու որդիք ՚ի սեպփորայ կնոջէ իւրմէ. անուն միոյն Գերսամ. եւ միւսոյն Եղիազար ։

ՊՐԱԿ· Ժ·

Ծաղկաց երեւեցեալ Աւ Մովսէսի հրով ՚ի մորենւոջն ։ եւ կարգեալ զնա ՚ի հանելոյ զիսրայելացիս ՚ի ծառայութենէ եգիպտացւոց ։ եւ վասն տասն պատժոց։ Ելից գլ· 3· յ՚ 13։

Ն· Որպէս կարգեցաւ Մովսէս ՚ի հանել զիսրայէլացիս յեգիպտոսէ ։

Պ· Մինչ արածէր Մովսէս ։ յերկրին մադիամացւոց զխաշինս յոթորայ Աներ իւրոյ ՚ի լեառն քորեբ ։ եւտես յաՀուր միում ՚ի հեռուստ զմորենին վառեալ՝ որ ոչ այրէր։ մերձեցաւ տեսանել թէ զինչ էիցէ այս մեծ նշան։ Զայն եղև ՚ի մորենւոյն ։ կոչ այդը եւ մի մերձենար։ եւ Հան զկօշիկս յոտից քոց։ զի տեղիդ յորում կաս դու երկիր սուրբ է ։ ես եմ ԱՆ Հարցն ձերոյ ԱՆ Աբրահամու, ԱՆ Իսահակայ։ եւ ԱՆ Ցակոբայ ։ տեսի զչարչարանս ժողովրդեան իմոյ, եւ լսի փրկել զնոսա ։ Եւ արդ եկ առաքեցից զքեզ յեգիպտոս ՚ի հանել զնոսա անտի ։

Ն· Ցօժարութիւն յանձն էառ Մովսէս լինել առաջնորդ ամբոխի ։

Պ· Ընդդիմացաւ Մովսէս ։ եւ աղաչեաց զԱՆ յղել զայլ ոք զորաՀոր քան զինքն։ զի ես տկար եւ նրբաձայն եմ ասէ։ քայց ԱՆ հրամայեաց զնալ ։

Յայնժամ ասէ Մօսէս, Տր՝ եթէ հարցանիցեն լ-
ոմ առաքեաց զքեզ. և զիՐնչ է անուն նորա.
զիՐնչ ասացից: Ասէ Ած. որ էնն յաւիտենական
Ած հարցն ձերոց առաքեաց զիս ասասցես: (Ա-
տէն յայտնեաց Ած զանուն իւր գոլ է յաւիտե-
նական. որ է իսկական անունն Այ:) դարձեալ
տոէ Մօսէս եթէ ո՛չ հաւատասցեն. զիՐնչ նշանս
ցուցից.

Յայնժամ ցուպն որ 'ի ձեռին Մօսէսի՝ արկ-
մամբ 'ի գետին լինիլ օձ. և դարձեալ 'ի կալ-
նուլն զտտանէ՝ լինիլ կրկին ցուպ: նաև տանել
զձեռն 'ի ծոցն՝ և սպիտակիլ նմա 'ի հանելն իբրև
զձիւն. և կրկին ամփոփելովն 'ի ծոցն, վերստին
հաստատիլ 'ի գոյն մարմնոյն: Եւս և ջրոյն փոխիլ
յարիւն՝ յառնուլն ափով 'ի գետոյ անտի: զնշանս
զայսոսիկ զկարի խորհրդաւորս, հրամայեաց Ած
ցուցանել որդւոցն իէլի. և փարաւօնի (որ թարգ
մանի տիտեռն, այն է կոկորդիլոս. զի յատուկ ա-
նուն նորա էր Հռասէն. որ զկնի սեսոստրի փա-
րաւօնի ելեալ էր յաթոռ թագաւորութեան եգիպ-
տացւոց:) բայց զեկոյց ևս Ած Մօսէսի՝ թէ ես
խստացուցից զսիրտ փարաւօնի չարձակել զժողո-
վուրդն, զի պատժեցից զնոսա. և հզօր բազկաւ
իմով հանից զժողովուրդն իմ. զի ծանիցեն թէ
ես եմ Տր Ած: Իսկ Մօսէս կրկին աղաչեաց զայլ
ոք առաքէլ. զի ես նրբաձայն եմ և տկար՝ ասէ:
Եւ Ած հրամայեաց նմա առնուլ ընդ իւր և
զԱհարօն եղբայր իւր իբր Մարգարէ. և ինքն լի-
ցի Ած փարաւօնի: կրկնեաց Մօսէս, զիՐնչ ասա-
ցից փարաւօնի: Ասէ Ած. ասասցես թէ՝ տուր
ինձ զժողովուրդն իմ, զի տօն է Այ մերոյ. և գնաս

ցուք երից աւուրց ճանապարհաւ հեռի յեգիպ-
տոսէ առնել նաւակատիս և զոհել Այ մերոյ։
Հնազանդեալ Մօսէսի գնաց յեգիպտոս։ Եւ ի-
բրև մօտեցաւ, ազգմամբն Այ ել ընդ յառաջ
նորա Ահարօն եղբայր իւր. որոյ զեկուցեալ Մ-
օսէս զպատգամս Այ. գնացին 'ի միասին նախ աւե
տել որդւոցն իէլի ցուցմամբ նշանացն, Ապա գնա
ցին առ փարաւօն. որ խստացեալ՝ սկսաւ առաւել
ևս չարչարել զժողովուրդն 'ի գործ ողիւսար-
կութեան։

Հ. Քանի՞ ամաց էին Մօսէս, և Ահարօն։

Պ. Ութսուն ամաց էր Մօսէս. և Ահարօն ութսուն
և երից։

Հ. Եցոյց Մօսէս զնշանսն զայնոսիկ փարաւօնի։

Պ. Նախ եցոյց որդւոցն իէլի, որք հաւատացին բա-
նի Տն, Ապա մինչ առաջի փարաւօնի ևս՝ գաւա-
զանն Մօսէսի եղև վիշապ օձ. յանէս և յամրէս
գլխաւոր կախարդք, ընդ այլոց կախարդաց փարա-
ւօնի զգաւազանս իւրեանց ևս՝ դարձուցին յօձ։
Իսկ գաւազանն Մօսէսի մինչ օձն էր՝ եկուլ զգա-
ւազանս նոցին օձացեալս, և այսպէս հակառակ
կացին Մօսէսի, և այլ նշանաց, բայց միշտ յաղ
թեցան։

Հ. Ընդ այսց նշանաց՝ և 'ի յաղթիլ կախարդաց,
արձակեաց փարաւօն զժողովուրդն։

Պ. Այնքան խստացաւ սիրտ փարաւօնի չարձակել
զիսրայէլացիս. մինչև որ ընկալաւ զտասն պատիժս
ապա թէ հազիւ արձակեաց։

Հ. Զի՞նչ էին այն տասնեքին պատիժք։

Պ. Նախ՝ ջուր գետոյն՝ և ամ լճակաց նոցա, հար-
մամբ գաւազանին Մօսէսի եղեն արիւն. և սա-

տակեցան ձկունք՝ որք 'ի նոսա և նեխեցան. և ջուր ո՛չ կարէին ըմպել եգիպտացիք: Իսկ իսրայելացւոց ջուր էր: Արարին զայս և կախարդք:

2. Երկրորդ՝ գորտովք լցան ա̅մ տունք, ապարանք. սենեակք, և մահիճք փարաւօնի. և ամենայն եգիպտացւոց. իսկ յի՞էլացիս ո՛չ գոյր և ո՛չ մի: Արարին և զայս կախարդք:

3. Երրորդ՝ Մուն, այսինքն յոյժ մանր մժեղք ելին 'ի հողոյ. և սաստիկ խայթելով տանջեցին միայն զԵգիպտացիս: զայս ո՛չ կարացին առնել կախարդք. և խոստովան եղէն թէ Մատն Ա̅յ է դա:

4. Չորորդ Եկն անթիւ շանաճանճ. և յոյժ տանջեաց զեգիպտացիս միայն:

5. Հինգերորդ՝ Սատակեցան ա̅մ անասունք, ձիք, և արջառք Եգիպտացւոց. իսկ ի՞էլացւոց, և ո՛չ մի:

6. Վ՝ եցերորդ, կեղ՝ և խաւարտ. այսինքն Քոս և բոր եղև յա̅մ մարդ՝ և յանասունս եգիպտացւոց. նաև 'ի կախարդս: և ո՛չ յի՞էլացիս:

7. Եօթներորդ՝ հուր և կարկուտ միացեալ սաստիկ տեղեաց յերկնից, և ջարդեալ այրեաց զա̅մ տունկս նոցա. և սպան զբազում մարդիկ, և զանասունս Եգիպտացւոց: բայց ի՞էլացւոց՝ ո՛չ ինչ վնաս լինէր:

8. ՈւԹերորդ մարախ անհուն եկն, և սպառեաց զա̅մ բանջար և խոտ. և զարմտիս երկրի նց̅: իսկ ի՞էլացւոց ո՛չինչ:

9. Իններորդ՝ խաւար շօշափելի եղև ա̅մ երկրի նոցա. և եղև մուղտ աղջամղջին յերիս աւուրս. որ ո՛չ ոք տեսանէր զոք՝ թէև իցէին առընթեր իրերաց: և լոյս էր ի՞էլացւոց: (Եւ յայսոսիկ յա̅մ

Հարուածս կոչէր փարաւօն զմովսէս, և խոստանայր արձակել զժողովուրդն, և աղաչէր զի բարձցին հարուածքն. և յորժամ անցանէր, կրկին խստանայր. մինչ զի սոյն վերջին անգամի սպառնացաւ սպանանել զՄովսէս, եթէ վերստին սպահանջեսցէ զարձակումն ժողովրդեանն։ Ելից. ժ. 28։

ժ. Տասներորդ՝ ի միում գիշերի մահ եղիցի ամ անդրանկաց Եգիպտացւոց, եթէ մարդկան, և եթէ անասնոց առ Հասարակ։ բայց յանդրանկաց իճլայցւոց ոչ ոք մեռաւ ամենևին։ Ել ապա հա- զիւ թէ զիջաւ փարաւօն արձակել զնոսա։

Ա. Ո՞րպէս եղև որ միայն անդրանիկք եգիպտացւոց մեռան. իսկ իճլայցւոց և ոչ մի։

Պ. Պատուիրեաց Աստ Մովսէս իճլայցւոց. առնուլ իւրաքանչիւր տուն ի տասներորդի աւուր ներսան ամսոյ. Արու գառն մի տարեւոր անարատ, և պա- հել. և ի չորեքտասաներորդի աւուր նոյնոյ ներ- սան ամսոյ. (որ է եղանակ գարնան. յորում Արե- գակն լինի ի խոյն կէսեդանակերպի. և չորեք- տասան օր լրման նոյնոյ ներսան անուանեալ զատ- կական լուսնոյ։) զենուլ զղառն յայնմ երեկոյի և յարենն նորին գծել ի վերայ սեմոյ և բալա- ճորայ տան իւրեանց. և զգառն խորովել ամբողջ. և զմաշկն՝ և զգլորտիս և զպլուն պրել. և ի դիշերի այնմիկ իւրաքանչիւրոք մատանել՝ ի տուն իւր քոլոր ընտանեօք. և զգրունս փակել և ոչ ելանել ի դուրս մինչև յ՚առաւօտ. և ուտել ի գիշերի այնմիկ զամբողջ գառն ընդ բաղարջիւ, և ոչ բնաւ ընդ խմորեալ հայիւ։ և ընդ գառն եղեգն. որ է եղջդակ. կամ դաւնիճ. պսակքն ամէն մատալ. և մի թողուլ մնասն ինչ ի գառանէն ընդ

այդն. և զոսկերս նորա մի փշրել. այլ՝ ելցել յառաւօտուն: Յե լեայի կոչիկ նոցա յոտս. և գօտի ընդ մէջ. և ցուպ՝ ի ձեռին. զի զատիկ, կամ Պա֊ սէք. այսինքն ելք. կամ անցք Տ՛ն է: (Յե առա֊ ւօթին օր ևս բաղարջ՝ և ոչ բնաւ խմորեալ հաց կերիցեն. և մի ևս գտանիցի ՚ի բնակութիւնս իւր֊ եանց. որ առ որում եթէ գտանիցի խմորեալ հաց. սատակեսցի անձն այն ՚ի ժողովրդենէ:) առ֊ նելով նոցա այսպէս, սատակիչ հրեշտակին որ սպանանելոյ էր զամ անդրանիկս եգիպտացւոց. տեսանելով զարիւն գառին ՚ի սեամն և ՚ի բարա֊ ձորս. այսինքն ՚ի վերին և ՚ի ներքին սեամն դրանց նոցա՝ անցցէ զնգաթօք. և ոչ մտանել ՚ի ներս սպան ցէ զանդրանիկս նոցա:

Ահա այսու փրկարար խորհրդով զերծան իս֊ րայէլացիքն: Յե այս օրէն զատկի բաղարջակերաց, կարի զուարճաբար պահէին. և յամենայնում տի֊ յամենան նիսանի ՚ի չորեքտասաներորդի աճուր լուս նոյ կատարէին զսոյն տօն մինչև յ՚գալուստն Քրիս֊ ի մինչև յ՚վերջին կոյծ աւուրն Էֆմայ. որ կայն֊ ժամ եղծան ամ օրէնք նոցա ըստ Ա՛արգարէու֊ թեան Դանիէլի. գլ. 9. 26. 27: զի ձրշմարիտ գառն անարատ ծ՛ն. զենաւ ՚ի խաչին ՚ի նոյնում աճուր մեծի Պասեքին վայ այժմ պահեն նոքա միայն զպատուհէր բաղարջակերութեանն. և ոչ գառին. պատճառելով թէ չունիմք տաճար հաս֊ տատուն:

,,Յե ահա ՚ի սմին խորհրդոյ յայտնի տեսանի. ,,որ յանմարմին փառաւծնէ գերեալ մարդկային ,,բնութիւն. արեամբ ՚ի մեծի Պասեքի աճուր ՚ի խա֊ ,,չին զենեալ անարատ գառինն ծ՛ն՝ փրկեցաւ

,,յեգիպտոսէ դժոխոց: Եւ ամ հաճատացեալ որ
,,ուտէ յեօթներորդի դարուս զբաղարջ Ամենա-
,,սուրբ Մարմնոյ նորա. ընդ դառն եղեգին զբղջ-
,,ման և ապաշխարանաց. և զփրկարար Արիւն նորա
,,ունի զծագրեալ 'ի սեամս հոգւոյ և մարմնոյ.
,,Ազատ մնայ յանդրանկածախ սուսերէ սատակչին
հոգւոց:

ԳԻՐՔ ՉՈՐՍ.

Դար Չորրորդ.

'Ի 2513 ամի Ծի. 1487 ամօք յառաջ քան զծնունդն
Քս̄ի:

ՊՐԱԿ. Ա:

Յաղագս ելից յեգիպտոսէ որդւոցն իէլի. և անցա-
նելոյ նոցա ընդ ցամաք 'ի ծով կարմիր. և հեղձման
փարաւօնի և եգիպտացւոց: Ել. 14:

Հ. Արձակեաց ուրեմն փարաւօն յեգիպտոսէ զիէլա-
ցիս, 'ի պատժիլ իւրում:

Պ. Այո. զկնի այսու սարսափելի յանդրանկածախ
պատժոյ. համայն ժողովուրդք եգիպտացւոց բողոք
բարձին փարաւօնի, և ինքն ևս երկուցեալ կոչ-
եաց զՄօսէս և ստիպեաց փութով հանել զիս-
րայէլացիս, և ասէ. արդ գնացեալ պաշտեցէք
զՏ̄ր Ա̄ծ ձեր, որպէս և ասացիք. և ապա դար-
ձարուք առիս:

Արդ՝ յելանել նոցա յեգիպտոսէ՝ առին ընդ
ինքեանս բաղարջս պաշար վասն ճանապարհի. և
խնդրեցին յեգիպտացւոց անօթս ոսկւոյ և արծա-

թոյ. և զարդս և զհանդերձս կերպասեայս իբր փոխ. ասեալ չուշեցին աղխիւք և կարասիօք. և ամ ընչիւք և ստացուածովք խրեանց. որոյ արջառ՝ և ոչխար՝ և անասուն բազում էր յոյժ։ Առին ընդ ինքեանս և զոսկերսն Յովսէփայ որպէս պատուիրեալ էր նոցա։ Չուեալ յեգիպտոսէ դիմեցին յանապատն ի Հանասպարս կարմիր ծովուն. ըստառաջնորդելոյ ԱՅ ամպով ի տուէ, և սեամբ հրոյ ի գիշերի. և բանակեցան առ ծովեզերեայս. որոց քիւք էին վեցհարիւր հազար արանց երեսուսարդոյ, բայ ի ծերոյ. թող զկանայս և զմանկտիս. որք ելին յեգիպտոսէ ի ՃՀԻ ամի ՃԻ ի սկզբան չորրորդի դարուն. ՌՃՁ ամաք յառաջքան զծնունդն Քրի։

Ը. Զկնի ելից իսրայէլացւոց զինչ արար փարաւօն։

Պ. Ազդ եղև փարաւօնի թէ փախեաւ ժողովուրդն ամենայն կայիւք և ստացուածովք՝ և մոլորեալ են յանապատի անդ. զղջայաւ արձակելն զնոսա. զի Տր խստացոյց զսիրտ նորա. և առեալ զազգսն սպառազինեալ զօրս՝ զկառս և զՀեծեալս զնտեցաւ զհետ նոցա, և հասս առ նոսա մինչ բանակեալ էին յեզերս ծովուն։

Ը. Զինչ արարին որդիքն իսկլի իբրև տեսին զվտարսն հանդերձ բազմութեամբ զօրաց։

Պ. Բողոք մեծ բարձին իսկլացիք առ Մովսէս. և նա աղաչեայ զԱՏ. և ԱՏ հրամայեաց Մովսեսի հար կոնել զծովն գաւազանաւն, որ յերկուս պատառեցաւ ծովն, և եղև նոցա ճանապարհ ցամաք. և անցին անթաց ոտիւք յայլկոյս ի գիշերային։ Ընդայդն գնտեցան և եդեալտացիք զհետ նոցա զօրք կառաց և երիվարաց. և իբրև մտին ամենեքեան ի

ցամաքեալ ծովին, եւ ինքեանք յայնկոյս։ Իսկ
Աճ հրամայեաց Մովսէսի կրկին հարուել գաւազա-
նաւն զծովն. եւ առ ժամայն միացան բաժանեալ
ջուրքն ծովուն։ Իսկ փարաւոն հանդերձ կառօք եւ
երիվարօք՝ եւ համայն զօրօք ընկղմեալ հեղձան.
որ ոչ մնաց ինոցունց կենդանի։ Իսկ տես-
եալ ինքեանց՝ երկեղին զերկրպագութիւն Աստ՝
զոր Մովսես շարադրեաց. օրհնեսցուք զՏէր զի փա-
ռօք է փառաւորեալ եւ այլն. եւ ել. 15։ Իսկ՝ ի
միւսում աշուր ընկեց ծովին զդիակունս նոցա եւ զզէնս
եւ զարդս նոցա յայնկոյս ծովուն, ուր էին որդիքն
ինքեանց. եւ նոցա ժողովեալ տիրեցին ամենայն զի-
նուց եւ զրահից. որով եւ սպառազինեալք եղէն
առք պատերազմականք առ՝ի ընդդէմ ունել յա-
ռաջակայ թշնամեացն։

ՊՐԱԿ. Ր։

Ցաղագս 40 ամեայ կառավարուին Աստ զինքեանս յա-
նապատի անդ. եւ վե 10 պատգամայ եւ օրինադրուին։
Իսուս եւ վանն տապանակի ուխտին եւ խորանի վկայու-
թեան եւ այլն։

Հ. Որպէս կառավարեաց Աճ զնոսայնքեանս յանա-
պատի անդ։

Պ. Սիւն լուսոյ ետ նոցա լուսաւորել՝ ի գիշերի, եւ
առաջնորդել զնոսին հուր բանակելոց էին, կամ երբ
չոքելոց էին անտի, եւ ամպն հովանի էր նոցա՝ ի
տուչնջեան զի մի նեղիցին՝ ի տապոյ Արեգականէ։
Բղխեցոյց նոցա ջուր՝ ի վիմէ հարմամբ գաւազա-
նին Մովսեսի. տեղացոյց՝ ի նոսա յերկինից զմանանայ
փոխանակ հացի։ Իսկ էած զլորտամարգսն որ ե սլաղ-

չին ՚ի տեղի մոյ ՚ի կերակուր ։ Եւ յ՚որքան ժա-
մանակս էին յանապատի անդ. ձորձք նոցա և ֆո-
շիկք ոչ մաշէին, այլ էին միշտ նոր ։

Հ. Օրինս ինչ ի՞ նոցա Աճ, մինչ էին յանապա-
տին ։

Պ. Զկնի երից նոցա յեգիպտոսէ, յամենայնն երորդ-
դի. էջ Աճ ահաւորութիւն ՚ի լեառն սինա հրով
ամպով մառախլով և հնչմամբ փողոյ. և կոչեալ
զՄովսէս յանդիման ժողովրդեան ՚ի լեառն , պա-
հեայ քառասուն տիւ և քառասուն գիշեր ։ Ի սե-
նեայսւ ընդ նմա վասն ամ քաղաքական և դատաս
տանեան օրինաց։ Եւ ցուցեալ նմա զձև տապա-
նակի ուխտին , և խորանի վկայութեան . այսինքն
դաշնադրութեան, հրամայեաց շինել զնոսա ըստ օրի
նակին որպէս ցուցաւ նմա անդ ՚ի լերինն ։ Եւ
պատուիրեաց ի՞ելացւոց առնել տօն զատկի բա-
զարջակերաց ՚ի նոյնումն նիսան ամսոյ չորեքտասն
երորդի աւուր, յորում զենին զգառն Անդրան-
կածախ դիշերին յեգիպտոս ։ Նա և առնել զտօն
Քաւութեան. որ կոչի ՚ի նոսա Քիփուր. ՚ի Թշրին
ամսոյ տասնին. և ՚ի հնգետասանին զտօն տաղա-
արահարաց. վասն յիշատակի բնակելոյ նոցա վրա-
նօք յանապատի անդ. և զայլ բազում օրինս վե
րհիշեալ, նոճերեայ, ծիսից, և կերլեայ. և այլոց. և
այլոց ։

Հրամայեաց նաև օծանել զԱհարօն ՚ի Քա-
հանայապետս. և նոյն քահանայապետութիւն տևեալ
միշտ միայն ՚ի սերունդս Ահարոնի որդւոց յորդիս.
կալուցեալ նաև զայլ քահանայս ՚ի ցեղէ ղևեայ վե
րհիշեալ՝ և պատարագեայ՝ և ողջակիզեայ . և այլ
պաշտօնեայ . Եւ ՚ի նոցունց զևաւայեայ և քահա-

նայից կայուսյանել պաշտօնեայս տապանակի ուխ-
տին և խորանին վկայուլթե ՝ի կրել և ՝ի բառնալ
զնոսին . որ միայն ՝ի ցեղէ զլևեայ լինիցին, և ոչ
քնաւ յայլոյ ցեղոյ . զորս և ոլոշեալ զամենայն
գևտասյես՝ յլուեայ ՝ի մէջ երկոտասան ցեղիցն
ԻՀլի լստ բանի Ճակոբայ. գլ. 39. 7։ որոյ ցեղի
փոխան կալպեայ զերբունդս Մանասէի որդւոյ
յօսեփայ։

Պատուիրեայ նաև կարգել ՝ի ծերոց համայն
ցեղիցն ԻՀլի վեցվեց անձինս . զի իցեն եօթանտ-
սուն և երկու դատաւորք. և հաստատեսցեն ըզ-
սէնհադրն, այսինքն խորհրդարան մշանջենական
որ ունիցի իշխանուլթե ՝ի վերայ մահու և կենայ.
և առնիցեն դատաստանս վասն ամ իրայ ըստ
օրինայն Ա՜, զորս ետ ձեռամբ Մօսէսի ։ Ետ
Ա՜ն նա և զերկուս քաթեայ տախտակս գրեալս ՝ի
նոսին զբանս տասն պատգամայ իւրոց . և հրա-
մայեայ դնել ՝ի մէջ տապանակի ուխտին, յորմէ
լինէին Ա՜ն ախօսուլթիք ։

Հ. Որք էին այն տասնաբանեայ պատգամքն ։

Պ. Սոքին իսկ էին գրեցեալ մատամբքն Ա՜յ կեր-
կոսին քարեայ տախտակսն ։

1. Նախ, (լուր ԻՀլ Տր Ա՜ն ամր Տր մի է։) ես
եմ Տր Ա՜ն քոյ՝ որ հանի զքեզ ՝ի տանէ ծառայ-
ուլթե . մի եղիցին քեզ Ա՜նք բայ կինէն . և սի-
բեսցես զՏր Ա՜ն քոյ՝ յամ յանձնէ քումմէ . և
յամ զօրուլթե քումմէ . և յամ սրտէ քումմէ ։
Ամին նման սիբեսցես զընկեր քո՝ իբրև զանձն քո։

2. Երկրորդ՝ մի արաւցես դու քեզ կուռս
ըստ ամի նմանուլթե. որ ինչ կերկինս ՝ի վեր է,

80 Մ ա ա ա

եդեալ կայր սեղանն առաջաւորագոյ հացի վասն քահանայից՝ սեղանն խնկոյ. և սեղանն մշտավառ ճրագալանին ոսկեայ. և սեղանք զոհից և Պատարագ. և այլ գործիք նոցին ։ ՚ի գիրս ելից ։

ՊՐԱԿ Գ՝

Ցաղագս քառասնամեայ տեւելոյ նոցա յանապատի անդ. և տապաստ անկանելոյ ամենեցունն որք ելին յԵգիպտոսէ ։

Հ՝ ց՚ Որքան ժամանակս Ցայլին յանապատի անդ որդիքն ԻՀլի ։

Պ՝ ՚ի քառասուն ամս, և ՚ի քառասուն չուս՝ այսինքն ՚ի բանակելոցն Ցայլին յանապատին. մինչև գալ և մտանել նոցա յերկիրն խոստացեալ ։

Հ՝ Ա՞ստն ջը այսքան երկար տեւեցին. վր Պաղեստին ոչ է հեռի յԵգիպտոսէ ։

Պ՝ Ա՞ստն զի խստասրտանոցք էին՝ թիւրք և անհաւանք. և Աճ որքան մեծամեծ բարեբարութիւնս և երեւելի նշանս՝ հրաշս՝ և զօրութիւնս ցուցանէր նոցա. նոքա այնքան տրտնջէին, և դառնային սրտիք իւրեանց յԵգիպտոս՝ և ՚ի կռապաշտութիւն ։ վ՚ի և Աճ բարկացեալ նոցա սատժեաց բազմիցս և սատակեաց զգաղտումն. որպէս գրի յելից՝ և ՚ի Թուոց։ Եւ կամէր իսպառ ջնջել զնոսա, և զսերունդն Մովսէսի առնել ազգ մեծ և հզօր. և նոցա տալ զերկիրն քանանայեցւոց զնոստացեալն Հարց նոցա. իսկ Մովսէս միշտ աղաչէր զԱճ ներել ։ Եւ Աճ վասն խնդրանաց Մովսէսի եղծոյ նոցա. բայց երդուաւ յանձն իւր՝ ոչ մուծանել զոք յելելոց յԵգիպտոսէ յերկիրն Աւետեաց. այլ զորդիս Նո

ծնեալս յանապատին. որք ոչ զչարն գիտէին և ոչ զբարին. զնոսա մուծանել յերկիրն խոստացեալ. վայ և տեւեայ յամն քառասուն։

ՀԱ. Զինչ էին յանցանք որդւոց ելլի. և զնոցին անկանէին ի կռապաշտութիւն։

Պ. Ահա ես ինքս բարկացուցանէին զԱՆ։ Նախ՝ երբեւ էր Մովսէս ի լեառն սինա. և եկայ ի մէջ ամպոյն յաւուրս քառասուն առ ի ընկալնուլ ՅԱՅ զօրինադրութիւնս և զտախտակն քարեղէնս. ժողովուրդն խոթամիտ. որք այնքան հրաշս և զօրութիւնս ԱՅ տեսեալ էին, զամենեսեան երբ առանձին համարեալ. կուտեցան ի վերայ Ահարոնի, որ նախկին քահանայապետ կարգեցեալ էր ինքեանց՝ և ասեն. Արա մեզ ԱՆս՝ որք երթայցեն առաջի մեր. զի Մովսէսն այն որ հչան զմեզ յերկրէն եգիպտացւոց ոչ գիտեմք զիա եղեւ նմա։ Իւ Ահարոն առնէնս որոնեալ ասայ՝ կողոպտել զոսկիայ զհետս յականջաց կանանց և դստերաց իւրեանց՝ և բերել ինքեան. որ ի նմանն ոսկւոյ ձուլեայ որթի մի ոսկեայ՝ և ասէ ց՝նոսա։ Այս են ԱՆք քո հէյ. որք հանին զքեզ յերկրէն եգիպտացւոց։ Իւ ժողովուրդն երկիրպագեալ ոսկեայ որթիւն՝ զոհին զոհս, կերան և արբին, և յարեան ի խաղալ. վայ և ԱՆ բարկացեալ կամէր սատակել զամենեսին։ Իսկ Մովսէս յոյժ աղաչեալ զԱՆ՝ էջ ի լեռնէն ընդ յետուայ պաշտօնեի իւրոյ՝ որ էր միշտ ընդ ինքեան։ Իւ ի ցասմանէն խորտակեալ զերկուսին քարեայ տախտակն ի ստորոտս լերին (որ յետոյ ընկալաւ ՅԱՅ զայլս երկուս տախտակս հանպատն նոցին։) Իւ առեալ զորթիւն ոսկեայ (ոչ խարտեայ. այլ) խարեայ. այս-

ինքն այրեալ կրացոյց. և զկոշիկն արկեալ ՚ի ջուր արբոյց ժողովրդեանն. յորոց և յանցաւորաց ետ սպանանել քսան և երեք հազար անձինս հրամայեաւն ԱՅ։ Իսկ Ահարօն Մնայ կենդանի վասն խնդրակաց Մովսէսի։ Ել. 32։

Ապա էբրև չուեցին ՚ի սինայէ. և անցեալ ՚ի քանի մի բանակետուղս, եկին ՚ի դերեզմանս ցանկուճեաց կոչեցեալ տեղին. արարին տրտունջ չարաչար առաջի Տն. զի ցանկացան մսոյ. և լալով ասէին. ո՞ տայր մեզ միս ուտելոյ. զի ո՛չ ունիմք ինչ բայ ՚ի մանանայէ. յորմէ տալոկացեալ և նքողեալ եմք յոյժ։ Եւ Տը բարկացեալ սրտմտութեամբ առաքեաց ՚ի նոսա զլորամարսիին. բայց հուր ՚ի Տնէ էկեր զնոսա զբանակին. և աղօթիւք Մովսեսի դադարեաց հուրն, և ՚ի ցանկացողաց բազումք մեռան. և անդ թաղեցան։ Եւ ՚ի սոյն բանակետեղ հաստատեցաւ սեհնադրն, հը հոգի ընկալ խորհրդականօք այսինքն դատաւորօք. առ ՚ի լինել թեթեւութիւն աշխատանաց Մովսեսի։

Ասէն Ահարօն և մարիամ քոյր նորա բամբասէին զՄովսէս վասն կնոջ Իւթեթացւոյ. և ապստամբիլ կամելով ասեն, մի թէ ընդ Մովսեսի միայն խօսեցաւ ԱՆ. ո՞չ ապաքէն և ընդ մեզ խօսեցաւ և լուաւ Տը։ Եւ ասէ Տը նոյն ժամայն ցՄովսէս՝ ցԱհարօն. և ցՄարիամ. ելէք դուք երեքին ՚ի խորանն վկայութեան։ Եւ իջեալ Տը սեամբ ամպոյ՝ կոչեաց զԱհարօն և զՄարիամ, և ասէ ցնոսա։ լուարուք բանից իմոց։ եթէ լինիցի Մարգարէ Տն, տեսլեամբ երևեցայց նմա և երազով խօսեցայց ընդ նմա. և ո՛չ այնպէս՝ որ երեսօք ըստ երես, և ո՛չ առակօք խո-

*

սեչայ ընդ ծառային իմոյ Մովսիսի. և վիճաւան Տ՚ն
հետս: Արդ դուք ընդ՚ի՛ս՚ երկեայք բամբա-
սել զծառայն իմ Մովսէս թէ կին ելիթսպայել է-
առ: Եւ բարկութիւն սրտմտութիւն Տ՚ն եղև ՚ի վե-
րայ նոցա: Եւ իբրև ելին ՚ի խորանէն, և վերա-
յաւ ամպն, և ահա Մարիամ բորոտեալ էր իբ-
րև ձիւն: Եւ նայեաց Ահարոնի առ ի՛ Մովսես.
Տէր մի՛ ածեր ՚ի վերայ մեղս. զի անգիտութիւն մե-
ղաք: մի լիցի հանդոյն մահու իբրև զվիժած. որ
ելանիցէ յարգանդէ մօր՝ և ուտիցէ զկէս մարմնոյ
նորա: Եւ ՚ի խնդրել Մովսէսի ՚ի Տ՚ն զբժշկութիւն
նորա. հրամայեաց Ած ելանել մարիամայ ՚ի բա-
նակէն. ուր մնայեալ եօթն օր. ապա ապրեցեալ
եմուտ ՚ի բանակն: Թուոց. ԺԲ. 12:

Անտի և չորեալ եկին յանապատն փառան
Ասերովթ. և հրամանաւն Ա՚ծ առաքեալ Մովսէս
լրտեսել զերկիրն քանանացւոց այր մի ՚ի ցեղէ.
որ ՚ի ցեղէ յուդայի էր Քաղեբ որդի Յեփոնեայ.
Եւ ՚ի ցեղ՝ Եփրեմայ Յեսու որդի Նաւեայ պաշ-
տօնեայն Մովսիսի. որոց գնայեալ լրտեսեցին զեր-
կիրն. և առեալ ՚ի պտղոյ երկրին. նաև մեծապոյն
ողկոյզ մի խաղողոյ բարձեալ չորեքօք յուսս եր-
կուս արանց. և եկեալ պատմեցին ժողովրդեանն,
թէ երկիրն այնքան բարի է. որ բղխէ զկաթն և
զմեղր. բայց բնակիչք նոցա յոյժ զօրաւորք են և
հսկայք. որ իբրև մարախ էաք մեք յաչս նոցա.
և քաղաքք ամուրք են, և ամաղնի բնակեալ է
անդ ՚ի հարաւակողման: իբրև լուան ընդայիք
ձայն բարձեալ լսէին. և արտունջեցին զՄովսէսէ և
զԱհարոնէ և ասեն: վասն ընդ հանիք զմեզ. լաւ
էր մեզ մեռանիլ յեգիպտոս, քան յանապատի

այսմիկ։ Եւ ասեն այր ցընկեր իւր արասցուք զօ-
րավար և դարձցուք յեգիպտոս։ Բայց Յեսու նաւ-
եայ և Քաղեբ որք էին 'ի լրտեսացն՝ պատառե-
ցին զհանդերձս իւրեանց և ասեն. ո՛չ է այդպէս
զոր ասացին. մի՛ երկնչիք. զի Տ՟ր ընդ մեզ է. ել-
ցուք 'ի վերայ նոցա. և Տ՟ր մատնեսցէ զերկիրն
'ի ձեռս մեր։ Եւ ասաց ա՟մ ժողովուրդն քարկո-
ծել զնոսա. և փառք Տ՟ն երևեցան 'ի վերայ խո-
րանին վկայութ՟ն յանդիման ա՟մ ժողովրդեանն։
Եւ ասէ Տ՟ր ցՄօսէս. մինչև յե՞րբ բարկացուցա-
նէ զիս ժողովուրդդ այդ. և ո՛չ հաւատան ինձ
ա՟մ նշանօքն զոր արարի 'ի միջի դոցա. Թոյլ
տո՛ւր ինձ՝ և կորուսից զդոսա. և զքեզ և զտուն
հօր քո արարից յազգ մեծ յոյժ և բազում քան
զդոսա։ Իսկ կարի՞ յաղաչելն Մօսեսի. ասէ Տ՟ր՝
ներեցից դոցա ըստ բանի քում։ բայց կենդանիէ
անուն իմ. զի ա՟մ արք որք տեսին զփառսն իմ
և զնշանսն, և ո՛չ հաւատացին ինձ. մի՞ տեսանի-
ցեն զերկիրն՝ որ երդուայ հարց նոցա. (զի ա՟մ
որ ո՛չ հաւատայ որդւոյն Այ. մի՞ տեսցէ զկեանս
յանձին։) այլ որդիք նոցա որք աստ են ընդիս,
որք ո՛չ գիտեն զչար և զբարի. նոցա տաց զեր-
կիրն. (զվերինն եէմ։) Բայց Քաղեբ և Յեսու,
որք եկին զհետ իմ. (այսինքն հաւատացեալքն
իմ.) նոքա միայն մտցեն և ժառանգեսցեն զեր-
կիրն, և զաւակ քաղեբայ ժառանգեսցէ զնա։
(Յ՟ն 'ի զարմէ քաղեբայ որդւոյ Յուդայ. Թագա-
ւորեսցէ 'ի նմին։) Եւ ոսկերքն անհաւատիցն այ-
նոցիկ. (Թէ և որդիք իէլի այսինքն Քրիստո-
նեայք) անկցին յանապատի աստ, մինչև լրասցին
քառասուն ամք. զի օր ընդ տարւոյ լիցի նոցա. և

ծանիցեն զսրտմտութիւնն քարկուծեր իմոյ։ Եւ մեռան տասնեքեին ըստեղբն չարաչար հարուածովք. և սուգ էառ ժողովուրդն յոյժ։ Եւ կանխեալ ընդ առաւօտն ելին ՚ի լեառն և ասեն. ահաւասիկ կայք մեք՝ ելցուք ՚ի տեղին զոր ասաց Տէր. զի մեղաք։ Եւ ասէ Մովսէս մի ելանէք զի անցիք զբանեւ Տէն, և ոչ յաջողեսցի ձեզ։ Եւ նոքա անսաստեալ ելին ՚ի լեառն. բայց տապանակ Տէն և Մովսէս ոչ շարժեցան ՚ի բանակէ անտի։ Եջ Ամաղեկ և քանանացին որ բնակեալ էր ՚ի գլուխ լերինն. և հարեալ կոտորեցին զնոսա մինչև ց՚Հերմայ. և նոքա դարձան ՚ի բանակն։ Եւ չուեալ անտի՝ դարձան անդրէն ընդ անապատն ՚ի ճանապարհ կարմիր ծովուն ըստ առաջնորդելոյ նոցա սեան լուսոյն։ Ահաւասիկ պատճառ դեգերման նոցա յանապատի անդ յամս քառասուն։ որպէս գրի ՚ի Թուոց։ Քանզի կարի խստասրտանոց էին, և միշտ այսպէս ապստամբէին ՚ի Տէնէ. ոչ և երբեմն վը քահանայապետուն Ահարոնի արարին վէճս կորխ՝ դաթան և Աբիրոն. յորոց պղծնի բուրվառաց եղ եալ հուր այրեալ զնոսա. և երկիր պատառեալ ետուղ զամախոհս նոցա. և մեռան բազումք որք միաբանեալք էին ընդ նոսա. և սատակելոյ էր պատճենսին Տէր. բայց Մովսէս ասաց յԱհարոն առնուլ զբուրվառն իւր ոսկեայ. և խնկել զբանակն. որով և դադարեցաւ Մահն։ Եւ ապա առ ՚ի հաճաստել ամբոխին. թէ քահանայապետութեանն յաջորդութիւնն յատկապէս ՚ի սերունդս Ահարոնի էր տուեալ հրամանաւն Աստուծոյ. էառ Մովսէս ՚ի գլխաւորացն զևտացւոց մի մի գաւազան. և ընդ գաւազանին Ահարոնի եդ ՚ի խորանն վկայութեան. որ ընդ

այդն տեսին մի միայն ընկուզեայ գաւազանն Ահա-
ւասիկ ծաղկեալ. զոր ընդ ոսկեայ բուրվառիւ նորա
եդ ի տապանակն՝ վասն մշտջենական յիշատակի:

Ապստամբեցան նմանապէս և ի դառնալ նո-
ւին ի Ճանապարհ կարմիր ծովու (զոր յիշեցաք ի վե-
րոյ.) և կարի տրտնջեցին թէ ընդէ՞ր հաներ
զմեզ յեգիպտոսէ ի կոտորել աստ յանապատի.
ուր ո՛չ գոյ հաց՝ և ո՛չ ջուր. և անձինք մեր տաղտ
կացեալ են ի մնոտի հացէս. (այսինքն ի Մա-
նանայէ): որոյ բարկացեալ Աստուած զօձս
կոտորիչս. և մեռան բազումք: Եւ ի զղջալ նոցա
և գալ առ Մովսէս թէ մեղաք. և խօսեցաք չար
զՏ՚ն և զքէն: Արդ կայ յաղօթս առ Տի. և
բարձցէ ի մէնջ զօձսդ: Եւ Մովսէս հրամմեաւ Տ՚ն
արար օձ պղնձի. և կացոյց ի վերայ բարձր ձողոյ.
որոյ ամ օձահար ի հայեցն բժշկիւր և ո՛չ մեռա-
նէր. (յօրինակ խաչեցելոյն Քի:)

Նաև յորժամ բազում Արբայ մադիամեցւոց
կոչեաց զբաղամ բէովրեան գալ և անիծանել
զբանակն իսրայէլացւոց, զի զարհուրեալ էր յոյժ.
որոյ ի գնալն՝ հրեշտակ Տ՚ն երթոյս ընկիճեալ նմա
ի Ճանապարհին. խուսափեցոյց զչն յորում հե-
ծեալն էր բաղամ. որ ի հարկանելն չշոյն երիցս՝
խօսեցաւ էշն մարդկային բարբառով՝ թէ ընդէ՞ր
հարկանես զիս: Եւ բաղամայ բացան աչք՝ և
տեսս զհրեշտակն Ա՚ն. որոյ պատուհիրեաց զդադ
լինել ի խօսելոյ բաց յայնցանէ զոր հրամայեսցէ
Տ՚ն: Եւ գնացեալ բաղամ առ բաղակ Արբայ.
փոխանակ անիծելոյ զիսէլ. երիցս օրհնեաց զնա:
բայց խրատեաց. այսինքն չար խորհուրդ ետ բաղա-
կայ. խոտորեցուցանել զիսէլացիս դաւերքք մադի-

անսպառաց. Որք և պսակնկեցան ընդ դստերսն Մո-
վաբացւոյ. և երկիրպագեալ կռոց նոցա՝ նոքիրեցան
բեելբեգեղեբայ. որոց քարկացեալ ԱՆ սատակեաց
՚ի նոցանէ զաղաղս։ թիւ, 22. ը՚ 25։ Եւ ահա
այսպէս միշտ ապստամբեին ՅԱՅ. վշտ և ԱՆ ո՛չ
եմոյծ զնոսա յերկիրն Աբեեաց. և ետ՚ի ժա-
րանգութիւն որդւոց նոցա։

Ը. Գրեաց Մովսէս և զայլ գիրս օրինաց։ քաց ՚ի
ելից՝ զևտացւոյ և ՚ի թուոց։

Պ. ՚ի վերջին ժամանակի իւրում գրեաց նաև զգիրս
2. օրինաց. յորում ժողովեաց զամ բանս օրի-
նացն Այ։ բայց յատուկ երկու զլսաւոր խորհուրդ
և պատուիրեր Այ յայտնեաց ՚ի նմին։ նախ՝ թէ
Մարդարէ յարուցցէ ձեզ Տ՚ր ԱՆ ձեր ՚ի միջի
ձերում յեղբարց ձերոց իբրև զիս, նմա լո՛ւիջիք։
և որ ո՛չ անսայցէ Մարդարէին այնմիկ, սատակես-
ցի անձն այն ՚ի ժողովրդենէն։ որ է նոյն ինքն
Մեսիայն Ցս. խոստացեալն առ Աբրհամ. առ Նոյ.
և առ Աբրահամ. որոյ ակնկալեալ սպասէին և
զուշակէին ամ մարգարէք. և ամ նախնի քարե-
պաշտ ոգբքիք. և Հաճայն ամբողջն։ (որոյ ՚ի գա-
լստեանն՝ հրէայք ժամանակին, կուրացեալք Հայ-
ին սնափառութիւն՝ ո՛չ հաւատացեալ խաչելոյն,
ըստ մարգարէութեանն Եսայեայ, Դանիէլի. և այլոց.
զի աղքատ երևեցաւ. և ո՛չ գոյր նորա տեսիլ
թագաւորական փառաց. և Հայեին շքեղ զարդուց.
որք և այժմ ևս տակաւին ՚ի դերևս սպասեն միոյ
շքեղափառ մեսիայի գալստեան։) Երկրորդ՝ ՚ի մի-
ում տեղւոջ կանգնել խորան. կամ տաճար. և
անդ միայն զոհել Այ։ (որ էր նշանակ միոյ և

ընդհանուր խորհուրդկան եկեղեցւոյն Քս̄ի. որք են հաւատացեալք:)

ՊՐԱԿԴ:

Յաղագս մահուան Ահարօնի. և յաջորդելոյ որդւոյ նորա Եղիազարու: Եւս և վասն մահուան Մօսեսի: Թուոմ. 20: 2. օր. 34:

Հ. Մօսէս, և Ահարօն՝ մուծին զիէլացիս յերկիրն Աւետեաց:

Պ. Ո՛չ Մօսէս՝ և ո՛չ Ահարօն մտին յերկիրն խոստացեալ. և ո՛չ զիէլացիս մուծին. այլ 'ի հեռուստ 'ի բարձրութէ լերանց տեսին և մեռան, վասն յանցանաց իւրեանց:

Հ. Զի՞նչ էին յանցանք նոցա:

Պ. Ըստորում բնականաբար սակաւ էր ջուր յանապատի անդ. և իէլացիք իբրև անցին ընդ ծովն, եկին 'ի մեռայ. ելից. 15: և ո՛չ կարէին ըմպել ջուր. զի դառն էին ջուրք տեղւոյն, և տրտնջեաց ժողովուրդն: Եւ Ած̄ եցոյց Մօսէսի փայտ ինչ. զոր էարկ 'ի ջուրն, և քաղցրացոյց. (խորհուրդ մկրտութեն Յս̄ի:)

Եւ չուեալ անտի եկին յեղիմ. և էին անդ երկոտասան աղբիւրք ջրոց. և եօթանասուն ծառք Արմաւենեաց. (յօրինակ Առաքելոց, և Աշակերտաց Յս̄ի:) և բանակեցան առ ջրովն:

Եւ իբրև եկին յանապատն սին. կրկին տրնջեցին վասն հացի և մսոյ. և ասեն լաւէր թէ մեռեալ էաք յեգիպտոս. մինչ նստէաք առ կատսայս մսոյն՝ և ուտէաք զհաց յագ. այսինքն կուշտ. քան հանիք զմեզ յանապատս այս սպանանել 'ի սովու.

Աստ ետ նոցա Ած զմանանայն, և զլորամարգին. (զոր գրեցաք 'ի նախնթաց Պրակի:) Ել. 17: Եւ անտի ևս չուեալ բանակեցան 'ի ռափիտիմ. ուր ոչ գոյր ջուր: Եւ բամբասէր ժողովուրդն զՄօսէս և ասէին, տուր մեզ ջուր ըմպելոյ. ընդէր հաներ զմեզ յեգիպտոսէ կոտորել զմեզ և զորդիս մեր, և զանասունս: Եւ բողոքեաց Մօսէս առ Տր և ասէ. զինչ արարից ես ժողովրդեանս այսմիկ. սակաւիկ մի ևս. և քարկոծ առնիցեն զիս: Եւ ասէ Տր ա՛ռ զգաւազանդ որով հարեր զծովն. և երթ ընդ ծերոց. և ես հասեալ կացից 'ի վր վիմին 'ի քորեբ. և հարցես զվէմն, և ելցէ ջուր 'ի նմանէ՝ և արբցէ ժողովուրդդ: Եւ Մօսէս արար ըստ բանի Տն. և ել ջուր և արբին ամենեքին: (Առնէր զայս ամ Ած 'ի ծանուցանել նոցա զխորհուրդ համայն տնօրէնութեանց Մեսիայի. որ էր իսկական վէմն. ըստ սրբոյն Պօղոսի. յորմէ ելաներ ջուր կենաց: որպէս ասէր. եթէ ոք ծարաւի իցէ եկեսցէ առիս և արբցէ 'ի ջրոյն կենաց. որոյ արբօղք ոչ ևս ծարաւին յաւիտեան, ասէր սամարուհւոյն: Յօհ. 5:)

Եւ մինչ էին աստ յռափիտիմ. Ել. 15: եկն ամաղէկ և տայր պատերազմ ընդ իէլի: Եւ ասէ Մօսէս ց'Յեսու ընտրեա՛ դու քեզ արս զօրաւորս և ելեալ տացես պատերազմ ընդ ամաղեկայ առ վաղիւ. և ես կացցեմ 'ի գլուխ լերինն. և գաւազանն Այ 'ի ձեռին իմում: Եւ արար Յեսու ոպ ասաց Մօսէս և Ճակատեցան ընդդէմ ամաղեկայ: Եւ Մօսէս, և Ահարօն՝ և Ովր. ելին 'ի գլուխ բլրոյն: Եւ լինէր յորժամ ամբառնայր Մօսէս զձեռս իւր՝ զօրանայր իէլ. և յորժամ խոնար-

հեգուցանէր՝ զօրանայր ամաղեկ։ Եւ նստեր Մո-
սէս ՚ի վերայ վիմին և ծանրէին ձեռք նորա . և
Ահարօն՝ և Ովր հաստատէին զձեռս նորա մի աս-
տի և մի անտի . մինչև յ՚մտանել Արեգական ։
Եւ էհար Յեսու զամաղեկ , և զժո՛ղ զօրս նորա ։
Եւ ասէ Տէր ցՄովսէս . գրեա զայդ առ ՚ի յիշա-
տակ . և տուր յականջս Յեսուհայ . զի ջնջելով
ջնջեցից զամաղեկ ՚ի ներքոյ երկնից ։

(Ահա և ՚ի սմին յայտնեաց Աստ լինելոյ զնոր-
հուրդ խաչելութեն Մեսիայի . որոյ ամբարձմամբ
ձեռացն . զոր քահանայապետք և իշխանք հրէից
հաստատեցին բևեռմամբ . կործանեցաւ անմար-
միննն ամաղեկ։ որոյ խաչատ ջնջումն իսրտէ՝ էր այն՝
զոր հրամայեաց Աստ սաՀուղայ, այսինքն հաՀատացե
լոց խաչատ ջնջել զնա. բայց նէ իբրև սաւուղայ մո-
ղաՀոլաց ՚ի ստուգապանէլն հրամանի նէ . և կրկին
յարիլն ՚ի սատանայ՝ ապրեցուցանելովն ՚ի սրտի
ղԹագաՀորն ամաղեկայ՝ զբերելիսն. և զընտիրս յաճա
րաց նէ, զՀոյին վառս և զվայելչուն մարմնայինս
զղջացաւ Աստ ՚ի ԹագաՀորեցուցանելն հոգւով
զաՀաւղանման հաՀատացեալս. և պատժեաց. այս-
ինքն երբարձ զշնորհս և զջօրուԹիս հոգւոյն սրբոյ
զոր տեսջիք հետևաբար ՚ի տեղոջ իւրում ։)

Արդ յետ այսպանեաց մեծամեծ հրաշից և զո-
րուԹեցն Աստ զրոս արար։ Եւս և զպաՀանչելին որ
՚ի վերայ ջուրցն. զոր քաղցրացոյց, և կամ բղխե-
ցոյց ՚ի վիմէ՝ զոր տեսին. տակաւին ոչ բացեալ
զաչս՝ ընկղմեալ էին յանհաւատութեն իւրեանց ։
ըստ բանի Տն, Ցօհ. ց. 41։ Քանզի զինի դալոյն
լսեսային . իբրև եկին յանապատն վարդէս բառ-
նեայ . (ուր վախճանեցաւ Մարիամ քոյր Մովսիսի։)

և ջուր ո՛չ գոյր անդ. կուտեցաւ ժողովուրդն՝ ըստ
առաջին բարուց իւրոց 'ի վերայ Մօսեսի և Ահա-
րօնի, և ասեն. լաւ էր եթէ մեռեալ էաք 'ի կոր
ստեան եղբարց մերոց առաջի Տն. ընդէ՞ր ածիք
զմեզ յայս չար տեղի. ուր ո՛չ սերմն սերմանի. և
ո՛չ այգիք. կամ սեխենիք, և նռնենիք գոն և ո՛չ
ևս ջուր ըմպելոյ: Եւ նոքա մտին 'ի դուռն խո-
րանին վկայութեան, և անկան առաջի Տն. Եւ ասէ
Ած ց' Մօսէս ա՛ռ զգաւազանն. և ընդ Ահարօնի
եկեղեցացո՛ զժողովուրդն. և բարբառեսջիք 'ի
վերայ վիմին յանդիման նոցա. և տացէ զջուրս
իւր. և արբցեն նոքա, և անասունք իւրեանց: Եւ
առեալ Մօսէս զգաւազանն, գումարեցին ընդ
Ահարօնի զժողովուրդն հանդէպ վիմին. (որ ըստ
սրբոյն Պօղոսի, էր ինքն Քս, որ երթայր զհետ
նոցա: 1. Կոր. 10. 4:) Եւ բարկութեամբ ասէ ցնս
Մօսէս. լուարո՛ւք ինձ անհաւանք. մի թէ 'ի վիմէ
յայսմանէ հանիցե՞մք ջուր: Եւ էհար Մօսէս եր-
կիցս գաւազանաւն զվէմն, և ել ջուր բազում
(զի յառաջին նուագի՝ 'ի հարուլն ցասմամբ, ո՛չ
ել) և էարբ ժողովուրդն, և անասունք նոցա:
Եւ ասէ Տր ց' Մօսէս և ց'Ահարօն. փոխանակ
զի ո՛չ հաւատացիք դուք սուրբ առնել զիս ա-
ռաջի որդւոցն իէլի. վսկ ո՛չ տանիցիք դուք զժո-
ղովուրդդ յերկիրն. զոր ետու հարց դոցա: Ահա
յանցանք սոցին: Սակայն այլ իմն խորհուրդ
բացայայտեաց Ած աստէն. թէ Ցս մուծանելոց
էր զհաւատացեալ ժողովուրդն Այ յերկիրն
Աւետեաց 'ի վերինն Եէմ. և ո՛չ Մօսէս. ըստ
մեկնելոյ սրբազանին Պօղոսի:

Հ. Ուրեմն Մօսէս և Ահարօն, մեռա՞ն յանապատի անդ:

Պ. Այո՛. մինչ բանակեցան 'ի Հովր լերին, հրամայեաց Ած Մօսեսի ելցէ Ահարօն 'ի լեառն, և անտի տեսեալ զերկիրն Աւետեաց՝ յաւելցի առ հարս իւր. ուր և մեռաւ և թաղեցաւ:

Հ. Զկնի Ահարօնի ո՞վ եղև Քահանայապետ:

Պ. 'Ի հրամայելն Ա՛յ զմահն Ահարօնի, պատուիրեաց Ած Մօսեսի Թուհ. 20: հանել ընդ նմին 'ի լեառն հովր և զորդի նր Եղիազար. և մերկացուցեալ յԱհարօնէ զզգեստն Քահանայպետական զգեցուցանել Եղիազարայ և օծել զնա քահանայապետ յանդիման ա՜մ ժողովրդեանն: Քանզի նաբադ և Աբիուդ երեց որդիք Ահարօնի. Ղևտց. 10. 1. և 2: օտար հրով 'ի խնկարկելն, ելեալ հուր 'ի բուրվառաց իւրեանց եկեր զնոսա և մեռան առաջի Տն. և մնացին Եղիազար և Իթամար կրտսերք նոցա յաջորդք Քահանայապետութե:

Հ. Քանի՞ ամաց մեռաւ Ահարօն:

Պ. Հարիւր և քսան ամաց մեռաւ Ահարօն. երիւք ամօք յառաջքան զՄօսէս, որպէս և ծնեալ էր երիւք ամօք յառաջ:

Հ. Մօսէս ո՞ւր մեռաւ:

Պ. Յետ մահուան Ահարօնի, եբէր Մօսէս զժողովուրդն մերձ առ երկիրն Աւետեաց 'ի սաատիմ. ուր պոռնկեցաւ ժողովուրդն, և նուիրեցաւ փել փեգովրայ կռոց. Թուհ. 22. ց' 25: յորոց երկիրպագուաց կոտորեցին բանիւ Տն՝ զարս Քսան և չորս հազարս: Աստէն 'ի մէջ եկաց փենեհես որդի Եղիազարայ քահանայապետի. և գեղարդեամբ

խոյեալ զերեւելի այրն ի ճշմարիտ ընդ կնոջն մանկանացւոց. քահեայ, և արգելաւ մահ։

Ապա զինի հարուածոյն թոռեայ Մօսէս հրաշաւն Աւ զժողովուրդն՝ որ ծնեալ և զարգացեալ էին յանապատին. որոց թիւ գտանեցաւ բաց ի կանանց և ի մանկտեայ՝ վեցհարիւր մի հազար՝ և եօթն հարիւր երեսուն։ 601. 730։ Իւ կարգեալ ի նոցանէ զօրավարս, պատերազմեցաւ ընդ մադիանացւոց ի վրէժխնդրութիւն նենգութեանն նոցա զոր արարին ի փեղկեզովս։ Իւ սպանին զքաղաք թագաւոր նոցա, և զազգն այն ամ. ընդ նոսին և զքաղաամ բեւովեան։ սպանին նաև զչորեսին թագաւորս բնակեալս յայնկոյս Յորդանանու հանդերձ ազգաւ նոցա. որք էին Սեհօն թագաւոր Ամուրհայեցոց. Ովգ թագաւոր բասանու. և զ Ջօլեք և Ջեբէէ ի սաղմանայ. և կոտորեցին զամ բուս նոցա. և աճարի առեալ զհանդերձ կայիս և զտաւարսն նոցին, տիրեցին երկրիւ նոցա։ զորս ետ Մօսէս ցեղին ռուբենի՝ և գադայ, և կիսոյ ցեղին Մանասէի, ըստ նոցին խնդրանաց այսու պայմանաւ. որ զկանայս և զմանկտիս, և զանասունս իւրեանց բնակեցուցեալ ի նոսին քաղաքս. անցցեն ինքեանք Յորդանանաւ ընդ որդւոցն իսրայէլի ի պատերազմ ընդ քանանացիս մինչև տիրեալ որդւոցն իսրայէլի զերկիրն ամ. ապայ և ինքեանք դարձցին ի քաղաքս և ի տունս իւրեանց։ Իւ յետ այսց ամենից եղ Մօսէս հրամանաւն Աւ ի կատար լերինն Նաբաամայ. և անտի տեսեալ զերկիրն Աւետեաց. յաւերաւ առ ժողովուրդ իւր ։20 ամեայ։ Իւ թաղեցին զնա ի պալ մերձ ի տան

փեգօրայ. և ո՛չ ոք դիտաց զգնելումն նորա մին-
չև ց՚այսօր ժամանակի։

ՊՐԱԿ. Ի։

Ճաղագս Ճեսոհայ. և մահիլ իճլացւոց յերկիրն Աճե-
տեայ. Լրս և վասն մահուհան Ճեսոհայ։

Հ. Ճետ մահու Մօսեսի. ճիլ Առաջնորդեալ որդ-
ւոյն իսրայէլի՝ եմոյծ զնոսա յերկիրն խոստա-
ցեալ։

Պ. ՚ի վերջին աճուրս Մօսեսի հրամայեաց նմա Աճ։
ց. օրի. ՅԼ. 7։ և թ՚ոճ. 27. 18։ Ա՛ռ դու քեզ
զՃեսու որդի նաճեայ. այր յորում գոյ հոգի. և
դիցես զձեռս քո ՚ի վերայ նորա։ Լրս կացուսցես
զնա յանդիման Լղիազարու քահանայի. և պատ-
ուիրեսցես վասն նորա յանդիման ամ ժողովր-
դեան։ Լրս ուսցես ՚ի փառայ քոյ ՚ի վերայ նորա.
զի լուիցեն նմա որդիքն իճլի. և Հարցցեն ՚ի նմա-
նէ զկրաճունս յայտնուԹեայ առաջի Տն. ըստ բա-
նի բերանոյ նորա ելանիցեն և մտանիցեն ինքն և
որդիքն իճլի միաբան, և ամ ժողովուրդն։ Լրս
արար Մօսէս որպէս և պատուիրեաց նմա Տ՚ր։
Ապայ ելեալ ՚ի լեառն նաբաա վախճանե՛ցաւ։

Լրս յետ վախճանելոյ Մօսեսի ծառայի Տն.
խօսեցաւ Տ՚ր ընդ Ճեսոհայ որդւոյ նաճեայ։ դլ.
ա։ պաշտօնեկի Մօսեսի. և ասէ. Մօսէս ծառայ իմ
վախճանեցաւ, Արդ յարուցեալ անցցես ընդ այդ
Ցորդանան դու և ամ ժողովուրդդ՝ յերկիրն զոր
ես տայ որդւոյն իճլի։ Լրս ո՛չ ոք կացցէ ընդ-
դէմ ձեր զամ աճուրս կենաց քոյ։ Լրս որպէս էի
ընդ Մօսեսի, նոյնպէս եղեց և ընդ քեզ. և ո՛չ

թողից՝ և ոչ անտես արարից զքեզ ։ Զօրացիր և քաջ լեր. զի դու բաժանեսցես զերկիրն ժողովրդեանդ այդմիկ. զոր երդուայ հարցն քոց տալ դոցա։ ,,Այս Յեսու է որ կրէր զանունն փրկչա-,,կան Յիսուս. որ կարգեցաւ յԱյ առաջնորդել ,,ժողովրդեանն և մուծանել զնոսա յերկիրն Ա-,,ւետեաց՝ որ էր օրինակ վերին Եէմայ. և Յե-,,սու պատկեր Քս̄ի, որ նուաճեաց զազգսն չա-,,րացեալս. որպէս և Քս̄ զդևս։

Հ. 'ի ձեռս Յեսուայ ևս՝ եղէն սքանչելիք, որպէս լինէին ձեռամբ Մօսեսի։

Պ. Եղէն և 'ի ձեռն Յեսուայ բազում մեծամեծ սքանչելիք. զի մինչ մտին յերկիրն Աւետեաց. ջուրք գետոյն Յորդանանու. ընդ յոր պարտէին անցանել՝ ինքնին դարձաւ յետս. և տապանակն Այ, և ա̄մ իէլ անցին ընդ ցամաք յայնկոյս. և իբրև անցին ամենեքեան՝ ջուր գետոյն ընկալաւ անդրէն զառաջին հոսանս իւր։ գլ. 2։

Պարիսպքն Յերիքովի 'ի եօթն աւուրս՝ եօթնիցս շրջապատմամբ ընդ տապանակին Այ. միայն ձայնիւ փողոյ ինքնին անկեալ կործանեցան. գլ. 6։ ուր ոչ զոք ապրեցուցին բաց 'ի բախաբ պոռնկէ համայն իւրայնովք. զի ապրեցուցեալ էր զլրտեսս Յեսուայ, զորս առաքեալ էր 'ի լրտեսել զերկիրն, և զքաղաքն Երիքով։

Այլ և Արեգակն և լուսին զկայ առեալ ոչ ընթացան բանիւ Յեսուայ օր մի կատարեալ. գլ. 10։ մինչև որ իսպառ կոտորեցին իէլացիք զզօրս թշնամեաց՝ որք յարուցեալ էին 'ի պատերազմ ընդդէմ ինքեանց։ Եւ զայլ բազում զօրութիս արարեալ հալածեաց զչարացեալ զազգսն զայնմ.

և տիրեալ քաղաքաց և երկրի նոցա. բաժանեաց վիճակաւ ընդ եղիազարայ քահանայապետի և ընդ ցեղապետից նոցա, յինն և 'ի կէս բաժինս. վասն միւսուց ցեղիցն ի՞էլի 'ի բնակութի՞ նոցին, 'ի կատարումն խոստմանն Այ: Եւ ինքն Յեսու հասեալ 'ի բարձոք ծերութի՝ յաճելաւ առ հարս իւր:

Հ. 'Ի կոչմանէ Աբրահամու մինչև ց'մուտն որդւոց ի՞էլի 'ի քանան. քանիմ ամք անցին:

Պ. 'Ի կոչմանէ Աբրահամու որ եղև 'ի 2083 ամի Ծի. անցեալ էին 430 ամք. և 'ի խոստմանէն Այ. 420. մինչև ց'ելն յեգիպտոսէ. իսկ մինչև ց'մուտն յերկիրն Աճետեաց. 470 ամք: 'ի 40 երորդի ամի չորորդի դարուն:

Հ. Քանիմ ամաց մեռաւ սուրբ Մարգարէն Յեսու Նաճեայ:

Պ. Հարիւր և տասն ամաց էր՝ որ մեռաւ սուրբն Յեսու 'ի 2551 ամի Ծի:

ՊՐԱԿ. Զ:

Յաղագս դատաճորաց ի՞էլացւոց:

Հ. Յետ մահու Յեսուճայ. ո՞վ Առաջնորդեաց որդւոցն ի՞էլի:

Պ. Իբրև ելին որդիքն ի՞էլի յեգիպտոսէ. Մօսէս առաջնորդեաց նոցա յանապատին յամս 40: Յետ նորա Յեսու Նաճեայ մուծեալ զնոսա յերկիրն աճետեաց առաջնորդեաց ամս ութն: Եւ յետ Յեսուճայ ծերքն ի՞էլի. այ սինքն սէնհադրն. ամս. 17:

Եւ զի բնակէր ի՞էլ 'ի մէջ քանանացի ազգաց զորս եթող Յեսու, զի մի ամայասցի երկիրն. և բազմասցին գազանք: Յաճուրսն այնոսիկ առին

նոքա ընդդէմ Հրամանի Աւ՝ զդաստերս նոցա իւր-
եանց կանայս ։ և զդաստերս իւրեանց ետուն ուս-
տերայ նոցա։ և չար արարեալ առաջի Տն, պաշ-
տեցին զդիս նոցա ։ և զբահաղ ։ և զաստտառան ։
Եւ բարկացաւ Տր սրտմտութիւ՛ ՛ի վերայ եկեղ ։
և մատնեաց զնոսա ՛ի ձեռս Արքային Ասորւոց
ամն ուրծն։ Եւ աղաղակեցին որդիքն Իսկ առ Տր։
և յարոյց նոցա փրկիչ զԳոթծնիէլ (որդի կենն-
զայ՝ կրտսեր եղբօր քաղեբայ ՛ի ցեղէ Յուդայ ։
որ էր՝ մի յերկուտասան լրտեսացն։) և դաղարեաց
երկիրն ամն 40։ Դատաւ։ գլ։ 10։ 11 ։

Եւ յետ մահուան Գոթծնիէլի, կրկին արա-
րին չար որդիքն Իսկ առաջի Տն ։ և մատնեցան
՛ի ծառայութիւ եգղոմայ Արքայի Մովաբու ամն ու
Թուտասան ։ և դարձեալ Աղաղակեցին առ Տր,
և փրկեաց զնոսա ձեռամբ Աէհուդայ ։ (որ եղև
դատաւորը) և դաղարեաց երկիրն ամն ուխտսուն ։
գլ։ 3։ 30 ։

Բայց որդիքն Իսկ միշտ զկնի մահուան դա-
տաւորին՝ միւսանգամ դառնային առնել չար առա-
ջի Տն, և նա մատնէր ՛ի ձեռս նեղչաց։ Եւ երբև
զղջացեալ աղաղակէին, գթացեալ նոցա յարու-
ցանէր դատաւորս՝ որք փրկէին զնոսա ՛ի նեղչայ
իւրեանց։ որպէս է Բարակ։ գլ։ 4։ Ապա Գե-
դեոնէ։ որ 300 արամբք զՀարիւր յիսուն հազար
մադիանայիս հալածեաց ։ գլ։ 6։ ց 8։ Հետև-
արար յարեաւ Յեփթայէ գլ։ 12։ և այլք։ մինչև
ց՝Սամիսոն հուժկու։ գլ։ 13։ ց՝ 16։ Հուսկ յե-
տոյ Հեղի քահանայապետ։ որոյ յաշուրս վասն
չարութեն ոչնեայ և փեներհիղ քահանայից որդ-
ւոց իւրոց։ գերեցին փղշտացիք զտապանակն Աւ։

և երեսուն հազար Այր յիճէ ընդ Ոփնեայ և ընդ փենեհէզի տապաստ արկին ՚ի պատերազմի ։ Յե Հեղի ՚ի լսել զայժ կոտորածին ։ և զերուխեան տապանակին, անկաւ յաթոռոյն յորում նստեալ էր վասն կալի Դերուխեի։ և բեկումն ողին կհան զոգին իրը պատիժ վասն զանց առնելոյ չարուխեի որդւոց իւրոց քահանայիչ ։ ւ՚ Թագաւ՚ գԼ՚ ւ՚ յ՚ դ ։

Ճայնժամ յարոյց Նճ Ած զՍամուէլ Մարգարէ ։ գԼ՚ ւ՚ և Հեռւաքեալ յ՚ ճ՚ և 7 ։ որ եղև վերջին դատաւորն իճլի ։ որոյ յ՚աւուրս փղշտացիք Հարճաճեալք ՚ի Տճ չարաչար ախտիւք՝ դարձուցին զտապանակն ԱՅ ՚ի բեթսամիւս յերկիր իճլացւոց։ Յե բեթսամիւսացւոց անարժանութեամբ Համարձակէին ՚ի Հալիլ առապանակին ԱՅ մեռան ՚ի ժողովրդենէն չհսուն Հազար և եօթանասուն արք։ գԼ՚ 6 ։ Իսկ Սամուէլ ուղղութիճ և խաղաղութիճ դատեաց զիսրայէլ ։ չամս 40։ բայց իճլացիք՝ որք ՚ի Մօսիսէ մինչև յ՚Սամուէլ իրրև 386 չամս՝ կէին ճ իշխանութիճ դատաւորաց իւրեանց ։ ժողովեալ առ Սամուէլ խնդրեցին ինքեանց թագաւոր Հանգոյն այլոց ազգաց ։ Յե սամուէլ թէպէտ դժրեցաւ ։ որ կամէին ելանել ՚ի կառավարութիճ ԱՅ, և անկանիլ ենէր ճոյ ծանրութեան թագաւորի ։ բայց Ած ըստ խնդրանաց նց, ետ ձեռամբ սամուէլի զՍաւուղ ՚ի թագաւորել ՚ի վերայ իճլացւոց։ ւ՚ Թագաւ՚ գԼ՚ 8՚ յ՚ 13։

*

ՊՐԱԿ. Է:

Յաղագս թագաւորութեան սաւուղայ. և ընտրելոյ Այ զԴաւիթ 'ի թագաւոր:

Հ. Ով էր այդ սաւուղ՝ որ եղև առաջին թագաւոր իէլացւոց:

Պ. Սաւուղ էր որդի Կիսեայ յազգէ բենիամինի, որ ելեալ էր 'ի խնդիր կորուսեալ իշոց հօր իւրոյ. զոր Մարգարէն Սամուէլ հրամանաւն Այ էօծ զնա թագաւոր 'ի վերայ ամ իէլի 'ի 2916 ամի Ծի. որ թագաւորեաց յամս քառասուն:

Հ. Տևեաց սոյն թագաւորութիւն 'ի տան սաւուղայ որդւոց յորդիս 'ի ցեղին բենիամինի:

Պ. Թագաւորութիւս այս՝ ոչ 'ի տան սաւուղայ՝ և ոչ 'ի ցեղին բենիամինի տևեաց. քանզի թագաւորութիւն տանն իէլի՝ տևելոց էր 'ի ցեղի Յուդայի մինչև ցգալուստ Մեսիայի. այսինքն Քս̄ի. ըստ Մարգարէութեան սրբոյ նահապետին Յակոբայ:

Հ. Ապա ո՞վ եղև զկնի սաւուղայ թագաւոր 'ի վերայ ամ իէլի:

Պ. Ընտրեաց Ած 'ի կենդանութեան սաւուղայ՝ զԴաւիթ որդի Յեսսեայ 'ի ցեղէն Յուդայի, յորմէ և սերեցաւ Յս̄ ըստ մարմնոյ:

Հ. Որպէս եղև ընտրութիւն դաւթայ:

Պ. Սաւուղ իբրև օծաւ 'ի Սամուէլէ. Հոգի Տն̄ խաղաց 'ի վերայ նորա: գլ. 10: Եւ յերկրորդի ամի թագաւորութեան նորա. հրամայեաց Ած Սաւուղայ Սամուէլիւ, գնալ պատերազմ 'ի վերայ ամաղեկայ և իսպառ ջնջել զազգ նորա. ըստ բանի Տն̄. որ գրեցաւ 'ի Պրակ. 4: իւրով նշանակութիւն:

Բայց սաւուղ ընդդէմ հրամանի Այ ապրե-

յայց զԹագաւորն և զընտիրս նոցին։ վե որպ
բարկացեալ Ա.Յ. ասէ ց՝ Սամուէլ զղջացայ զի
Թագաւորեցուցի զսաւուղ. գլ. 15։ 11։ ,,(և
,,ահա վասն այսորիկ գրի՝ի սուրբ Գիրն. գլ. 13.
,,1։ Թէ սաւուղ երկու ամն Թագաւորեաց։)
և առաքեաց զնա՝ի բեթղեհէմ օծանել զԴա-
ւիթ կրտսեր որդին Ջեսսեայ, սահմանին մանուկ։
բայց քաջ և խմաստուն որ արածէր զխաշինս հօր
իւրոյ։ գլ. 16. 12. 13։ և յայնմ օրէ և առ յա-
ղայ. խաղաց հոգի Տն՝ի վերայ Դաւիթի։ և՝ի
սաւուղայ վերայսա հոգի Տն, և լլկէր զնա այս
չար։ և ծառայք նորա ասեն, հրամայեա զի խըն
դրեսցեն Այր մի սաղմոսասաց. որ երգիցէ քնա-
րաւ. և հանգուսցէ զքեզ՝ի ժամուն յորում խեղ
դեալ լլկէ այսն չար։ և ասացին նմա վասն դաւ-
ւիթի՝ որ քաջ երգէր և նուագէր։ և նա առա-
քեալ առ Ջեսսեայ՝ էառ զդաւիթ. և տեսեալ
զգեղեցկութիւն և զնմաստութիւն նորա՝ սիրեաց զնա,
և արար իւր կապարձակիր։ և յորժամ հասա-
նէր այսն չար՝ի վերայ սաւուղայ՝ նուագէր դա-
ւիթ ձեռամբ զքնարն. և սաղմոսերգով հանգուցա-
ներ զնա. և այսն չար մեկնիւր՝ի նմանէ։

Ի այց՝ի լինիլ պատերազմի ընդ այլազգեաց.
գլ. 17։ եւ՝ի բանակէ նոցա հսկայն Գողիադ գե-
ւթացի. որոյ բարձրութիւն հասակի էր դանգուն վեց
և թզաւ. և բուն նիզակի նորա իբրև զստորի ոս-
տայնանկաց. և տեգ նորա վեց հարիւր սկեղէ եր-
կաթոյ։ և զգեցեալ էր սաղաւարտ. և զրահս
երկաթիս և պղնձեայ։ և խնդրէր ախոյեան՝ի
բանակէ իսրայէլացոց մեռանարտիլ ընդ նմա. զի յեր-
կոցունգ միոյն յաղթութիւնն՝ ընկալցի կողմն յազ-

թողին զայրագանալուէն մարտի, և վերջապէս ուազին։ Յե իբրև ոչ ոք գտաւ նմա ախոյեան լինել՝ և ամենեքին զարհուրեալ էին, խոստացաւ սաւուղ փեսայացուցանել ինքեան զայն՝ որ սպան զնէ զոլիադ։ Եվ պատանին Դաւիթ ընդդէմ նը զգեստիւք հովուի. և ցպով և պարսաքարիւ. և հարմամբ միով քարիւ ընդ սաղաւարտն ՚ի ճակատն՝ եսպան զնա. և սրով նորին հատեալ ըզգլուխն հսկային, յորեայ ՚ի ծայր նիզակի նորա. յօրինակ յաղթութեէ քաջ հովուին Քրիստոսի Պաղտ. 2. 14։ որով և ընկալան իշխանքն յաղթանակութէն ՚ի վերայ այլազգեայց և հալածեցին զնոսա։

Յե ՚ի դառնալն ՚ի պատերազմէ՝ ելին պարտէոր դստերք քաղաքին ընդ յառաջ, որք երգէին դրօճառս, ծէ սաւուղայ ետուն հազարս՝ և Դաւիթ բիւրս։ առ որ նախանձեալ սաւուղայ կամէր սպանանել զնա։ որ և երկեցս մինչ լսկէր զնա դևն, և դաւիթ նուագէր զքնարն, արձակեայ սաւուղ զնիզակն հարկանել զնա. և Դաւիթ խոյս տուեալ զերծաւ։ Յե սաւուղ յայտնի սպանանել զնա՝ զանգիտեալ յամբոխէ՝ կայցայ զնա զօրապետ, զի անկցի ՚ի պատերազմի, բայց Աստ զոլով ընդ նմա, միշտ պահպանէր զնա։ Ապա ետ նմա սաւուղ ընդ վարձու հարիւր անթլփատից՝ գլ. 18. 27։ զմեղքող դուստր իւր ՚ի կնութէն. զի այնու դիւրաւ սպանցէ։ Բայց Յօնաթան անդրանիկ որդի սաւուղայ, կարի սերտ սիրով կապակցեալ ընդ նմա պաշտպանէր զնա։ Յե ՚ի վախճանի իբրև առաքեալ յայտնեցաւ չարութէն սրտի սաւուղայ. փախեաւ դաւիթ ապրմամբ Յօնաթանայ։ Յե ժողովեալ զարս հզօրս և կորովիս թո-

ՀՈՎ ԽԲԸ ՎԵՑՀԱՐԻՒԸ, ՀՐՀՏԸ Ի ԼԵՐԻՆՍ ԱՍՏԱՆԴԱ-
ԿԱՆ . ԵՒ ՍԱՀՈՒԼ ԱՆԴԱԴԱՐ ՀԱԼԱԾԵՐ ԶՆԱ ։ ԻՍԿ
ԴԱՒԻԹ ԵՐԿԻՒՑ�ս ՊՏԵԱԼ Դ ԻՍՈՒԿ ՍԱՊԱՆԱՆԵԼ ԶՍԱ-
ՀՈՒԼ· ՈՉ ԿԱՄԵՑԱԻ ՄՆԵԼ ԶՔԵՒՆ ԻԻՐ ՅՕԹԵԱԼ ՏՆ։
ԱՅԼ Ի ՆԱԽՆՈՒՄ ՀԱՏԵԱԼ ՀՐՈՒՏ ԼՕԴԿԻՆ , ԵՑՑՑ
ՆՄԱ Ի ՀԵՌՈՒՏ Ի ՎԿԱՅՈՒԹԻՆ ԲԱՐՈՒԹԻՒՆ ՍՐՏԻ ԻՒ-
ԼՑՑ ։ ԳԼ· 24· 11· 12 ։ ԼՒ ՅԵՐԿՐՕՐԴՈՒՄՆ ԱՌԵԱԼ
ՂԱԶԱՐԻՆ՝ ԵՒ ԶԿՈՒԺՆ ՋՐՑ Ի ՍՆԱՐԻՑ ՆՈՐԱ ՄԻՆՉ
ՆՆՋԵՐ , ԵՒ ՀԵՌԱՑԵԱԼ ԱՆՏԻ ՁԱՅՆ ՏՈՒԵԱԼ ԵՑՑՑ
ՆՆՈՑԱ ՍԱՀՈՒԼՑԱՅ ԵՒ ՂԶՐԱՑ ՆՈՐԱ· ԳԼ· 26։ ԵՒ ՅԱՆԴ-
ՆԵԱՑ ՆՆ Ի ԴԱՏԱՍՏԱՆ ԱՅ ։ ԼՒ ՍԱՀՈՒԼ ԹԷՆԵ
ՂՂՋԱՑԵԱԼ ԵԼԱՑ · ԵՒ ԽՈՍՏԱՑԱՀ ՈՉ ԼԱՒ ՀԱՐ ԼՆՉ
ԱՌՆԵԼ ՆՄԱ· ԲԱՑՑ ԴԱՒԻԹ ՈՉ ՀԱՀԱՏԱՑԵԱԼ ԶՆՉԱ-
ԶԱՆԻՑ ՆՈՐԱ՝ ՄԿՆԵՑԵԱԼ ԳՆԱՑ ՊԱՏՏԱՂԱՆԱԼ ԻՒ-
ՐԱՑՆՈՒՆ ՀԱՆԴԵՐՁ ԱՒ ԱՆՔՈՒՍ ԱՐՔԱՑ ԳԵԹԱՑՑՈՑ
Ի ՍԿԵՂԱԿ ՔԱՂԱՔԻ ՆՈՐԱ· ՈՐ ԵԿԱՑ ՄԻՆՉԼ Ց՝ԱՆ-
ԿԱՆԻԼ ՍԱՀՈՒԼԱՑ ԵՒ ՅՕՆԱԹԱՆՈՒ Ի ՊԱՏԵՐԱԶՄԻ
ԳԵԹԱՑՑՈՑ· ՀՈՐՈՒՄ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՍ ԸՆԿԱԼԵԱԼ
ՍԱՀՈՒԼԱՑ ԷՍՊԱՆ ԶԼԻՆՔՆ ՍՐՈՎ ԻՒՐՈՎ ։ Ա· ԹԱԳԱՀ·
ԳԼ· 31։

ՅԱՅՆԺԱՄ ԴԱՒԻԹ ԲԱՆԻՀ ՏՆ ԵԿՆ ԻՒՐԱՑՆՈՎՔ
Ի ՔԵՔՐՕՆ· Բ· ԹԱԳԱՀ· ԳԼ· 2։ ԵՒ ՅԵՂՆ ՅՈՒԴԱՑԻ
ԼԹԱԳԱՀՈՐԵՑՑՑ ԶՆԱ Ի ՎԵՐԱՑ ԻՆՔԵԱՆՑ Ի ՔԵՔՐՕՆ։
ԼՒ ՀԵՏ ԵՕԹՆ ԱՄԱՑ Ի ՍԱՊԱՆԱՆԵԼ ՅԵՔՈՒՍԼԹԱՑ
ՈՐԴՈՑ ՍԱՀՈՒԼԱՑ ՀԻՒՐԱՑՆՈՑ ԴԱՒԱՃԱՆՈՒԼԹԵ ։ ԴԼ·
4։ ՈՐ ԼԹԱԳԱՀՈՐԵԱԼ ԷՐ ՂԻՆԻ ՍԱՀՈՒԼԱՑ ՀՕՐ ԻՒՐՑ·
ԺՈՂՈՎԵԱԼ ԵՒ ՄԻՍ ՄՏԱՍԱՆ ՅԵՂԻՑ ԻՆԵԼ՝ ԼԹԱԳԱ-
ՀՈՐԵՑՈՒՑԻՆ ԶԱԴԻԹԻ Ի ՎԵՐԱՑ ԱՄ ԻՆԵԼ ։

ԼՒ ՆՈՐԱ ԱՌԵԱԼ ՂԵՂՄ Ի ՁԵՌԱՑ ՀՐՔՈՒԱՑՑ-
ՈՑ՝ ԵՒ ՆՈՐՈԳԵԱԼ ԿՈՂԱՑ ԶՆԱ ՔԱՂԱՔ ԴԱՒԻԹ ·
ԵՒ Ի ՆՄԱ ԵԴԵԱԼ ՁԱԹՈՈ ԻՒՐ ՔՆԱԿԵՑԱՀ ԱՆԴԷՆ ·

և քերեալ զտապանակն ԱՅ հանդոյց ի սիօն ամ-
բոյի քաղաքին։ գԼ. 6։ Իւ. յետ բազում յաղ-
թանակութեան՝ և ընդարձակելոյ զՏէրութիւն իւր.
յառաջադրեաց շինել նաև տաճար Տ՚ն. որոյ վե
և պատրաստեաց զգաղափարն, և զամ հարկաւոր
նիւթս, և զոսկի և զարծաթ, և զպղինձս բազում
յոյժ։ բայց նաթան Մարգարէ եկեալ բանիւն
ԱՅ ասէ։ գԼ. 7։ ոչ շինեսցես դու ինձ տուն ան-
ուանի իմոյ. զի այր պատերազմող ես՝ և զարիւն
բազում հեղեր։ ԱՅԼ Սողոմոն որդի քո. որ նստցի
յաթոռ քոյ զկնի քո, նա շինեսցէ տուն անուանի
իմոյ։

Հ. Ուրեմն յաղթութիւն բազումս տարար դաւիթ։

Պ. Այո. բազում յաղթութիւն արարեալ նոճաձեայ
զամ շրջակայ թշնամիս. և ընդարձակեալ հաս-
տատեաց զթագաւորութիւն իէլայսուց. քանզի ուղ-
ղութիւն սրտի իւրոյ հաճոյ եղեալ ԱՅ, միշտ օգ-
նեցեալ էր ի նմանէ։

Հ. Այդքան հաճոյ և սիրելի գոլով ԱՅ, արդեօք և
մեզ ինչ ընդդէմ կամայն ԱՅ։

Պ. Այո. գոլով և նա մարդ սահական, երկիցս մե-
ղաւ. նախ՝ զի ննջեաց ընդ բերսաբէի կնոջ ու-
րիայ քեթացւոյ. որոյ գիտացեալ զյղութիւն, գր-
եաց ի բանակն, զի մղեսցեն զուրիայ ի սաստիկ
մարտ, և սպանցի անդ։ և էառ զբերսաբէ ի կնու-
թիւն։ Իւ. երբեմն յանդիմանեցաւ բանիւ Տ՚ն ի նա-
թանայ Մարգարէէ։ թէև զղջացեալ մեղայ գոչեաց,
բայց կրեաց զպատիժն ձեռամբ որդւոյ իւրոյ
Աբիսողոմայ. ըստ բանի Տ՚ն. թէ ահա ես յարու-
ցեալ չարիս ի վերայ քո ի տանէ քումմէ. և առից
զկանայս քոյ առաջի աչաց քոց, և տայից ընկերի

քում. և ննջեսցէ ընդ կանայս քոյ յանդիման Ա-
բեգականդ. զի դու արարեր զայդ ՚ի ծածուկ. և
ես արարից զբանդ զայդ յանդիման ամ՚ ի՚ել՚ի. Ու-
ստ դաւիթ ց՚Նաթան, մեղայ Տ՚ն. և նա ասէ.
և Տ՚ր անցոյց զմեղս քո. քայց որդին որ ծնանե-
ցոյ ՚ի քեզ՚ մահու մեռցի։ (փոխանակ քո ՚ի հա-
տուցումն արեան ուրիայի։) Ու բերասաբէ կրկին
յղայեալ՚ ծնաւ զՍողոմոն։ գլ. ii. 12։

ՀՀ. Զինչ չարիք հասին դաւիթայ Աբիսողոմայ
յորդւոյ իւրմէ։

Պ. Ամն Անդրանիկ որդի դաւիթայ, զթամար քոյր
Աբիսողոմայ եղբօր իւրոյ՝ բռնուլթ՚ի լկեալ՚ և
անարգանօք վանեալ էր լինքնէն։ Ու Աբիսողոմ
մնայեալ և սպանեալ զԱմն եղբայր իւր՝ վա-
խեալ էր յայլ Տ՚ուլթ՚ի։ Ապայ խնդրանօք միջ-
նորդայ ներուման առեալ ՚ի Տօրէ իւրմէ դաւիթայ՝
դարձեալ էր յիէմ։ Ուր սիրելի լեալ յաչս ամ-
բոխին՝ յանկոյղ ինքեան զսիրտս բազմայ։ Ու
յետ չորից ամաց գնացեալ բազմուլթ՚ի քեբ-
րօն իբր ՚ի զոհել. և անդ յայտնեալ զապստամ-
բուլթ՚ի իւր կամեցաւ թագաւորել՝ և բազումք
յարեցան ՚ի նա։ Լուեալ դաւիթայ՝ ելոյզ յիէմ
իբր վերակացու տան իւրոյ զտան կանայս Տօր-
ձից իւրոց՝ և վախեաւ ընդ իւրային զօրօք։ Ու-
եալ Աբիսողոմայ ընդ բազմուլթ՚ն զօրայ յիէմ. և
խորհրդով Աքիտոփելայ՝ յ՚անարգանս Տօր իւրոյ՝
ննջեաց ՚ի վերայ տանեաց յանդիման Արեգական,
և ամ՚ ի՚ել՚ի ընդ Տարձից դաւիթայ Տօր իւրոյ, ՚ի
կատարուցն բանին զոր խօսեցաւ Տ՚ր ՚ի ձեռն Նա-
թանայ Մարգարէի։ Ու ապա ելեալ յիէ՚ Տայ դի-
մեաց ՚ի վերայ Տօր իւրոյ սպանանել զնա պատե-

բազմաւ. ուր ինքն Աբիսողոմ սպանաւ. և Դաւիթ դարձաւ յաթոռ իւր յեէմ. ողբալով զմահ որդւոյն: գլ. 13. ց' 18. և 19:

Երկրորդ մեղաւ. զի կամեցաւ գիտել թէ որքան պատերազմական զօրս կարէր ունիլ 'ի համայն ժողովրդոցն իէլի: հրամայեաց թուել զնոսա: Եւ իբրև ետես զմեծ բազմութիւն նոցա, մեծամտեցաւ: Եւ Ած բարկացեալ առաքեաց զԳադ Մարգարէ՝ ընտրել զմի յ'երից պատժոցն զոր տալոց էր նմա Ած. այսինքն. կամ երիս ամս սով հացի. կամ երիս ամիսս սուր թշնամեաց. և կամ երեք օր մահ: Եւ դաւիթ ընտրեաց զմահն երից աւուրց. լաւ համարելով անկանիլ 'ի ձեռս Այ՝ քան մարդկանց: Եւ իբրև անկաւ մահ 'ի ժողովուրդն, 'ի մէջ երից ժամուց մեռան եօթանասուն հազար արք 'ի ժողովրդէնէն. Եւ Դաւիթ տեսեալ զսատակիչ հրեշտակն սուր 'ի ձեռին 'ի վերայ եէմայ. անկաւ 'ի վերայ երեսաց իւրոց՝ և ասէ. Տր սուր քո յիս՝ և 'ի տուն հօր իմոյ. ես հովիւս մեղայ. ոչխարքդ զի՞ արարին: Եւ առաքեաց Ած զԳադ Մարգարէ. և ներեալ զյանցանս նր՝ դադարեցաւ մահն 'ի ժողովրդենէն: 2. Թագ. 24:

Եւ յետ այնորիկ հասեալ դաւիթ 'ի բարւոք ծերութիւն. նստոյց զՍօղօմօն որդի իւր ծնեալն 'ի բերսաբէէ յաթոռ թագաւորութեան իւրոյ մինչ կենդանին էր. 3. Թագ. գլ. 1: և ինքն գոլով եօթանասուն ամաց, յաւելաւ 'ի հարս իւր 2993 յամի Ծի: թագաւորեալ նախ յամս եօթն 'ի քեբրօն միայն 'ի վերայ յուդայեան ցեղի. ապա յեէմ ամս 33 և կէս 'ի վերայ ամ իէլի. ընդ ամէնն քառասուն և կէս ամ:

Սոյն Դաւիթ Արքայ այնքան հաճոյ եղև Այ. որ խոստացաւ նմա. զի 'ի նորին զարմէ շառաւիղեսցի Մեսիայն ըստ մարմնոյ. որ է Յս Քս. փրկիչ օծեալ. վս̄յ և կոչեցաւ Ածահայր. Եւ Յս անուանեցաւ որդի դաւթի. և Թագաւոր ի՞էլի: ուստի և նախանձոտ անհաւատ հրէայք և քահանայապետք մինչ մատնեցին Պիղատոսի 'ի սպանանել զնա. իբր հակառակ կայսեր ցուցանել կամելով ամբաստանեցին թէ Թագաւոր ի՞էլի կոչէ զինքն, և կամի Թագաւորել: Եւ 'ի հարցանելն Պիղատոսի ց'Յս. ուրեմն Թագաւոր ոմն ես դու. Պատասխանեաց, ես 'ի դմին իսկ ծնեալ եմ. բայց Թագաւորութի՞ իմ. չէ յայսմ ծէ. զի եթէ յծէ աստի յայսմանէ իցէր՝ սպասաւուրքն իմ մարտնչէին արդեօք, զի մի՞ մատնեցայց հրէից: Եւ վասն այսորիկ գրեաց Պիղատոս 'ի տախտակի խաչին. իբր թէ յանցանք նր̄: Յիսուս Նազօրեցի Թագաւոր Հրէից:

ԳԻՐՔ ՀԻՆԳ.

Դար Հինգերորդ.

'Ի 3000 ամի ծի. 1000 ամօք յառաջ քան զծնունդն Քս̄ի:

ՊՐԱԿ. Ա:

Յաղագս Թագաւորութե՞ Սօղօմօնի. և յաջորդաց նորին. Եւս և վասն շինութե՞ տաճարին Այ. որ կոչեցաւ Սօղոմանեան:

Հ. Ի՞րբ, և քանի՞ ամաց էր Սօղօմօն մինչ Թագաւորեաց:

Պ. 'ի մերձ հինգերորդի դարուն. 'ի 2993 ամի ծի թագաւորեաց Սօղօմօն 'ի վերայ ամ իէլի՝ գոլով տակաւին մանուկ երկոտասան ամեայ։ բայց ըստորում վասն շինութեան տաճարին զնա ընտրեաց Ած յորդւոյն դաւթի. 2. Թագ. գլ. 12. 25։ Յեդէդի այսինքն սիրելի Տն կոչեաց զնա Ած. և ասաց ես եղեց նմա 'ի Հայր. և նա եղիցի ինձ որդի։ 2. Թագ. 7. 14։ (զի օրինակ էր Քսի։) և երևեցաւ նմա 'ի տեսլեան և ասէ. խնդրեա՛ յինէն զինչ կամիս զի տաց քեզ։ 3. Թագ. գլ. գ. 5։ Եւ Սօղօմօն խնդրեաց զիմաստութիւն՝ զի կարիցեմ (ասէ) արդարութիւն և իրաւամբ դատել զժողովուրդ քոյ։ Որոյ յոյժ հաճեալ Ամ՝ ասէ. փոխանակ զի ո՛չ խնդրեցեր զմեծութիւն. զերկարակեցութիւն, և զյաղթանակութիւն, այլ զիրաւունս և զիմաստութիւն։ Ահաւասիկ ետու քեզ սիրտ իմաստուն և հանճարեղ. նման քեզ ոչ ոք եղև յառաջագոյն. և յետ քո ոչ ո՛ք յարիցէ իբրև զքեզ։ Եւ զոր ո՛չն ևս խնդրեցեր՝ ետու քեզ զմեծութիւն և զփառս, որպէս ոչ ո՛ք եղև նման քեզ 'ի թագաւորս զամ աւուրս քո։ Եւ զարթեաւ Սօղօմօն. և եկաց առաջի տապանակի Տն 'ի սիօն. և մատոյց ողջակէզս. և արար խրախութիւն մեծ, իւր և ամ ծառայից իւրոց։ որոյ և իմաստութեան իսկ և իսկ ականատես եղեն ամենայն որդիքն իէլի, 'ի նախկին դատաստանէն՝ զոր արար երկուց պոռնիկ կանանց որք մատուցեալ էին զերկուս նորածին մանուկս. մինն մեռեալ. և միւսն կենդանի. որ մայր մեռելոյն 'ի մէջ քնոյ իւրոյ անկեալ 'ի վերայ մանկանն հեղձուցեալ գոլով փոխեալ էր ընդ կենդանի մանկանն մինչ մայր նորա

ննջէր. և ընդ այգն վեհաձա արարեալ ընդ միաբանսն՝ ասեն կենդանւոյն, ներկայացան Սօղոմոնի. որ հրամայեաց դահճին ընդ մէջ կտրել զմանուկն կենդանի, և տալ զկէսն միոյն և զկէսն միւսոյն։ լաւ եալ մայր կենդանւոյն՝ ասէ. Ա՛խ Տէր՝ տուք դմա զմանուկն՝ և մի սպանանէք. իսկ մայր մեռելոյն ասէ. մի իմ լինի, և մի դորա. կտրեցէք ընդ մէջ։ Ցայնժամ Սօղոմոն հրամայեաց, տալ զմանուկն նմա. որ ասաց թէ մի սպանէք. զի նա է մայր կենդանի մանկանն։ Եւ ամ բեղ զայն հարան յերեսաց Արքային. զի տեսին թէ իմաստութիւն Տեառն է ի նմա առնել իրաւունս։ Յ Թագ. գլ. 4։ որ արդարև կարի ի հաստնայեալ խօսեցաւ երիս հազար առակս. և էին օրհնութիւնք նորա հինգ հազարք։ Եւ խօսեցաւ զփայտից, զեղևնափայտէն որ ի լերանն մինչև ցովպայն. որ է ծորիլենն որ յորմն ելանէ։ Եւ խօսեցաւ զանասնոց. և զթռչնոց, և զձկանց։ Եւ գային ամ ազգ ազգ լսել զիմաստութիւն սօղոմոնի։ գլ. 4։ Եւ յամ թագաւորացն որք լսէին զիմաստութիւն նորա, բերէին նմա զընծայս ոսկի և զամ ինչ։ Եւկն և ուիկինն. այսինքն դշխոյն կամ թագուհին սաբայ ի հարաւ ից յայժ բազմութիւն ոսկւոյ և այլ ընծայից ի լսել զիմաստութիւն նորա։ գլ. 10։ Եւ այնքան հարստացաւ սաղոմոն. որ ոսկին էր խրթև զքարսինս. և արծաթն ոչ էր համարեալ ինչ յաւուրս նորա։ Ա. Մնաց. 1. 15։ Զի հետևաբար բերէին յամ կողմանց. նաև նաև իւր ևս բերէին նմա զոսկիս և զակունս պատուականս. և զայլ Արկնիւ իրս ի սափիրայ. որ իմանի ե հնդկաց։ գլ. 9. 27. 28։

Հ. Շինեաց Սօղօմօն զտաճարն Այ. և ո՞ւր կառոյց զնա:

Պ. Այո՛ շինեաց Սօղօմօն զտաճարն, որ լրացաւ 'ի 3000 ամի Ծի. 1000. ամօք յառաջ քան զծնունդն Քս̄ի. յորմէ և սկսաւ Դարն հինգերորդ: Եւ կառոյց զնա յեէմ քաղաքի. որ կոչեցաւ քաղաք սուրբ. և տեղի Ածպաշտուե̄ և զոհից. զի 'ի նմա եդաւ և տապանակն Այ 'ի սրբութի̄ սրբութե̄ց կոչեցեալ տեղւոջ անջրպետեալ վարագուրաւ. ուր և երևեցաւ փառք Տ̄ն ամպով. և խոստացաւ Ած լսելի լինել անդ աղօթից՝ և ա̄մ հայցուածոց: գլ. 8. 10:

Հ. Սոյն մեծ թագաւորութի̄ սաղօմօնի տևեաց որդւոց յորդիս 'ի սերունդս իւր 'ի վ̄ր ա̄մ ի̄էլի:

Պ. Ո՛չ 'ի վերայ ա̄մ ի̄էլի. Քանզի արքայ Սաղօմօն իգասէր էր. գլ. 11: և էառ իւր կանայս օտարոտիս բազումս: էառ և զդուստրն փարաւօնի (որոյ վասն և կառոյց յատկապէս մեծ և հոյակապ տուն.) նաև էառ այլ և այլ ազգաց թագաւորաց զդըստերս, զորս արգելեալ էր Ած: Եւ էին նորա կանայք տիկնայք եօթնհարիւր. և հարճք երեք հարիւր. և խոտորեցուցին կանայք նորա՝ զսիրտ նորա ընդ ածոց օտարաց. և ո՛չ էր սիրտ նորա կատարեալ ընդ Տ̄ն Այ իւրոյ՝ իբրև զսիրտն դաւթայ հօր իւրոյ: Եւ գնաց զհետ Աստարտայ դարշելւոյ սիդօնացւոց. և զհետ մեղքոմայ դարշելւոյ որդւոցն Ամմօնայ: Եւ արար չար առաջի Տ̄ն զի շինեաց զբարձաւանդակն քամովսայ կռոցն Մօվաբու 'ի լերինն հանդէպ Եէմայ: նմանապէս և միւս կռոց վասն ա̄մ կանանց իւրոց օտարոտեաց՝ որք արկանէին խունկս՝ և զոհէին կռոց իւրեանց:

Ու բարկացաւ Տէր Սողոմոնի և ասէ. փոխա-
նակ ընդ ո՛չ պահեցեր զկտակարանս իմ, պատա-
ուիրելով պատուհասիկ զԹագաւորութիւդ՝ ի ձեռանէ
քումմէ՝ և տայ զդա ծառայի քումմ։ Բայց՝ ի քո
աւուրս ո՛չ արարից զայն վասն դաւիթի հօր քոյ.
այլ՝ ի ձեռանէ որդւոյ քոյ առից զդա։ սակայն ցնմ
Թագաւորութիդ ո՛չ առից. զաւազան մի տայ
որդւոյ քումմ վասն Դաւիթի ծառայի իմոյ՝ և վե-
հեմայ քաղաքի զոր ընտրեցի։ Ու յարոյց նմա
Տէր սատան զԱդեր Իդոմայի՝ ի զաւակէ Թագաւ-
որութեի եդոմեացւոյ. որ փախեաւ էր յերեսաց
դաւթի յերիխովտա։ Ու եկեալ բնակեցաւ՝ ի դա-
մասկոս. և Թագաւորեաց յերկիրն եդոմայ և եղև
հակառակ իջելի զնմ աւուրս Սողոմոնի։

Ու էր սողոմոնի ծառայ Ցերոբովամ. այր
հզօր զօրութիւ. զոր կացուցեալ էր՝ ի վերայ բեռ
նակրաց՝ ի շինեն զբաւարձրաւանդակն, և՝ ի ընդ-
փորամ քաղաքի դաւթայ հօր իւրոյ։ Ու եղև՝ ի
ժամանակի այնմիկ. ել Ցերոբովամ յԵրեմ. և
եդիտ զնա Աքիա սիլովնացի Մարգարէ ի ճանա-
պարհի. և մեկուսացուցեալ զնա՝ ի դաշտն. և
բռնեն էհար Աքիա զնոր հանդերձն իւրմ զոր
ղգեցեալն էր. և պատառեալ յերկոտասան կա-
պերս. ետ ցտասն կապերսն ցՑերոբովամ և
ասէ. ա՛ռ քեզ զտասն կապերսն. զի այսպէս ասէ
Տէր Աստ իջելի. ահա ես պատառեցից զԹագաւորու-
թիւն՝ ի ձեռաց սողոմոնի. և տայ քեզ զտասն
ցուաւազանն. և Թագաւորեսցես. և եղիցիս Թա-
գաւոր՝ ի վերայ տասն ցեղիցն իջելի։ Ու եթէ պա-
հեսցես զպատուիրանս իմ, և արասցես զուղղուի
առաջի իմ. որպէս արար դաւիթի ծառայ իմ. ե-

զէց ընդ քեզ. և շինեցից զքեզ տուն հաւատա-
րիմ. որպէս շինեցի զդաւիթ. և տաց քեզ զիէլ:
Եւ չարչարեցից զզաւակն դաւթի վասն այնորիկ.
բայց ոչ զա՞մ աւուրս:

Եւ խնդրեաց սօղօմօն սպանանել զՅերոբո-
վամ, և նա փախեաւ յեգիպտոս. և եկաց անդ
մինչև մեռաւ սօղօմօն: Եւ աւուրք զորս թագաւ-
որեաց սօղօմօն յեէմ 'ի վերայ ա՞մ իէլի. ամս
քառասուն: և ննջեաց ընդ հարս իւր. և թագա-
ւորեաց ռոբովամ որդի նորա ընդ նորա:

ՊՐԱԿ. Բ:

Յաղագս յերկուս բաժանման թագաւորութե՞ն իէլի գլ. 12:

Հ. Մնա՞ց միահեծան թագաւորութի՞ն իէլի 'ի ձեռս
ռոբովամայ:

Պ. Ո՛չ. Քանզի իբրև թագաւորեաց ռոբովամ փո-
խանակ հօր իւրոյ՝ դարձաւ Յերոբովամ յեգիպ-
տոսէ. և ա՞մ ժողովուրդն միաբանեալ ընդ նմա:
խօսեցան ընդ ռոբովամայ և ասեն, Հայր քո ծան
բացոյց զանուր իւր 'ի վերայ մեր. և դու թեթև-
ացո՛. և ծառայեսցուք քեզ: Եւ նա ասէ. երթա՛յք
մինչև ց'երիս աւուրս, և դարձջիք առիս: Եւ
խորհեցաւ ռոբովամ ընդ ծերսն որք կային առա-
ջի հօր իւրոյ: Եւ նոքա խորհուրդ ետուն, եթէ
յաւուր այսմիկ թեթևացուցեալ զլուծ նոցա խօ-
սեսցիս ընդ նոսա բանս բարիս, եղիցին քեզ ծա-
ռայք զա՞մ աւուրս: Եթող ռոբովամ զխորհուրդս
ծերոցն. և խնդրեաց խրատ 'ի մանկտեաց սննդակ-
ցաց իւրոց: Եւ նոքա ասեն. այսպէս ասասցես

ժողովրդեանն, ծկոյթ իմ սուրբար է քան զմէջ հօր իմոյ. հայր իմ եդ ՚ի վերայ ձեր անուր ծանր, և ես յաւելից. հայր իմ խրատեաց զձեզ գանիւք, և ես խրատեցից զձեզ քդովք • այսինքն փշոտ ցպովք ։ Եւ յետ երից աւուրց՝ ելբև խօսեցաւ ռոբովամ ընդ ժողովրդեանն ըստ խրատուն ծանկանց երիտասարդաց, Պատասխանի եւս ժողովուրդըն, և ասէ. զի՛նչ բաժին կայ մեր ընդ դաւթի. և ոչ դոյ մեր ժառանգութիւն ընդ որդւոյ Յեսսեայ. (գալեաղ խորհուրդ ուրացութեան մեսիային.) պնտեաց ՚ի բնակութիւնն քո իսէլ • և արդ արածեա դու զտունն դաւթի ։ և գնաց իսէլ • ՚ի բնակութիւնս իւր։ Եւ ռոբովամ թագաւորեաց միայն ՚ի վերայ ցեղին Յուդայի, և բենիամինի որք էին սահմանակիցք յուդայի ։

Եւ սուն ցեղքն իսէլի թագաւորեցուցին զՅերոբովամ ՚ի վերայ ինքեանց ։ Եւ այսպէս յերկուս բաժանեցաւ միահեծան թագաւորութիւն իսէլի ՚ի 3039 ամի Ճի ։ տունն դաւթայ՝ ՚ի վերայ եր կուց գաճազանաց, որ կոչիւր թագաւորութիւն Յուդայի ։ որ նշանակէր ջՀաւատացեալ հրէայս ։ և միւս տասն ցեղիցն կոչեցաւ թագաւորութիւն իս րայէլի ։ ՚ի նշանակուն զմեսիայն ուրացողաց ։ ՚ի կատարումն բանին ԱՅ • զոր խօսեցաւ ՚ի ձեռն Մարգարէին Աքիա սիլոնացւոյ ։

ՊՐԱԿ Գ։

Ցաղագս թագաւորութեան իսէլի • և յանցանաց նոցա գլ• 12. 13 ։

Ա։ Սոյն թագաւորութիւնն իսէլի՝ մինչ ՚ի տան Ցերոբովամայ որդւոյ յուդիա ։

Պ. ԼՀ։ քանզի երբև թագաւորեաց Ցերոբովամ ՚ի վերայ տասանց ցեղից իշէլի. խորհեցաւ ՚ի սրտի իւրում, եթէ ելանիցէ ժողովուրդս զոհել զոհս ՚ի տան Տ՚ն Յեհ՚մ. և դառնայցէ սիրտ ժողովրդեանն առ Տ՚ն. և առ Տ՚ր իւրեանց ռոբովամ Արքայ. և սպանանիցեն զիս. և դառնայցեն առ արքայ Ցուդայ։ Եւ խորհեցաւ և արար երկուս եղինջս ոսկիս, և ասէ ց՚ժողովուրդն, չէ փոյթ ձեզ ելանել Յեհ՚մ։ Ահա Աստ՚ք քո իշէլ. որք հանին զքեզ յերկրէն եգիպտացւոց։ (որպէս երբեմն ասաց Ահարօն քահանայապետ։) Եւ եդ զմի երինջն ՚ի Դան, և զմիւսն ՚ի Բեթէլ. այսինքն յերկուս կողմս սահմանաց։ Եւ արար տունս ՚ի վերայ բարձանց. և կարգեաց քուրմս զմասն ինչ ժողովրդեանն։

Եւ յամսեանն ուղիերորդի յաւուր հնգետասանի նորին ամսոյ՝ ըստ տօնին որ յերկրին Յուդայ. եւ Ցերոբովամ ՚ի սեղանն ՚ի բեթէլ զոհել երինջսն զոր արար։ Եւ ահա Այր Աստ՚ծոյ ՚ի Յուդայէ ՚ի բեթէլ բանիւ Տ՚ն։ Եւ Ցերոբովամ կայր ՚ի վերայ սեղանոյն իւրոյ ՚ի զոհել. և կոչեաց այր Աստ՚ծոյ բանիւ Տ՚ն զսեղանն՝ և ասէ. սեղան սեղան. այսպէս ասէ Տ՚ր. ահա որդի ծնցի ՚ի տան դաւթի Յօսիա անուն. և զոհեսցէ ՚ի վերայ քո զքուրմս բարձանցդ՝ որք զոհեն ՚ի վերայ քո։ Եւ այս նշան է զոր խօսեցաւ Տ՚ր, ահա պատառեսցի սեղանդ. և հեղցի պարարտուիդ ՚ի վերա դորա։ այսինքն եղջերն հին օրէնքն և բարձցին զոհք և նուէրքդ. ըստ մնոգարէուածիւ դանիէլի. գԼ. 9։ Եւ պատառեցաւ սեղանն. և հեղաւ պարարտուիքն։ Եւ Ցերոբովամ ձգեաց զձեռն իւր ՚ի սեղանոյ

անտի, և ասէ. կալարուք զնա։ Եւ գօսայաւ ձեռն. և ոչ կարաց դարձուցանել զնա առ ինքն։ Ցայն ժամ ասէ Երոբովամ ց՝այրն Աստ. աղաչեա զերեսս Տեառն Աստ քոյ. և արսո աղօթիս վասն իմ, և դարձցի ձեռն իմ առիս։ Եւ աղաչեաց այրն Աստ առաջի Տեառն. և դարձաւ ձեռն արքային առ նա։ Եւ ասաց արքայ. մնաւո ընդիս՝ի տուն և ճաշեա. և տաց քեզ պարգեւս։ Եւ ասէ այրն Աստ ց՝Արքայ. եթէ տայիս ինձ զկէս տան քո. ոչ մտից ընդ քեզ. և ոչ կերից զհաց. և ոչ արբից զջուր. զի այսպէս պատուիրեաց ինձ Տէր։ և գնաց՝ի բեթէլ այլ ընդ այլ ճանապարհաւ։ Որպէս հրամայեաւ էր Տէր. Քանզի լուեալ մարգարէն ոմն ծեր՝ հանդարձ ձեաց զհեշ իւր. և գնացեալ եգիտ գնա՝ի ճանապարհին. և խաբանօք դարձուցեալ՝ի տուն իւր. եւ նմա ուտել. և ըմպել. թէ Տէր հրամայեաց։ Եւ մինչ ուտէին, եղև բան Տեառն առ ծեր մարգարէն, և ասէ ց՝այրն Աստ. փոխանակ զի ոչ պահեցեր զպատուիրէր Տեառն, զի մտեր մարմին քո՝ի գետեղեզման հարցդոց։

Եւ յետ ուտելոյն և ըմպելոյն, եւ այրն Աստ գնալ յերկիր յուդայ։ պատահեալ նմա առիւծ՝ի ճանապարհի պատառեաց զնա։ Եւ լուեալ ծեր մարգարէին՝ գնաց և եգիտ զմարմին նորա. և առիւծն անդէն կայր. որ ոչ զմարմին առնն Աստ եկեր. և ոչ զէշն նորա եբեկ. և բարձեալ զմարմինն եբեր՝ի քաղաքն և թաղեաց. և պատուիրեաց որդւոց իւրոց՝ զի և զմարմին իւր՝ի մեռանիլն թաղեսցեն՝ի նմին գերեզմանի։

Եւ եղև հրճանդանալ Աբիա որդւոյ յերոբոամայ. գԼ. ա։ Ասէ յերոբովամ ց՝կին իւր, արի

այլակերպեաց զի մի դիտասցեն թէ կին յերո-
բովամայ իցես. և Երթ 'ի սելով առ Աքիա մար-
գարէ. և նա պատմեսցէ քեզ որ ինչ լինելոց է
մանկանն: Գնաց կինն 'ի սելով: Եւ Աքիա ծե-
րացեալ գոլով՝ աչք իւր վատեալ էին 'ի տեսու-
թէ: Եւ Տր ասէ ց'նա. ահա կին յերոբովամայ
գայ հարցանել 'ի քէն բան որդւոյ իւրոյ, զի հի-
ւանդ է. զայս ինչ և զայս ասասցես նմա: Եւ
եղև 'ի մտանել նորա յանծանօթս. Եւ Աքիա
լուեալ զձայն ոտից նորա 'ի մտանելն և 'ի բանալ
դրանն, ասէ. մուտ կին յերոբովամայ. ընդէր
իցէ այդ զի յանծանօթս լինիս. և ես առաքեալ
եմ առ քեզ խստութիւն: Երթ և ասա ց'երոբո-
վամ. այսպէս ասէ Տր Ած իէլի: փոխանակ զի
բարձրացուցի զքեզ 'ի միջոյ ժողովրդեանդ. և
պատառեալ զթագաւորութիւն 'ի տանէ դաւթի ե-
տու քեզ. և ոչ եղեր իբրև զծառայ իմ դաւիթ.
որ պահեալ զպատուիրանս իմ, եկն զկնի իմ ամ
սրտիւ իւրով առնել ուղղութիւն առաջի իմ: Եւ
չարացար առնել քեզ Ածս օտարոտիս. և ձուլա-
ծուս բարկացուցանել զիս: վասն այսորիկ ես ա-
ծից չարիս 'ի վերայ տանն յերոբովամայ. և սա-
տակեցից յերոբովամայ որ միզիցէ զորմով. զդի-
ակունս յերոբովամայ 'ի քաղաքի կերիցեն շունք.
և զմեռեալս յանդի՝ կերիցեն թռչունք երկնից.
զի Տր խօսեցաւ: Եւ դու արի գնա 'ի տուն քո.
և 'ի մտանել ոտից քոց 'ի քաղաքն, մեռցի մա-
նուկն: Եւ կոծեսցեն ամ իէլ, և թաղեսցեն զնա.
զի նա միայն յերոբովամայ մտցէ 'ի գերեզման. զի
գտաւ 'ի նմա բան բարի վասն Տն Այ իէլի 'ի
տան յերոբովամայ: Եւ յարուսցէ Տր թագաւոր

իէլի. (զբաաս) որ հարցէ զտուն յերոբովամայ յաւուր այսմիկ. այսինքն 'ի մերձ ժամանակի։ Եւ արդ՝ (զիՊնչ եւս) հարցէ Տ̄ր զիէլ որպէս շարժի եղեգն իջուրս. և խլեսցէ Տ̄ր զիէլ յերկրէ բարութ̄ն յայսմանէ. և հոսեսցէ զնա յայնկոյսգետոյն. (Գովզանայ. զոր սաղմանասար Արքայ ասորւոց գերեալ զտասն ցեղսն իէլի. և անցուցեալ ընդ եւփրատ գետ՝ տարեալ բնակեցոյց մարաց յերկրի 'ի կողմանս վրկանայ յայնկոյս գովզանայ։) փոխանակ զի արարին իւրեանց անտառս բարկացուցանել զիս։ Եւ մատնեսցէ Տ̄ր զիէլ վասն մեղացն յերոբովամայ որ մեղաւ, և մեղոյց զիէլ։

Եւ յարեաւ կինն յերոբովամայ և գնաց 'ի սարիրայ. և եղև իբրև եմուտ առաջի դրան տանն՝ մեռաւ մանուկն։ Եւ կոծեցին զնա և թաղեցին ա̄մ իէլ. ըստ բանի Տ̄ն զոր խօսեցաւ 'ի ձեռն ծառայի իւրոյ Աքիա մարգարէի։ 3. Թագաւ. գլ. 14. 18։

ՊՐԱԿԴ։

Յաղագս հետևեալ այլ և այլ թագաւորաց տասանց ցեղիցն, և մարգարէից որք երևեցան 'ի նոսին։

Հ. Ուրեմն սոյն թագաւորութ̄ն իէլի. ո՛չ տևէր յաջորդութ̄ն որդւոց յորդիս։

Պ. Այո. քանզի ա̄մ թագաւորք՝ որք ելանէին յաթոռ, յարէին և նոքա 'ի մեղս Յերոբովամայ. վ̄ոյ և Ած̄ պատժէր զնոսա, և յայլ ցեղից կացուցանէր թագաւորս. մինչև որ 'ի վախճանի իսպառ մերժեաց զնոսա յերկրէն բարութ̄ն ըստ

բանի զոր խօսեցաւ ՚ի ձեռն Աքիա Մարգարէի. ոմն գրեցաւ ՚ի վերոյ։

Արդ յետ մահուան յերոբոամայ՝ յաջորդեաց որդի նորա Նադաատ։ որոյ յաւուրս յարեաւ բաաս ՚ի յեղէն խսաքարայ. որ սպան զնադաատ. և ինքն թագաւորեալ եհար զամենայն տունն յերոբոամայ. և ոչ եթող զոք շնչաւոր. ըստ մարգարէութեան աքիա սիլօնացւոյ։ գլ. 15. 29։ Բայց բաաս ևս յարիլով ՚ի նոյն մեղս՝ եղև բան Տ՚ն ՚ի ձեռն Ցէոնայ Մարգարէի որդւոյ Անանիայ. գլ. 16. թէ տայ զտունն բաասայ իբրև զտուն յերոբոամայ. և սատակեցից զնոսա։ Որև զկնի մահուան բաասայ իբրև թագաւորեաց էլա որդի նր. յարեաւ Զամբրի. և սպան զնա, և էհար զամենայն տունն բաասայ. ըստ բանի Տ՚ն. զոր խօսեցաւ ՚ի ձեռն Ցէոնայ։

Ասա յարեաւ ամրի՝ և սպան զամբրի. և ինքն թագաւորեալ շինեաց զքաղաքն սամարիա. և ՚ի նմին փոխեաց զԱԹոռ թագաւորութեան իւրոյ։ գլ. 16. 24։ Այս արար չար առաջի Տ՚ն, և չարացաւ քան զամենայն եղեալս քան զնա։ զի գնաց զհետ յերոբոամայ։

Ցետ մահուան Ամրեայ թագաւորեաց որդի նորա Աքաաբ. և արար չար առաջի Տ՚ն քան զամենեսին, որք էին յառաջ քան զնա։ Զի էառ կին զԵզեբէլ դուստր Ցովբաղայ Արքայի սիդոնացւոց. և ծառայեաց բահաղու, և երկիրբեալ նմա։ Այս կանգնեաց սեղան բահաղու ՚ի սամարիա։ Այս արարեալ անտառս յաբելաւ ՚ի բարկացուցանել զՏ՚ն Ա՚ն իսկ, քան զամենայն թագաւորս իսկ եղեալս յառաջ քան զնա։

ՑաՀուրս նորա էր Երվիա Մարգարէ Թեզբա-
ցի. գԼ. 17։ որ ասէ ց'Ադաաբ. կենդանի է Տէր
Աստ ղօրութեաց, Աստ Իսրայէլ. որոյ կայց առաջի նո-
ւեթէ եղիցի յամս յայսոսիկ ցօղ՝ կամ անձրեւ.
բայց եԹէ բանիւ բերանոյ իմոյ։ Եւ ինքն գնա-
ցեալ Թագեաւ Հեղեզատին քոռաԹու յանդիման
Յորդանանու, յորմէ ըմպէր ջուր. և բանիւ Տեա
ագռաւք բերէին նմա ընդ առաւօտս, և ընդ ե-
րեկս հաց և միս. և կերակրէին զեղիա։ Եւ յետ
աՀուրց իբրև ցամաքեցաւ Հեղեզատն, գնաց բա-
նիւ Տեա՝ ի սարեփԹայ առ կին մի այրի. որ ունէր
զմանկուն. և էր սով յամ տեղիս։ Յորմէ՝ ի
խնդրելն Երվիայէ փոքրիկ նկանակ մի Հացի. ասէ
այրին. կենդանի է Տէր Աստ քո. եԹէ դուսկ իմ
նկանակ. բայց եԹէ բառամբ մի ալիւր՝ ի սափորի
և սակաւ մի իւղ՝ ի կամիսակի. և ահա քաղեմ
կրկուտս երկուս. այսինքն ժողովեմ զչորացեալ
մանր խուրձ փայտից. առ՝ ի եփել Հայ ինձ և
մանկանց իմոյ. զի կերիցուք և մեռցուք։

Եւ ասէ Երվիա, արա ըստ բանի քումմ. բայց
նախ ընդ ինձ փոքրիկ նկանակ մի. և ապայ արաս
ցես քեզ և մանկանցդ։ զի այսպէս ասէ Տէր Աստ
Իսրայէլ. սափոր ալերն մի պակասեսցի. և կամիսակ.
այսինքն փարչն, իւղոյ մի նուազեսցի մինչև յօր-
տուլ Տեա անձրեւ՝ ի վերայ երեսաց երկրի։ Եւ
կինն արար ըստ նորին բանի, և եղիա ընտակեցաւ
՝ի տան նորա։ և յօրէ յայնմանէ ոչ ալիւրն պա-
կասեցաւ, և ոչ իւղն նուազեցաւ։ Եւ մինչ եղիա
էր՝ ի տան կնոջն՝ մեռաւ որդի նորա. և՝ ի Թա-
ղանձել կնոջն՝ յարոյց զնա եղիա. և ետ զմա-
նուկն կենդանի առ մայրն իւր։ գԼ. 17. 23։

Յե եղև յետ երից ամաց և կիսոյ՝ որ սուղ սատակիկ էր յերկրին ինէայուտյ. գլ. 18։ եղև քան Տն առ եղիա և ասէ. երթ երևեաց ազաաքու. և տայ անձրև ի վերայ երեսաց երկրի։ Յե ազաաբ ընդ Աբդիու հազարապետաի իւրոյ. (որ էր այր յոյժ երկիւղած Այ. որ ի կոտորելն էզաբելայ զմարգարէս Տն, հարիւր այր մարդարէ թաքոյց և կերակրեաց զնոսա հացիւ և ջրով։) եղեալ էր որոնել զնոսա վասն անասնոց իւրոյ. և երթային այլ և այլ Հանապարհաւ։ երևեցաւ եղիա Աբդիու. և ասէ. երթ ասա ց՝ազաաբ. թէ ահաւասիկ եղիա։ Յե նա երկեաւ և ասէ. Տը. դուցէ Հոգի Տն վերացուսցէ զքեզ յայլ ուրեք. և ե՛ս տեսեալ նորա զքեզ, պատժեսցէ զիս։ Յե եղիա Հաւաստեաց նմա ե՛ս երևիցիմ. զի երևիմ (ասէ) այսօր նմա։ Յե Աբդիու գտեալ զԱքաաբ ծանոյց։ Յե Աքաաբ երբև տես զեղիա ասէ. եթէ դու իցես խանդարիչն ինէլի։ Յե ասէ եղիա ո՛չ եմ ես. այլ դու և տուն Հօր քոյ որ խանդարէք զինէլ. ի թողուլ ձեր զՏը Աճ ձեր՝ և երթալ զհետ բահաղիմեայց։ Յե արդ՝ առաքեա և ժողովեա առ իս զամ ինէլ ի լեառն կարմէլոս. և զչորեքհարիւր և յիսուն մարգարէսն բահաղու. և զորեք հարիւր մարդարէսն անտառաց. որք ուտեն զսեղանն Յեզաբելայ։

Յե երբև ժողովեցան ամենեքին. ասէ եղիա ց՝ժողովուրդն, մինչև յո՞րք կաղայք երկուս Հետս. եթէ Տը է Աճ, երթայք զհետ նորա. և եթէ բահաղ իսկ, գնացէք զհետ նորա։ Յե ժողովուրդն ո՛չ ետ պատասխանի։ Յե ասէ եղիա ց՝նոսա. ես միայն եմ մնացեալ մարգարէ Տն. և մարգարէք

բահաղու 450. և մարգարէք անտառայ 400. տա-
յին մեզ երկուս եղինս. և նոքա ընտրեսցին իւր-
եանց ցուին. և յօշեսցեն և դիցեն ի վերայ փայ-
տիյ. և հուր ոչ մատուսցեն։ Իւ ես արարիյ
ցուին եղն, և եդեալ ի վերայ փայտիյ՝ հուր ոչ
մատուսիյ։ եւ կարդասջիք զանուն ձեր։
Իւ ես կարդայիյ զանուն Աճոյն իմոյ. և եղիյն
Աճ որ լուհիսկ հրով. նա է Աճ։ Պատասխանի
ետուն ժողովուրդքն և ասեն, քարի է բանդ զոր
խոսեցար։ Իւ նոցա առեալ ղուարսակն յօշեցին,
և եդին Թարց հրոյ ի վերայ փայտից. և ամ մար-
գարէք բահաղու միաբերան կոչէին զանուն նորա
յայգուէ մինչև ց՝հասարակ օր։ և ասէին լուր մեզ
բահաղ։ Իւ եղիւս այպանէր զնոսա և ասէր. մե-
ծաձայն կարդայէք. զի Աճ է. Թերևս զբօսանք
ինչ են նմա. գուցէ լուճեալ հրաման առնիյէ. և
կամ Թէ ի քուն իցէ յառնիյէ։ Իւ նոքա կար-
դային մեծաձայն. և ցտէին սրով և դեղարդեամբ
զանձինս իւրեանց մինչև ց՝ հեղուլ արեան իւրց ի
վերայ նոցա։

Իւ իբրև միւռ եղև երեկոյ. ասէ եղիս. ի բաց
կայէք. արդ ես արարից զողջակէզն իմ։ Իւ ի
բաց կալ նոցա. մարձեցոյց եղիս զժողովուրդն,
և ողջացոյց զկործանեալ սեղան Տն։ Իւ եդեալ
զքերտս փայտից ի վերայ սեղանոյն. և յօշեալ
զղօճարակն եդ ի վերայ փայտից. և եղիյ ջուր ի
վերայ նոցա եռապատկեալ. որ գնայր ջուրն ի
վերայ ծովու սեղանոյն։ Իւ աղաղակեալ առ Տն
յերկինս, և ասէ. Տն լուր ինձ հրով. զի ծանիցէ
ժողովուրդն Թէ դու ես Տն Աճ իսկ։ Իւ անկաւ
հուր երկնից. և եկեր զողջակէզն՝ և զքերտան, և

զջուրն, և զհողն սերզանցին: Եւ տեսեալ Ժողովրդեանն անկանին ՚ի վերայ երեսաց իւրեանց՝ և ասեն. արդարև Տէր. Տէր նա է Աստ:

Եւ ասէ եղիա կալարուք զմարգարէսն բահաղու. և մի ոք ապրեսցի ՚ի նոցանէ: Եւ կախեալ զնոսա իջուցին ՚ի հեղեղատն կիսոնի. և եղիա կոտորեաց զնոսա անդ: Ասա ասէ յաքաաբ. ել կէր և արբ. զի ոտնաձայն անձրևի է: Եւ եղիա ելեալ ՚ի գլուխ լերինն կարմելեայ, խոնարհեցաւ յերկիր. և ասէ ց՚պատանեակն հայեաց ընդ ճանապարհ ծովուն, և դարձիր ց՚եօթն անգամ: Եւ յեօթներորդում նոճապի՝ ասէ պատանին. ահա ամպ մի փոքրիկ իբրև զթաթի առն հանէը ջուր: Եւ ասէ՝ ել ասա ց՚աքաաբ. լծեա զկառս քո և իջ. գուցէ հասանիցէ քեզ անձրև: Եւ եղև մինչ նա այսր և անդր դառնայր. մրրիկք ամպովք և հողմովք, և եղև անձրև մեծ. և երթայր Աքաաբ յեզրեայել և լայր: Եւ եղիա ընթացաւ ընդ նմա մինչև մտանելն յեզրեայել:

Եւ իմայեաւ յեզաբելայ թէ կոտորեաց եղիա զմարգարէսն բահաղու, առաքեաց ասել նմա. եթէ դու եղիա իսկ, և ես յեզաբել. օն և օն արասցին ինձ հոգւոյն իմ. եթէ ոչ ՚ի վաղիւ ՚ի սոյն ժամու եդից զանձն քո իբրև զմի ՚ի նոցանէ: Երկեաւ եղիա, և փախեաւ միայնակ յանապատն աւուր միոյ ճանապարհ. և նստեաւ ընդ բևեռք. նեաւ ասէ. արդ շատ է. առ զոգի իմ յինէն Տէր. զի ոչ եմ ես լաւ քան զհարս իմ: Եւ ՚ի քուն եմուտ ընդ ծառովն: Եւ ահա ոմն մերձեցաւ և ասէ. արի և կեր: Եւ հայեցաւ եղիա. և ետես ՚ի սնարս իւր նկանակ հաճարայ, և կուժ ջրոյ. կա-

քեաւ էկէը և էարը. և դարձաւ ննջեաց։ Իւ հրեշտակ Տ՚ն մերձեցաւ յերկրորդիւ անգամի և ա-սէ. արի և կեր. զի բազում է ՚ի քէն և անդր ճանապարհ։ Իւ յարեաւ եկէը և էարը. և գնաց ըղօւռէթը այնու կերակրոյ քառասուն տիւ և գիշեր ռասուն գիշեր մինչև ՚ի լեառն քորեբ. և մտեալ յայրն դադարեաց անդէն։ Իւ ՚ի վազիւն եղ բա-նէ Տ՚ն յայրէն. և ահա հողմ մեծ յուժգին որ զլերինս քակեսցէ՝ և զվէմս խորտակեսցէ։ և յետ հողմոյն շարժումն մեծ. և ապա հուր. բայց և ո՛չ ՚ի սոսա յերից Տ՚ն։ Իւ յետ հրոյն ձայն մեղմ օդոյ և ՚ի նմանէ ձայն բարբառոյ առեղիա, և ասէ. զի՞ ևս դու աստ եղիա։ Իւ նա ասէ. նախանձեցայ վնա-խանդ Տ՚ն ամենակալի. զի Իսրայէլ զուխտ քո որ-դիքն իջէլի. զսեղանս քո քակտեցին. և զմարգա-րէս քո կոտորեցին. ես միայն եմ մնացեալ. և խնդրեն զանձն իմ։

Իւ ասէ Տ՚ն գնա և դարձիր ՚ի ճանապարհ քո և երթիցես զճանապարհ անապատին դամասկեայ. և օծցես զԱզայէլ ՚ի Իթագաւոր ասորւոց։ Իւ զՅէհու ՚ի Իթագաւոր ՚ի վերայ իջէլի։ Իւ զԵլիսէէ որդի սափատայ օծցես մարգարէ փոխանակ քո։ Իւ եղիցի զապրեալն ՚ի սրոյ Ազայէլի՝ սպանցէ Յէհու. և զապրեալն ՚ի սրոյ Յէհուայ սպանցէ Ե-լիսէէ։ Իւ Իթողից ինձ յիջէլ եօթն հազար այր՝ որ ոչ իցէ կրկնեալ ծունր բահաղու, և ոչ եր-կիրպագեալ նմա։ Իւ գնաց եղիա. և գտեալ զԵ-լիսէէ՝ էառ յինքեան, որ պաշտէր վնա այսինքն ճառայէլ եղիայէ։

Յետ բանիցս այսոցիկ՝ կամեցաւ ալլաաք գնել արծաթոյ զայգի Նաբովթայ յեզրայելեայ՝ մի

մերձ էր յորքունիս իւր, և կամէր առնել զնոս պատրաստել քահանայութեան։ Իսկ Նաբովթ ասէ, քաւ լիցի ինձ ի Տեառնէ իմմէ տալ քեզ զժառանգութիւն հարց իմոց։ Իսկ ութաւր գնաց ի տուն իւր տխրեալ. և ծածկեալ զերեսս ննջեաց. և ոչ եկեր հաց։ Իսկ կեզաբէլ կին իւր հարցանէ զտխրութիւն նորա, ասէ, այդպէս թագաւորեաս ի վերայ ենդի. ասի կեր զհաց քո. և ես տայ քեզ զայգին Նաբովթայ։ Իսկ զերեաց կեզաբէլ հրովարտակ. որ կայուսին զերկուս անօրէն սուտ վկաս. թէ Նաբովթ օրհնեաց զԱՆ և զարքայ. այսինքն հայհոյեաց, և հանին զնա արտաքս ի քաղաքէն, և քարկոծեալ սպանին, ըստ հրամանին կեզաբէլայ։

Իսկ երբև լուաւ կեզաբէլ թէ քարկոծեալ մեռաւ Նաբովթ, ասէ ցՅեհաւաբ. արի ժառանգեա զայգին Նաբովթայ։ Իսկ ութաւր պատառեալ զհանդերձս իւր՝ քուրձ զգեցաւ. վասն մահուան Նաբովթայ. և ելջ յայգի նորա ի ժառանգել։ ընդ յառաջ եղև նմա եղիա քանիւ Տեն և ասէ. այսպէս ասէ Տէր. որպէս սպաներ զնաբովթ և ժառանգեցեր զայգի նորա. ի նմին տեղւոջ ուր շունք և խոզք լափեցին զարիւն նորա. անդ լափեսցեն և զարիւն քո. և բողք. այսինքն կաշեայ փոկք. կամ կապք կառաց՝ լուսասցին յարեան քումմ։ Իսկ ասէ Աքաաբ. եթէ գտեր զիս թշնամի իմ, և ասէ եղիա գոհ. զի գործեցեր չար առաջի Տեն, և բարկացուցեր զնա։ Ահա ես ածիւ ի վերայ քո չարիս. և սատակեցից զտուն քո. որպէս զտուն Երոբովամու և բաասայ։ Իսկ առ կեզաբէլ ասէ Տէր. շունք կերիցեն զնա առ պարսպին կեզրեայելի, զմեռեալ աքաաբու ի քաղաքի կերիցեն շունք. և

զՄեռևալ. նորա ՚ի դաշտի՝ կերիսկն Թուղչունք երկ-
նից։

Լուեալ աքաղաւս սուրջայաւ, և երթայր լա-
լով. և պատառեայ զպատմուճան իւր. և քուրձ
զգեցեալ պահեայ պահս։ Եւ եղև զան Տ՚ն առ
եղիա և ասէ. տեսեր զի սուրջայաւ աքաղաք. և
ամենևորեայ յերեսաց իմոյ. վայ ո՛չ ածիլ զչարիս
յաՀուրս նորա. այլ յաւուրս որդւոյ նորա ածիլ
զչարիս՝ ՚ի վերայ տան նորա։

Եւ յետ երից ամաց էջ Ցօսափատ Աղքայ
յուդայ առ Աքաաբ։ Եւ Աքաաբ հրաՀրեայ
զնա ընդ իւր ՚ի պատերազմ ՚ի վերայ ասորւոց ՚ի
յռամաթ գաղաադու։ Եւ Ցօսափատ ասէ Հարց-
ցուք զՏ՚ն։ Եւ աքաաբ ժողովեայ զամ մարգա-
բէս իւր ասս չորեք Հարիւր. որք միաբերան ասա-
յին՝ ել. և յաղԹեսցես։ Եւ Ցօսափատ ասէ.
Թէ արդեօք աստ մարգարէ Տ՚ն, Թէ չիցէ. զի
նովաւ Հարցցուք զՏ՚ն։ Եւ աքաաբ ասէ. է աստ
այլ մի Ա՚Ի Միքա որդի յեմլեայ. և ես ատեցի
զնա. զի ո՛չ խօսի զինէն բարի, այլ՝ չար։ Եւ Ցո-
սափատ արքայ յուդայ ասէ. մի ասասցէ այդպէս
Աղքայ. և կոչեցին զՄ՚Ի Միքա։ Եւ որ կոչեցին զնա
ասէ. ամ մարգարէք միաբերան բան բարի խօսա-
յան զԱղքայէ. եղիցի և բան քո իբրև զմի ՚ի նո-
ցանից, եւ իբրև ելին միքա՝ և Հարցեալ եղև՝ ասէ
ց՚Աքաաբ. ել. և յաջողեսցի քեզ։ Եւ աքաաբ
ասէ ՚ցերդմնեցուցանեմ զքեզ ՚ի Տ՚ն. զի Ճշմար-
տութիւն խօսեսցիս։ Եւ ասէ Միքա, տեսի զամ
ի՛ել յլռաՀեալ ՚ի լերինս իբրև ՀՀօտ. որպ ո՛չ
ունի Հովիւ. և ասէ Տ՚ն, ոչ դոն դոցա տեարք.
դարձցի իւրաքանչիւրք ՚ի տունն իւր խաղաղութի-

Յու աքսաբ ասէ ց՝ Յօսափատ . ո՞չ ասացի թէ դա միշտ չար խօսի զինէն։ Պատասխանեաց Մ[illegible]քա ես ո՛չ խօսիմ [illegible]նչ յինէն ։ Տեսի զՏՐ Աե՛ էլի նստեալ յաշտռս իւր. և զօրք երկնից կային շուրջ զնովաւ ։ Յու ասէ Տր ո՞ պատրեսցէ զաքսաբ . որ ելցէ՝ և անկցի՛ ի յառամաթ գաղաադու . և ասէ ոմն այսպէս, և ոմն այնպէս ։ Եւ ոգի և եկաց առաջի Տ[illegible] և ասէ. ես պատրեսցիս զնա ։ Յու ասէ Տր ՚ի՛ ։ Յու նա ասէ . եղէց սուտ ոգի ՚ի բերան ամ մարգարէից նորա ։ Յու Տր ասէ. պատրեսցես և կարասցես. ել. և արա այդպէս ։ Յու բարկացեալ աքսաբ ասէ. կալարո՛ւք զդա և դի՛ք ՚ի բանտի՝ մինչև դարձայց խաղաղութե՛ամբ։ Յու ասէ Մ[illegible]քա եթէ դարձայիս խաղաղութե՛ամբ . ասա ո՛չ խօսեցաւ ընդիս Տր։ Յու ասէ լսե՛արուք զօրք ամենեքեան։ Յել Աքսաբ ծալտեալ . և Յօսափատ զնստիւք Աքսաբու ՚ի յառամաթ գաղաադու ՚ի պատերազմ ընդ նմա ։ Յու ՚ի սաստկանալ պատերազմին . զօքականք ասորւոց՝ ըստ պատուհիրի Տ[illegible] իւրեանց պատեցին զՅօսափատ փոխանակ Աքսաբու . և յաղաղակել Յօսափատայ՝ գիտացին թէ ո՛չ է նա, ՚ի բաց կացին ՚ի նմանէ ։ Յու մի ոմն ՚ի օրացս եհար նետիւ ընդ թոզն աքսաբու . և հոսիւր արիւնն ՚ի վիրէ անտի, և ընդ վճոյ կառացն . որ և ել ՚ի պատերազմէ , և ընդ երեկս ևհան զոգին ։ Յու քարոզ կարդայ ՚ի բանակին, թէ մեռաւ արքայ դարձի իւրաքանչիւրոք ՚ի քաղաք և ՚ի տուն իւր։ դարձաւ և Յօսափատ ՚ի տեղի իւր։ Յու զդի աքսաբու բերեալ ՚ի սամարիայ թաղեցին։ Յու լուացին զկառն յաշտղանս . և լիզին խոզք և շունք զարիւն նորա ։ և բողք լուացան յարեանն ։ գլ.

22։ ըստ բանին զոր խօսեցաւ Տէր բերանով Եղիայի։ 21. 19։ Յետ մահուան աքաաբայ. Թագաւորեաց ի վերայ Իսրայէլի՝ որդի նորա ոքոզիա յամի երկու. և արար չար առաջի Տեառն՝ գնալով զճանապարհ հօր իւրոյ։ Եւ անկաւ ի վանդակապատ վերնատանն խօշեցայա. և առաքեաց զարս հարցանել ի բահաղ Ճանճիկ Աճն Ակկարոնի, եթէ ապրիցի յախտէ յայսմանէ։ 4. Թագ. գԼ. ե։

Եւ եղիա քանիւ Տէր ընդ յառաջ արանցն և ասէ. առ ի չգայէք Աւ ի մէջ իշի, երթայք հարցանել ի բահաղ Ճանճիկ. դարձարուք և ասացէք ցոքոզիա. ոչ ապրիցիս. այլ ի մահճէն այդմիկ մռանիցիս, դարձան արքն, և ասացին՝ Թէ այր եւ ընդ յառաջ մեր և զայս ինչ ասաց։ Եհարց ոքո զնա զնչան առնն. և նոքա ասեն, այր թաւ, և գօտի մաշկեղէն ընդ մէջ իւր. և նա ասէ, եղիա Թեզբացի է պն։ Եւ առաքեաց առ նա իշխան հիսնապետ. և հիսուն այր ընդ նմա։ Եկն հիսնապետն՝ և ասէ ցնա՝ որ նստէր ի կըւխ լերինն. Այր Աւ. Արքայ կոչէ զքեզ. Իջ այսր։ Պատասխանեաց եղիա. եթէ այր Աւ եմ ես՝ իջ ցէկ հուր երկնից. և կերիցէ զքեզ. և զհիսունդ։ Եւ իջ հուր երկնից և եկեր զնոսա։ Եւ յաւելաւ արքայ առաքել երկրորդ հիսնապետ ընդ հիսուն արանց. որ եկեալ խօսեցաւ ըստ առաջնոցն։ Թէ այր Աւ արքայ կոչէ զքեզ. Իջ այսր։ Եւ եղիա կրկին պատասխանեաց զնոսա հրով երկնից։ Եւ արքայ կրկին առաքեաց երրորդ հիսնապետ և զհիսուն արս. որ եկեալ անկաւ ւերկիր և խոնարհաբար աղաչելով զեկեղ զՀրաման արքային։ Եւ եղիա իջ բանիւ Տեառն և գնաց առ արքայ և ասէ. փո-

խանակ զի իբրև զչգոյէ Ած 'ի մէջ իէլի. առաքեցեր հարցանել 'ի ճանճիկ բահաղ: վայ 'ի մահիճդ յոր ելեր ոչ իջցես. այլ մահու մեռցիս: Եւ մեռաւ ոքոզիա. և զի ոչ գոյր նորա որդի. Թագաւորեաց յովրամ եղբայր նորա:

ՊՐԱԿ. Ե:

Յաղագս վերանալոյ եղիայի. և յաջորդելոյ նմա եղիսէի Եւս և վասն սքանչելեաց Եղիսէի, և կործանման տանն Աքաաբու:

Հ. Արա՞ր Եղիա՝ և զայլ նշանս:

Պ. Յետ այնքանեաց նշանաց և զօրութեաց, յաւել և զայս. որ վերացոյց զնա Տր հրեղէն կառօք և երիվարօք յերկինս կենդանի մարմնով: 4. Թագ. գլ. 2: և յաջորդեաց փոխանակ նորա Եղիսէէ Մարգարէ. ըստ բանի Տն: 3. Թագ. 19. 16:

Հ. Եղիսէէ ևս առնէր հրաշս և զօրութիս նման Եղիայի:

Պ. Այո. քանզի յաւուր յորում վերանալոց էր եղիա. կամեցաւ զատիլ յեղիսէէ՝ և թողուլ զնա 'ի գաղգաղայ: բայց երդուաւ եղիսէէ ոչ թողուլ զնա: Եւ իբրև եկին 'ի բեթէլ. որդիք մարգարէից ասեն ց'եղիսէէ. եթէ գիտիցես զի այսօր առնու Տր, զՏրդ 'ի քէն: Եւ նա ասէ ց'նոսա. գիտեմ և ես լուռ լերուք: Եւ Եղիա կրկին կամեցաւ թողուլ զնա անդ: բայց եղիսէէ ոչ եթող զնա, և եկին յերիքով. անդ ևս որդիք Մարգարէից զեկուցին Եղիսէի: Եւ նա նոցա ևս ասաց, թէ գիտեմ և ես լուռ լերուք: Անդ ևս կամեցաւ Եղիա թողուլ զնա. բայց յ'ոչ մեկնիլն

Ղղիսէի, եկին առ ափն Ցորդանանու. ուր Ղղիա առեալ զմաշկեամն իւր՝ և ծալեալ էհար ջուրն. որ յերկուս բաժանեցաւ յայսկոյս և յանկոյս. և անցին ընդ ցամաք։

Ցայնժամ ասէ Ղղիա ցՂղիսէէ. խնդրեա զինչ արարից քեզ մինչեւ վերայեալ եմ ՚ի քէն։ Ղղ ասէ Ղղիսէէ. Ղղիցի կրկին ոգի քո ՚ի վերայ իմ։ Ղղ ասէ Ղղիա դժուարինս խնդրեցեր. բայց եթէ տեսցես զիս ամբառնալ ի մէնջ, Ղղիցի այնպէս. ապա թէ ոչ՝ մի Ղղիցի։ Ղղ երբ մինչդեռ գնային և խօսէին ահա կառք և երիվարք հրեղէնք անջպատեցին ՚ի մէջ երկոցունց. և վերացաւ Ղղիա շարժմամբ յերկինս։ (օրինակ համարձմանն Քրի յերկինս. որ խաստացաւ առաքել Ղհոգին սուրբ խնդրողաց՝ եթէ արժանաւորք լինեն։) Ղղ Ղղիսէէ հայէր (ըստ սրբոյ Առաքելոց Գործ. ։ ։) և աղաղակէր. Հայր. Հայր կառքըդ Իսրայէլի, և հեծեալք նորա։ և այլ ոչ ևս տես զնա։

Ղղ էառ Ղղիսէէ զմաշկեամն Ղղիայի զոր ընկէց ՚ի վերայ նորա. և դարձաւ առ ափն Ցորդանանու. և էհար զջուրն մաշկեամն Ղղիայի և ասէ. ուր ես Տէր Աստուած Ղղիայի ապիւով. այսինքն այժմ ևս։ և ջուրքն բաժանեցան յայսկոյս և յայնկոյս. և էանց Ղղիսէէ ընդ ցամաք։ իբրև տեսին որդիք մարգարէիցն՝ որք հանդիպեալ հոգին Ղղիայի ՚ի վերայ Ղղիսէէ. և եկեալ ընդ յառաջ երկիրպագին նմա։ Ղղ յայնմհետէ սկսաւ Ղղիսէէ առնել բազում հրաշս և զօրութիւնս։ Նախ՝ իբրև եկն յերիքով. արջ տեղւոյն ասէն։ Անհաւասիկ երկիցս բարի է. և ջուրք չար և ան-

զաւակ։ Եւ էառ եղիսէէ կուժ մի նոր, և էարկ 'ի նմա Աղ. և ել յականս ջուրցն. և արկեալ անդ կուժն ասէ. Այսպէս ասէ Տր̄. ես բժշկեմ զջուրսդ. և մի՛ ևս եղիցի այդր մահ, և անզաւակութի̄։ Եւ բժըշկեցան ջուրքն մինչև ցայսօր ժամանակի։

Յետ այսորիկ արար եղիսէէ. և զայլ բազում հրաշս և զօրութի̄ս. որպէս գրի. 'ի 4. Թագ. 'ի գլ. 3. և 'ի գլ. 4. որ զդատարկ ամանս այրի կնոջն ելից ձիթով։ Եւ զամուլ կնոջ որդին. զծնեալն բանիւ, և աղօթիւք իւրոյ Եղիսէի, յարոյց 'ի մեռելոց։ Եւ սակաւ հացիւ, և փոքու պաղատտաւ թզոյ կերակրեաց զհարիւր արս. որք յագեցան և թողին զաւելորդ նշխարս բանիւ Տն։

Գրի ևս 'ի գլ. 5. թէ սրբեաց զբորոտութի̄ նեէմանայ Ասորւոյ. որոյ 'ի մատուցանելն տասն տաղանդս (որ մի տաղանդն կշռէ երեսուն հօխայ. որ է երկու փութ, և տասն ֆունթս։) արծաթոյ՝ և տասն պատմուճանս հանդերձեալս. այսինքն տասն ձեռք զգենլիք. ո՛չ ինչ էառ Եղիսէէ. զի մի՛ արծաթով վաճառեսցէ զշնորհն Այ։ Իսկ գեէզի աշակերտ նորա գնացեալ գաղտ էառ 'ի նեէմանայ յանուն Եղիսէի. երիս տաղանդս Արծաթոյ. և երկուս պատմուճանս հանդերձեալս, և գաղեաց 'ի տան իւրում։ Եւ եղիսէէ իմացեալ մարգարէական հոգւով՝ անէծ զնա. և բորոտութի̄ նեէմանայ յարեցաւ 'ի գեէզի և 'ի զաւակունս նր̄ սերնդովք։

Այլ և գրի 'ի գլ. 6։ որ արքայն ասորւոց տայր պատերազմ ընդ ի̄էլի. և զոր ինչ դարան գործէր՝ եղիսէէ զգուշացուցանէր զի̄էլացիս, 'ի

քարկանաչ արքային Ասորւոց Թէ ինչ է որ մատ
նէ զմեզ. ասեն ոչ ոք է ի մէնջ. Այլ եղիսկէ
մարգարէ նոցա ղեկուցեալ զուշացուցանէ զնո-
ա. և ահաճասիկ ի գովդայիմ է: Եւ առաքեաց
զլօր Ծանր ըմբռնել զնա: Եւ պատանեակն Հղի-
սէի տեսեալ ընդ այգն՝ զինքեանս պատեալ զօ-
րօք. ասէ ցՀղիսկէ. զինչ գործեսցուք: Եւ նա
ասէ մի երկնչիր զի ընդ մեզ բազումք են քան
ընդ նոսա: Եւ եկաց յաղօթս առ Տ՝ և բացան
աչք պատանւոյն. և տեաս, և ահա լեառն լի էր
ձիովք, և հրեղէն կառօք և լուծին առ նոսա: Եւ
խնդրեաց ի Տնէ եղիսկէ և հարան զօրքն ասոր-
ւոց շլացուածք: Եւ ասէ ցնոսա Հղիսկէ ոչ է այս
ճանապարհ. և ոչ այս քաղաք. եկայք զկնի իմ,
և տարայց զձեզ առ այրն այն զոր խնդրէք: և
տարաւ զնոսա ի սամարիա: իբրև եհան զնոսա
արքայն ի՝ ասէ ցՀղիսկէ. հարից զդոսա հայր:
Եւ նա ասէ. մի հարկաներ զդոսա. այլ զպնոսիկ
զօրս գերեսցես սրով և գեղարդեամբ քով: և
տուր դոցա զի կերիցեն և արբցեն, և երթիցեն
առ Տը իւրեանց: Եւ էարկ առաջի նոցա սեղան
խորտկաւ մեծաւ, և կերին և արբին և դարձան
առ Տը իւրեանց. և ոչ ևս յաճելին ասպատակք
գալ յերկիրն Իսրայէլ: տեսջիք նաև հետևաբար ի
գլ. 7: Թէ որպէս խանգարեաց ի միում գիշերի
զզանակս Թշնամեաց ողք պատեալ էին զքաղաքն
սամարիա. և փրկեաց զժողովուրդն ի մեծէ սովու
որք մեռանէլոց էին ի քաղցու:

Եւ յետ այսքանեաց սքանչելեաց. գրի ի գլ. 9.
Թէ առաքեաց զմի յորդւոց մարգարէից ի քա-
նակն զերաց Իսրայէլ օծանել զՅէհու սպարապետ ի

*

թագաւոր 'ի վերայ իէլի. որպէս հրամայեաց Տր Եղիայի. 3. Թագ. 19. 16: և ասել ց' նա: Այսպէս ասէ Տր. առցես զվրէժ արեան ծառայից իմոց մարգարէից 'ի ձեռաց յեզաբելայ. տալ զտուն աքաաբու, իբրև զտունն յերոբովամու. և իբրև զտունն բաասու: Եւ զյեզաբէլ շունք կերիցեն 'ի վիճակին յեզրայէլի. և ոչ ոք իցէ որ թաղիցէ զնա:

Եւ իբրև օծաւ Յէու զօրաժողով արարեալ գնաց 'ի վերայ Յովրամայ որդւոյ աքաաբու. և 'ի փախչիլ նորա սպան զնա նետիւ. և ընկէց 'ի վիճակի ագարակին նաբովթայ յեզրայէլացւոյ: Էսպան 'ի ճանապարհի նաև զոքոզիա Արքայ յուդայ որ էր ընդ յովրամայ. զի առեալ էր զդուստր Աքաաբու 'ի կնութի: Եւ իբրև եմուտ Յէու զօրօք 'ի քաղաքն յեզրայէլ. Յէզաբէլ 'ի վերնատան պատուհանէն հանեալ զգլուխն հայէր՝ և նախատէր զՅէու տիրասպան կոչելով. զոր տեսեալ Յեուայ հրամայեաց ընկենուլ զնա 'ի վայր: և իբրև արկին, ցտեցաւ յարենէ նորա զորմովն և զձիովքն. և կոխեցին զնա առաթուր: Եւ Յէու եմուտ էկէր և էարբ. և ասէ. տեսէք զանիծեալն զայն և թաղեցէք. զի դուստր թագաւորի է. և գնացին թաղել զնա. և ոչինչ գտին 'ի նմանէ. բայց զգագաթն, և զոտսն, և զթաթս ձեռաց, զի շունք կերեալ էին: դարձան և պատմեցին Յէուայ. և նա ասէ. բան Տն է. զոր խօսեցաւ 'ի ձեռն Եղիա Մարգարէի: Եւ էին աքաաբու եօթանասուն որդիք 'ի սամարիայ. որոց վասն հրովարտակ առաքեաց Յէու. սպանանել և զգլուխս նոցա բերել յեզրայէլ: Ապա ել և գնաց 'ի սա-

մարիայ. և 'ի ձանապարհին հանդիպեալ եղբարց
ոգոլիայ սրբայն յուդայ. որք երթային ողջունել
զերդիս սքաւթու. կոտորեաց զամենեսին որք էին
սրբ. քսան և երկու: Իւ մտեալ 'ի քաղաքն Ե-
հայի զՅՄ Ծնայորդս տանն Ադաւթու:

Իւ ապա գումարեալ զՅՄ ժողովուրդն ասէ.
Ադաւթ Ծառայեաց բահաղու սակաւ ինչ. Ցէու
Ծառայեսցէ նմա բազում: Իւ արդ զՅՄ մարգա-
րէս բահաղու, զՅՄ Ծառայս նորա զքուրմս. կո-
չեցէք առիս, և մի ոք վրիպեսցի. զի զՏՀ մեծ է
բահաղու: Իւ եկին ՅՄ յԵհէլէ՝ համայն Ծառայք
բահաղու. և ոչ Ծնայ ոք, որ ոչ եկին: Իւ ետուն
ընտսա 'ի տուն բահաղու. և պատուհիրեաց մի ոք
լինիլ անդ 'ի Ծառայից Տ՚ն: Իւ կայուցեալ շուր-
ջանակի զօրս՝ ասէ. այր՝ որ ապրեցուցանիցէ յա-
րանցն այնոցիկ. անձն նորա եղիցի փոխանակ ան-
ձին: Իւ երբեք կատարեաց խունկս արկանելոյ և
առնելոյ զողջակէզսն. ել Ցէու և ասէ յսուրհան-
դակսն, մտէք և հարէք սրով սուսերի. և սպա-
նին զամենեսին: Իւ գնացին մինչև յ'քաղաք տանն
բահաղու. և կործանեցին զարձան նորա: և քա-
կեցին զտունն: Իւ ապականեաց Ցէու զբահաղ
յԵհէլէ, բայց 'ի մեղայ յերոբովամէ ոչ մեկնեցաւ
ացսինքն յերինջոյն ոսկեայ. որով անոդոյց ինէլ:

Ցաճուբսն յայնոսիկ սկսաւ Տ՚ն կոտորել յՅՄ
սահմանս ինէլի. զորս կնար Ազայէլ թագաւոր
Ասորւոց. որպէս խօսեցաւ Տ՚ն 'ի ձեռս Էլիա և
Էլիսէ մարգարէից: Իւ Ցէու. (որոյ խոստացաւ
Տ՚ն որդիք չորրորդ նստուցանել յաթոռն ինէլի.
վասն քաջութ՚ բառնալոյ զբահաղ յԵհէլէ. 4.

Թագ. 10. 30:) Ընջեաց ընդ հարս իւր. և թագաւորեաց Յովաքազ որդի նորա ընդ նորա:

Յաւուրս ոքողիայ՝ մեռաւ Եղիսէէ, և թաղեցին զնա: Եւ 'ի գալ տարւոյն ելին մեկնազէնքն մովաբու յերկիրն ի՞էլի: Եւ եղև 'ի թաղել ի՞էլացւոց զայր մի. և ահա տեսին զմեկնազէնսն. և ընկեցին զայրն մեռեալ 'ի գերեզման եղիսէի. որ 'ի մերձենալ դիոյն յոսկերսն նորա: կենդանացեալ կանգնեցաւ մեռեալն 'ի վերայ ոտից իւրոց: գլ. 13. 21:

ՊՐԱԿ. Զ:

Յաղագս բարձման թագաւորութ՞ն տասանց ցեղիցն ի՞էլի. և վասն մարգարէից՝ որք երևեցան 'ի նոսին:

Հ. Երկար տևեա՞ց սոյն թագաւորութ՞ն տասանց ցեղիցն ի՞էլի:

Պ. Ո՛չ տևեաց երկար. Քանզի թէև միշտ զդուշացուցանէր նոցա Ած 'ի ձեռն մարգարէից իւրոց. բայց նոքա ո՛չ երբէք մեկնեցան 'ի մեղացն յերոբովամու. և մանաւանդ որ ստէպ ստէպ անկանէին 'ի կռապաշտութ՞ն: Եւ ո՛րքան գթայր 'ի նո՞ Ած և հասանելով 'ի թիկունս պաշտպանէր 'ի թշնամեաց. նոքա վերստին դառնային 'ի չար սովորութ՞ն իւրեանց: Եւ վերջապէս բարկացեալ Ա՞յ յարոյց զսաղմանասար Արքայ ասորւոց. որ եկեալ աւերեաց զբազում տեղիս. և գերեաց զբազումս 'ի նոցանէ: Հուսկ յետոյ. (որպէս գրի 'ի գլ. 17:) 'ի թագաւորութ՞ն ովսեայ վերջին թագաւորի ի՞էլացւոց, Եւ 'ի ժամանակի թագաւորութ՞ն բարեպաշտին Եզէկիայ թագաւորի Յուդայ. եկեալ

տաղմանաւոր պաշարեալ զամարիա քրը ամս երիս և ՚ի 3283 ամի Եհ էառ զնա. և խաղայղեալ զինել յԱտրեատանեայս. և տարեալ բնակեցոյց ՚ի կողմանս վրկանայ ընդ գովզան գետով. առ լերամբն մարաց. ըստ մարգարէութեանն Աբիա սլջնացւոց։ Իւ փոխանակ նոցա բնակեցոյց ՚ի սամարիայ և յամ սահմանս նր զայլազգիս ՚ի զանազան ազանց. որք վեր ՚ի վերոյ ճանօթացեալ ԱՀՆ ինելի. ընկալան միայն զՏինգ գրեանս Մօսէսի. և կոչեցան սամարացիք. որք երկնչէին ՚ի Տնէ. և պաշտէին զկուռս իւրեանց։ իսկ դերեցեալ ինելոյիք, մնացին անդարձ ՚ի դերութեն այնմիկ։

Հ. ՚ի Քանի ամս տևեաց սոյն Թագաւորութիւն ինելացւոց։

Պ. ՚ի Թագաւորութեն յերոբովամայ սկսեալ՝ տևեաց մինչև յՈվսեայ վերջին Թագաւոր նոցա որ քրը յամս 254։ որոյ յաճուրս խսպառ բարձաւ։

Հ. Ո՞յք էին Մարգարէք. որք երևեցան ՚ի նոսին։

Պ. Յաճուրս Ջաբալեայ որդւոյ Յեհուայ Թագաւորի ինելի։ Յօնան մարգարէ առաքեցաւ քարոզել ՚ի Նինուէ. որ եղև երեք օր, և երեք գիշեր ՚ի փոր կէտ ձկան ՚ի ծովու. օրինակ Թաղման և յարութեն Քեի։ Յաճուրս Մանայեմայ Թագաւորի ինելացւոց։ Ովսէ. Յովէլ. Ամովս. և Աբդիու մարգարէանայէին վասն չարեացն զոր կրելոց էին ինելացիք. Նաս և վասն գալստեան Մեսիայի, և տնօրինութեն նորա։ Յաճուրս փակհէ Ալքայի ինելացւոց, Նասայի մարգարէանայր վասն գերութեն ինելացւոց. որ եղև յաճուրս իւր։ Նաև վասն գերութեն յուդայեանց ՚ի բաբիլոն. և ազատութեն նոցա կիւրոսիս. և կործանման բաբիլոնի. և մեաս աղաւոց։

և դամասկոսի. և յեգիպտոսի: Եւս և վասն ծննդեան Մեսիայի 'ի կուսական յարդանտէ. և վասն համայն տնօրէնութեան և չարչարանաց. և մահու. և Յարութեան՝ և համբարձման նորին: նաև վասն լուսաւորութեան հեթանոսաց: ԼՆ. ԼՆ:

Յաւուրս Ովսեայ վերջին արքայի ի՞էլի. Միքիա և Նաւում Մարգարէանային: Եւ Միքիա գուշակեաց թէ՝ 'ի բեթղէհեմ ծնանի Քոն:

ՊՐԱԿ. Է:

Յաղագս թագաւորացն Յուդայ. և վասն բարեպաշտ Եզեկիայ Արքայի: Եւս և վասն Մարգարէից որք երևեցան 'ի նոսին:

Հ. Թագաւորութի՞ Յուդայի տևեաց յաջորդութի՞ որդւոց յորդիս 'ի տան դաւթի:

Պ. Այո՛. զկնի ռոբովամայ որդւոյ սօղօմօնի յաջորդեցին միշտ թագաւորք Յուդայ որդւոց յորդիս: յորոց ո՛չ սակաւք բարեպաշտք էին: Եղեն և ոմանք որք խոտորէին յօրինաց Տ՞ն, և հասանէին 'ի վերայ նոցա չարիք. բայց յորդւոց նոցա յառնէին բարեգոյն թագաւորք՝ և հաշտեցուցանէին զԱ՞ծ: որպէս է տեսանել 'ի սուրբ գիրն, որ Ոքոզիա արքայ յուդայ խոտորեցեալ յարեցաւ ընդ տան աքաաբու. և սպանաւ 'ի Յէուայ արքայէ ի՞էլի հանդերձ եղբարբք: որպէս գրեցաւ 'ի նախն թաց պրակ. 5: Եւ գոթոլիա մայր ոքոզիայ՝ որ էր 'ի տանէ Աքաաբու. իբրև ետես թէ սպանան որդիք իւր. կորոյս զա՞մ զաւակ թագաւորութի՞ յուդայ: Եւ Յօսաբէէ դուստր Յովրամայ արքայի եղբօր ոքոզիայ որ էր կին Յովիադայ քա-

հանայապետի. էառ զՅօվսես զորդի ոքորլիայ. և գողացաւ ՚ի միջոյ արքայ որդւոյ սպանելոյ. և Թաթայ զնա յերեսայ գոԹոլիայ, և ոչ մեռաւ։ և պահէը զնա ՚ի տան Տ՚ն։ 4. Թագ. գԼ. 11. ամս վից։ Եւ յամին եօԹներորդի՝ Յովիադաս վԱ_ հանայապետ. (որ ըստ ոմանց կոչի նաև բարաքիաս) էառ զմանուկն Յովաս. և հաճանուԹիւ ամբոխին՝ և իշխանաց, Թագաւորեցոյց զնա, և մեռուցին զԳոԹոլիա։ Եւ Յովաս Թագաւորեալ կրկին ՚ի տանէ և ՚ի զարմէ դաւԹայ. արար քարի առաջի Տ՚ն. որքան ժամանակ կենդանի էր Յովիադա։ Եւ երբև մեռաւ նա. իշխանք յուդայ շրջեցին զվիրս Յովասայ. և Թողեալ զՏ՚ն ԱՆ հարցն իւրեանց՝ ծառայեցին կռոյն Աստրեատանեայց. և եղև բարկուԹիւն Տ՚ն ՚ի վերայ եՂէմ։ Եւ ՚ի զուր առաքեայ Տ՚ր զմարգարէս ՚ի դարձուցանել զնոսա առ Տ՚ր ԱՆ իւրեանց։ Եւ Ազարիա. (ըստ ոմանց Զաքարիա.) որդի Յովիադայ. կամ բարաքիա քահանայապետի, զգեցեալ Հոգի Տ՚ն՝ յանդիմանեաց զնա։ Եւ նորա յարեան ՚ի վե՚ր նր. և քարկոծեցին զնա հրամանաւ Յովասու ՚ի սրահէ Տ՚ն. որ էր ՚ի մէջ տաճարին, և սեղանոյն։ Մատ. 23. 35։ Եւ ոչ յիշեաց զգուԹիւն՝ զոր արար նմա Յովիադայ հայր նորա։ որ ՚ի մեռանիլն ասաց. տեսցէ Տ՚ր և դատեսցէ։ 2. Մնաց. գԼ. 24. 21. 22։ Եւ ՚ի կատարիլ տարւոյն. Յովաս ինքն ևս սպանաւ ՚ի ծառայից իւրոց. վասն արեան որդւոյ Յովիադայ։ և Թագաւորեաց Ամասիա որդի նորա, փոխանակ նորա։

Եւ Ամասիա արար չար առաջի Տ՚ն։ խնդ որդի նորա Ոզիա. և որդի ոզիայի ՅովաԹամ արքայք

յուդայ արարին ուղղութիւն: Բայց Աքազ որդի Յովաթամայ յաջորդեալ հօր իւրոյ՝ արար չար առաջի Տն. և գնաց 'ի Ճանապարհ յերոբովամայ: անցոյց նաև զորդին 'ի հուր: Եւ 'ի մեռանիլ Աքազու. թագաւորեաց որդի նորա բարեպաշտն Եզեկիա. որ արար ուղղութիւն առաջի Տն ըստ ամի, զոր արար Դաւիթ հայր նորա: Սա եբարձ զբարձունսն՝ և խորտակեաց զամ արձանսն. և կոտորեաց զանտառս: Փշրեաց նաև զօձն պղնձի՝ զոր արար Մօսէս. զի մինչև 'ցայն աւուրս զոհէին նմա որդիքն իէլի. և կոչէին զնա նեեսթան: 'ի Տր Ած իէլի յուսացաւ. և ոչ մեկնեցաւ 'ի նմանէ. և Տր էր ընդ նմա:

'Ի վեցերորդի ամի թագաւորութեան սորա՝ բարձաւ թագաւորութիւն տասանց ցեղիցն իէլի. որ էր իններորդի ամի թագաւորութեան ովսեայ վերջին թագաւորի նոցա: Եւ 'ի չորեքտասաներորդի ամի թագաւորութեան սորա. եկն սենեքերիմ արքայ ասորեստանեայց 'ի վերայ եէմի զօրօք բազմօք և խրոխտաբար սպառնացաւ ամբարտաւանութեամբ խսպառ կործանել զնա: Եւ Եզեկիա մտեալ 'ի տուն Տն կարդաց առ Տր: Եւ Ած առաքեալ նմա զեսայի մարգարէ՝ քաջալերեաց մի երկնչիլ 'ի սենեքերիմայ: Եւ 'ի գիշերին այնմիկ հրեշտակ Տն սատակեաց 'ի բանակէ նորա զհարիւր ութսուն և հինգ հազար զօրականս: Եւ սենեքերիմ փախեաւ կորագլուխ 'ի նինուէ: ուր յերկրպագանելն 'ի տան նեսքարայ զոյ իւրում, Ադրամելեք, և Սարասար որդիք իւր (զորս կամէր զոհել կռոց.) սպանին զնա և փախեան 'ի Հայս: 4. Թագ. 19. 37: և Եսա. գլ. 37. 38: (յորոց և սերեցան

արծրունիք. որք յետ ժամանակաց բազմաց. Թա-
գաւորեցին 'ի մասին Ծի հայոց 'ի վասպուրական
Ծի։ 'ի Թագաւորութեան սմբատայ բագրատունւոյ։)
Եւ ասորդան որդի սենեքէրիմայ Թագաւորեաց
փոխանակ հօր իւրոյ 'ի նինուէ։

Եւ յետ միոյ ամաց հիւանդացաւ եղեկիա. և
Եսայի մարգարէ եկեալ բանիւ Տն ասաց՝ առնել
զկտակ զի մեռանելոց է։ Եւ Եզեկիա լալով ա-
ղաղակեաց առ Տր։ Եւ Ած լուեալ աղօթից նր,
առաքեաց կրկին զԵսայի Մարգարէ. և շնորհեաց
նմա այլ ևս հնգետասան ամ։ որոյ նշան ետ Ե-
սայի զդարձ ստուերի արեգական տասն աստիճա-
նօք յետս։ գլ. 20։ 11. 12։ Եւ ողջացեալ Եզե-
կիա եկաց կենդանի այլ ևս հնգետասան ամ. և
ննջեաց ընդ հարս իւր Թագաւորեալ ամս։ 29։

ՊՐԱԿ. Ը։

Յաղագս բարձման Թագաւորութեան յուդայ՝ և գե-
րութեան նոցա 'ի բաբիլօն։ Եւս և վս Մարգարէից։

Հ. Զկնի մահուան Եզեկիայ, երկար տեւեաց Թա-
գաւորութիւն յուդայեանց։

Պ. Յետ մահուան Եզեկիայ՝ Թագաւորեաց որդի
նորա մանասէ. բայց արար չար առաջի Տն։ շի-
նեաց զբարձունս. և կանգնեաց զկուռս բահաղու.
և արար անտառս ըստ Աքաաբու. և երկիրեպագ
զօրութեաց երկնից. և շինեաց նոցա սեղան յտմ
սրահի տան Տն։ Եւ անցոյց 'ի հուր զորդիս իւր։
Եւ հմայէր՝ և հաւահարցուկ լինէր. և արար
վհուկս և գէտս. և յաճախեաց առնել զչարութիւն
առաջի Տն հեղլով զբազմութիւն անմեղ արեանց.

սպան և զԵսայի Մարգարէ սղոցմամբ: Եւ մոլորեցոյց զյուդայ՝ և զբնակիչս Եէմի առնել չար քան զտ̄մ ազգսն: վ̄ոյ և բարկացեալ Ա̄յ՝ էած 'ի վերայ նորա զիշխանս զօրու Արքային ասորեստանեայց՝ որք կալան զնա և կապանօք տարան 'ի բաբիլօն: 2. Մնաց. գլ. 33. 11. 12: Եւ իբրև վտանգեցաւ, խնդրեաց զերեսս Ա̄յ իւրոյ. և խոնարհեցեալ յոյժ եկաց յաղօթս, (որ է աղօթքն, Տ̄ր ամենակալ:) Եւ լուեալ Տ̄ր ձայնի աղօթից նորա դարձոյց 'ի թագաւորութի̄ իւր: Եւ ծանեաւ թէ Տ̄ր, նա է Ա̄ծ: Եւ 'ի բաց եբարձ զտ̄ծսն օտարս. և զդրօշեալսն 'ի տանէ Տ̄ն, և յտ̄մ տեղեաց: Եւ ուղղեալ զսեղան Տ̄ն՝ արար զոհս փրկութի̄: և ասաց ց'յուդայ ծառայել Տեառն Ա̄յ: Եւ ննջեաց ընդ հարս իւր թագաւորեալ յամս յիսուն և հինգ:

Եւ Ամմօն որդի նորա թագաւորեալ՝ արար չար որպէս զհայր իւր. զոհեաց կռոց՝ և ծառայեաց նոցա. և ո՛չ խոնարհեցաւ առաջի Տ̄ն, ո̄պ զմանասէ հայր իւր: Եւ յետ երկուց ամաց՝ յարեան ծառայք նորա, և սպանին զնա 'ի տան իւրում:

Եւ փոխանակ նորա թագաւորեաց որդի նորա Յօսիա մանուկ ութամեայ: Եւ յետ ութն ամաց՝ եբարձ զկուռս, և սրբեաց զյուդաս և զեէմ 'ի բարձանցն և յանտառացն, և 'ի ձուլածուիցն: Եւ կործանեաց զսեղան բահաղիմայցն. և զոսկերս քրմացն այրեաց 'ի վերայ սեղանոյն բահաղու (ըստ բանի առն Ա̄յ առ յերոբովամ: 'ի պրակ. 3:) և մաքրեաց զեէմ և զտ̄մ քաղաքս: Եւ հրամայեաց կազմել, և զօրացուցանել զտուն Տ̄ն:

Եւ ՚ի գործել նոցա անդ, եկեալ քեղկեայ քա-
հանայ կգիրս օրինացն Տ՚ն՝ որ ՚ի ձեռն Մովսէսի. և
առաքեալ առ արքայ ընծեռնուլ: Եւ երբև լո-
ւաւ Ցօսիա պատառեալ զհանդերձս իւր. և առա-
քեալ զՔեղկեայ՝ և զայլս ընդ նմա . առ ողդան
Մարգարէուհի կին սեղեմայ որ պահէր զպատուճի-
բանսն. և բնակէր յԵրեմ, հարցանել զՏ՚ն ի:

Եւ ասէ ցնոսա . այսպէս ասասջիք այնմ, որ
առաքեացն զձեզ. Այսպէս ասէ Տ՚ն. Ահա ես ա-
ծից զչարիս ՚ի վերայ տեղւոյդ այդորիկ. զամ բանս
դրեալս ՚ի գիրս օրինացդ այդոցիկ . զորս ընթեր-
ցան առաջի Արքայիդ յուդայի. փոխանակ զի թո-
ղին զիս՝ և զոհեցին ածին օտարաց. զի բարկացու-
ցին զիս գործովք ձեռաց իւրեանց. և բորբոքե-
ցաւ սրտմտութիւն իմ ի տեղւոջդ այդմիկ . և ոչ
ևս շիջցի: Այսպէս ասէ Տ՚ն Ած իսկ. զբանսդ
զոր լուար դու. և պատկառեցար սիրտ քո. և լա-
ցեր յանդիման իմ. և ես լուայ . ասէ Տ՚ն: Ահա
յաճեցից զքեզ առ հարս քոյ. և դիցին զքեզ ՚ի
շիրմի խաղաղութիւն . և ոչ տեսցեն աչք քո զամ
չարիս՝ զոր ես ածից ՚ի վերայ տեղւոյդ այդորիկ.
և՚ի վերայ բնակչաց դորա:

Եւ ետուն լիաձաւորին զբանս զայսոսիկ: գլ.
ԻԲ: Եւ արքայ Ցօսիա ժողովեաց զծերսն յու-
դայ և Երեմ. եւ ՚ի տուն Տ՚ն համայն ժողովրդոք
՚ի մեծէ մինչև ցփոքրն . և ընթերցաւ յականջս
նոցա զամ բանս կտակին գտեալ ՚ի տան Տ՚ն: Եւ
արարին բնակիչք Երեմ ուխտս ՚ի տան Տ՚ն Այ
հարց իւրեանց: Եւ ՚ի բաց էբարձ Ցօսիա զամ
գարշելիս յամ երկրէ որդւոցն իսրայ. և արար ա-

մենեցուն ծառայել Տն Այ իւրեանց զամ աւուրս իւր ։

Եւ յետ առնելոյ ուղղութիւն՝ մեռաւ և թաղեցաւ առ հարս իւր թագաւորեալ յամս . 31 ։ Եւ ամ յուդայ և եէմ սուգ էառ 'ի վերայ նորա։ Եւ ասաց Երեմիա ողբս 'ի վերայ Յօսիայ և ամ իշխանք . և ամ արք և կանայք ասացին զողբսն 'ի վերայ Յօսիայ մինչև ցայսօր ։ 2. Մնացորդաց. գլ. 35. 35 ։

Եւ ամ ժողովուրդն կացոյց թագաւոր զորդի նորա զՅովաքազ . որ արար չար առաջի Տն ամիսս երիս ։ Եւ նեքաւօն փարաւօն կալեալ զնա տարաւ յեգիպտոս . որ մեռաւ անդ ։ Եւ կացոյց զեզիակիմ որդի Յօսիայ փոխանակ հօր իւրոյ . և փոխեաց զանուն նորա Յովակիմ ։ էր քսան և հինգ ամաց . և մետասան ամ թագաւորեաց ։ և արար չար առաջի Տեառն , ը ամի զոր արարին հարք նորա։ (Եւ զի սրտմտութի Տն էր 'ի վերայ յուդայ. 'ի բաց առնել զնա յերեսաց իւրոց վասն մեղացն Մանասէի . և անպարտ արեանցն զոր եհեղ Յովակիմ. և ելից զեէմ ։) 2. Մնաց. 36 ։ Եւ նաբուգոդոնոսոր Արքայ բաբիլօնի. և կապեալ զնա պղնձի կապանօք տարաւ 'ի բաբիլօն. 'ի 3398. ամի ծի. (որ եղև սկիզբն եօթանասուն ամաց գերութեն զոր Երեմիա Մարգարէացաւ։) Եւ թագաւորեաց Յեքոնիա որդի նորա ընդ նորա ամիսս երիս և աւուրս տասն։ Եւ 'ի գալ տարւոյն առաքեաց նաբուգոդոնոսոր և տարաւ զնա 'ի բաբիլօն հանդերձ ցանկալի ըսպասուք տանն Տն . և թագաւորեցոյց զսեդեկիա եղբայր հօր նորա 'ի վերայ եէմի ։

Ամսոյ քսան և միոյ էր սեդեկիաս, և մեռա-
սան ամ թագաւորեաց, և արար չար առաջի Տն
Աստ իւրոյ. և ոչ պատկառեցաւ յերեսաց մարգա-
րէից. և զի քանզի Տն ասպատամբեալ ի նա-
բուզարդոնոսորայ էանոյ երդմամբն, զոր երդմնե-
ցոյց զնա յԱստն ընդ. Եւ խստացոյց զպարանոց և
զսիրտ իւր, ոչ ևս դառնալ առ Տէր Աստ ընդ։
Եւ ամ փառաւորիք յուդայ. և քահանայք. և ժո-
ղովուրդք երկրին յաճախեցին անօրինիլ ըստ ա-
նօրէնութեանց ազգացն. և պղծեցին զտուն Տն յե-
րուսաղէմ։

Եւ առաքեաց Տէր Աստ հարց նոցա զնաբուգո-
դոնոսոր թագաւորն Քաղդէացւոց. որ կոտորեաց
զերիտասարդս նոցա սրով. և ոչ ինայեաց ի սե-
դեկիաս. կուսանաց նոցա ոչ ողորմեցաւ, և զծերս
նոցա մատնեաց զամենեսեան ի ձեռս նորա։ Եւ
զամ սպաս տանն Աստ. և զամ գանձս Արքային,
և մեծամեծացն ամենեցուն աճարի առեալ տարաւ
զամ ի բաբելոն։ Եւ այրեաց զտուն Տն. և կոր-
ծանեաց զպարիսպն եհմի. և զպալատնս որք ի
նմա հրձիգ արար. և զերեաց զմեացորդս ի բա-
բելոն. և էին անդ նմա՝ և որդւոց նորա ի գե-
րութեանն ամս եօթանասուն. ըստ մարգարէութեանն ե-
րեմեայ մինչև յ՚թագաւորութեանն օծելոյն կիւրոսի.
զոր մարգարէացաւ Եսայի։ 45. ։

Ը. ի քանի՞ ամն տևեաց թագաւորութեանն յուդայ ի
տան դաւթի։

Պ. Սկսեալ ի դաւթայ որդւոյ յորդիս իբր 467
յամն. իսկ ի սաւուղայ. 507 յամն. և էր իբր
1373 տարի որ բարձեալ էր թագաւորութեանն տա-
նէն յեղիէն ընդ. ամենն տևեաց. 507. յամս։

Հ. Ո՞յք էին Մարգարէք որք երևեցան զկնի միքիայ և նաւումայ։

Պ. Սոփոնիա Մարգարէ երևեցաւ յաւուրս Յօսիա բարեպաշտի։ Երեմիա ևս էր յաւուրս Յօսիայ. եկաց նաև յետ գերութեան։ որ մարգարէացաւ վասն 70 ամեայ գերութեան յուդայեանց՝ և ազատութեան նոցա. և կործանմանն բաբիլօնի։ Եւս և վասն նորոյ ուխտին Այ. զոր առնելոց էր Մեսիայիւ, և՝ Ամբակում երևեցաւ յաւուրս եղիակիմայ կամ յովակիմայ արքայի։ Դանիէլ մարգարէցաւ յաւուրս եղիակիմայ 'ի բաբիլօն. նախ 'ի դատել իւրում զչար ծերս Շուշանայ Արդարոյն։ Ապայ մեկնէ զերազս նաբուգոդոնոսորայ։ տեսանէ և ինքն զտեսիլս վասն ապագայ չորից թագաւորութեան. այսինքն Պարսից. Մակեդոնական Յունաց. Հռօմէացւոց. և մահմետականաց։ ետես նա և զտեսիլս վասն ժամանակի գալստեան Մեսիայի. 'ի լրանալ վաթանասուն երկու շաբաթուցն եօթանասուն շաբաթուց. (սկսեալ 'ի լրութէ շինութեան պարսպացն եէմի նեէմեաւ։) և 'ի լրանալ եօթանասուն շաբաթուց. գուշակէ զվերջին կործանմանէ եէմի. և եղծման հնոյ օրինաց. և համայն ազգին, վասն մահուան օծելոյն։ զերծաւ նաև երկիցս 'ի գբոյ առիւծուց։ որոյ 'ի միումն ճաշամատոյց եզև նմա Ամբակում մարգարէ. ձեռամբ հրեշտակի Այ։ Եզեկիէլ մարգարէանայ 'ի բաբիլօն յաւուրս սեդեկիայ, վասն վերջին կործանմանն Եէմայ. և պատնշի նորին զոր կանգնեաց Տիտոս։ Եզեկ. գլ. 4։ և վասն յարութեան մեռելոց. գլ. 37։ նա և վասն գօգայ և մագօգայ. որք են թաթարք. և մանաւանդ թէ տէրութիւն մեծ.

որ տիրեաց բոլոր միջերկրեայց։ 'ի գլ. 38. և 39։ Եւս և վասն շինութեան տաճարին նոր իմն խորհրդաւոր յօրինուածովք. գլ. 40. ց' 48։ 'ի օրինակ եկեղեցւոյն Քս̄ի։ Եւ երեք Մանկունքն. 'ի ժամանակի ընդ հանուր գերութեան յուդայեանց. անվնաս զերծանին 'ի հրոյ հնոցի բաբիլօնի։ յամի Ծի. 3446։ 554. ամօք յառաջ քան զծնունդն Քս̄ի։

ԳԻՐՔ ԿԼԵՑ.

Դար Վեցերրորդ.

'ի 3569 ամի Ծի. 531 ամօք յառաջ քան զծնունդն Քս̄ի։

ՊՐԱԿ. Ա.

Յաղագս դարձի յուդայեանց 'ի գերութեան. և շինութեան երկրորդի տաճարին։ նա և վասն վերջնոյ մարգարէից նոցին։

Հ. Ե՞րբ եղև դարձումն յուդայեանց 'ի գերութեան բաբիլօնի յեէմ։

Պ. Յամի Ծի 3468. Կիւրոս արքայ Պարսից և Մարաց. տիրեալ բաբիլօնի ըստ մարգարէութեան Եսայեայ գլ. 44. 28. և 45. 1։ արձակէ զհրէայս յեօթանասնամեայ գերութեան իւրեանց. որպէս մարգարէցաւ Երեմիա. որ եղև 'ի վերջնումն հինգերորդի դարուն. որք եկեալ յԵէմ ընդ Զօրաբաբէլի որ էր իշխան նոցա 'ի տանէ Դաւթի. և ընդ

Յեսու Յոսեդեկեան քահանայապետի. 2. Նզրաս. դէ՟. ե՝ և Ջ՟ք՟. գ՟. 4. և դ՟. Կաս՟ր. 9՝ Հին՟ արկին շինուելէն երկրորդի տաճարին. ՝ի 3469 ամի Յի՟. 531՟ ամօք յառաջ քան զՔՆունդն Քրիստ՟. ՝ի սկզբան վերադրորդի դարուն՝ որոյ շրջակայ աղգք թշնամեաց՝ թէև խոչնդոտն եղեալ՝ արգելին դպին ինչ ժամանակ. բայց կրկին հրաման առեալ ՝ի Դարեհէ Արքայէ Պարսից լսացուցին ՝ի 3489 ամի Յի՟. վերակացուելէ Յիշեալ Զօրաբաբելի և Յեսուայ քահանայապետի. ընդորս էր և Նզրաս դպիր՝

Ապայ եկն նեհեմիա ՝ի ժամանակի Արտաշէս Թագաւորի Պարսից՝ և կանգնեցին զպարիսպս Երկ՟. ՝ի 3566. ամի Յի՟ (յորմէ սկսանի ժամանակաթուելէն եօթանասուն շաբաթուցն Դանիէլի. 434 ամօք յառաջ քան զՔՆունդն Քրիստ՟.) ՝ի 62 երորդ շաբաթու լսմանն, զոր դանիէլ նշանակէ՝

՝ի սորին Արտաշէսի հրամանաւ կաթի ՝ի փայտէ Ամանն Թշնամին հրկեց. և փառաւորի մուրդքէոս. և աղգն հրէից ղերծանի ՝ի սրախողխող չաթահանար դաւաճանութենէ Համանայ ճիջնորդութենէ եսթեբայ Թագուհւոյն Արտաշէսի. որ էր դուստր Ամինտաբայ եղբօր Հօրն Յիշեալ մուրդքէոսի՝ որոյ վասն հառաչեցյաւ ՝ի հրէայս տօն փրուրեան, զոր փուրիմ կոչեն. և տօնեն յամ ամի մինչև ց՝այսօր՝

Ը՟. Յետ դարձի գերուելոյն ՝ի բաբիլոնէ. երևելեացն և այլ մարդարէք՝

Պ՟. Այ՟. երևելեան Անդէ. և Զաքարիա մարգարէք ՝ի ժամանակի շինուելոյն երկրորդի տաճարին. և

գուշակեցին թէ մերձեալ է ժամանակ գալոյ Մեսիային 'ի սոյն տաճար իւր. որոյ գալստեամբն՝ մեծ լինելոց է փառաւորութիւն սոյնոյ երկրորդի տաճարին, քան զառաջնոյն: (զի 'ի նմա ձեռագործ և օրինակական տապանակն կայր եդեալ. իսկ 'ի սմա ինքն իսկական կենդանի տապանակն. այսինքն բանն Ած գալոց և մտանելոց է:) նա և թէ՝ նոր Պատարագ մի հաճելի Այ մատուցեալ լինի յամ ազգաց: Եւս և թէ Մէսիա թագաւորն իէլի. հեզութիւն և խոնարհութիւն եկեսցէ յեէմ. նստեալ 'ի էշ և յաւանակի նորոյ: նմանապէս և զամ խորհուրդս տնօրէնութիւն նորա յայտնեցին: Եւ ապայ երևեցաւ վերջին Մարգարէ Մաղաքիաս. որ գուշակեաց զյանկարծակի. այսինքն յանծանօթի. գալուստ Հրեշտակին (նորոյ) ուխտի. զոր ամբոխն խնդէր. այսինքն սպասէր: Եւ կնքեաց զմարգարէութիւս. զեկուցանելով սպասել եղիայի. որ էր Յօհաննէս մկրտիչ. որ եկն հոգւով և զօրութիւն եղիայի. Ղուկ. 1. 17: յարդարել զճանապարհ Յսի Քսի: որոյ և ակնկալեալ սպասէին նախնի բարեպաշտ հրեայք: բայց իբրև եկն, 'ի նմին ժամանակի եղեալ մարմնացեալ հրէայք. ոչ զեղիայն և ոչ զՀրեշտակն ուխտի ծանեան. և արարին ընդ նոսա զոր ինչ և կամեցան: Մատթ. 15. 12:

ՊՐԱԿ. Բ.

Յաղագս երջանիկ խաղաղութեան յուդայեանց, և զօրանալոյ նոցա: Եւ վասն թարգմանութեան Ածաշունչ գրոց 'ի հելլէն լեզու:

Հ. Յուդայեանք 'ի դարձի իւրեանց 'ի գերութէ. ունեցան բարեկեցութիւն:

*

պ. Այո, վասնեալ նոճաձեռին զշրջակայ թշնամիս իւր
եանց զօրուքը Պարգևապրոյն կիւրոսի, և յաջո-
ղացայ նորին թագաւորացն Պարսից. որք և նորո-
գեալ զքաղաքն՝ և զսահմանս. կառուցին զտեղիսն
տունս և ապարանս. տնկեցին այգիս՝ թզենիս՝ և
ձիթենիս ձոխացան ոսկեսովք. և լցան ամ բա-
րութիւք. որպէս և մարգարէացեալ էին Եսայի,
Երեմիա. Ազաբեա. և այլ մեւս մարգարէք։

Ապերահաստատեցին զԱննհադրն. և ունէին
որպէս յառաջն զիշխանութիւն ի վերայ մահու և
կենաց. և դատէին զժողովուրդն ըստ օրինացն
Մովսիսէ. զորս ի գերութենէ իւրեանց ի բաբէլ
ևս կիւրարիանէին. զոր քաղդէացիք ոչ էին բար-
ձեալ ի նոցունց զայն իշխանութենէ. (որպէս և հա-
ճաստէ պատմութենէ Ճուշանայ, որոյ շնորհեցին և
թագաւորք Պարսից (որպէս և գրի ՚ի Լիզ. գլ.
7. 26։) որք յաճէտ պաշտպանէին էին հրէից՝
քան թէ տեարք։ Եւ նոքա թեթև իմն հարկա-
տութիւք՝ կեին ի խաղաղութենէ. և վարէին զիշ-
խանութենէ իւրեանց ենէթ կառավարութենէ քահա-
նայապետից իբրև ինքնիշխան ծերակուտի։

Եւ իբրև վտանգեալ թագաւորութենէ Պար-
սից. ոչ ինչ նեղութիւս կրեցին ի յունաց։ Քան
զի ի տիրել Աղեքսանդրի. տեղեկացեալ նորա
Մարգարէութենէ Դանիէլի, որ վասն իւրոյ յաղ-
թանակութենէ գրեալ. յայրգեաց վտանգաւր նոցա՝
և զքահանայապետն. և շնորհեալ նոցա Պարգև-
ապէր արտունութենէ ապատօրէն պահելոյ զօրէնս՝
և զիշխանութենէ իւրեանց, որպէս գրէ Յովսեփոս
պատմիչ։

Ի՛ւ յաջորդ ԱղէքսանդրԷ ևս՝ ունէին զնո՛ր թնաման Ի վերայ նոցա. մինչ զի սերևկիոս ընկալաւ զնոսա յիմ քաղաքս տէրունէ իւրոյ Ի փոքրն Ասիայ. որք և համարձակ պահէին զօրինս իւրեանց Ի մէջ յունաց կռապաշտից. և խառնիճաղանձ հեթանոսաց։ Ի՛ւ Պտողոմէոս Թագաւորն Եգիպտացւոց. որ վարեալ Ի հրէից էբր զՀարիւր քսան հազար անձինս յեգիպտոս. ոչ Թէ էբրև զգերիս նկատէր Ի նոսա. այլ քաղաքացիս անո՛անեալ բնակեցոյց Աղէքսանդրիայ. հաճատալով նոցա զմ Թերս իւրոց պատերազմական գործուց։

Ի՛ւ այնքան յարգեցեալ էին Ի մակեդոնական յիշխանուԹե՛ն, որ յիմ քաղաքս նոցա համարձակ պաշտէին զՏՐ Ա՛Ն Հարց իւրեանց՝ ոչ ևս դառնալով բնաւ Ի կռապաշտուԹե՛ն, որպէս առնէին յառաջքան զգերիլ իւրեանց Ի բարիլոն. զի ճանաչեալ էին զնախանձոտուԹե՛ն և զօրուԹե՛ն ԱՅՆ ԻՆԼԻ. որ նա մի միայն էր ճշմարիտ Ա՛Ն։ վայ և հաճանուԹե՛ն ԼօԹիանոսին և երկու ծերոցն, այսինքն խորհրդականացն սենհադրե՛ն. զգիրս օրինաց իւրեանց՝ Թարգմանեցին Ի Հելլէն լեզու. առ Ի դիւրըմացուԹե՛ն այնց հրէից, որք բնակեալ Ի զանազան քաղաքս յունաց վարժեին ըստ մեծի ժամսէն այնու լեզուաւ. (որպէս երբեմն քաղ դէպ անաւ Ի բաբիլոն. որ առեալ ևս Եզրասյ Ի նոյց շարադրել զգրեանս օրինաց իւրեանց Ի դիւրըմաց լեզու։)

Ի՛ւ այսու միջոցիւ քազումք Ի յունաց ծանօԹացան այնց Ա՛Ն պարգև գրեանց. և պատկեր Թէ գոյ անեւոյԹ Ճշմարիտ Ա՛Ն մի Արարիչ երկնի և երկրի. և յանձանօԹե՛ն պաշտէին զնա. Գործ.

150 Մ ա ա ա

պ· Իբր յամս երեքհարիւր կէսին ՝ի թուղուածէ՝ ենթ-
կառավարութենէ և իշխանութենէ քահանայապետից·
բայց ըստ մարգարէութենէ Զաքարեայ՝ թէ Ցու-
դայ ինքնին պատերազմեսցի ընդ ինքեան՝ ՝ի Թագա-
Հորաւէ անտիպոնոսի երևելւոյ· յարեան ոմանք
չարք· և կամելով կաշառօք և բռնութենէ ելանել
յաստիճան Քահանայապետութենէ՝ յարեցան առ
Անտիպոնոս· որ եկեալ ձեռնտուութենէ հրկէց
չարայ, եմուտ յԵրէմ· և կողոպտեաց զսահակեան՝
էառ զԵրեմ գանձս նորա· և կանգնեաց ՝ի նմա
կուռս՝ հրամայեաց ամենեցուն Թողուլ զօրէնս
իւրեանց· անթլփատել և պաշտել զդիւշխալս· և
ուտել զզոհեալս զկողպենից, և ոչ պահել զշա-
բաթս· Ցորոց և բազումք մոլորեալ դարձան ՝ի
կռապաշտութենէ· և սկսան ՝ի հեթանոսական կրկէս
և ՝ի թէատրօնս զբօսնուլ· բայց բազումք ևս հե-
ղին զարիւնս իւրեանց ՝ի վերայ հաճատոյ և հայ-
րենի օրինաց որպէս գրի ՝ի ա· Մակաբայեցւոց·

Ցարեաւ մատաթիա այր նախանձայոյզ օրինացն
ԱՅ· և յեռուցեալ ՝ինքեան զբազումս երկիւղա-
ծացն ԱՅ· և սպառազինեալ զորդիս իւր, կացոյց
զմին յորդւոց իւրոց զՅուդա Մակաբէ ՝ի Զո-
րաւար նոցա· ՝ի 3838 տի Հի· և պատերազմեալ
ընդ զօրաց անտիպոնոսի և յաջորդաց նորին· վան-
բեայ զչարս յազգէ իւրմէ· և յետ երից ամաց և
կիսոց յաղթօղ գտեալ ՝ի բազում պատերազմունս՝
սրբեաց զտաճարն ԱՅ, և զԵրէմ քաղաք· և զնո-
սահմանս հրկէց ՝ի հեթանոսական պղծութենէ·

Եւ ՝ի նահատակել ՝ի պատերազմի Ցուդայ
Մակաբէի, Ցոնաթան մակաբէ եղբայր նորա
յաջորդեաց· Եւ յետ նորա Շմաւօն եղբայր նո·

որոց գոլով 'ի տանէ Դաւթի. 'ի 3861. ամի Ծի. համախումբ ազգն հրէից կացուցին զՇմաւօն ինքեանց Պետ և իշխան յաւիտեան, մինչև կանգնեսցի Մարգարէ հաւատարիմ, 1. Մակաբ. գլ. 14. 42: Եւ իբրև սպանաւ Շմաւօն որդւովք իւրովք 'ի պտողոմէոս աբուբեան փեսայէ իւրմէ նենգութ 'ի կոչունս, գլ. 16. 22. 23: Յօհաննէս հիւրկանոս միւս որդի նորա յաջորդեաց հօր իւրոյ 'ի 386, ամի Ծի. և Պայազատեաց ամս. 29. բազում քաջութ. ըստ գրելոյ յովսեպոսի:

Յաւուրս սորա երեք աղանդք ծագեցան 'ի մէջ հրէից՝ որք էին եսսեանց կամ Պղատոնեանց: Սադուկեցւոց: և Փարիսեցւոց: Որ սոյն վերջինս տարածեալ 'ի մէջ հրէից, յոյժ յարգեցաւ 'ի նոցունց: բայց 'ի Քս̄է կարի՛ անարդեցաւ. նմապէս և երկրորդն:

Յետ մահօւան Յօհաննու հիւրկանոսի. Արիստաբիւղոս. 1. որդի նորա թագ կապեալ թագաւորեաց ամ մի: Ապա Աղեքսանդր յաննէս յաջորդեաց ամս. 27: Յետոյ Հիւրկանոս. 2. ամս 11: զկնի սորա Արիստաբիւղոս. 2. ամս. 3: կրկին հիւրկանոս. 2. ամս. 23: սոքա ամենեքին հետ զհետէ յաջորդեցին 'ի ցեղէ Յուդայի. ըստ մարգարէութ̄ն սրբոյ նահապետին Յակոբայ՝ թէ մի՛ պակասեսցի Պետ 'ի յուդայ մինչև եկեսցեն նմա հանդերձեալքն, և նա է ակնկալութիւն հեթանոսաց:

Եւ իբրև կարի՛ մերձեցաւ ժամանակ գալստեան Մեսիայի. նախ՝ 'ի Պօմպէոսէ իշխանէ հռոմայեցւոց՝ խարխալեցաւ սոյն թագաւորութ̄ն տանն Շմաւօնի: Ապայ 'ի օսէօսէ սպարպետէ հռոմայ-

եցւոց խլեցեալ տոհաւ Անթիգոնոսի. և յետ ե-
րից ամաց. Հերօդէի Եդօմէացւոյ. որ եղև թա-
գաւոր. 33. ամօք յառաջ քան զծնունդն Քս̄ի.
'ի 3967 ամի Ծի։ և թագաւորեաց յամս. 37։ Եւ
այսպէս բարձաւ Պետութիւն ցեղին Յուդայի. որ
էր գլխաւոր նշան վասն ժամանակի գալստեան
Մեսիայի. այսինքն Քս̄ի։ ըստ բանի սրբոյն յա-
կոբայ։

Եւ այս Առաջին Հերօդէս էր՝ որ բոլորո-
վիմբ եբարձ զիշխանութիւն սէնհադրին կարգեցե-
լոյ 'ի մօսիսէ. որ ո՛չ ևս ունէին հրէայք իշխա-
նութիւն 'ի վերայ մահու և կենաց. որ միշտ մնա-
ցեալ էր 'ի նոսա նաև 'ի գերութեան բաբիլօնի, և
'ի դարձի գերութեան ևս մինչև ցայնժամ։ Եւ յետ
մահուան Առաջնոյ Հերօդէի. 'ի չորս բաժանե-
ցաւ սոյն թագաւորութիւն առ յորդիս Հերօդէի.
յայլ և յայլ նահանգս հրէաստանի. որք կոչեցան
չորրորդապետք. կամ չորրորդապետութիւնք։ Իսկ
եէմ. եղև մինն 'ի գաւառաց հռոմէացւոց. որք
յղէին զկուսակալ իշխանս 'ի դատաւոր. որպէս էր
և Պիղատոս անդ յեէմ դատաւոր 'ի ժամանակի
խաչելութեան Քս̄ի։ վս̄յ և ասացին հրէայք, թէ
մեք ո՛չ կարեմք սպանանել զոք։

ՊՐԱԿԴ։

Յաղագս Քսան և չորից սրբոց Մարգարէից։

Հ. Բաց 'ի Մօսիսէ, քանի՞ք եղեն և այլ սուրբ
Մարգարէք։

Պ. Մարգարէ անուանեալք յոյժ բազումք են 'ի սբ
գիրս։ բայց յատակապէս ընտրեալք և տօնելիք և

Տր գրեանց. են Քսան և չորք. որոց երկոտասանք կոչին մեծք. և երկոտասանքն փոքր:

Հ. Զինչ են անուանք այսց քսան և չորից սրբոց Մարգարէից:

Պ. Անուանք երկոտասանից մեծաց Մարգարէից են այսոքիկ: Մօսէս: Յեսու: Յօբ: Սամուէլ: Նաթան: Դաւիթ: Եղիա: Եղիսէ: Եսայի: Երեմիա: Եզեկիէլ: և Դանիէլ: իսկ անուանք երկոտասան փոքր մարգարէից, են այսոքիկ:

Ովսէ: Ամովս: Միքիա: Յովել: Յօնան: Նաւում: Ամբակում: Սոփոնիա: Աբդիու: (Անգէ: Զաքարիա: և Մաղաքիա:) սոքին երեք, են վերջին մարգարէք:

Հ. Որպէոի անձինք էին սոյն Մարգարէք:

Պ. Սակաւք էին յերևելի յանձանց. այլ ըստ մեծի մասին, ոմանք հովիւք էին, և ոմանք աննշանք 'ի հաստրակ և աղքատ յարանց առ որս լինէր բանն Այ՝ և լնանէին հոգւով սրբով. որք և առնելով բազում հրաշս, և մեծամեծ սքանչելիս. և գուշակութիւն, քարոզէին զպատգամս Այ. և յանդիմանէին ղամբարշտութիւն՝ և զանիրաւութիւն, թագաւորաց՝ իշխանաց՝ քահանայապետից՝ քահանայից՝ դպրաց, և ամ ժողովրդոց. և կոչէին զնս յապաշխարութիւն: Այլ և գուշակէին զգալուստ Մեսիայի. և զամ տնօրենութիւն նորա: նաև զպարգևս երկնային և հոգևոր յաւիտենականի երջանկութեան. զոր ընկալնլոց էին ամ ազգք երկրի՝ Մեսիայիւ:

Հ. Ունկն դնէին հրէայք բանից այսց մարգարէից. կամ բանային զաչս իւրեանց առ երկնային և հոգևոր յերջանկութիւն յաւիտենական:

Պ. Ո՛չ. Այլ մանաւանդ թէ ընդ ներհակն մաքառեալ անգոսնէին. ըստ որում, ո՛չ 'ի քահանայապետից էին. և ո՛չ յերևելի քահանայից. և ո՛չ ևս 'ի ռաբբի կոչեցելոց. կամ յիշխանաց և 'ի փարթամաց. այլ՝ ոմանք 'ի հովուաց. և ոմանք թէ և 'ի ցեղէ քահանայից՝ բայց աղքատք. և ոմանք 'ի հասարակ յաննշան յարանց: վ՞ոյ և քահանայապետք նոցա՝ և քահանայք. կամ իշխանք. և կամ դպիրք և փարթամք, մոլի. յիմար, և խոբեբայ կոչելով՝ զոմանս հալածէին, զոմանս դանէին, քարկոծէին, և զոմանս ողոցէին և սպանանէին: որպէս և գրի 'ի Գործ. 7. 52: զո՞ 'ի մարգարէից ոչ հալածեցին հարքն ձեր:

Որոց և հրէից՝ յայտնապէս յանդիմանեաց փրկիչն թէ՝ վայ ձեզ. զի շինէք զշիրիմս մարգարէից և զարդարէք զգերեզմանս արդարոց. և հարքն ձեր սպանին զնոսա: Եւ դուք ասէք եթէ էաք յաւուրս հարցն մերոց՝ ո՛չ հաղորդէաք արեան մարգարէից: Ապաուրեմն վկայէք անձանց ձերոց եթէ որդիք էք այնոցիկ՝ որք կոտորեցին զմարգարէս: Մատթ. 23. 29: Յաւել 'ի նոսա և զառակ այգւոյն. որք նաև զորդի այգետեառն զՅ՞ս հանեալ արտաքոյ քաղաքի Այգւոյն խաչեցին: Մատթ. 21. 33:

Հ. Ե՞րբ և յորում ժամանակի յայտնեցան սոյն քսան և չորս մարգարէք:

Պ. ամք Ծի: յառաջքան զծնունդն Քս՞ի:

'Ի 2400 ամի Ծի: Յօբ երա նելին վերափայլեցաւ. 1600:

2433 ——— Մօսէս մարգարէ ծնանի: 1567:

'ի2451	——— Յեսու նաւեայ ծնանի:	1549:
2850	——— Սամուէլ մարգարէ ծնանի:	1150:
2919	——— Դաւիթ արքայ մարգարէ ծնանի:	1081:
2975	——— Նաթան մարգարէ յայտնի:	1025:
3106	——— Եղիա վերանայ և Եղիսէ փոխանորդէ:	892:
3232	——— Յօնան առաքի 'ի նինսէ:	768:
3233	——— Ովսէ. Ամովս. Յովել և Աբդիու Մարգարէանան:	767:
3246	——— Եսայի Մարգարէանայ.	754:
3277	——— Միքիա և Նաւում Մարգարէանան.	723:
3369	——— Սոփոնիա Մարգարէանայ.	631:
3375	——— Երեմիա մարգարէանայ.	625:
3393	——— Ամբակում մարգարէանայ.	607:
3400	——— Դանիէլ մարգարէանայ.	600:
3409	——— Եզեկիէլ մարգարանայ.	591:
3484	——— Անգէ և Զաքարիա մարգարէանան.	516:
3546	——— Մաղաքիա վերջին մարգարէ.	454:

Ահա յայսոսիկ տարորոշեալ ժամանակքս յայտնեցան սոյն Մարգարէք. առ 'ի քարոզել ազգի մարդկան զպատգամս Այ, և 'ի գուշակել զխորհուրդ գալստեան և տնօրէնութեան բանին Այ:

Հ. Յօբ երանելին գոլով յառաջքան զՄօսէս. ապա զանցս նորին՝ և զբանսն ո՞վ յայտնեաց կամ գրեաց:

Պ. Յոյժ հաւաստի է. որ մարգարէն Մօսէս գրեաց զամ անցս և զգիրս Յօբայ. առ 'ի ցուցանել ազգի իւրոյ՝ թէ ո՛չ միայն զիէլացիս ընկալնու Աճ

'ի զաւակէ Աբրահամու. Այլ նաև ամ ազգաց միջի գտանեցեալ զբարեպաշտս՝ ողորմածս և զեր կիւղածս Այ ընդունի. և 'ի խաւար տգիտութէ լուսաւորեալ Ածածանօթուբ՝ փրկէ յամ փոր-ձանաց և 'ի չարեաց. որպէս է տեսանել 'ի սուրբ հարիւրապետն կուռնելիոս։ Գործ. 10. 35։

ՊՐԱԿ. Ե։

Յաղագս Երևելի դարուց Ծի. և վասն վերջին կոր-ծանման Եէմայ։ տաճարին. և բոլոր ազգին։

Հ. Քանք են գլխաւոր նշանակելի դարք. և ոյք են։

Պ. Եօթն են նշանակելի դարք ըստ Ածաշունչ գրոց՝ և են սոքին։

1. Առաջին դար սկսանի յԱդամայ մինչև ցջրհեղեղն, և ունի ամս. - - - - - - - 1656։
2. Երկրորդն 'ի նոյայ՝ մինչ ց'կոչումն Աբրա-համու։ - - - - - - - - - 427։
3. Երորդն՝ 'ի կոչմանէ Աբրահամու մինչև ցելն իէլացւոց յեգիպտոսէ. - - - - - 430։
4. Չորորդն յելից յեգիպտոսէ մինչև ցշինուն տաճարին սաղոմոնի. - - - - - - 487։
5. Հինկերորդն 'ի շինութէ տաճարին, մինչև ց'գերուն բաբիլօնի. - - - - - - 469։
6. Վեցերորդն 'ի դարձի գերութէ մինչև ց' ծնունդն Քոի. - - - - - - - 531։

յԱդամայ մինչև ցծնունդն Քոի են չորս հազար ամք։ - - - - - - - 4000։

7. Եւ Դարն եօթներորդ. որ է վերջին դար խորհր-դաւոր որ սկսանի 'ի ծննդենէ Քոի մինչև ցկա-

տարած ՚ճի: Իսոյ ժամանակն՝ ուր ոք կարէ դէ-
տել, քայց միայն Հայր. զոր եդ յիւրում իշխա-
նութիւն: Ու է Դատ օրհնեալ իրրև յաճուր շա-
բաթու. որ յաճուր ուրբաթի արարեալ Աճ գնդը-
դըն ՚ի պատկերի իւրում, հանգեաւ յաճուր շա-
բաթու ՚ի վեց օրեայ գործոց իւրոց. և օրհնեալ
զնա հրամայեաց պատուհել և պահել զնա որբու-
թեամբ: Այսպէս և ՚ի վեց դարս նախապատրաս-
տեայ Հայրն յաճխտենական գնորհուրդ առաք-
ման բանի իւրոյ Յծ. որ ՚ի վերջնումն վեցերորդի
դարուն իրր յաճուր ուրբաթի մարմին առեալ՝
կատարեայ զիմ Հայրական տնօրէնութիւնս իւր.
այսինքն զայտնութիւն սրբոյ Երրորդութիւն. զքա-
րոզութիւն Աւետարանականի Ճշմարտութիւն. զկիր-
ս չարչարանաց՝ և զհեղումն արեան. զյանձնառութիւն
խաչի և մահու. և թաղման. և Յարփաս Ցա-
րութիւն: Ու այսու երկրորդի Արարչագործութիւն
վերանորոգեաց զաղաւաղեալ պատկեր իւր փըչ-
ամբք հոգւոյն սրբոյ՝ ի նմա առաք հոգի սուրբ:
Ու հանգեաւ ՚ի գործոց իւրոց՝ յաճուր շաբաթու
համբարձման իւրոյ յերկինս: Ու առաքմամբ
հոգւոյն սրբոյ օրհնեաց զօրն շաբաթու զդարն
եօթնեւորդ. և պատուհիրեաց սրբել զնա պահե-
լով զպատուհիրանս իւր ՚ի գործել զիմ Արդա-
րութիւնս մինչև ցդարն ուրեւորդ. որ է դարս ան-
վախճան. յորում գայ վերստին Հայրենի փառաւք.
և առաքեալ զհրեշտակս ժողովել զընտրեալս այս-
ինքն զհաւատացեալս իւր ՚ի չորից հողմոց ՚ի ծագաց
երկրի՝ մինչև ՚ի ծագս երկնից. որոց ելիք զքա-
րիս արարեալ իջեն ՚ի յարութիւն երջանիկ յաճխ-
տենական կենաց. և որոց զչար արարեալ՝ ՚ի յա-

բուեցի դատաստանաց՝ ըստ իւրոյ անշուշտ բանից՝ որ է օրհնեալ յաբեթեանս յաբեթեանէից Ամէն։

Ն՚ Զկնի գալստեան և խաչելութեանն Քրիստոսի զինչ եղև ապրին հրեից։

Պ՚ Ցետ քառասուն Ամաց խաչելութեան և համբարձման Քրիստոսի, պատժեցան բովանդակ անհաւատ ազգն հրեից ըստ արժանաւոյ իւրեանց՝ քանզի ոչ արքն նոցա տեսանելով որ ըստ գուշակութեան մարգարէից՝ հասեալ էր ժամանակ գալստեան Մեսիայն զոր սպասէին. զի լցայեալ էին շաբաթքն Դանիէլի. և բարձեալ էր պետութիւնն ՝ի ցեղէն յուդայի. և սկիհատլն ձէ և ունէր իշխանութիւն ՝ի վերայ մահու և կենաց. որ ՝ի ժամանակէն Մովսէսի մինչև յայնժամ տեւեալ էր ՝ի նոսա անխափան կայզորդութիւն նաև ՝ի գերութեան իւրեանց՝ իսկ ՝ի ժամանակէն Քրիստոսի խափան բարձեալ էր նոյն իշխանութիւն յինքեանց ՝ի հռոմայեցւոց և ՝ի հերովդէս։ վայ և անյապաղ տեսանէր յուսայն ղմեսիայն։ և զի յաճուրսն յայնոսիկ յոյժ նեղեալ էին ՝ի հռոմայեցւոց ՝ի կայսերութեան ներոնի. ՝ի փլորիոսէ կուսալէ էմի։ Ուր յերևին սուտ մարգարէից, և սուտ քրիստոսից (յորոց զգուշացուցեալ էր փրկչն զհրայինսն.) անհաւատ հրէայք անսայեալ նոցին ստութեանց՝ ապստամբեցան ՝ի հռոմայեցւոց. յուսալով թէ ահա ձեռամբ սուտ քրիստոսին, սատանայեցն են ընդհանուր կայսերութիւն մի մեծ, և տիրելոց են բովանդակ ՀՀ. (զի կուրացեալ գոլով ՝ի հոգևորսէն. զմարմնաւորն և զնշայինն միայն [։ ըհէին. որպէս և խորհէին տակաւին մինչև ցայսօր։) վայ և յասեալ հռոմայեցւոց առաքեցին նաև զբիտոս սպարապետ. որ եկեալ զջրօք ՝ի քաղաքս

պաշարեաց զնէմ. յորմէ և բազումք, մանաւանդ
թէ հաւատացեալ հրէայք ամենեքին փախեան։
Ւսւ յետ ելոյ ամայ եկն տիտոս վեսպասիանոս
յամի Տն 70։ և պաշարեալ զնէմ, կանգնեաց
շուրջանակի պատնէշ. ըստ մարգարէութեն Ւգզեկ.
գԼ. 4. (զոր փրկիչն ևս նշան տուեալ էր իւրոյ-
նոց. Ղ.ուկ. 19. 42. յ' 44։) և կործանեալ զնէմ
'ի սուր սուսերի մաշեաց աՀեղի քան զմիտասան
հարիւր հազար անհաւատ հրէայս գումարեալս 'ի
նմին, և զՇատացորդս գերեաց. Այլեաց նաև զտա-
ճարն երկրորդ, և կործանեաց վքաղաքն, որ ո՛չ
Ծայ քար 'ի քարի վերայ ըստ բանի Տն։ Իսկ
հաւատացեալ հրէայք. որք անսայեալ բանի փրկ-
չին՝ թէ որք 'ի քաղաքին իցեն փախիցեն 'ի լերինս
ևն։ Ղ.ուկ. 21. 21։ հեռացեալ էին անտի, զեր-
ծան անվնաս։ Ւսւ զկնի քանի մի ամայ եկեալ
Աղրիանոս կայսրն հռոմայ. կոտորեաց զյԷյ հար-
իւր հազար ապստամբ. և զանհաւատ հրէայս. և
զՇատացեալս զամենեսին գերի վարեալ ցրուհեաց 'ի
հրեաստանէ յամ տեղիս. որք և յայնմ հետէ
եղեն գերիք և ատելիք յաչս ամենեցունց մինչև
ցայսօր ժամանակի. ո՛չ միայն 'ի Քրիստոնէից. այլ
և 'ի մահմետականայս ևս։ Ւսւ լցան ամ մար-
գարէութիւնք Ւսայեայ. Երեմեայ. Ւզեկիէլի. Դա-
նիէլի. և այլոց։ Ւսւ առաՀել կատարեցան բանք
փրկչին, թէ այսուհետև թողեալ լինին ձեզ տունք
ձեր աՀերակք։ Մատ. 23. 38։

Ա. Ւրնալոյ է այսպէս յետին թշուառութեն ազգն
իւդի։

Պ. Գրէ սրբազանն Պողոս առ Հռոմայեցիս. ԳԼ. 11.
25։ ո՛չ կամիմ եղբայրք եԼէկ տղետք իցէք

խորհրդոյս այսմիկ. զի կուրութիւն փոքր 'ի շատէ եղև ի Է՛ի. մինչև լրումն հեթանոսաց մտցէ։ Եւ ապա ա՛մ ի՛էլ կեցցէ. որպէս և գրեալ է. եկեսցէ 'ի սիօնէ փրկիչ. և դարձուսցէ զամբարշտութիւնն Յակոբայ. և այս նոցա ուխտ յինէն յորժամ բարձից զմեղս նոցա։ Եւ ովսեայ գրէ. Եւ յետ այնորիկ դարձցին որդիքն ի՛էլի. և խնդրեսցեն զՏ՛ր Ա՛ծ իւրեանց և զդաւիթ Արքայ իւրեանց. և զօրասցին 'ի Տ՛ր. և 'ի բարութիւն նորա յաւուր կատարածի։

Սոյն կատարած իմանի 'ի բանից Եսայեայ. թէ երկիցեն յԱրևմուտս յանուանէ Տ՛ն, և յարևելս 'ի փառաւորեալ յանուանէ նորա. զի եկեսցէ իբրև զգետ բռնութիւն բարկութիւն 'ի Տ՛նէ։ որով նշանակեաց թէ մաքրելոց է Ա՛ծ զժողովուրդ իւր 'ի չար հերիտիկոսաց բարկութիւն սրոյ՝ հրոյ՝ և սովու. և պատերազմի (որպէս և տեսանեմք) մինչև երկիցեն յանուանէ Տ՛ն յարևմտուտս և յարևելս. և լրասցի թիւ կոչման հեթանոսաց 'ի հաւատս Քս՛ի։ Եւ ապա ա՛մ ի՛էլ կեցցէ։

Վէրջ Առաջնոյ Մասին։

Յաղագս 'ի ճշմարիտ աւանդութեան գրելոյ սրբոյ մարգարէին Մօսէսի զճառն ծննդոց, և զպատմութիւն նախահարաց։

Հ. Զճառն ստեղծագործութեան, և զպատմութիւն նախահարց մինչև ց'ջրհեղեղն, և յետ այնորիկ և՝ զորս ընթեռնումք 'ի ծննդոց. սրբազան մարգարէն Մօսէս, միայն մարգարէական հոգւով գրեաց.

թէ 'ի ստոյգ աւանդութեան՝ և 'ի պատմութեան ինչ
ևս ունէր տեղեկութիւն։

Պ. Զճառն վեցօրեայ Արարչագործութեան. Հաւա-
տամք որ մարգարէն Մօսէս Աճային յայտնութեամբ
գրեաց. ընդ ստեղծմանն Ադամայ և Եւայի նա-
խածնօղաց մերոց։

Իսկ լինիլն Ադամայ 'ի դրախտին, և բուսու-
ցանելն Այ 'ի նմին զծառն կենաց. և զծառն գի-
տութեան բարւոյ և չարի։ Եւ զպատուէրն Այ չու-
տել միայն 'ի ծառոյն գիտութեան բարւոյ և չարի։
Եւ խաբիլն Եւայի յօձէն. և զհարց ու պատաս-
խանիս ընդ Այ։ Եւ արտաքսիլ նոցին 'ի դրախ-
տէն։ Եւ զպատճէն անիծից։ Եւ ծնանիլ որդւոց.
զմահ Հաբիլի, և զպատիժ կայենի, Ապայ զծնունդ
սեթայ. և սերնդոց կայենի և սեթայ մինչև ց'նոյ.
և ց'ջրհեղեղն։ Եւ յետ այնորիկ զպատմութիւն
նոյայ և որդւոց նորին. զկոչումն Աբրահամայ. և
իջանելն Յակոբայ յեգիպտոս հանդերձ ընտանեօք.
և այլն ամենայն զորս կարգաւ գրէ 'ի ծննդոց.
յոյժ հաւաստի է. որ 'ի ստոյգ աւանդութեան. նա
և 'ի պատմութեան ունի գրեալ զսոսա ճշմար-
տութեամբ։

Քանզի յետ ջրհեղեղին վասն սերնդոց երից
որդւոց նոյի. և 'ի նոցունց յառաջացեալ ազգաց։
նա և վասն շինութեան և կործանման աշտարակին.
և խառնակութեան լեզուաց։ Եւ ապայ վասն ան-
ջատման նոցա 'ի միմեանց և բաժանմանց երկրից.
նաև վասն կառուցմանց քաղաքաց՝ և հաստատուն
Տէրութեան և թագաւորութեան. յոյժ անտեղի և
անպատեհ իմն է ասել. թէ գոնէ քաղդէացիք՝ և
եգիպտացիք. որք էին նախկին գտիչք Արհեստից՝

և ամ գիտութեց. չունէին զպատմութիւն ժամանակի իւրեանց՝ և զամ եղեալսն զկնի ջրհեղեղին. և զկնի բաժանման և խառանկութեան լեզուաց՝ արձանացուցեալ. կամ գրեալ։ Այո՛, արդարև ունէին գրեալ. որպէս է երևելին Աբուդենոս քաղդէացին, և այլք համանմանք բազումք։ մանաւանդ թէ Եգիպտացիք որք էին մայր և դայեակք ամենից գիտութեց այնու ժամանակի։ յորոց և գրեանց վարժեցաւ Մօսէս 'ի բազում և 'ի մեծ գիտութիւն, նաև 'ի պատմութիւն. յորոց և արտահանեալ զայնս՝ զորս կամեցաւ գրել. և համեմատելով ընդ ստոյգ աւանդութեց նախնեաց իւրոց, գրեաց միայն զՃշմարիտսն, որք եղեալ էին զկնի ջրհեղեղին, մինչև ցժամանակ իւր։

Իսկ վասն Ադամայ. և սերնդոց նախահարց մինչև ցջրհեղեղն եղելոց. և զնոյայ և որդւոց նորին ժամանակի եղեալս, թարց երկբայութեան գրեաց 'ի ստոյգ պատմութէ և աւանդութեց. որ չէ կարելի երբէք ուրանալ՝ կամ երկբայիլ։

Հ. Յորպէսի աւանդութեց ընկալեալ գրեաց. որ չէ կարելի երկբայիլ ասես։

Պ. Հաւաստի աւանդութիւն, կարեմք տեսանել 'ի համառօտ բանիցս՝ այսոցիկ՝ որք 'ի ծննդոց գրքոյ արտահանեալք գրեցան 'ի սկզբան գրքոյս՝ թէ Ադամ նախահայրն մեր գոլով 130 ամեայ ծնաւ զսէթ. ապայ և զայլ ուստերս և դստերս, և մեռաւ 930 ամայ։ Եւ սէթ ծնանի զենօս։ Եւ ենօս զկայնան. և զայլս ըստ կարգին, մինչև ց'սուրբ նահապետն նոյ։ որովք իմանի. որ Ադամ եկաց ընդ սէթայ. ամս. 800։ ընդ Ենօսայ 6 5։ ընդ կայնանայ. 605։ ընդ Մաղաղիէլի. 535։ ընդ Յա-

*

բեդայ 470։ ընդ Հնոքայ. 308։ ընդ մաթուսղայի. 248։ և ընդ Ղամեքայ որ է հիներորդն Նոյի. ամն. 56։ որք սոքա ամենեքեան տեսին զԱդամ ՚ի կենդանութեան իւրում, խօսեցան ընդ նմա, և լուան ՚ի նմանէ։ Եւ Ղամեք հայր Նոյի՝ եկաց ընդ մաթուսաղայ հօր իւրոյ ամս 753։ Եւ տասներորդն Ադամայ սուրբ նահապետն Նոյ եկաց ընդ մաթուսաղայ պապի իւրոյ ամս 595. (որ ՚ի 1651. ամի Եի մեռաւ 5. ամեաք յառաջ քան զջրհեղեղն։) և ընդ Ղամեքայ հօր իւրոյ՝ եկաց ամս 571։ (որ 29. ամեաք յառաջ մեռաւ քան զջրհեղեղն։) Եւ Նոյ էր 600 ամաց. և երեքին որդիք իւր՝ իբր հարիւրական ամեայք. մինչ եղեւ ջրհեղեղն։

Զիք ուրեմն ամենևին կարծիք. որ սոքայ ամենեքին բաց ՚ի Նոյայ. որք տեսին զԱդամ, թէ լուեալ իցեն ՚ի նմանէ զպատմուճսն իւրոյ ինքեան, (զի և ՚ի նաթդենիս, ո՞ է հայր. որ ոչ պատմեսցէ որդւոյ իւրոյ զայն անցս իւր։) սակայն և Նոյ՝ յայժ հաճաստի է՝ որ ՚ի մաթուսաղայ պապէ. և Ղամեքայ հօրէ իւրմէ. և յայլոց բազմաց իւրոյ ժամանակակցաց լուեալ զնոսն պատմուճսն Ադամայ. և աճանդեաց որդւոյ իւրոյ։

Եւս առաւել որ Նոյ յետ ջրհեղեղին եկաց այլեւս 350 ամս. ընդ սեմայ որդւոյ իւրոյ, և մեռաւ 950 ամաց. ՚ի 128 ամաց կենի Թարայի հօր Աբրահամու. երկու ամեաք յառաջ քան զննունդն Աբրահամու. ՚ի 2006 ամի Եի։

Եւ սեմ որդի Նոյի գոլով 600 ամաց, մեռաւ նէ ՚ի 2158 ամի Եի. ՚ի 150. ամաց կենի Աբրահամու. որ էր հիներորդն սեմայ. և տասներորդ

ծ ն ու ն դ ն ոյա յ ։ (Ա յ ս սե մ է ր ՝ ո ր ը ն կ ա լ ա ւ զ օ ր հ ն ու թ ե ի հ օ ր ի ւ ր ո յ ն յ ի ։ ա յ ս ու բ ա ն ի ւ ք ։ օ ր հ ն ե ա լ Տ ր Ա ծ . Ա ծ սե մ ա յ . (ն կ ա տ մ ա մ ք ա ւ . Մ ե ս ի ա յ ն ։) վ ա յ և կ ո չ ե ց ա ւ ՝ ի ս ու ր բ գ ի ր ս ։ ք ա հ ա ն ա յ Ա Յ բ ա ր ձ ր ե լ ո յ ։ Ք ա ն զ ի ռ ա ք ք ի ւ ք հ ր է ի ց ։ և ո չ ս ա կ ա ւ ք ՝ Ք ր ի ս տ ո ն ե ա յ Թ ա ր գ մ ա ն չ ա յ , և մ ի ն չ ե ց ա յ Ա ծ ա շ ո ւ ն չ գ ր ո յ ։ հ ա շ ա տ ե ն Թ է սե մ է ր ն ո յն Մ ե լ ք ի ս ե դ ե կ Թ ա գ ա ւ ո ր ն ս ա գ ե մ ա յ ։ կ ո չ ե ց ե ա լն Ք ա հ ա ն ա յ Ա Յ բ ա ր ձ ր ե լ ո յ (ը ս տ Ղ ու կ . 4 .) ո ր և ընդ յ ա ռ ա ջ Ա ք ր ա հ ա մ ու . տ ե ս ա ն ե ց ե ա լ ընդ ն ա ս ա . և օ ր հ ն ե ա լ գ ն ա , ա շ ա ն դ ե ա յ զ ա յն ա մ ո ր լ ո հ ե ա լ է ր ՝ ի ն ո յ ա յ հ օ ր է ի ւ ր մ ի ։

Ւ ր չ ի ՛ ք կ ա ր ծ ի ք ։ ո ր ն ո յ մ ի ա յն սե մ ա յ ա շ ա ն դ ե ա ց զ ի ս ո ր հ ր դ ա կ ա ն պ ա տ մ ու Թ ի ս Ա դ ա մ ա յ ։ Ք ա ն զ ի զ ե ր ու ն դ ն Ք ա մ ա յ զ ք ա ն ա ն ա ն ի ծ ե ա ց ։ և զ Յ ա ք է Թ օ ր հ ն ե ա լ ա ս ա ց ՝ ք ն ա կ ի լ ՝ ի տ ա ն սե մ ա յ ։ ա յ ս ի ն ք ն ՝ ի զ ա ր մ է սե մ ա յ ընկ ա լ ն ու լ զ ու ս ա ո ր ու Թ ի ն Ա ծ ա ն ո ց ։ ու ր ե մ ն մ ի հ ա մ ա ր ե ս ց ու ք մ ե ծ ի ն չ ։ ո ր ե Թ է զ ա ղ դ է ա յ ք ։ և կ ա մ Ւ գ ի պ ո ս ա ց ի ք ո ր ք է ն ս ե ր ու ն դ ք ա մ ա յ ՝ և ք ա ն ա ն ա յ , չ ի ս կ ե ն գ ր ե ա լ ք զ ա ն ց ս Ա դ ա մ ա յ ո ր ՝ ի դ ր ա խ տ ի ն ։ ն ա և զ ե զ ե ա լն ն ա խ ք ա ն զ ջ ր հ ե ղ ե ն ։ զ ի կ ա մ ո չ է ի ն տ ե ղ ե ա կ ք ։ և կ ա մ յ ե տ ա գ ա յ ք ն ո յ ա , հ ա կ ե ա լ չ Ճ զ ա ն ց ա ր ա ր ի ն ։ և խ ս պ ա ռ մ ո ռ ա գ ե ա լ ՝ յ ե տ ժ ա մ ա ն ա կ ա ց հ ն ա ր ե ց ի ն ա յ ն ք ա ն մ ո ռ ա գ ա ծ ի ն ա ռ ա ս պ ե լ ս ։ Ա պ ա յ և ք ա ն ա ս տ ե ղ ծ ք ի ւ ր ե ա ն ց յ ա ե լ ի ն ՝ ի ժ ա մ ա ն ա կ ս ժ ա մ ա ն ա կ ս զ ն ա զ ա ն ս ու տ ա ռ ա ս պ ե լ ս ։ ո ր ք տ ա ր ա ծ ե ց ա ն ՝ ի ք ո լ ո ր ա շ խ ա ր հ ա ռ ա մ Յ Ա Յ օ տ ա ր ա գ ե ա լ ա զ գ ս ։

Ա ր դ Ա ք ր ա հ ա մ օ ր հ ն ե ց ե ա լ ՝ և լ ու ս ա ե ո ր ե ա լ ՝ ի Մ ե լ ք ի ս ե դ ե կ ա յ ։ ա յ ս ի ն ք ն ՝ ի սե մ ա յ ։ ե կ ա ց ընդ

իսահակայ օրհնեալ զաւակի իւրոյ և ժառանգի, ամս. 75: և ընդ Յակոբայ թոռան իւրոյ. ամս. 15: և մեռանի. 175 ամաց. 'ի 2183 ամի Ծի:

Եւ Իսահակ եկաց ընդ Յակոբայ օրհնեցեալ որդւոյ իւրոյ՝ ամս 120: և մեռանի 180 ամաց. 'ի 2288. ամի Ծի: Եւ Յակոբ եկաց ընդ Ղևեայ քահանայացու որդւոյ իւրոյ ամս. 87. և մեռանի յեգիպտոս. 147. ամաց. 'ի 2313. ամի Ծի:

Եւ Ղևի՝ եկաց ընդ կահաթու որդւոյ իւրոյ յամս. 70: և մեռաւ. 157 ամաց 'ի 2385 ամի Ծի: Եւ կահաթ եկաց ընդ Ամրամայ որդւոյ իւրոյ ամս. 94: Եւ Ամրամ. (յորմէ ծնան Ահարօն 'ի 2430. ամի Ծի. և Մօսէս 'ի 2433 ամի Ծի:) եկաց ընդ Ահարօնի, և ընդ Մօսէսի, յոչ սակաւ ամս: որ նա ինքն Ամրամ. և հայր իւր կահաթ տեսեալ էին զՂևի հաւն իւրեանց. մի թէ սոքա ո՞չ պատ մեցին Ահարօնի և Մօսէսի. զայն ա՞մ զոր լուեալ էին 'ի հարց իւրեանց:

Այո՛, Արդարև պատմեցին. գուցէ և գրով ևս աւանդեցին: ուրեմն 'ի ճշմարիտ աւանդութե՞ց գրելոյ Մօսէսի զայն ա՞մ. ո՛չ է բնաւ երկբայելի: Եւ յոյժ յիմարութի՞ կամ յանդգնութի՞ իմն է ասել. թէ Մօսէս 'ի մտաց իւրոց հնարեալ գրեաց զճառն ծննդոց: Եւ ո՛ ոք որ կամիցի ստել զնոսա. իսկապէս անհաւատ համարի այնպիսին: Եւ մեք ընդ անհաւատից չունիմք մաքառումն: Այսքան առ այս բաւ եղիցի:

Արդ յաւարտիլ մասին առաջնոյ՝ որ վասն հնոյ կտակարանի, սկսանի Մասն Երկրորդ՝ որ յաղագս նորոյ Կտակարանի։

Արտահանեալ 'ի սրբոյ Աւետարանէ. և 'ի գրեանց սրբոց Առաքելոց, համառօտ գրութ̄ի։ ըստ բանի Տն̄ թէ. այսուհետև ա̄մ դպիր աշակերտեալ Արքայութ̄ երկնից. հանէ 'ի գանձէ իւրմէ զհին և զնոր։

Յաղագս գալստեան և տնօրէնութ̄ Տն̄ մերոյ՝ և փրկչին Յն̄ի Քն̄ի։ Եւ թէ վասն էր առաքեցաւ։

Անօթն ընտրութ̄ սուրբ Առաքեալն Պօղոս գրէ առ Գաղատ. գլ. 4. 4։ Այլ իբր եկն լրումն ժամանակին, առաքեաց Ա̄ծ զորդի իւր. որ եղև 'ի կնոջէ՝ և եմուտ ընդ օրինօք. զի զնոսա որք ընդ օրինօքն իցեն գնեսցէ, զի մեք զորդեգրութ̄ի ընկալցուք։ Եւ զի էք դուք որդիք, առաքեաց Ա̄ծ զհոգի որդւոյ իւրոյ 'ի սիրտս մեր. որ աղաղակէ Աբբայ հայր։ Այսուհետև չես ծառայ, այլ որդի. եթէ որդի, և ժառանգ Ա̄յ։ Ահաւասիկ կատարումն և բացայայտութ̄ի խորհրդոցն Ա̄յ, որք մինչև ց'այս վայր համառօտաբար գրեցան 'ի սրբոյ հին կտակարանէ, վասն առաքեցման բանին Ա̄յ, 'ի նմին իսկ ժամանակի, յորում ծ ա̄մ սառուցեալ էր անհաւատութ̄ իբրև զկարծրացեալ պատառս վիմաց։ որոյ գալստեամբն և արկմամբն հրոյ (Ղուկ. 12. 49։ Հուր եկի արկանել յերկիր. և̄ն) ջեռուցեալ հալեսցին. ըստ մարգարէութ̄ Ա̄ծ ահօրն դաւթայ։ Սաղմ. 947. 18. և 19։ Առաքէ զբան իւր և հալէ զնոսա. շնչեսցեն հողմք (հոգւոյն սրբոյ՝ որ էջ 'ի վերնատունն հնչմամբ սաստիկ հող-

մոյ) և գնասցեն ջուրք (քարողուն Սրբոյ Աւետարանին:) Պատմէ զգան իւր յակոբայ • զարդարութեն և զերաշունս իջեալ: (և առ հեթանոսայ •) Յս զգալ- ստեանն ժամանակ, ըստ ազգելոյ Հոգւոյն Ա. այսու քանիւք նշանակեաց սրբազան մարգարէն: Սաղմոս. 50. 17: Տէր եթէ զշրթունս իմ բանաս, այսինքն եթէ վերայուցանես զբօլն՝ որ 'ի վերայ գրուեթանց Մօսէսի: 2. կորն. 3. 14: բերան իմ երգեսցէ զօրհնութեն քո: այսինքն դլուատեսցէ զխորհուրդ մարմնաւորիկ սնօրէնութեանն քանին քո • կամ ձա- ռայեսցէ զնոստացեալ մեզ զօհնութեին այն, թէ 'ի զաճակէ քում օրհնեսցին առ ազգք երկրի: Նթէ կամեցեալ էիր պատարագս (հնոյ օրինաց) մատուցա- նէաք • բայց դու ընդ ողջակէզս իսկ ոչ հաճեցար: Պատարագ Ա. հոգի խոնարհ զսիրտ սուրբ• և զհո- գի խոնարհ (զՄէսիան) Ա. ոչ արհամարհէս: Բարի արա Տէր կամաք քովք սիօնի (նորոյ)• և շինեսցին պա- րիսպք Երեմի (Երկեղեցւոյն Քրի Աւետարանչաք և Առաքելովք • որ է նշան ժամանակի դալստեան օծե- ղին• ըստ գուշակելոյ սրբոյն Դանիէլի• գլ• 9• 24• և 25: Գիտասցես և խելամուտ լիցիս քանին տալ պա- տասխանի: Յս 'ի շինելն Երեմի • և դարձցին (հրե- այք 'ի գերութեէ բաբիլոնի) և շինեսցին հրապարակք և պարիսպք • (Երեմի) և նորոգեսցին ժամանակք: այսինքն սկսեսցին ժամանակք եօթանասուն շաբա- թուց • յորում գալոց է օծեալն Առաջնորդ: 'ի 62• շաբաթուց լրմանն:) Ցայնժամ հաճեսցիս ընդ պա- տարագս արդարութեէ• (Մաղք• գլ• 1• 11: Զի յար ևելից մինչև 'ի մուտս արևու փառաւորեալ է անուն իմ 'ի մէջ ազգաց• և պատարագք սուրբք մատչին:) յորժամ ուխտիւք պատարագս հանցեն 'ի սեղան քո

զոմարակս։ (զհրեշտակն նորոյ ուխտի զՔս̄։ Մաղ. գլ. 3. 1։ Եւ յանկարծակի եկեսցէ 'ի տաճար իւր. հրեշտակն ուխտի՝ զոր դուքն կամիք.) որ ահա սոյնպիսի բազում մասամբք և բազում օրինակօք խօսեցաւ Ած 'ի վեց դարս ընդ հարս մեր Մարգարէիւք. մինչև եկն 'ի լրման վեցերորդի դարուն նոյն խոստացեալ զաւակն առ Եւայ. և առ Աբրահամ. գուշակեալն 'ի սրբոյ նահապատէն Յակոբայ և յա̄մ սրբոյ Մարգարէից. Անեղ և յաւիտենական բանն Ած. անժամանակբար ծնեալն յԱյ հօրէ յաւիտենականէ առանց մօր. ծնանի ժամանակաւ առանց հօր 'ի սրբուհայ կուսէն. (որ գոլով 'ի սեռէ կանանց, կին անուանեաց սուրբ Առաքեալն) անսերմն յղութիւն հոգւոյն սրբով. առ 'ի վերանորոգել զաղաւաղեալ պատկեր իւր. և հասուցանել զնա 'ի փառս անճառս յոյժ առաւել գերազանցս քան զայն, զոր ունէր 'ի դրախտին յանմեղութեան իւրում։ որոյ վասն և յանձն էառ 'ի կատարել զա̄մ հայրական տնօրէնութիւն. զորս կրեաց 'ի մարմնի իւրում։

Որոյ ահա զդալստենէ՝ և զտնօրէնութէ ձեռնարկանեմք աստէն 'ի դիր անցուցանել կարի հակիրճ բանիւք. սկսելով նախ վասն հաւատոյս մերոյ Քրիստոնէականի. և հետևաբար զտնօրէնութէ նորին. առ 'ի դիւրապէս վերծանութի նորակիրթ մանկանց մերոց հայկասերից։ որոց վս̄ և աշխատեցաք 'ի գրել։

Արտահանեալ 'ի սրբոյ նոր կտակարանէ. վասն գալ-
ստեան և տնօրէնութեան Տն մերոյ Յս Քս:

ՊՐԱԿ. Ա:

Յաղագս թէ ո՞յք են Քրիստոնեայք. և թէ զի՞նչ
նշանակէ Քրիստոնեայ ասելն: Եւս թէ զի՞նչ է հա-
ճատն Քրիստոնէի:

Հ. Վասն ո՞յր ասէ Մարգարէն ովսէ. թէ կոչեցից
զոր ո՛չ ժողովուրդ իմ. ժողովուրդ ինձ. և զչսի-
րեցեալն սիրեցեալ. և զչողորմեալն ողորմեալ:
Եւ եղիցի 'ի տեղւոջ յորում ասացաւ նոցա՝ թէ
ո՛չ ժողովուրդ իմ դուք. անդ կոչեսցին նոքա
որդիք Այ կենդանւոյ: զոր և ոուրբ Առաքեալքն
Պողոս և Պետրոս բերեն 'ի վկայութիւն: Հռօմ.
9. 25: 1. Պետ. 2. 10:

Պ. Զայս բան մարգարէացաւ ովսէ վասն հեթանո-
սաց. որք ան Աճ կռապաշտութիւն էին չսիրեցեալք
չողորմեալք, և ո՛չ ժողովուրդք Այ: Եւ գալով
'ի հաճատս Քս, եղէն ողորմեալք. սիրեցեալք,
ժողովուրդք. և որդիք Այ կենդանւոյ, շնորհիւ
Քրիստոնէութեան: և կոչեցան Քրիստոնեայք:

Հ. Զի՞նչէ Քրիստոնէութիւն. և զի՞նչ նշանակէ
Քրիստոնեայ ասելն:

Պ. Քրիստոնէութիւն է հաճատալ Քս. և Քրիստո-
նեայ ասելն նշանակէ զայնոսիկ՝ որք հաճատան
Քս և հետևելով նմա, պահեն զպատուիրանս
նորա:

Հ. Ե՞րբ հաստատեցաւ անունս Քրիստոնեայ:

Պ. Յետ համբարձմանն Քս. յիններորդի. այսինքն
39. ամի Տն. յանտիոք քաղաքի. 'ի սրբոց Առա-

քելոց Պողոսի և բառնաբայ եղաւ անուննս այս՝ Քրիստոնեայ, ՚ի վերայ հաճատայելոց Քո՛ւ։

Հ. Քրիստոս անունն, որո՛յ ապգի բառ է. և զինչ նշանակէ։

Պ. Քո՛ անունն է բառ Ցունայց. որ եբրայեցւոց լեզուաւ Մեսիա ասի. իսկ ՚ի մերումս լեզուի օծեալ թարգմանի։

Հ. Որո՛վ օծեցաւ Քո՛. և զի՞նչ յատուկ անուն ունէր։

Պ. Ցատուկ անուն նորա Ցիսուս էր եբրայեցւոց լեզուաւ. որ ՚ի մեզ փրկիչ թարգմանի։ Այս օծաւ ըստ մարգարէին՝ Հոգւով սրբով. որպէս և գրեալ է. Հոգի Տ՚ն ՚ի վերայ իմ, վա՛յ և էօծ իսկ զիս. Աւետարանել աղքատաց. այսինքն աղքատ հեթանոսաց առաքեաց զիս, ևն։ Ղուկ. 4. 18։ Գործ. 10. 38։ Եւ կոչեցաւ Ցի՛ Քո՛. այսինքն փրկիչ օծեալ. Տի՛ ՚ի քաղաքի դաւթի. այսինքն խորհրդաւոր եղեմի. զի ըստ մարմնոյ էր ՚ի զարմէ դաւթի։

Հ. Որո՛վ լինիմք Քրիստոնեայ։

Պ. Ամենասուրբ մկրտութիւ. զոր պատուիրեաց Քո՛ առաքելոց իւրոց ԹԷ՝ գնացէ՛ք այսուհետև՝ աշակերտեցէ՛ք զա՛մ հեթանոս. մկրտեցէ՛ք զնոսա Ցանունն Հօր և որդւոյ և Հոգւոյն սրբոյ. և ուսուցէ՛ք նոցա պահել զա՛մ զոր ինչ պատուիրեցի ձեզ։ Մատ. 28. 19։

Հ. Ունի՞ Քրիստոնեայն և արտաքին նշան ինչ. որով լինի ճանաչելեաւ։

Պ. Արտաքին նշան Քրիստոնէի է սուրբ խաչն. որ խաչակնքելով զդէմս մեր ասեմք՝ Ցանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։

Հ. Ա՞սն էր եղև սո՛ւրբ խաչն՝ նշան Քրիստոնէի։

Պ. Վ՞ս զի 'ի վերայ խաչին մեռաւ Քս վասն փրկութեան հաճատացելոց իւրոց։

Հ. Վասն էր 'ի խաչակնքելն զմեզ ասեմք յանուն հօր՝ և որդւոյ՝ և հոգւոյն սրբոյ։

Պ. Առ 'ի վերծանել և հաճատալ՝ թէ 'ի հոգւոջ մերում, ունիմք տպաւորեալ զպատկերն Ամենասուրբ Երրորդութեան. վնյ և կոչիմք պատկեր Այ։

Հ. Զի՞նչ է հաճատն Քրիստոնէիլ։

Պ. Նախ՝ հաճատալ զԱմենասուրբ Երորդութիւն մի Ածութի՝, և երեք կատարեալ Անձինք անբաժանելի Ածութբ, էութբ՝ և գոյութբ։ Անեղ՝ անսկիզբն՝ անժամանակ և անվախճան, ինքնագոյ, և համագոյ էութի և գոյութի մշտնջենական. համազօր՝ և համիշխան Արարիչ երկնի և երկրի. և ամ երևելի և աներևոյթ գոյից։

Հ. Զի՞նչ են անուանք երից անբաժանելի անձանց միոյն Այ։

Պ. Անուանք երից անձանց են, հայր Ած. որդի Ած և հոգի սուրբ Ած։ հայր է անսկիզբն. և է ծնօղ որդւոյ. և բղխօղ հոգւոյն սրբոյ։

Հ. Ուրեմն երեք Ածք են.

Պ. Ո՛չ են բնաւ երեք Ածք. այլ մի Ած՝ և երեք յատկացեալ անբաժանելի Անձինք 'ի մի Ածութի և 'ի մի աննիւթ և ամենապարզ, անեղ և անսկիզբն էութի. համագոյ և համակամ մի իշխանութի. և մի տէրութի մշտնջենական. ոչ յառաջ և ոչ յետոյ. կամ մեծ և ստրուկ 'ի միմեանց. այլ համահաճասար էութի։ որպէս գրի. 1. Յօհ. գլ. 5. 7։ Հայր. բան. և հոգի սուրբ. և երեքինքս մի են։

Ա. Գոյ և այլ հարկաւոր հաճատալի խորհուրդ վը Քրիստոնէի։

Պ. Այո. հարկաւոր է Քրիստոնէին հաճատալ և ճանաչել զՏայրն միայն ճշմարիտ Աճ. և զոր ա- ռաքեացն զՑն Քս. որով և ստացեալ լինի կեանքն յաւիտենական։ Ցօհ. ιζ. 3։

Ա. Ալլսէմ զքեզ՝ ծանո՛ ինձ առաւել քայցայցտ. ոմ էր այդ Ցն. Քն։

Պ. Ցն Քս. էր միևն յերից Աճայն անձանց՝ Միա- ծին որդի և յաւիտենական բան հօր Այ. ծնեալ ՚ի հօրէ Այ նախքան զյաւիտեանս անժամանակա- բար առանց մօր։ Իսկ ՚ի ժամանակի առաքեցաւ ՚ի հօրէ. և Աւետեաք հրեշտակապետի ծնաւ մարմ նով ՚ի սրբուհւոյ կուսէն Մարիամայ Աճածնէ հոգւովն սրբով՝ անսերմն յղութիւ և անապական ծննդեամբ առանց հօր։ Իսկ որդին Այ բանն Աճ՝ որ էր Աճ կատարեալ. եղև նաև որդի մարդոյ՝ կատարեալ մարդ. մարմնով բանական հոգւով և մտօք. և անոճանեցաւ Ցն Քս. անփոփոխ և ա- նայլայլելի Աճութիւն, և անթերի մարդկութիւն. մի անձն Աճայնի. և մի դէմ. և մի տէր Ցն Քս։ երեկ և այսօր, նոյն և յաւիտեան։

Ա. Ա՝ասն էր առաքեցաւ յաւիտենական բանն Աճ՝ մարմին առնուլ և լինիլ մարդ։

Պ. Ա՝ասն փրկչէլոյ զմարդկային ընութիւն ՚ի սկզբնա- կան մեղայ, և ՚ի գերութիւն սատանայի. որ նախա- հայրն մեր Ադամ, անսացեալ բանի կնոջ իւրոյ Եւայի՝ որ խաբեցեալն էր յօձակերպ դիւէն. և- կերը ընդդէմ հրամանի Այ զարգելեալ պտուղն ծառոյն գիտութիւ բարւոյ և չարի. որոյ և բար- կացեալ Աճ. վճռեաց մեռանիլ, և արտաքսեաց

'ի դրախտէն. և եղև մարդն բարձի թողի եղեալ յԱյ. վասն գնալոյ նորա ըստ կամաց անձին իւրոյ: Ապայ առաւել ևս 'ի չարանալ սերնդոց նորա. եբարձ Ած զհոգին իւր՝ զոր փչմամբ շնորհեալն էր: Յայնժամ իսպառ տիրեցաւ Մարդն 'ի սատանայէ համայն սերնդովք իւրովք: Որոյ սակս և բանն Ած եկեալ մարդացաւ. զի տնօրէնութիւն այսինքն չարչարանօք՝ խաչելութիւն, և հեղմամբ ամենասուրբ արեան իւրոյ. և մահուամբ՝ և Ածափառ Յարութիւն փրկեսցէ զմարդկայինս բնութիւն. և վերստին շնորհելով հաւատացելոց իւրոց զհոգին՝ զոր եբարձ 'ի մարդկանէ մարմին եղելոց. պարգևեսցէ նոցա զանմահութիւն. և երջանիկ կեանք յաւիտենական:

Հ. Խոստացեալ էր Ած Ադամայ՝ զայս փրկութիւն մարդկային ազգի:

Պ. Այո. խոստացաւ նախ յանիծանելն զօձն ասելով ց'նա. եդից թշնամութիւն 'ի մէջ քո. և զաւակի քո. և 'ի մէջ կնոջդ՝ և զաւակի դորա. դու սպասեսցես նորա գարշապարի, այսինքն մարմնոյ, արկանելով 'ի փորձս, և 'ի չարչարանս խաչի և մահու. և նա սպասեսցէ քում գլխոյ. այսինքն իշխանութիւն: (իշխան Ծիս այսորիկ՝ ընկեսցի արտաքս:) որ խոնարհութիւն՝ հնազանդութիւն՝ և համբերութիւն իւրով խորտակեսցէ: Այլ և խոստացաւ սրբոյ նահապետին նոյայ. թէ եդից զԱղեղն իմ յամպս 'ի նշան յաղթութիւն՝ խաղղութիւն՝ և հաշտութիւն: նա և խոստացաւ աբրահամու. թէ 'ի զաւակի քում օրհնեսցին ամ ազգք երկրի:

ՊՐԱԿ. Ի.

Յաղագս Աշետման հրեշտակապետին, և մարմնառուքն Թեան փրկչին։

Հ. Որպէ եղև մարմնառութիւն փրկչին։

Պ. Ի լման ժամանակին նախասահմանեցելոյ. ի վերջ նուագ վեցերորդի՝ և ի սկզբան յօթներորդի դարուն. ի 4000 ամի Ադամայ։ Առաքեցաւ հրեշտակապետն գաբրիէլ ի նազարէթ քաղաքն գալիլեացւոց առ սրբուհի կոյսն Մարիամ. որ եկեալ ողջոյն ետ՝ և ասէ. ուրախ լեր բերկրեալդ Տէր ընդ քեզ։ Իւ նա ընդ բանսն խռովեցաւ. և խորհէր ընդ միտս՝ թէ ինպիսի ինչ իցէ ողջոյնս այս։ Իւ ասէ ցնա հրեշտակն, մի երկնչիր Մարիամ. զի գտեր զշնորհս ԱՅ։ Իւ ահա յղասջիր՝ և ծնցիս որդի. և կոչեսցես զանուն նորա Յիսուս. նա եղիցի մեծ, և որդի բարձրելոյ կոչեսցի. և տացէ նմա Տէր ԱՍ զԱթոռն դաւթի հօր նորա. և թագաւորեսցէ ի վերայ տանն Յակոբայ. Իւ թագաւորութիւն նորա վախճան մի լիցի։ Իւ ասէ Մարիամ ցՀրեշտակն. զիա՞րդ լինիցի ինձ այդ. քանզի զայր ոչ գիտեմ. այսինքն կոյս եմ։ Պատասխանի ետ հրեշտակն և ասէ. Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ. և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի ի վերայ քո. քանզի և որ ծնանելոցն է ի քէն սուրբ է. և որդի ԱՅ կոչեսցի։ Իւ ահա Էլիսաբեթ ազգական քոյ. և նա յղի է ի ծերութիւն իւրում. և այս վեցերորդ ամիս է նորա՝ որ ամուլն կոչեցեալ է. զի ոչ տկարասցի առ ԱՅ ամենայն բան։ Իւ ասէ Մարիամ. ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում։ Իւ գնաց ի նմանէ

հրեշտակն։ Եւ 'ի նոյն կիտի յորում հաճանութիւն ետ սրբուհի կոյսն, իսկոյն յղացաւ զՅս Քս. հոգւովն սրբով յարգանտի իւրում։

Հ. Ուրեմն տակաւին կոյս էր սրբուհին մարիամ՝ մինչ յղացաւ զՅս։

Պ. Այո, կոյս էր. բայց խօսեցեալ. այսինքն նշանեցեալ էր ընդ Յօսեփայ. որ էր 'ի տանէ և 'ի զաւակէ դաւթի. և չեւեւս եկեալ էին առ միմեանս։

Հ. Զինչ արար Յօսէփ յորժամ ետես զկոյսն յղի։

Պ. Քանզի արդար էր Յօսէփ. ոչ կամեցաւ առակել զնա. խորհեցաւ լռելեայն արձակել։ բայց հրեշտակ Տն երևեալ նմա 'ի տեսլեան՝ ասէ. մի երկնչիր Յօսէփ որդի դաւթի առնուլ զՄարիամ կին քո. քանզի որ 'ի նմայն ծնեալ է 'ի հոգւոյն սրբոյ է. ծնցի որդի. և կոչեսցես զանուն նորա Յիսուս. զի նա փրկեսցէ զժողովուրդ իւր 'ի մեղաց իւրեանց։ Եւ զարթուցեալ Յօսէփ 'ի քնոյ՝ եառ զկին իւր. և ոչ երբէք գիտաց զնա. որ և գոլով իբր այր սրբուհւոյն կոչեցաւ Աճահայր։

ՊՐԱԿ Գ.

Յաղագս յղացման և ծննդեան սրբոյն Յօհաննու մկրտչի

Հ. Զկնի Աւետման և յղացման, զինչ արար սրբուհի կոյսն։

Պ. Գնաց փութանակի 'ի տուն սրբուհւոն Եղիսաբեթի ազգականի իւրոյ։

Հ. Ով էր այդ սրբուհին Եղիսաբեթ։

Պ. Էր կին սրբոյն Զաքարեայ քահանայապետի. որ ամուլ էր և ծեր. և վեցերորդ ամիս էր, որ յղի

էր Յօհաննու մկրտչաւ որդւով իւրով։

Հ. Եթէ Ամուլ և ծեր էր Եղիսաբեթ. ապա ո̅ր-
պէս. և յո̅ւմմէ յղացաւ։

Պ. Այր նորա սուրբ քահանայապետն Զաքարիա.
մինչ 'ի տօնի տաղաւ̀արահարաց ըստ օրինացն Մ̅օ-
սիսի՝ յաւ̀ուր տօնի քաւ̀ութ̅ն առնէր խնկարկու-
թիւն 'ի սրբութ̅ի սրբութ̅ից կոչեցեալ տեղւոջ
'ի տաճարի անդ. հրեշտակապետն գաբրիէլ երև-
եալ նմա յայտնեաց զծնունդ Յօհաննու մկրտչի։
Եւ նա երկբայեալ ասէ. զի՞արդ լինիցի այդ. որ
մեք ծերացեալ եմք։ Պատասխանեաց հրեշտակն.
որովհետև ո՛չ հաւ̀ատացեր ինձ. այս եղիցի քեզ
նշան. որ համր. այսինքն լուռ լիցիս, մինչև ծնցի
որդին քո. և դիցես զանուն նորա Յօհաննես. նա
եղիցի մեծ առաջի Ա̅յ̅. և ունիցի զհոգի և զզօ-
րութ̅ի եղիայի. և պատրաստեսցէ զճանապարհ
Ա̅յ̅ն ի̅էլի գնալով առաջի նորա. այսինքն. Յ̅ն̅ի
Ք̅ն̅ի։ Եւ 'ի լրանալ երեքտասան աւ̀ուր տօնիցն՝
գնաց Զաքարիա 'ի տուն իւր. և եղիսաբեթ կին
նորա յղացաւ 'ի նմանէ։

Հ. Յորժամ սրբուհի կոյսն գնաց առ եղիսաբեթ.
զի՞նչ խօսեցան անդ։

Պ. Սրբուհի կոյսն իբրև ողջոյն ետ. խաղաց մանուկն
յորովայնի եղիսաբեթի. և նա լցեալ հոգւով սըր
բով գոչեաց. օրհնեալ ես դու 'ի կանայս. և օր-
հնեալ է պտուղ որովայնի քոյ։ Եւ ուստի՞ է ինձ
այս. զի եկեսցէ մայր Տ̅ն̅ իմոյ առիս. զի ահաւ̀ա-
սիկ իբրև եղև ձայն ողջունի քոյ յականջս իմ,
խաղաց ցնծալով մանուկն յորովայնի իմում։ Եւ
երանի որ հաւ̀ատասցէ եթէ եղիցի կատարումն
ասացելոց նմա 'ի Տ̅ն̅է։ Եւ սրբուհին Մարիամ

ասաց հոգւովն սրբով զփոխն, Մեծացուսցէ անձն իմ զՏր. և՝ն: Եւ մնացեալ անդ ամիսս երիս, դարձաւ 'ի տուն իւր:

Հ. Սուրբ քահանայապետն Զաքարիա, մնաց այնպէս լուռ:

Պ. Ո՛չ. այլ յորժամ լցան աւուրք. և ծնաւ որդին իւր. 'ի հարցանել նմա ազգականաց իւրոց՝ յաւուր ութերորդի թլփատութեան մանկանն. թէ զի՞նչ անուն կամի կոչել որդւոյն: Եւ նա խնդրեալ տախտակ գրեաց թէ՝ Յօհաննէս է անուն դորա: Եւ առ ժամայն բացաւ լեզու նորա. որ ասաց զփոխն. օրհնեալ Տր Ած իէլի. որ այց ել. և՝ն:

ՊՐԱԿԴ:

Յաղագս ծննդեան Տն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի:

Հ. Սրբուհի կոյսն, ե՞րբ ծնաւ զփրկիչն օծեալ:

Պ. Յետ ինն ամսոց յԱւետմանէ հրեշտակապետին 'ի 4000 ամի Ծի. 'ի լրանալ 62 շաբաթուց. այսինքն 434 ամաց եօթանասուն շաբաթուցն Դանիէլի. 'ի վեցերորդի յաւուր Յունվար ամսոյ. ծնաւ սուրբ կոյսն Մարիամ զմարդացեալ բանն Ած. որ 'ի ութերորդի աւուր՝ ըստ հնոյ օրինաց թլփատեցեալ անուանեցաւ Յիսուս օծեալ փըր կիչ Ծի. ըստ գրելոյ սրբոյ Աւետարանչին Ղուկասու. և ըստ աւանդութեան սրբոց Առաքելոց, և նախնի սրբոց հարց. որպէս և հաւաստէ սուրբն ներսէս շնորհալի 'ի ընդհանրական գրքոջ իւրում, վասն թուոյ, ամսոյն և աւուրն:

Հ. Ապա զնաւրդ այժմ միւս ազգք Քրիստոնէից՝ ՚ի 25 դեկտեմբերի տօնէն ։

Պ. Ըստորում սերկիչն մեր. ՚ի վեցն Յունվարի յա-
ռաջ ծննդեան իւրոյ՝ գոլով երեսնամայ՝ եկեալ
մկրտեցաւ ՚ի գետն Յորդանան. վայ և ամ ազգք
Քրիստոնէից ՚ի նմին վեցերորդի յաճուր յունվա-
րի կատարէին զտօն ծննդեանն, և մկրտութեան ՚ի
միասին ։

Այսպէս և յԵՀմ եղեալ քրիստոնեայք ՚ի
վեցն յունվարի կատարէին զտօն ծննդեանն ՚ի
բեթղեհէմ, և անտի գնացեալ ՚ի Յորդանան
հանդիսաճորէին նաև զտօն մկրտութեի ՚ի բազում
ժամանակս ։ Բայց տեսին Ազէմացիք որ յոյժ նե-
ղուի լինէր ինքեանց եկեղեցականաց նաև ժողովր-
դեանն վասն հետաճորութեի տեղեացն. եւս և վե
ձմերային եղանակին. ուստի հաճանութիւ համայն
պատրիարքաց իւրեանց սահմանեցին. որ ՚ի 25.
դեկտեմբերի զտօն ծննդեան կատարեսցեն, և ՚ի
վեցն Յունվարի զմկրտութեին տօնեսցեն ։ Ու
յայնմհետէ մնաց սոյն սովորութի ՚ի նոսա մինչև
ցայսօր ։ Իսկ ազգ մեր Հայոց ոչ խախտեաց զբան
Աճետարանչին, և ոչ ևս զաճանդուխիս Առաքե-
լոց. և մնաց ՚ի նախնի կանոնադրութեի սրբոց
Հարց ։

Գոյ և այլ իսկական իմն պատճառ սոյնոյ բա-
ժանման տօնից. որ սուրբք եկեղեցին Հռոմայ յա-
ռաջմանէ սահմանեալ էր ՚ի 25 դեկտեմբերի
տօնել զծնունդն. զի ՚ի մինն Յունվարի զտօն
Թլփատութեի տօնեսցեն. և ՚ի փետրվարի երկու
զՏն ընդ յառաջն տօնեսցեն. (որպէս և ինքեանք
խոստովանին յԵկեղեցական Հին պատմագրեանս իւր

*

եանց. մանաւանդ թէ Հիւսքուսմ մօրեղբ եպիս-
կոպոսն, ի յաւուրս բառասրանի իւրում որ ի 1625
ին. գալիականաւ տպեցեալ է ի փարիզ, յայտնա-
պէս խոստովանելով իրաւունս տայ մեզ հայոց։)
Եւ զայս արարին հռամայեցիք առ ի խափանել
զհռաչիաւոր հանդէսն մեծի կուսին Ցունվարի։
(զոր հին հռամայեցիք կարի շքեղափառութ հան-
դիսաւորէին յառաջնում աւուր Ցունվարի. ոյ
գրէ Մարկոս Աւրելիոս կայսրն ի գլ. 16։) նմա-
նապէս ի բառնալ նաև զսովորութիւն հանդիսին.
զոր յերկրորդում աւուր փետրվարի. ջահիւք և
լապտերօք որոնցին ի դիշերի զիրօսնէրփինն. որ է
Պերսեփոնէ դուստր սերայի յափշտակեալն ի
Պլուտոնէ։ քանզի ամբողին հռոմայեցւոց նմանա-
պէս և Ցոյնք, ի Քրիստոնէութ իւրեանց ևս՝ ի
սոյն երկու աւուրս. այսինքն. ի մէկն Ցունվարի
(որ է կաղանդն.) և յերկուսն փետրվարի, հան-
դէս մեծ առնէին. վայ և սուրբ հայրապետք հռո-
մայ. (և ապա Ցունաց սուրբ հայրապետք) առ
ի խափանել զյիշատակ կուսոյս այսոցիկ. սահմա-
նեցին. որ ի 25 դեկտեմբերի զծնունդն տօնես-
ցեն. զի ի մէկն Ցունվարի զուարթօրեայ թլփատու-
թեան տօն կատարեսցեն. և յերկուսն փետրվարի
զքառասնօրեայ ընծայումն Տն ի տաճարին. և խա-
փանեսցին յիշատակք կուսոյն Ցունվարի և Պերսե-
փոնէի։

Այսպէս և հայոց սուրբ Ւկեղեցի առ ի խա-
փանել զհանդէս կուսոյն Անահիտայ. այսինքն տի-
անային. կարգեցին զվարդավառն. որ է օր Պայծա-
ռակերպութեան Քնի (ի լճաբօր) լեառն. տօնել
յամսեանն յունիսի. կամ յուլիսի. (վարդավառ

անուամբ.) որ կատարիւր ՚ի վեցն օգոստոսի. զի բարձոյն յիշատակ չծծուհտոյն Ննահիտայ. զոր մեծապէս հանդիսաւորէին վարդովք և այլ ծաղկամբք և կոչէին վարդամատն. որպէս և տեսանել ՚ի պատմութիւնս սրբոյն Գրիգորի լուսաւորչին մերոյ: բայց ՚ի սոցունց դոն և այլ սոյնպիսի բազում օրինաւոր բարեկարգութիւնք հաստատեալ յամ ազգս Քրիստոնէից բարեպաշտ յառաջադրութիւն:

Հ. Որ ծնաւ և թլփատեցաւ Քս փրկիչն մեր:

Պ. ՚ի բեթլհեհեմ քաղաքի դաւթի ծնաւ. և անդ թլփատեցաւ յաւուր ութերորդի ըստ օրինացն զոր հրամայեաց Ած Աբրահամու. և վերահասատեցաւ ՚ի Մովսէս: և անուանեցաւ Ցս:

Հ. Նշանք ինչ եղեն ՚ի ծննդեան Քսի:

Պ. Նշանք բազումք եղեն: նախ՝ աստղ մի լուսաւոր երևեցաւ յԱրևելս. յորմէ ծանեան մոգք զծնունդ արքային իմն: և գնացին յարևելից յերկիրպագութիւն. ՚ի նշանակ կոչմանն հեթանոսաց՝ ՚ի հաւատս. որք ժամանեալ յԵրեմ հարցին հրէից՝ թէ ուր ծնաւ արքայն իմն. զի տեսաք զաստղ նորա յԱրևելս՝ և եկաք երկիրպագանել: և յլսեալ Արքայ Հերովդէս խռովեցաւ. և ամ հրէաստան ընդ նմա: և ժողովեալ զքահանայս և զդպիրս եհարց. թէ ուր ծնանի Քն: և նոքա ասեն, ՚ի բեթլհեհեմ քաղաքի դաւթի. ըստ մարգարէութեան Միքիայ. 5. ջ: և հերօդէս երկուցեալ թէ կորուսանէ զթագաւորութիւնն իւր՝ յառաջադրեաց կորուսանել զմանուկն: և կոչեալ զմոգսն՝ ստուգեաց զժամանակ աստեղն. և նենգիւ պատուիրէր ետ նոցա, թէ յորժամ գտանիցէք, զեկուսջի՛ք և ինձ. զի և ես երկրպագից նմա: բայց մինչ առաջ

նորդութ Աստեղն՝ գտին մոգքն զՅս. երկիրպագեալ մատուցին նմա զընծայս ոսկի, կնդրուկ. և զմուռս ըստ սաղմոսին: և հրամանաւ հրեշտակի Այ. ընդ այլ ճանապարհաւ գնացեալ յՆ իւրեանց՝ ո՛չ ազդեցին հերօդէի:

Իբրև ետես հերօդէս՝ թէ խաբեցաւ 'ի մոգուցն՝ բարկացաւ. և առաքեալ զինոՀորս կոտորեաց զմանկունսն բեթղեհէմի յերկուց տարեկանաց 'ի վայր. զի և Յս ընդ նոսա սպանցի:

Երկրորդ նշան եղև. որ 'ի ծննդեան գիշերին, լոյս մեծ ծագեցաւ մերձակայ հովոՀաց բացօթէից որք պահպանէին զՀօտս իւրեանց: Եւ հրեշտակ Տն երևեալ ԱՀետեաց նոցա զծնունդ փրկչին: Եւ ապայ տեսին զբազմութի հրեշտակաց յերկինս. որք երգէին և ասէին, փառք 'ի բարձունս Այ. և՝: և նշանակեաց հրեշտակն հովոՀաց զտեղին: Եկեալ հովոՀացն տեսին զՅօսէփ և զՄարիամ. և զՅս պատեալ խանձարրօք, և եդեալ 'ի մսուր անբանից. զի ո՛չ գոյր նոցա տեղի իջևանի. որք և երկիրպագեալ դարձան փառս տալով Այ: Ղ ուկ. գլ. 2. 8. ց' 18:

Երորդ նշան եղև. որ 'ի քառասնօրեայ ընծայիլն 'ի տաճարն, ըստ օրինացն Մօսեսի: սուրբն սիմէօն ծերունի. և Աննա Մարգարէուհի ազդմամբ սրբոյ հոգւոյն եկին 'ի տաճարն: Եւ զի սիմէօն՝ որ հրաման առեալ էր 'ի հոգւոյն սրբոյ՝ ո՛չ ճաշակել զմահ. մինչև տեսցէ զօծեալն Տն. ընկալեալ զնա 'ի գիրկս՝ խնդրեաց զարձակումն իւր. և մարգարէացեալ վասն լոյս յայտնիլոյ նորա հեթանոսաց. և փառք ի՝էլի. ետ ցմայրն ասելով. ահա սա կայ 'ի գլորումն և 'ի կանգնումն բազմաց

՚ի մէջ ընկալ, և նշան հակառակութեան, ասէ. որպէս և գրէ Պաւղ. ա. Կորնթ. ժա. 34։

Ա. Յորժամ կոտորեցին զմանկունսն բեթղեհեմի, զի՞նչ եղև Ցեսի։

Պ. Հրեշտակ Տեառն երևեալ ՚ի տեսլեան սրբոյն Ցոսեփայ՝ ասաց առնուլ զմանուկն՝ և զմայրն նորա, և փախչիլ յեգիպտոս. զի խնդիրը է Հերովդէս կորուսանել զմանուկդ։ Եւ նորա առեալ զնոսա ՚ի գիշերի գնաց յեգիպտոս, և ՚ի նոյն անդ. մինչև որդնալոյ եղեալ Հերովդէս մեռաւ։ Յայնժամ կրկին երևեալ հրեշտակն Ցոսեփայ՝ ասաց առնուլ զմանուկն, և զմայր նորա, և դառնալ ՚ի հրէաստան. (զի լցցի բան մարգարէին՝ թէ յեգիպտոսէ կոչեցից զորդի իմ։) զի մեռան (ասէ) որք խնդրէին զանձն մանկանն։ Եւ նոցա եղեալ յեգիպտոսէ դարձան ՚ի հրէաստան։

Ա. ՚Ի դառնալ նոցա ՚ի հրէաստան, ո՞ւր բնակեցան։

Պ. Իբրև լուաւ Ցոսէփ թէ արքելայոս թագաւորեաց ՚ի հրէաստան փոխանակ Հերովդէի հօր իւրոյ։ երկեաւ երթալ անդր, և հրաման առեալ ՚ի տեսլեան ՚ի հրեշտակէ. գնաց ՚ի կողմանս գալիլեայ։ և եկեալ բնակեցաւ ՚ի նազարէթ. ՚ի լրումն մարգարէութեան՝ թէ նազովրեցի կոչեսցի։ վշ՟ և Ցս նազովրեցի կոչեին։ Մատ. գլ. բ։

ՊՐԱԿ. Ե.

Ցաղագս մկրտութեան Ցեսի. և Ցայտնութեան սրբոյ երրորդութեան։

Ա. Ջի՞ եղև սրբոյն Ցովհաննու. և վասն ի՞ր մկրտիչ անուանեցաւ։

Պ. Իբրև զարգացաւ սուրբն Յոհաննէս, առանձնացաւ յանապատ տեղի, և կեայր խստակրօն վարուք. կերակուր նորա էր մարախ՝ և մեղր վայրենի. և հանդերձք նորա ստև այսինքն բուրդ ուղտու. և գօտի մաշկեղէն ը̄ մէջ: Եւ 'ի մերձենալ ժամանակի քարոզուե̄ Յ̄ի. հրաման եղև նմա յԱյ̄. գնալ առ ափն Յորդանանու մկրտել ջրով զժողովուրդն. և կոչել զնոսա յապաշխարութի̄ և քարոզել թէ մերձեալ է արքայութի̄ Ա̄յ: զի լցցի մարգարէութիւն Եսայեայ՝ թէ ձայն բարբառոյ յանապատի պատրաստ արարէք զճանապարհս Տ̄ն, և ուղիղ արարէք զշաւիղս նորա: Եսա. 40. 3: Եւ գային առնա յա̄մ կողմանց հրէաստանի և մկրտեին: վ̄ոյ և կոչեցաւ Յոհաննէս մկրտիչ: (բայց զկնի սակաւուց՝ անթիպաս Հերոդէս չորրորդապետ որդի առաջնոյն Հերոդէի, էարկ զնա 'ի բանտ. վասն յանդիմանուե̄ն զոր առնէր նմա, յաղագս հէրոդիադայ կնոջ փիլիպպոսի եղբօր իւրոյ հերոդէի, թէ չէ արժան քեզ առնուլ զնա 'ի կնութի̄. զոր առեալ իսկ էր, և կինն մախացեալ էր նմա: վ̄ոյ և գլխատեցաւ 'ի բանտի հրամանաւ հէրոդէի, խընդրանօք դստերն հերոդիադայ. 'ի պարգևս կաքաւելոյ նորա 'ի մէջ բազմականաց 'ի հանդիսի յաւուր ծննդեան հերոդէի. զի կարի հաճոյ եղեալ նմա՝ երդուեալ էր պարգևել զոր ինչ և խնդրեսցէ:) Մարկ. 6. 14:

Հ. Մկրտեցա̄ւ և Յ̄ս 'ի Յոհաննու:

Պ. Այո. եկն և Յ̄ս 'ի մկրտիլ. զոր տեսեալ Յոհաննու ասէ. ահա գառն Ա̄յ՝ որ բառնայ զմեղս Ծ̄ի, և հրաժարեցաւ 'ի մկրտելոյ ասելով. Տ̄ր ինձ պարտ է 'ի քէն մկրտիլ. և դու առիս գաս. բայց

Յ̅ ասէ ց'նա, թո՛յլ տուր. զի այժմ այսպէս վայել է մեզ լնուլ զա̅մ Արդարութի̅։ Եւ ապայ Յօհաննէս թոյլ ետ. և Յիսուս մկրտեցաւ։

Հ. 'ի մկրտիլն Յ̅ի. զի՞նչ նշանք եղեն։

Պ. Յորժամ ել Յ̅ 'ի ջրոյ անտի՝ վաղվաղակի բացան նմա երկինք. և հոգին սուրբ էջ Աղաւ̀նակերպ 'ի վերայ նորա։ Եւ հայր ձայնեաց 'ի վերուստ. դա է որդի իմ սիրելի ընդ որ հաճեցայ Մատ. գլ. 3. 16։ (դմա լուարուք։ Մարկ. 9. 6։)

Հ. Զի՞նչ նշանակէին սոյն իջումն հոգւոյն. և ձայնն հօր։

Պ. Սովիմբ յայտնեցաւ երեք անձնաւ̀որութի̅ սրբոյ երրորդութի̅՝ և միոյ Ած̅ութի̅։ որ է ձայնիւ և վկայութ̅ հօր. և ներկայութ̅ որդւոյ, և իջմամբ հոգւոյն սրբոյ։ վ̅ոյ և օրն այն կոչեցաւ օր յայտնութեան։

Հ. Յառաջ քան զայս՝ գոյի՞ն և այլ յայտնութի̅ք վասն երրորդութի̅։

Պ. Գոյին բազում յայտնութի̅ք. բայց նսեմք և խորհրդաբար։ քանզի ո՛չ էր տու̀եալ զայս լուսաւ̀որութի̅ յայտարարութի̅ այլոց մարգարէից։ վ̅ոյ և խորհրդաբար տեսանէին, ասէին, և գրէին։ ո՞ր-դոն. 'ի ստեղծման մարդոյ՝ գրեաց սրբազանն Մօսէս թէ՝ ասաց Ած̅. արասցուք մարդ ըստ պատկերի մերում։ Եւ թէ՝ ահա եղև Ադամ իբրև զմի 'ի մէնջ։ նա և 'ի կործանման աշտարակին, Եկա՛յք Իջցո՛ւք և խառնակեսցուք։ Եւ այլ ա̅մ սոյնպիսի յոքնակի ասութի̅ք Ա̅յ՝ նշանակէին զերորդութի̅ն 'ի միութի̅։

Իսկ սրբազանն Դաւիթ՝ առաւել յայտնի խօսեցաւ։ Ողորմութ՟ Տ՟ն, լի եղև երկիր. և բանիւ Տ՟ն երկինք հաստատեցան, և հոգւով բերանոյ նորա ա՟մ զօրութ՟իք նոցա։

Նմանապէս և սրբազանն Եսայի, լուաւ 'ի բերանոյ սերոբէից որք երգէին, սուրբ. սուրբ սուրբ Տ՟ր զօրութ՟եց։ Եւ այլ ուրեք գրեաց Տ՟ր՝ Տ՟ր առաքեաց զիս, և հոգի նորա։ Եւ այլ բազումք են 'ի սուրբ գիրս. բայց ո՛չ իսկապէս յայտնի որպէս է 'ի սուրբ Աւետարանին, զոր Ք՟ս կարի յայտնի քարոզեաց։

Հ. Վասն է՞ր ո՛չ ումեք 'ի մարգարէից լրապէս յայտնեցաւ սոյն խորհուրդ սրբոյ երորդութ՟ե. և կամ վասն է՞ր ոչ ո՛ք 'ի նոցունց կարաց յայտնի քարոզել կամ գրել։

Պ. Վասն այսորիկ ո՛չ կարացին մարգարէք իսկապէս վերծանել. և յայտնի քարոզել կամ գրել զխորհուրդ սրբոյ երրորդութ՟ե՝ և շնորհակոն օրինաց՝ և Յարութ՟ե մեռելոց, և պարգևաց յաւիտենականի երջանիկ կենաց. քանզի ո՛չ էին նոքա բան և իմաստութ՟ի և զօրութ՟ի հօր Ա՟յ. վ՟ոյ և ո՛չ կարէին ունիլ ձայն զօրեղ. որով լսելի առնիցէին մարդկանց զբանս իւրեանց։

Եւ զայս ուսուցանէ մեզ սուրբ գիրն, Ել. 4. 10։ որ Պարագլուխն մարգարէից սրբազանն Մօսէս, հնգիցս աղաչեաց զԱ՟ծ 'ի քորեբ. զայլ ոք զօրաւոր քան զինքն առաքել 'ի փրկութ՟ի իէլացւոց. զի ես նրբաձայն եմ ասէր. այսինքն տկար եմ. և չունիմ զօրեղ ձայն լսելի առնելոյ մարդկանց զ' 'ի յաւիտենից ծածկեալ խորհուրդն, և զբանն կենաց։ Քանզի տակաւին ո՛չ գիտէր գոնէ

և զանունն Այ̄. և ո՛չ ևս գիտէր թէ զի՞նչ ա-
սիցէ ի՞էլացւոց, կամ փարաւ՛օնի. վ̄ոյ և հարցանէր
թէ զի՞նչ անուն տացից վասն քո. և կամ զի՞նչ
ասացից նոցա։

Եւ իբրև ուսեալ յԱյ̄ հարկադրեցաւ 'ի գնալ՝
զօրութ̄ի հրաշից խնդրեաց. զի գէթ նոքօք կարի-
ցէ հաւ՛անեցուցանել զամբոխն իւր. և ընդդիմա-
նալ խստութ̄ե փարաւ՛օնի։ Եւ մինչ ընկալաւ յԱյ̄
և զզօրութ̄իս հրաշից՝ ընկալաւ և զԱհարօն օգ-
նական. (և ո՛չ իբրև Քս̄ի միայնակ էհար հնձան.
Ես. գլ. 63. 5։) և նորին նպաստութ̄ի իբրև
եհան զի՞էլացիս յեգիպտոսէ. միայն զօրէնն ըստ-
ո՛էրական. և զաստիս բարիսն ժամանակաւ՛որ կա-
րաց քարոզել՝ և խոստանալ մէն մի ամբոխի, և
ո՛չ ընդ հանուր ազգի. և այնպիսի երկրաւ՛որ բա-
րիք խոստացաւ, որք հասարակք էին ամենեցուն։)
իսկ վասն շնորհաց ճշմարտութ̄ե. և երկնային յա-
ւ՛իտենականի կենաց զքարոզութ̄ի, և զխոստումն՝
յանձնեաց մեծի մարգարէին. այսինքն Մեսիային
Յս̄ի, թէ՝ մարգարէ յարուսցէ ձեզ Տր̄ Ած̄ ձեր
յեղբարց ձերոց՝ իբրև զիս (օրէնսդիր.) նմա լո-
ւ՛իջիք։ Գործ. 3. 22։ որ զի թէև մարդ է ի-
բրև զիս, է նաև բան՝ իմաստութ̄ի՝ և զօրութ̄ի
հօր Այ̄. ունի ևս զօրեղ ձայն՝ և իշխանութ̄ի
պարգևելոյ զկեանս յաւ՛իտենականս. և հեղլոյ
զհոգին սուրբ առ ընդհանուր մարմին եղեալ
մարդիկս որք լսեն զձայն նորա և հաւ՛ատան նմա։
Արդ՝ եթէ Պարագլուխն մարգարէից խոստովան
եղև նրբաձայն՝ տկար, և անտեղեակ լինիլն իւր
Ած̄ային յատուկ Անուան. և ծածկեալ խորհր-
դոց. և ո՛չ ևս գիտել թէ զի՞նչ ասիցէ կամ

քարոզիցէ։ Ապա միւս մարգարէք. որպէս կարէին ունիլ զօրեղ ձայն, և լրապէս գիտութիւն. որ միայն տեսլեամբ և երազօք մարգարէանային։ Թոմ. 12. 6։ Եւ եթէ ձայն բարբառոյ ասացաւ վասն սրբոյն Յօհաննու մկրտչի. բայց ձայն նորտ, էր ձայն հնոյ օրինաց անապատի, և ոչ երկնային օրինաց. և էր միայն 'ի պատրաստել զճանապարհս առաջի Տն։ Եւ եթէ հրամայեցաւ Եսայեայ ևս բարձրաձայն իբրև փողոյ գոչել անխնայ զօրութիւն. բայց այս ևս վասն յայտնելոյ ամբոխին զանօրէնութիւնս իւրեանց էր. և ոչ թէ իսկապէս յայտնութիւն կենացն յաւիտենականի. կամ վս փրկութիւն ընդ հանուր մարդկային բնութիւն. որ էր գործ մէն մի միայն Յսի Քսի. և նմա միայնոյ էր վերապահեցեալ։ որպէս և յայտնի տեսանեմք. որ մինչ յայտնեաց Ած սրբոյ մարգարէին Դանիէլի. թէ դայ ժամանակ՝ որ բազումք ննջեցելոց 'ի հող երկրի յարիցեն. ոմանք 'ի կեանս, և ոմանք 'ի նախատինս։ բայց 'ի նմին ժամու ևս հրամայեաց։ Եւ դու դանիէլ. փակեա՛ զբանսդ, և կնքեա՛ զգիրդ մինչև 'ի ժամանակս վախճանի. մինչև ուսցին բազումք. և բազմասցի գիտութիւն։ այսինքն մինչև եկեսցէ իսկական ուսուցիչն Յս, և ուսուսցէ. զի նմա միայնոյ նախապահեցեալ է կատարեալ բացայայտութիւն Ածային խօրհրդոց յիւրում ժամանակի. վս և վճռելով հրամայեաց նոյն փրկիչն. թէ մի՛ զոք կոչէք ձեզ վարդապետ. զի մի է ուսուցիչն ձեր Քս։

Որոյ սակս և հայրն յաւիտենական, ոչ երբէք յաղագս այլոյ ումեք մարգարէի ձայնեաց յերկնից կամ պատուիրեաց ազգի մարդկան. թէ՝ դմա լո-

ճարուք։ Այլ յերկիցս. այսինքն 'ի Յորդանան, և 'ի Թաբօր լերին. յայտնեաց ընդ հանուր ազգի մարդկան վասն Յն̄ի Քն̄ի, թէ դաէ որդի իմ սիրելի, դմա լոհարուք։ Քանզի մի միայն Յն̄ Քն̄ ունէր կեցուցիչ զօրեղ ձայն լսելի առնելոյ։ Զի է հովիւ քաջ. որ ճանաչէ զոչխարս իւր, և կոչէ զնոսա յանուանէ։ Եւ ոչ լոհեալ զձայն նորա, ընթանան զհետ նորա. օտարի զհետ ոչ երթան զի ոչ ճանաչեն զձայն օտարաց. այլ ձայնի Հովուհի իւրեանց լոհեալ՝ լինին մի հօտ. և մի հովիւ։ որոյ ձայն կարօղ էր՝ և է յարուցանել զմեռեալս և կենդանի առնել. որպէս և ասաց։ Եւ որք 'ի գերեզմանս կայցեն՝ լոհիցեն ձայնի որդւոյն Այ՝ և եկեսցեն արտաքս, և որք լոհիցենն կեցցեն։ Որոյ ապացոյց եթող մեզ՝ մի միայն ձայնիւ և եթ կոչմամբ յարուցանելովն զչորեքօրեայն ղազար զմեռեալն՝ 'ի գերեզմանէ։

Եւ սոյն մեծաձայն Ածորդին որ զոչխարս իւր կոչելոց էր 'ի փարախ յաւիտենականի կենաց. 'ի կէտ մահու իւրոյ 'ի խաչին, 'ի ձայն բարձր ազաղակեալ աւանդեաց զհոգին 'ի ձեռս հօր իւրոյ. հրաւիրելով առ հասարակ զոչխարս իւր՝ առ ինքն զի ուր ինքն է. և նոքա ընդ նմա առ հայր եղիցին. ըստ խոստմանն՝ թէ յորժամ բարձրացայց յերկրէ՝ զամենեսին ձգեցից առիս. այսինքն զնոսին որք լսեն զկենսատու ձայն իւր։ զի ոչ է նըրբաձայն որպէս զմօսէս և զայլ մարգարէս։ Այլ Տր̄ ձայնի, և գիտակ խորհրդոց հօր իւրոյ. և համ իշխան ա̄մ բարութե̄ց նորին. և ա̄մ զոր ինչ ունի հայր՝ է և նորա։ Ուստի և գայր 'ի տաճարն՝

աղաղակէր և ասէր. եթէ ոք ծարաւի և փափաքօղ է հոգւոյն սրբոյ՝ եկեսցէ առիս և արբցէ 'ի ջրոյն կենաց. որ է ճշմարիտ ծանօթութիւն ամենասուրբ Երորդութեան, և միոյ Աճութեան. զոր ոչ ոք ետես երբէք. և ոչ ևս կարաց ոք յայտնապէս ճառել, բաց 'ի միածին որդւոյն որ էր 'ի ծոց հօր. նա պատմեաց. այսինքն յայտնեաց մեզ. զի նմա միայնոյ էր յատկացեալ լուսաւորութիւն սոյնոյ ամենամեծ խորհրդոյ. և ոչ այլոյ ումեք մարգարէի։

ՊՐԱԿ. Զ։

Յաղագս երից փորձութեան սատանայի, և յաղթութեան Քս̄ի։

Հ. Յետ մկրտութեան իւրոյ՝ զի՞նչ արար Քս̄։

Պ. Զկնի մկրտութեան, վարեցաւ. այսինքն տարեալ եղև 'ի հոգւոյն յանապատ. ուր պահեալ քառասուն տիւ, և քառասուն գիշեր, ապայ քաղցեաւ։ Եւ փորձեցաւ 'ի սատանայէ երիւք։ Մատ. 4. 3։ Նախ՝ ցուցմամբ քարանց ասելով՝ եթէ որդի ես Այ̄. (զի լուեալ էր սատանայ զձայնն հօր, թէ դա է որդի իմ սիրելի։) ասա՛ քարանցս այսոցիկ, զի հաց լինիցին։ Որոյ յաղթեաց Յս̄ պատասխանելով. թէ ոչ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ՝ ա̄մ բանիւ որ ելանէ 'ի բերանոյ Այ̄։

Երկրորդ՝ կացոյց զՔս̄ 'ի վերայ բարձր աշտարակի տաճարին, և ասէ. եթէ որդի ես Այ̄, ա՛րկ զքեզ աստի 'ի վայր. զի գրեալ է վասն քո։ Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է, զքեզ 'ի վե-

րայ ձեռաց իւրեանց բառնալ զի մի երբէք հարցես զքարի զոտն քո։ Պատասխանեաց Յ՚. գրեալ է. մի փորձեսցես զՏ՚ր Ած՚ քոյ։

Դարձեալ էհան զնա 'ի լեառն մի յոյժ բարձր. և ցուցեալ նմա զա՚մ փառս, թագաւորութիւն, վայելչութիւն և զփարթամութիւն Ծի, և ասէ. տեսանես զայս ա՚մ որ ինձ տուեալ է. և ես ում կամիմ տամ։ Արդ՝ եթէ դու անկեալ երկիրպագանիցես ինձ, քեզ տաց զայս ա՚մ։ Պատասխանեաց Յ՚ և ասէ. գրեալ է Տ՚ն Ա՚յ քում երկիրպագցես. և զնա միայն պաշտեսցես։ Ապա սաստեալ նմա՝ ասաց ե՛րթ յետս իմ սա՛տանայ։ Յայնժամ 'ի բաց եկաց 'ի նմանէ սատանայ առ ժամանակ մի. և հրեշտակք մատեան, և պաշտէին զնա։ Ահաւասիկ մեծ դաստիարակութի՚ զոր եթող Քս՚. իսկապէս աշակերտելոց իւրոց։

ՊՐԱԿ. Է։

Յաղագս ընտրութե՚ Առաքելոց՝ և հրաշից և քարոզութեան Յ՚ի, և վասն անհաւատութե՚ հրեից։

Հ. Յետ փորձուե՚ց սատանայի՝ և յաղթուե՚ Քս՚ի, զի՞նչ արար Քս՚։

Պ. Եկն Յ՚ յանապատէ 'ի շէնս, և ընտրեաց զերկոտասան Առաքեալս. որոց անուանք են այսոքիկ։ Նախ՝ Սիմօն անուանեալն Կեփաս. կամ Պետրոս։ և Անդրէաս եղբայր նորա։ Յակոբոս զէբէդեայ՝ և Յօհաննէս եղբայր նորա. որ եղև Աւետարանիչ։ փիլիպպոս։ և Բարդուղիմէոս։ Թօմաս և Մատթէոս մաքսաւոր Աւետարանիչ։ Յակո-

քոս ալիեայ։ և Ղեբէոս. որ անուանեցաւ Թա-
դէոս։ Սիմոն կանանացի։ և Յուդայ Իսկարիովտացի
որ մատնեացն գնա ։

Հ. Բայց ՚ի սորունչ յերկոտասան Առաքելոյ, ունիր
և զայլ աշակերտս ։

Պ. Այո. ունիր ՃԻ. և զայլ եօթանասունն և երկու
աշակերտս ։

Հ. Զօրութի՞ւնչ՝ ՚ի նոցա ՃԻ։

Պ. Զկնի ուսուցանելոյ զնոսա. ետ նոցա իշխանու-
թիւն հանելոյ զդեւս՝ կոխելոյ զօձս և զկարիճս. և
եդմամբ ձեռաց բժշկելոյ զհիւանդս. և զամ ախ-
տաժետս ։ նաև քարոզելոյ և ուսուցանելոյ՝ թէ
մերձեալ է Արքայութի՞ւն Այ ։

Հ. Պատուիրե՞ր ինչևս ետ նոցա ընդ զօրութեցս, երբ
դաշանոյ և պայմանիւ։

Պ. Պատուիրեր ետ նոցա ՃԻ. այսինքն Պայմանս արար
ո՛չ ստանալ զոսկի և արծաթ. և մի՛ ևս ունիլ
պղինձ ՚ի գօտիս. մի՛ ցուպ. այսինքն գաճազան ՚ի
ձեռին, և ո՛չ կօշիկ յոտս. և մի՛ մախաղ հայի. և
մի՛ երկուս հանդերձս ունիլ ։ Զ՚որս և առաքեաց
երկուս երկուս, պատուիրելով. թէ յոր տուն
մտանիցէք անդ ագջի՛ք. և մի՛ տանէ ՚ի տուն վո-
խիջի՛ք. և նախ ասացի՛ք ողջոյն տանս այսմիկ.
ուր եթէ իցեն արժանիք՝ ողջոյնն ձեր հանգիցէ
՚ի վերայ նոցա. ապա թէ ո՛չ՝ առ ձեզ դարձցի ։
Նա զոր ինչ առաջի դնիցեն ձեր՝ զայն կերիջի՛ք ։
Նա զընդոչն զոր տայք նոցա, որպէս ձրի առիք
յինէն. նոյնպէս և ձրի տացի՛ք։ Նա եթէ ո՛չ ըն-
ունիցեն զձեզ. յորժամ ելանիցէք ՚ի տանէ. կամ
՚ի քաղաքէ յայնմանէ. թօթափեացի՛ք զփոշի ոտից
ձերոց. (զի մի և փոշի նոցա. այսինքն մեղք և

անօրէնութիւնք նոցա գտանիցի ՚ի ձեզ՝ ընչիւք նո-
ցին) բայց ասասջի՛ք լեր մերձենալ ե Աբքայութիւն
ԱՀ։ Ու նոցա զգուշութիւն պահելով զայս պատ-
ուիրէր և պայման Տ՚ն իւրեանց, առնէին բազում
հրաշս, հանէին զդևս, բժշկէին զհիւանդս, և զնո՛
ախտաժեռս։

Հ. Ցե՞ր ինքն ևս առնիր հրաշս։

Պ. Առնէր և Ցե՞ր հրաշս յոյժ բազումս։ Նախ զջուրն
՚ի գինի փոխեալ խնդրանօք մօրն ՚ի Հարսանիսն
՚ի կանայ գալիլեացւոյ։ Երկրորդ զորդի Աբքայազ
նին բանիւ և եթ կենդանացոյց անդ ՚ի բացուստ
՚ի մեռելութենէ։ Ապա սաստէր դիմայ՝ և ելանէին։
բանիւ միայն բժշկէր զհիւանդս։ Հրամայէր ան-
դամալուծիկ և կաղաց՝ և գնային։ ոգի ե և ան-
դամալոյծն երեանելութեամբ։ սրբէր զբորոտս։
լուսաւորէր զկոյրս, նաև զ՚իմծրէ կոյր ծնեալն։
Համբոյց տայր խօսիլ՝ և խլաց լսել։ յարուցանէր
զմեռեալս, նաև զչորեքօրեայ մեռեալն զ՚ի
ձայնիւ և եթ կոչմամբ ՚ի գերեզմանէ։ Երկիցս
անգամ երկու հնգամբք՝ և հինգ հայիւ։ զհինգ
հազարս և զչորս հազարս կերակրեալ յայեցոյց։
և առաքեալք ՚ի յաՀելեալ նշխարաց բառնային
մերթ երկոտասան։ և մերթ եօթն զամբիւղս լի
հայիւք։ Գնայր յ՚օդս, և ՚ի վերայ ջուրց ծովու
ոտիւք՝ իբրև ՚ի հաստատուն ցամաքի։ Սաստէր
ալեաց ծովու՝ և հողմոյ, և հնազանդէին նմա։
Թողոյր զմեղս։ և միշտ ուսուցանէր զձայն ԱՀ
սորհրդոյ՝ և յաՀիտենականն երջանիկ կենաց։
Ու զայլ բազումս։ որպէս գրեցեալք են ՚ի սուրբ
ԱՀԵտարանին։

Հ. Արդ Ցե՞ր և զայլ յատուկ նշանս։

Պ. Եւ Յս 'ի լեառն (Թաբօր) ընդ երից առաքելոց. այոինքն Պետրոսի, Յակոբայ և Յօհաննու զեբեդեանց, և Պայծառակերպեցաւ առաջի նց. Հանդերձք նորա եղեն սպիտակք իբրև զձիւն. և երեսք նորա իբրև զԱրեգակն։ Եւ երևեցան Մօսէս՝ և Եղիա. որք խօսէին ընդ նմա վասն չարչարանաց՝ խաչի՝ և մահու։ որ լինելոց էր նմա յեէմ 'ի հրէից։ Եւ առաքեալք մինչ Թմրեալ էին՝ հովանի եղև նոցա ամպ լուսաւոր. և ձայն եկն յամպոյն. Դա է որդի իմ սիրելի. դմա լուարուք։

Հ. Զայս խորհուրդ չարչարանաց՝ խաչի՝ մահու և յարութեան. յայտնեաց ումեք Յս նախքան զլինիլն նոցա։

Պ. Բազմիցս անգամ ասաց Աշակերտաց իւրոց՝ նաև ժողովրդեանն մինչ ուսուցանէր. բայց նոքա ոչ իմանային. և յորժամ Յարեաւ 'ի մեռելոց. յայնժամ յիշեցին. և 'ի միտ առին։

Հ. Զմիւս զայն ամ հրաշս՝ 'ի տեսս ամենից հրէից առնէր, թէ 'ի ծածուկ։

Պ. Զամ հրաշս՝ և զօրութիս յայտնի 'ի տես ամենեցուն առնէր Յս. և լու 'ի լու քարոզէր. որպէս և ասաց քահանայապետին մինչ մատնեցաւ նոցա. թէ ես 'ի ծածուկ ինչ ոչ խօսեցայ. կամ արարի. այլ յայտնի քարոզէի 'ի տաճարին զի հարցանես զիս և։ Յօհան. 18. 20 21։

Հ. Զայսքան հրաշս զոր տեսանէին, և զքարոզութիս զորս լսէին. ապա զիարդ ոչ հաւատացեալ նմա. այնքան չարչարանօք՝ և անարգանօք մեռուցին։

Պ. Քանզի պարտ էր Քսի չարչարիլ և մտանել 'ի փառս իւր. ասաց ինքն յետ յարութեան իւրոյ՝ մինչ ուղեկից եղև նոցա որք երթային յեմմաւուս. զի

հեղմամբ արեան իւրոյ՝ և մահոճամբն, փրկեալ զմեզ շնորհեսցէ կեանս յաճիտենականս. որպէս և գրեալ էին եսայի, դանիէլ. և ամ Մարգարէքն ի՞էլի։ և Ծննդ. 3. 15։

Հ. Եթէ զայս ամ գրեալ էին Մարգարէք նոցա. ընդէ՞ր ուրեմն ո՛չ հաճատացին գոնէ մարգարէից իւրեանց։

Պ. Վասն զի թանձրացեալ էին սիրտք նոցա. որք տեսանելով տեսանէին. և ո՛չ ճանաչէին. լսելով լսէին, և ո՛չ իմանային. ըստ Մարգարէութեան Եսայեայ. զի կուրացեալ էին 'ի լուսաճորութ՞է երկնային հոգևոր շնորհաց՝ զոր Մեսիայիւ ընկալնլոց էին. որոց նախնի ռաբբիք վերծանեալ գոլով 'ի գրեանց Մարգարէից, անհանդուրժ սպասէին հոգևոր շնորհաց։ իսկ 'ի ժամանակի փրկչին եղեալ (որպէս և այժմոյս) մարմին դարձեալ հրէայք. ո՛չ վասն այլոյ իրիք սպասէին (և սպասեն) մեսիայի, բայց եթէ՝ վասն մարմնաճոր փառաց՝ շքեղազարդութ՞եց, և կայսերութ՞ե. առ 'ի զերծանիլ 'ի հպատակութ՞է հռամայեցւոց, որք տիրէին ինքեանց։ Ուստի և տեսանելով զՃշմարիտ մեսիայն աղքատ և առանց զօրականի, և հրաժարեալ 'ի մարմնային թագաճորութ՞է և փառաց՝ միայն զերկնային և զհոգևորն շնորհել խոստանայր. խաբեբայ և մոլորեցուցիչ կոչէին. վ՞ոյ և մատնեալ Պիղատոսի մեռուցին անարգանօք. զի լցցին գիրք մարգարէից։

*

ՊՐԱԿ. Ը։

Յաղագս մատնութեան և յարչաւանաց Քրիստոսի։

Ա. Որ մատնեաց զՅս և հրով կերպիւ մատնեցաւ և զինչ յարչաւանս կրեաց ։

Պ. Մինն յերկոտասանից՝ առաքելոց՝ անուանեալն Յուդա Իսկարիոտացի. գոլով ագահ և արծաթասէր. (որոյ վասն և Քս նախասէն ասաց առաքելոց իւրոց՝ Թէ դուք սուրբք էք, բայց ոչ ամենեքին. այլ մինդ ի ձէնջ սատանայ է ։ Եւ ասէր զՅուդայէ Իսկարիոտացւոյ. զի նա իսկ մատնելոց էր զնա։ Յն. 6. 71։) Սոյն Յուդայ գիտաց զնոր հուրդս քահանայապետին հրէից. որք կամէին մեկնսի յամբոխէ նենգիւ կալուլ զՅս. և մատնեալ Պիղատոսի մեռուցանել զնա. զի երկնչէին յամբոխէն յայտնի մսել ի նա ձեռս։ Գնացեալ Յուդայ առ քահանայապետս ասաց՝ Ինձ զինչ կամիք տալ. զի մատնեցից զնա ձեզ ։ Եւ նոցա խընդացեալ՝ խոստացան երեսուն արծաթի դահեկանս ըստ մարգարէութեն Զաքարեայ ։ Եւ նորա առեալ զարծաթն՝ խնդրէր դիպուկ ժամ, զի մատնեսցէ զնա նոցա ։

Ա. Ո՞րքա մատնեաց Յուդայ զվարդապետն իւր ։

Պ. Յառաջնում երեկոյի Պասեքին, յորում զենուին զգառն զատկական. որ էր չորեքտասան օր լուսնոյ նիսան ամսոյ. որ ի նմին ամի ի հինգշաբաթի աւուր պատահեցաւ. որ ի ուրբաթի աւուր (յորում Ադամ ստեղծաւ.) առաջնի օր էր զատկին. որ զայս պասեքս նկատելով Յս ասէր, չէ ։ Հասեալ ժամ իմ։ Եւ երբ եհաս նկատեցեալ խորհրդաւորն ուրբաթին, ասաց՝ Թէ հասեալ ։ ժամ. զի նորոգ

արարչութ̅ն՝ փառաւորեսցի որդի մարդոյ։ Ուս-
տի և 'ի նմին աւուր ե̅ շաբաթի՝ հրամայեաց Աշ-
կերտաց՝ պատրաստել զզատիկն։ Եւ նոքա պատ-
րաստեցին 'ի միում վերնատան յեէմ քաղաքի.
ուր բազմեցաւ Յ̅ս յայնմ երեկոյի 'ի սեղան աշա-
կերտօք. ընդ որոց էր և յուդայ մատնիչ. զի
լցցի գիրն՝ թէ որ ուտէր ընդիս հաց, արար ինձ
զխաբէյութի̅։ Եւ մինչ ուտէին, յարեաւ Յ̅ս 'ի
սեղանոյն՝ և հանեալ զպատմուճանն սփածաւ ղեն
ջակ. այսինքն սփածանելի. և առեալ ջուր լուաց
'ի կոնքի. այսինքն 'ի տաշտի զոտս աշակերտացն.
և կրկին առեալ զհանդերձսն բազմեցաւ։

Հ. Գիտէ՞ր Յ̅ս, որ յուդայ մատնելոց էր զինքն
յայնմ գիշերի։

Պ. Այո. բարւոք գիտէր. որ և առ 'ի կոչել զնա 'ի
զղջումն՝ ասաց նոցա մինչ ուտէին. թէ մինն 'ի
ձէնջ յայսմ գիշերի մատնելոցէ զիս 'ի մահ։ Եւ
աշակերտքն խռովեցան, և հարցանէին ցմիմեանս
թէ ո՞վ իցէ. և ասէին Տ̅ր՝ մի թէ ես իցեմ։ Եւ
Յ̅ս ասէ որ տարաւ զձեռն իւր ընդիս 'ի սկաւա-
ռակդ. այսինքն յամանն կերակրոյ՝ նա է։ Յայն-
ժամ յուդայ ևս էհարց. մի թէ ե՞ս իցեմ։ Եւ
Յ̅ս ասէ դու ասացեր։ Իսկ Պետրոս ակնարկեաց
Յօհաննու սիրելւոյն Յ̅ս̅ի. զի հարցանիցէ։ Եւ
նորա անկեալ զլանջօքն Յ̅ս̅ի՝ եհարց թէ ո՞վ է։
Եւ Յ̅ս նշան ետ. թէ որում ես թացեալ տա-
ցից զպատառն, նա է. և թացեալ զպատառն ետ
յուդայի։ Եւ իբրև այսու ևս ո՛չ զղջացաւ յու-
դայ. ասէ ցնա Յ̅ս. Արդ՝ արի՛ և արա՛ վաղվաղա-
կի զոր ինչ առնելոց ես. և աշակերտքն ո՛չ ինչ

իմացան յայսմ բանէ. և յուդայ առեալ զպատուական եղ արտաքս. և էր գիշեր։

Ի. Խօսեցաւ Ցն և զայլ բանս ընդ առաքելոցն։

Պ. Յաղագս բանս խօսեցաւ ընդ նոսա։ Նաև առեալ զհայն օրհնեաց եբէկ, և ետ նոցա ասելով՝ առէք կերայք այս է մարմին իմ։ Նոյնպէս առեալ և զբաժակն՝ գոհացաւ ետ նոցա և ասէ. արբէք ի սմանէ ամենեքին. այս է արիւն իմ, նորոյ ուխտի. որ վասն ձեր և վասն բազմաց հեղանի ի թողութիւն մեղաց. զայս արարէք առ իմոյ յիշատակի։ Յր ասայ Ծնողացդ նոցա, թէ յայսմ գիշերի դուք ամենեքին թողուց էք զիս և փախչէիք. ըստ մարգարէութեանն Զաքար. թէ ի հարիլ հովուին. ցրուեսցին ոչխարք հօտին։ Յր ասէ ցՊետրոս. սիմոն, սիմոն. ահա սատանայ. (յուդայ.) կամեցաւ խարբաղել զձեզ իբրև զցորեան. բայց ես (ներելով ուրացութիւնդ քոյ. ոչ ուրացեալ և ես զքեզ.) աղաչեցի վասն քո. զի մի պակասեսցին հաւատք քո. և դու դարձցես երբեմն և հաստատեսցես (զգայթագղեալ) զեղբարս քոյ։ Իսկ Պետրոս ասէ. Տէր եղէծ ամենեքեան ի խախիցեն, ես պատրաստ եմ ընդ քեզ մինչ ի մահ։ Յր Ցն ասէ ցնա. Պետրէ (այդպէս ասես) բայց չև ինչ հաւուր երկիցս խօսեալ՝ երիցս ուրասցիս զիս։ Ցետ որոյ և զայլ բազում բանս խօսեցաւ ընդ նոսա, և խոստացաւ առաքել նոցա զՀոգին սուրբ. որպէս և զրեալ է ի սուրբ Աւետարանին Ցովհաննու։

Ապա եղեալ ի վերնատանէն՝ գնաց. աշակերտքն յայնկոյս ձորոյն կեդրոնի ի պարտէզն։ և

պատուիրեաց առաքելոցն. թէ արթուն կացէք, և աղօթս արարէք. զի մի անկանիցիք 'ի փորձութիւն։ Եւ ինքն մեկնեալ 'ի նոցունց եկաց յաղօթս առ Հայր. եթէ հնար է անցցէ բաժակս այս յինէն. բայց ո՛չ որպէս ես կամիմ, այլ քոյդ եղիցին կամք։ երիցս անգամ այսպէս աղօթեաց յորմէ քրտունք արեան՝ ոլոռն ոլոռն հոսէին։ Եւ հրեշտակ երկնից երևեալ զօրացուցանէր. այսինքն քաջալերէր յանձն առնուլ զչարչարանս և զմահ. զի փրկիցին մարդիկ։

Հ. Յուդայ մատնիչ ևս՝ ընդ նոսա էր. մինչ աղօթէր Յն։

Պ. Ո՛չ. զի յետ պատառոյն՝ իսկապէս տիրեալ նմա սատանայ, գնաց առ հրէայս՝ զի եկեսցեն զօրականօք ընդ ինքեան ըմբռնել զՅն. որոց և նշան տուեալ էր՝ թէ որում ես համբուրեցից, նա է. զնա կալարո՛ւք զդուշութ՝ն։ Եւ իբրև եկին սուսերօք և բրօք. ել ընդ յառաջ նոցա Յն, և ասէ. զո՞ խնդրէք. և նոքա ասեն, զՅն նազօրեցի։ Ասաց Յն թէ՝ ես եմ։ և նոքա յետս յետս չոքան և զարկան զգետնի։ Եւ Յն յարուցեալ զնոսա եհարց կրկին թէ զո՞ խնդրէք. և նոքա կրկնեցին թէ զՅն նազօրեցի. վերակրկնեաց Յն, ասացի թէ ես եմ։ Արդ եթէ զիս խնդրէք. թոյլ տո՛ւք դոցա երթալ (այսինքն թոյլ տուք առաքելոց երթալ զի լցցի բանն զոր ասաց առ Հայր. թէ զոր ետուր ցիս ո՛չ կորուսից 'ի նոցանէ. և ոչ զոք։ Յայնժամ մատեաւ յուդայ՝ և համբուրեալ ասաց՝ ողջ լե՛ր վարդապետ։ Եւ Յն ասէ. համբուրելով մատնես զիս ընկեր։ Եւ առժամայն հրէայք և զինուորք կալան զՅն և կապեցին։ Իսկ

Պետրոս ձգեալ զսուրն եհատ զաջոյ ականջ ծառայի քահանայապետի՝ որոյ անուն էր Մաղքոս։ Եւ Յն մատուցեալ յունկն Յառաջին՝ բժշկեաց զնա. և ասէ ցՊետրոս. դարձո զսուր քո ՚ի պատեան. զի որ սուր առցէ՝ սրով անկցէ. համարիք թէ ոչ կարեմ աղաչել զՀայր՝ և հասուցանիցէ ինձ զկոտասան գունդս հրեշտակաց. այլ զի լցին գիրք մարգարէից. որ այսպէս պարտ է լինել։ Յայնժամ Թողին զնա Աշակերտքն. և փախեան։

Եւ հրէայք տարան զՅն ՚ի տուն քահանայապետին աննային. Եւ Պետրոս երթայր ՚ի հեռուստ և եկեալ ետուտ ՚ի գաւիթ քահանայապետին տեսանել զկատարածն։ Եւ մինչ նստեալ մերձ առ խարոյկին ջերմնայր՝ քանզի ցուրտ էր. հարցաւ երիցս անգամի յաղախնոյն, և անդ յերդեցոյ. Թէ և դու ընդ Յն էիր. նա ուրացաւ երիցս. և առժամայն հաւ խօսեցաւ։ դարձաւ Տր և հայեցաւ ՚ի Պետրոս, և նա յիշեալ զբանն Յն զի զնջացաւ յոյժ. և ելեալ արտաքս էլայ դառնապէս։ Իսկ Յոհաննէս որ ծանօթ էր քահանայապետին. որ և նա մուծեալ էր զՊետրոս ՚ի գաւիթն, մնայ անդէն. և ՚ի խաչին ևս՝ էր առ ընթեր Յն։

Զի՞նչ արարին Յն ՚ի տան քահանայապետին Աննայի։

Ժողովեցան քահանայք՝ դպիրք, և փարիսեցիք. և ածեալ զՅն յատեան. Եկարց նմա քահանայապետի. վա՞ր վարդապետուն նո։ Եւ Յն ասէ Ես ՚ի տաճարի անդ յայտնի խօսեցայ ժողովրդեանն, և ՚ի ծածուկ ինչ ոչ խօսեցայ. զի՞ հարցանես զիս. հարց զայնոսիկ՝ որք լուան թէ զինչ ասացի. զի

գիտեն զոր ինչ ասացի ես : իսկ մի ոմն ՚ի սպասաւորացն էած ապտակ Յիսուսի՝ և ասէ . այդպէս պատասխանես քահանայապետիդ : Եւ Յիսուս ասէ ցնա . եթէ չար ինչ խօսեցայ՝ վկայեա վասն չարին. իսկ եթէ բարւոք, ընդէ՞ր հարկանես զիս : Եւ Աննա առաքեաց զՅիսուս կապեալ առ փեսայ իւր կայիափայ քահանայապետ տարւոյն զի դատեսցէ : ետ բազում սուտ վկայք զսուտ և այլ վկայութիւնս տային անհամաձայն իրերաց : Ասէ քահանայապետն ցՅիսուս ինչ պատասխանի. զինչ ասեն դոքա զքէն: Եւ Յիսուս լուռ կայր: Ասէ դարձեալ քահանայապետն , երդմնեցուցանեմ զքեզ յԱստուած կենդանի, եթէ դու ես Քրիստոս՝ ասա մեզ համարձակ: Եւ Յիսուս ասէ. եթէ ասացից ձեզ ոչ հաւատայք: Եւ եթէ հարցից ինչ ձեզ՝ չտայք ինձ պատասխանի, կամ արձակիցէք: բայց յայսմ հետէ նստցի որդի մարդոյ ընդ աջմէ զօրութեանն Աստուծոյ: Եւ ասեն ամենեքեան. ուրեմն դու ես որդին Աստուծոյ: Եւ նա ասէ ցնոսա . դուք ասէք Թէ ես եմ . բայց տեսանիցէք զորդի մարդոյ եկեալ ընդ ամպս երկնից : իսկոյն քահանայապետն պատառեաց զհանդերձս իւր՝ և ասէ, հայհոյեաց զի ևս պիտոյ են մեզ վկայք. ահա արդ լուայք զհայհոյութիւնն դորա զինչ հաճոյ է ձեզ : Եւ նոքա ասեն մահապարտ է : Յայնժամ Թքին յերեսս նորա . ծածկէին զդէմսն , և կռփելով հարկանէին ապտակս՝ և ասէին, մարգարէացի մեզ Քրիստոս, ո՞վ էր որ էհարն զքեզ . և զայլ բազում չարչարանս և անարգանս տարան , որք պահէին զնա . մինչ յ՚առաւօտն ուրբաթի. ահա այս էր զոր ասացյ սուրբ նահապետն Յակոբ վասն զարմին ղևեայ, ՚ի խորհուրդս

նոցա մի՞ մտցէ անձն իմ, և 'ի ժողովս նոցա ո՛չ հաճեսցին միտք իմ։ Ծննդ. 49. 6. և 7։

ՊՐԱԿ. Թ։

Յաղագս խաչելութեան Տն. և վասն եօթն բանից զոր խօսեցաւ 'ի խաչին։

Հ. Յուրբաթու առաւօտուն զի՞նչ արարին։

Պ. Վաղքաջ ընդ այդն՝ տարեալ մատնեցին կապեալ առ Պիղատոս 'ի սպանանել զնա։ Եւ յուդայ զղջացեալ տարաւ զարծաթն առ քահանայապետսն և ասէ՝ մեզայ. զի մատնեցի զարիւն արդար. և նոքա ասեն՝ մեզ չէ փոյթ դու գիտես. և նորա տարեալ զարծաթն ընկեց 'ի տաճարն. և չոքաւ խեղդեցաւ։ Եւ նոցա առեալ զարծաթն ասեն. ո՛չ է արժան զգինդ արեան ընդունել 'ի կորբանն. այսինքն 'ի զոհս. և գնեցին զագարակն բրտի վասն գերեզմանի օտարաց. ըստ մարգարէութեան Երեմեայ։

Հ. Ո՞վ էր այդ Պիղատոս, որոյ տարան զՅս։

Պ. Պիղատոս էր 'ի Պոնտոս քաղաքէ հռամայեցւոց. և դատաւոր կարգեցեալ էր յեէմ 'ի կայսերուէ հռօմայ. որոյ չարախօսէին հրէայք զՅսէ զի մեռուսցեն զնա։ ըստորում յինքեանց հրէից բարձեալ էր յայնժամ իշխանութիւն սպանանելոյ զոք. որ էր մեծագոյն և յայտնի նշան վասն ժամանակի գալստեան Մեսիայի։ որպէս գրեցաւ 'ի նախնթաց բանս մեր։

Հ. Պիղատոս զի՞նչ արար։

Պ. Լուեալ Պիղատոսի զչարախօսութիւն նոցա՝ որք ասէին. գտաք զսա՛ թիւրիչ ազգի մերոյ, որ ար-

գերդյը ՚ի տալոյ Հարկս կայսեր . և ասեր զանձնէ՝ եթէ Քրն իսկ Թագաւոր ՚էհլի ։ Նմուտ Պիղատոս յապարանն՝ և ասէ ցՅս. դո՞ւ ես Թագաւորն հրէից։ Պատասխանի ետ Յս. ՚ի քէ՞ն ասես զայդ՝ եթէ այլք ասացին քեզ զինէն ։ Ասէ Պիղատոս. մի Թէ և ես հրէայ իսեմ . ազգն քո. և քահանայապետքն մատնեցին զքեզ ինձ։ Պատասխանի ետ Յս. իմ Թագաւորութի՛ չէ յայսմ Ցէ։ եթէ յԱՏ աստի իցէր, սպասաւորքն իմ մարտն չէին արդեօք զի մի մատնեցայց հրէից. բայց Թագաւորութի՛ իմ չէ յայսմ Ցէ։ Ասէ ցՆա Պիղատոս. ուրեմն Թագաւոր ոմն ես դու։ Պատասխանի ետ Յս. դու ասես Թէ Թագաւոր իսեմ. բայց ես յայդ իսկ ծնեալ եմ . և ՚ի դոյն իսկ եկեալ եմ յԱՏ. զի վկայեցից վասն ճշմարտութե՛ն. ամ որ ՚ի ճշմարտութէ՛ է՝ լսէ բարբառոյ իմոյ ։ Ասէ ցՆա Պիղատոս . զի՞նչ է ճշմարտութի՛ ։ Զայս իբրև ասաց. եել առ հրեայս՝ և ասէ. չգտանեմ ես վնաս յառնս այսմիկ արժանի մահու ։ Պատասխանի ետուն հրէայք. եթէ չէր չարագործ, ոչ մատնէաք զնա քեզ ։ Ասէ Պիղատոս առէ՛ք զնա ձեզ . և ըստ ձերոյ օրինացդ դատեցէ՛ք։ Ասեն ցնա հրէայք. մե՛ք ոչ կարեմք սպանանել զոք։ (զի սպանցուք.) քանզի խռովէ դա զժողովուրդն. և ուսուցանէ ընդ ամենայն հրէաստան սկսեալ ՚ի գալիլեէ մինչև ցՆա։ իբրև լուաւ Պիղատոս Թէ ՚ի գալիլեէ յիշխանութե՛ հերովդի չորորդապետի՝ գլխատօղն սրբոյն Յոհաննու մկրտչի է . առաքեաց զնա առ հերովդէս ։ քանզի և նա յերեմ էր յաւուրսն այնոսիկ։ Նա հերովդէս որ լուեալ էր զՏրաշս Ցսի։

և համարէր Թէ Յովհաննէս մկրտիչ յարուցեալ ի մեռելոց առնի հրաշս. յոյժ ցանկայր տեսանել զնա։ Եւ տեսեալ զՅ հարցանէր զնա քաղցր բանիւք. և նա ոչ ինչ ետ նմա պատասխանի։ իսկ քահանայապետք և դպիրք պնդագոյնս չարախօսէին զնմանէ։ Արհամարհեաց զնա Հերովդէս հանդերձ զօրականօք. և այսպէս արարեալ էարկ ի վերայ նորա հանդերձս սպիտակս. և ետ տանիլ անդրէն առ Պիղատոս. վկայելով զանմեղութիւնն։ Եւ յայնմ օրէ հաշտեցան նոքա (հաշտառիթ մահուամբն Յ։) քանզի յառաջն թշնամիք էին իրեարց։

Յայնժամ Պիղատոս ասէ ցՀրեայս. ահա և Հերովդէս ոչինչ արժանի մահու եգիտ ի սմա. խրատեցից. այսինքն. դանեցից և արձակեցից զդա։ Եւ նոքա բազմաւթիւ հանդերձ աղաղակէին, բսլ զդա՝ և հան ի խաչ։ Ասէ Պիղատոս. զիո՞նչ չար արար. զի ի խաչ հանիցեմ։ Եւ նոքա առաւել և առաւել աղաղակէին. ի խաչ հան. ի խաչ հան։ կրկնեաց Պիղատոս. սովորութիւն է ձեզ արձակել զմի ոք կապեալ ի տօնի այսմիկ. արդ զի՞ կամիք զի արձակեցից. զՅ՞ կամ զբեղբեղեայ. Թէ զչեռս բարբբայ. որ էր գող և աճապարակ մարդասպան։ Եւ մինչդեռ նստէր յատենին. առաքեաց առ նա կին իւր՝ և ասէ. չկայ ինչ քո, և արդարոյդ այդմիկ. զի բազում անցք անցին ընդիս այսօր յանուրջս. այսինքն յերազի. վասն դորա։ Իսկ քահանայապետքն և ծերք հաճեցուցեալ զամբոխն՝ խնդրէին զբարաբբայն։ Ասէ ցնոսա Պիղատոս, իսկ զի՞ զարարից զՅ՞ անուանեալն Քր. ասին ամենե-

քեան խաչեսցի։ Եւ նա ասէ. զի՞նչ չար արար։ Եւ նոքա առաւել ևս աղաղակէին թէ խաչեսցի։ Եւ տեսեալ Պիղատոսի՝ թէ ոչինչ օգտէ. այլ առաւել խռովութի՞ լինի. առեալ ջուր լուաց ըզ ձեռս առաջի ժողովրդեանն, և ասէ. քաւեալ եմ ես յարենէ Արդարոյդ այդմիկ։ Պատասխանի ետ ամ ժողովուրդն, արիւն դորա 'ի վերայ մեր. և 'ի վերայ որդւոց մերոց եղիցի։ (տեսէք թէ ո՞ր-քան աշխատանս կրեցին հրէայք 'ի մեռուցանել անիրաւաբար զԱրդարն Յ՚. զի փրկիցի անօրէն մեղաւոր բարաբբայն։ Ահաւասիկ կատարումն բա-նի փրկչին. ո՛չ եկի 'ի փրկել զԱարդարս՝ այլ զմեղաւորս։ և տալ զանձն իմ փրկանս փոխանակ բազմաց։ Մատ. 20. 28։)

Եւ զի Պիղատոս կամէր արձակել զՅ՚. հրա-մայեաց գան հարկանել։ Եւ զինուորքն իբրև գա-նեցին. ագուցին նմա քղամիդ կարմիր. իբր թէ թագաւորական ծիրանի վերարկու. և Պսակ բո-լորեալ 'ի փշոց. փոխանակ թագի եդին 'ի գլուխ նորա. ('ի լրումն մարգարէութե՞ Ես. 5. 4. թէ փոխանակ խաղողոյ՝ բերին ինձ փուշ մշակքն այգ-ւոյ իմոյ։) Եւ նստուցեալ յաթոռ ետուն զեղեգն 'ի ձեռս նորա իբր արքայական գայիսոնի. որ է գաւազան իշխանութե՞. Եւ ինքեանք կատակելով անկանէին 'ի ծունկս առաջի նորա. թքանէին յերեսս. և առեալ զեղեգն ծեծէին զփշապատեալ գլուխն, և ասէին. ողջլե՛ր թագաւոր հրէից։

Եւ յետ այսքանեաց գանից և չարչարանաց՝ հանին զնա արտաքս յապարանէն։ (քանզի հրէայք ո՛չ էին մտեալ յապարանն զի մի պղծեսցեն զզա-տիկն, ոչինչ համարելով զանմեղ սպանումն Մե-

սիայի քարերաւ փրկչի իւրեանց. ոչ մեծի կուրու-
թեան. արդարև ոչ դիտէին զի՛նչ գործէին։ Իւ
Պիղատոս յուցեալ նոցա զՅ̄ն այնու աբիւնաներկ
կերպարանօք. զի գուցէ մեղմասցին քարայեալ
սիրտք նոցա, ասէ. ահա այրդ ձեր ց՚ձեզ։ Իորև
տեսին քահանայապետք և հրէայք. զաղաղակ բար
ձին, ՚ի խաչ հան, ՚ի խաչ հան զդա։ Իւ Պիղա-
տոս ասէ. առէք ՚ի ձեզ. և ձեղեն հանէք ՚ի խաչ,
զի ես ՚ի դմա չեաս ինչ ոչ գտանեմ։ Պատաս-
խանի ետուն. մեք ոչ կարեմք սպանանել զոք.
քայց օրէնս ունիմք. և ըստ օրինաց մերոց պարտ է
մեռանիլ. զի զանձն իւր որդի ԱՅ արար։ Իորև
զայս լուաւ Պիղատոս. առաւել և երկեաւ։ Իւ
դարձեալ անդրէն յապարանսն ասէ ց՚Ցն. ուստի
ես դու։ Իւ Ցն չտայն պատասխանի ինչ. ասէ.
ընդիս ոչ խօսիս. ոչ գիտես եթէ իշխանութիւն
ունիմ հանել զքեզ ՚ի խաչ. և իշխանութիւն ու-
նիմ արձակել զքեզ։ Պատասխանի ետ Ցն, ոչ
ունէիր դու իշխանութիւն ՚ի վերայ իմ, եթէ ոչ էր
տուեալ քեզ ՚ի վերուստ. վասն այսորիկ որ մատ-
նեացն զիս քեզ. նմա մեծ մեղք են։ Իւ յայնմ-
հետէ Պիղատոս խնդրէր արձակել զնա։ և հրէ-
այքն աղաղակէին. եթէ զդա արձակես՝ չես բա-
րեկամ կայսեր. ամ՚ ոք որ թագաւոր կոչէ զանձն
իւր՝ հակառակ է կայսեր։ ՚ի լսել Պիղատոսի զը-
բանս սոյն. առեալ զՅն արտաքս, նստաւ ՚ի վերայ
քարայատակ բեմին, և ասէ. Ահա թագաւորդ
ձեր ց՚ձեզ։ Իւ նոքա աղաղակէին, բարձ ՚ի մէնջ.
և հան զդա ՚ի խաչ։ Ասէ Պիղատոս. ես զթա-
գաւորդ ձեր ՚ի խաչ հանիցեմ։ Պատասխանի ե-

տուն քահանայապետքն, չի՛ մեր Թագաւոր. քաց ՚ի կայսերէ։

Ցայնժամ Պիղատոս կամելով հաճել զմիտս ամբոխին, արձակեաւ նոցա զբարաբբայ. և զՑն եւ ՚ի ձեռս նոցա զի ՚ի խաչ ելանիցէ։ Իսկզն զի-նուորքն հանեալ զքղամիդն յանձնէ Ցն. զգեցուցին նմա զիւր հանդերձն, և քարձեալ զխաչն ւիայսն ՚ի ուս նորա. հանին զնա արտաքս ՚ի քաղաքէն. Եւ զի ծանր էր խաչն՝ կալան պահակ զոմն սիմոն կիւրենացի՝ և բարձան ՚ի ուս նորա։ Եւ քազմութիւնք հրեից ալանդ և կանանց երթային զհետ նորա. յորոց կանանց քաղումք լային և կոծէին զնուրծս իւրեանց։ դարձաւ Ցն և ասէ ցՙ նոսա. դստերք եկի. մի լայք ՚ի վերայ իմ. այլ լացէք ՚ի վերայ ձեր. և ՚ի վերայ անձանց՝ և ՚ի վերայ որդւոց ձերոց. զի եկեսցեն աւուրք յորս ասիցեն, երանի ամլոց և որովայնից, որք ոչ ծնան. և ստեանց որք ոչ դիեցուցին։ Ցայնժամ սկսանեցին ասել լերանց՝ թէ անկերուք ՚ի վերայ մեր. և բլրոց թէ ծածկեցէք զմեզ. զի եթէ ընդ փայտ դալար զայս առնեն, ընդ չորն զի՞նչ լինիցի։ Զայս ասաց Ցն, առ ՚ի զեկուցանել նոցա զվերջին կոր ծանուցմն եճմայ. զոր հասանելոց էր նոցա. վասն նոյնոց մահուան Մեսիային. ըստ գուշակութեանն Եսա. 53. 9։ Երեմ. 4։ և Դանիէլ. 9. 27։ Նա և այլոց մարգարէից։

Եւ այսպէս տարան զՑն ՚ի գողգոթայ. տեղի կառափնելոյ. այսինքն գլխատելոյ՝ ուր մերկացուցեալ եւտուն նմա զինի զմռսեալ խառն ընդ լեղւոյ. զի թմրեալ՝ ուժգին ոչ զգայցէ զցաւն. բայց Ցն ճաշակեալ ոչ կարբ։ Ցանժամ զինուորքն

հանին զնա 'ի խաչ. այսինքն. ըստ դաւթայ ձայ-
նին. զձեռսն և զոտսն ծակեալ բեւեռեցին 'ի խա-
չափայտն: Հանին և այլ երկուս աւազակս 'ի խաչ.
մի յաջմէ. և մի ընդ ահեկէ. զի ընդ անօրէնսն
համարեսցի: Եսա. 53. 13: և Մարկ. 15. 18:
Եւ Պիղատոս գրեաց 'ի վերայ տախտակի միոյ.
Յունարէն. եբրայեցերէն. և Դաղմատերէն. այս-
ինքն լատիներէն. իբր թէ յանցանք նորա: Յ̅ս̅
նազօրեցի թագաւոր Հրէից. (Յ. Ն. Թ. Հ.)
զսա ընթերցեալ հրէից, ասեն ց'Պիղատոս. մի
գրեր թագաւոր հրէից. այլ զի նա ասաց թէ
թագաւոր եմ հրէից. ասէ Պիղատոս զոր ինչ
գրեցի, գրեցի: Եւ զինուորքն բաժանեցին զհան-
դերձսն Յ̅ս̅ի 'ի մէջ իւրեանց: Եւ զի պատմուճան
նորա անկարանի էր վերուստ 'ի վայր փորանկեալ.
այսինքն. գործած. ոչ կամեցան պատառել. այլ
արկին վիճակս թէ ո̅ւմ ելցէ. զի լցցի բան սաղ-
մոսին. բաժանեցին զհանդերձս իմ 'ի մէջ իւր-
եանց, և 'ի վերայ պատմուճանի իմոյ վիճակս ար-
կանէին:

Հ. Կայի՞ն առ ընթեր խաչին Ք̅ս̅ի. և 'ի ծանօթից
իւրոց:

Պ. Անդ էր մայր նորա օրբուհի կոյսն մարիամ. և
քոյր իւր. և Մարիամ Մագդաղենացի. և Յ̅օ-
հաննէս սիրելի աշակերտ նորին: Էին և այլք բա-
զումք. որք կացեալ 'ի հեռուստ լային և կոծէին
զկուրծս իւրեանց: Իսկ քահանայապետք և ան-
հաւատ օրինապահ դպիրք, և հրէայք. այպն. այս-
ինքն. ծաղր առնէին (իբրև զքամ, և զքանան) և
ասէին, վահ. վահ. որ քակէիր զտաճարն և յերիս
աւուրս կանգնէիր զնա: Եւ թէ զայլս ապրեցոյց,

զինքն ոչ կարէ ապրեցուցանել. եթէ թագաւոր կ՚հրէից. իջցէ այժմ ՚ի խաչէդ Քս արքայդ լինի. զի տեսցուք և հաւատասցուք դմա։ Այսպէս և աշակերտն Յովհաննէս հայհոյէր և անարգէր։ իսկ Աշազակն յայլակողմեան, սաստեաց նմա, և ասէ. չէրկնչիս դու Յ՚ԱՀ. զի մեք ըստ մեր արժանւոյն գտաք. իսկ սա ապերաս լինչ ոչ գործեաց, և ընդ մեզ ՚ի պատժի կայ։ Եւ ասէ ցՑս. Տէր յիշեա զիս յորժամ գայցես արքայութիւնդ քով։ Եւ Ցս. ասէ ցնա։ այսօր ընդիս իցես ՚ի դրախտին։

Հ. Խօսեցաւ Ցս. և զայլ բանս ՚ի խաչին։

Պ. Լօրձն բանս խօսեցաւ Ցս, մինչ կայր ՚ի խաչին. և են սոքին։

Ա. Նախ՝ աղօթեաց վասն խաչահանուացդ. հայր թո՛ղ սոցա զի ոչ գիտեն զինչ գործեն։

Բ. Երկրորդ՝ ասաց Թէ ծարաւի եմ. որոյ զինո՛ հոր մի մատոյց սպունգով քացախ. զոր ճաշա՛կեալ ասաց։

Գ. Երրորդ՝. ամ լինչ կատարեալ է։ ըստ գրոյն՝ Թէ ՚ի ծարաւ իմ արբուցին ինձ քացախ։

Դ. Չորրորդ. ասաց մօր իւրոյ. կին դու ահա որդի քո. վասն Ցհաննու Աւետարանչի. որոյ և ասաց Թէ՝ ահա մայր քո։

Ե. Հինկերորդ, յայլակողմեան աւազակին ասաց. այսօր ընդիս իցես ՚ի դրախտին։

Զ. Վեցերորդ. էլի էլի լամաքսափաքդանի։ այսինքն. ԱՁիմ, ԱՁիմ ընդէ՞ր թողեր զիս։

Է. Լօթիներորդ. հայր ՚ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ։ Եւ յասելն զայս վերջին բան, ՚ի ձայն

բարձր աղաղակեաց և խոնարհեցուցեալ զգլուխն. Աճանդեաց ղհոգին։

Ն. Զհարդ կին ասաց մոր իւրոյ. և ուր կայս, կամ մայր. որ առաքեալ յարմար էր այսպէս ասել։

Պ. Սրբուհի կայսն, գոլով ի սեռէ կանանց. և նա խատիպ սրբոյ մոր մերոյ եկեղեցւոյ. վայ և հասա րակ սեռի բառիւ կին կոչեաց. զոր Ադամ կեանս անուանեաց՝ նկատմամբ մոր այնմ զաճակի՝ որ կոխելոց էր զգլուխ օձին. առ ի նշանակել զսուրբ կայսն, և զընդհանուր եկեղեցին. որ է մայր ամ կենդանեաց. այսինքն հոգւով ծնեցելոց ի Քե։ որ ըստ սարասի սրբուհւոյ կուսին անբաժանելի է ի նմանէ. այսինքն ի Քեէ. և կրէ միշտ զկսկիծ չարչարանաց. և զյիշատակ խաչի և մահու նորա, ոչ քնաւ երկբայելով զԱճումն։ Այսպէս և սրբոյն Յովհաննու ասելովն, ահա մայր քո՝ զկոյս հաճատացելոց իւրոց՝ զսուրբ եկեղեցին Ճանաչել միայն ծնօղ և մայր. և ոչ բաժանիլ երբէք ի նմանէ. որպէս և սուրբն Յովհաննէս յայնմ օրէ ընկալաւ առ ինքն զսուրբ կոյսն. որպէս մայր ամ հաճատացելոց։

Ն. Վասն ի՞նչ ասաց Ցե ի մահու իւրում, Աճ իմ, Աճ իմ. ընդի՞նչ Թողեր զիս։ քանզի հայր իմ ընդ իս է և ոչ Թողու զիս. և ոչ եմ միայն ասաց։ և Թէ ես՝ և հայր իմ մի եմք։

Պ. Ցկրաւի Թէ և Քե ունէր մի անձն և մի դէմ. բայց էր նաև կատարեալ Աճ, և կատարեալ մարդ. որ Աճային Անձամբն էառ զմարդկային մարմին և զնուԹիւն։

Ուր որպէս ԱճուԹիւն անչարչարելի և անմահ էր. նմանապէս և անբաժանելի էր ի հօրէ բնա-

կանաքար։ ուրեմն ՚ի կողմանէ մարդկութեն ասաց թէ ընդ՚ը թողեր զնս ։ առ ՚ի հաճաստել թէ ճշմարտապէս մեռաւ ։

Իսկ զնս ասելովն՝ որ անձին վերաբերի։ յայտնեաց զանշնոթ և անբաժանելի միաձորութեն իւր ընդ մարդկային բանական հոգւոյն և մարմնոյն ։ որոյ սակս և ասաց հայր ՚ի ձեռս քո ամանդամ զՀոգի իմ ։ զնս հաճաստեսոյց մեզ անանջատ միաձորութեն իւր ընդ հօր ։ որ ՚ի մարմնոյն ևս ոչ բաժանեցաւ։ զնս էր մանն իւրոյ կատարեալ մարդկութեն ։ զոր անբաժանելապէս միաւորեալ էր ընդ Աճային անձին ։

Նշզրակացուցանէ ուրեմն թէ ճշմարտապէս՝ և ոչ առաչօք մեռանելն հաճաստելոյ աղաղաւ ասաց թէ ընդ՚ը թողեր զնս։ և ոչ թէ իսկապէս թողաւ, կամ բաժանեցաւ ՚ի հօրէ ։

ՊՐԱՆԿ Ժ։

Ցառագս մահու։ և թաղմանն Քսի ։

Հ։ Ցորում ժամու հանին զՔ ՚ի խաչ ։

Պ։ ՚ի ծագմանէ արևու էր ժամ երրորդ։ որ գոլով ՚ի գարնան եղանակի պատասխանէ իններորդ ժամու Նշրոպացւոյն մինչ հանին զնա ՚ի խաչ ։

Հ։ Նշանք ինչ եղէն ՚ի նմին աճուր ։

Պ։ Խաճարեցաւ Արեգակն արտաքոյ սահմանի բնաձան ընթացից իւրոց։ և խաճար կալաւ ամ երկիր ՚ի վեց ժամէ՝ մինչև ց՚իններորդ ժամն ։ այսինքն ՚ի կէս օրէ մինչ ց՚ 3 ժամն Նշրոպէացւոց ։

Հ։ Ցորում ժամու աճանդեաց զՀոգին ։

Պ։ Ցիններորդ ժամու աճուրն ուրբաճռաւ։ երեք ժա-

մաւ յառաջքան զմուտն Արևու, այսինքն. յետ երեք ժամու կէսաւուր. և վերացաւ խաւարն մահացուցիչն հոգւոց:

Հ. Զինչ նշանք եղէն յորժամ աւանդեաց զՀոգին:

Պ. Վարագոյր տաճարին ցելաւ. այսինքն հերձաւ վերուստ 'ի վայր. 'ի նշանակ բարձման ստուերական քօղոյ դիմացն օրինաց Մօսէսի. և երևիլն Ընորհական օրինացն Քս̄ի: Երկիր շարժեցաւ. 'ի նշանակել թէ հեթանոսք փոփոխեալ յառաջ շարժեցան յԱծ պաշտութի̄ն: Վէմք 'ի յինքեանց պատառեցան: զի անհաւատութի̄ն վիմացեալ սիրտք բացան 'ի հաւատս Քս̄ի: Եւ գերեզմանք մահու բացեալ՝ բազում մարմինք սրբոց յարեան. և յետ Յարութի̄ն Քս̄ի, մտեալ 'ի քաղաքն սուրբ երևեցան բազմաց. 'ի հաւաստութի̄ն վերջին ընդհանուր յարութի̄ն. որ սուրբք յարուցեալ մտանեն 'ի սուրբ քաղաքն 'ի վերինն Եէմ:

Հ. Թէ և բոլոր մարմինն վիրաւորեալ էր 'ի գանից բայց գլխաւորապէս. քանի վէրս ընկալաւ Քս̄:

Պ. Գլխաւորապէս հինգ վէրս ընկալաւ Քս̄ 'ի խաչին. երկուս 'ի ձեռս. և երկուս՝ յոտս 'ի տեղի բևեռացն. և մինն 'ի կողն իւր տիգաւ զինաւորին:

Հ. Վասն էր զինուորն տիգաւ խոցեաց զկողն Յս̄ի:

Պ. Քանզի ուրբաթ էր, ոչ կամեցան հրէայք, զի մարմինքն մնասցեն 'ի խաչին յաւուր մեծի շաբաթուն. (յորում հանգեաւ Ած 'ի գործոց իւրոց.) աղաչեցին Պիղատոսի. զի խորտակեալ զբարձս նոցա մեռցին, և բարձցին 'ի խաչէն: Զինուորքն խորտակեալ զբարձս աւազակաց մեռուցին, և մինչ եկին առ Յս̄, տեսին զի մեռեալ էր, ոչ խորտա-

կեցին զբարձս նորա. զի լցցի գիրն, Թէ ոսկր նո՛ր մի փշրեսցիս ի նմա։ Եւ մի ոմն ՚ի զինուորացն ՚ի հաճատեալ Թէ խնպապէս մեռեալ էր՝ տիգաւ խոցեաց զկողս նորա. յորմէ վազվազակի եկ արիւն և ջուր. և զինուորնետես՝ և հաճատաց Թէ արդարև որդի Աստուծոյ էր. և միւս զինուորքն և աղաղակէին Թէ արդարև որդի Աստուծոյ էր սա. զի այնչափ վաղ մեռաւ։

ՃՀ. Ո՞վ իջոյց զՔ՚ ի խաչէն, և եդ ՚ի գերեզմանի։

Պ. Յովսէփ Յարեմաթեայն՝ որ էր այր սուրբ և արդար. և չէր միաբանեալ ընդ խորհուրդս՝ և ընդ գործս հրէից։ Սա գնացեալ առ Պիղատոս՝ զԸնկոյց զվաղ մեռանիլն Յի՛, և խնդրեաց զմարմին նորա։ Եւ Պիղատոս ստուգեալ ՚ի հարիւրապետէն՝ զարմացաւ Թէ այնչափ վաղ մեռաւ. և շնոր հեաց նմա զմարմինն Յի՛։ Եւ Յովսէփ գնեաց սինդ այսինքն մաքուր կտաւ. և յիջուցանէր ՚ի խաչէն. եկն և Նիկոդիմոս (որ եկեալ ՚ի գիշերի առ Յի՛, լուեալ էր ՚ի նմանէ վա՛ վերստին ծնեցման ՚ի հոգւոյ։) և եբեր զմուռս խառն ընդ հալոճէի (որ է սարը սապռ. որ շինի ՚ի հիւթոյ հալոճէ կոչեցեալ խոտոյ։) իբրև լտերս հարիւր. որ առնէ ՚իբր. չԿ. ՀօՀսայ։ և պատեցին սուրբ կտաւքն, և եդին ՚ի գերեզմանի փորեալ ՚ի վիմէ, յորում չէր բնաւ ոք եդեալ. որ էր ՚ի պարտիզին մօտ ՚ի տեղւոջն ուր խաչեցին զՅի՛. և եդեալ կափարիչ. այսինքն խուփ. վէմ մի մեծ՝ և գնացին։

ՃՀ. Ո՞ւր ՚ի դնեն զնա ՚ի գերեզմանի։

Պ. Մարիամ Մագդաղենացի. և Մարիամ յակոբայ՝ և Յոսեայ. որք եկեալ էին ընդ Յի՛ Յ՚ԷՄ, ՚ի գալիլէէ. տեսին զգերեզմանն, և որպէս եդաւ

մարմին նորա. և գնացեալ պատրաստեցին զիւղս և խունկս զի օծցեն զնա. բայց 'ի շաբաթուն հանդարտեցին վասն պատուիրանի օրինացն։

Հ. Հրէայք խաչահանուք, զի՞նչ գործեցին 'ի շաբաթուն։

Պ. Գնացեալ առ Պիղատոս խնդրեցին դնել պահապանս շուրջ զգերեզմանաւն ասելով. Տ՞ր յիշեցաք. զի մոլորեցուցիչն այն. մինչ կենդանին էր ասէր՝ թէ յետ յերից աւուրց յառնեմ 'ի մեռելոց. գուցէ Աշակերտք նորա գողանայցեն 'ի գիշերի. և ասիցեն թէ յարեաւ. և լինի վերջինն չար՝ քան զառաջինն։ Ասէ ց'նոսա Պիղատոս, ունիք զօրականս. գնացէք զգուշացարուք որպէս և կամիք։ Եւ նոցա եդեալ պահապանս՝ կնքեցին զվէմն գերեզմանին քահանայապետք նոցա հանդերձ զօրականօքն։

ՊՐԱԿ. ԺԱ։

Յաղագս Յարութ՞ն և համբարձմանն Քս՞ի։

Հ. Յետ երից աւուրց Յարեա՞ւ Քս՞. որպէս և ասէր։

Պ. Այո՛. Յարեաւ ճշմարտապէս։

Հ. Ե՞րբ Յարեաւ։

Պ. 'Ի լուսանալ միաշաբաթու՝ աւուր. յորում ասաց Ա՞ծ եղիցի լոյս։

Հ. Ո՞պ գիտացեալ եղև Յարութ՞ն նորա։

Պ. Նոյն կանայք իւղաբերք որք պատրաստեալ էին զիւղս և խունկս վասն օծելոյ զՄարմինն Յս՞ի. եկին վաղքաջ ընդ առաւօտն 'ի գերեզմանն, և 'ի ճանապարհին ասէին ց'միմեանս, ո՞վ թաւալե-

ցուսցէ մեզ զվէմն ՚ի դրանէ գերեզմանին. զի էր մեծ յոյժ. և ոչ գիտէին թէ հրէայք կնքեալ են զնա և պահապանս կացուցեալ։ Նայ իբրև եկին ՚ի գերեզմանն ոչ տեսին զպահապանսն. բայց գտին զվէմն բարձեալ ՚ի գերեզմանէն. և մտեալ ՚ի ներս ոչ գտին զմարմինն Ցի։ Այլ տեսին երկուս սպիտակազգեստ հրեշտակս իբրև երիտասարդաց՝ և երկեան։ Նայ նոքա ասեն ց՚կանայս, մի երկնչիք. եթէ զՑ խնդրէք զնաչէլեանն՝ չէ աստ. Այլ յարեաւ. մի խնդրէք զկենդանին ընդ մեռեալս. այլ երթայք ասացէք ց՚աշակերտս նո՛ւ և ց՚Պետրոս՝ թէ Ցարեաւ, և ահա յառաջանայ քան զձեզ ՚ի գալիլեայ անդ տեսանիցէք զնա ոպ ասացն ձեզ յառաջադոյն։ Նայ կանայքն ելեալ ահիւ և խնդութեա՛ փախեան ՚ի գերեզմանէն. քանզի զահիհարեալ էին. և ոչ ումեք ինչ ասացին զի երկնչէին։ (՚ի հրէից։)

ՃՈ. Ո՞ր էին պահապանքն. զոր կանայք ոչ տեսին։

Պ. ՚ի ժամու Ցարուեա՛ փրկչին. շարժուածն մեծ եղև գրէ սուրբն Մատթէոս. զի հրեշտակ Տ՚ն իջեալ յերկինից ՚ի բաց թաւալեցոյց զվէմն ՚ի գերեզմանէն՝ և նստէր ՚ի վերայ նորա. որոյ տեսիլ էր իբրև զփայլակն. և պահապանքն յահէ նորա խուովեցան, և եղեն իբրև զմեռեալ։ Ապա փախեալ գնացին՝ առ քահանայապետս և պատմեցին նոցա զոր ինչ տեսին։ Նայ նոցա խորհուրդ արարեալ՝ արծաթս բազում ետուն զօրականացն՝ և ուսուցին նոցա ասել. թէ մեք մինչ ՚ի քուն էաք. աշակերտք նորա եկեալ ՚ի գիշերի գողացան զնա։ Նայ եթէ լուր լիցի այդ առ դատաւորն՝ մեք հաճեսցուք զնա կաշառօք. և զձեզ անհոգս արաս-

ցուք։ Եւ պահապանաց առեալ զարծաթն՝ ա-
բարին որպէս ուսանն 'ի հրէից։ Եւ ել համբաւս
այս սուտ 'ի մէջ նոցա, մինչև ցայսօր։

Հ. Զինչ նշանակէր այն շարժումն, զոր մեծ ասաց
սուրբ Աճետարանիչն։

Պ. Մեծ ասաց. զի վեցեկի էր. այսինքն վերուստ 'ի
վայր. բանն Ած էջ յերկնից։ Ներքուստ 'ի վեր.
մարդիկ ելին յերկինս։ Ցաջմէ 'ի ձախ. անհաճատ
հրէյայք՝ մերժեցան։ Ձախմէ 'ի յաջ. հաճատա-
ցեալք 'ի յաջ դասեցան։ Առաջինք եղեն յետինք
և յետին հեթանոսք՝ եղեն առաջինք։ զի հրեշ-
տակն ուխտի իջեալ 'ի բաց թաճալեցոյց զվէմն կըն-
քեալ խորհրդոցն Ածային յայտնութեց։

Հ. Երևեցաւ յետոյ Քս աշակերտաց իւրոց։

Պ. Այո. ոչ միայն առաքելոց՝ այլ և բազում հա-
ճատացելոց արանց և կանանց. ոչ թէ միանգամ,
այլ՝ բազմիցս. և 'ի միում նոճագի ևս՝ հինգ հա-
րիւր անձանց ժողովելոց 'ի միասին երևեցաւ
2. Կորն. 15. 6։ Բայց նախ երևեցաւ Մարիա-
մայ մագդաղենացւոյ 'ի պարտիզի անդ ուր էր գե-
րեզմանն (ո՞վ սքանչելի մեծ խորհուրդ. զի նախ
կինն մեղաւ 'ի դրախտի անդ. վս՜յ և Քս նախ
կնոջն մեղուցելոյ և զղջացելոյ երևեցաւ 'ի պար-
տիզին. այսինքն 'ի դրախտին. ոպ՜ երբեմն իբրև թէ
Տր՜ն դրախտի. բայց այժմ առ 'ի մուծանել կրկին
'ի դրախտն. և ոչ թէ ոպ՜ յայնժամ յարտաքսել։)
որոյ և ծանօթութի՜ տոճեալ՝ կոչեաց Մարիամ.
և ասէ ե՛րթ առ եղբարսն իմ, և ասա՛ ցնոսա։
Ելանեմ ես առ հայրն իմ. և առ (հաշտեցեալ)
հայր ձեր. առ Ածն իմ. և առ Ած ձեր։ Երև-
եցաւ յանծանօթս նա և այնոցիկ՝ որք երթային

ԱՆմմաճուս և խելամուտ արար զնոսա ՚ի ճանապարհին, թէ պարտ էր Քոհ չարչարել. մեռանիլ, և յարուցեալ մտանել ՚ի փառս իւր. որոց և յետ բեկանելոյ հացին ծանօթուեցան։

Իսկ սուաքելոյն երևեցաւ դրօք վակեղօք. և ՚ի չեալ ՚ի նոսա ասաց. Առէք զՀոգին սուրբ. (զոր քարձի ՚ի մարմին եղելոյ։) և ետ նոցա հաճասար իշխանութիւն կապելոյ և արձակելոյ մեղս. (նաև ՚ի միութիւն յօդելոյ զՀՀմարիտ հաճատացեալս, և վանելոյ զԹերահաճատս և զհերետիկոսս։)

ԱՀ զի Թովմաս չէր անդ. կրկին երևեցաւ մատասանիցն ամենեցուն. և հրամայեաց նոցա. մանաճանդ թէ Թովմայի. շօշափել և տեսանել զի ունի մարմին և ոսկր. նաև զտեղի բևեռացն, և զվէր կողին. և հաճատալ թէ նա ինքն է Յաչաեալն՝ մեռեալն՝ և յարուցեալն. և մի լինիլ անհաճատ. որք և շօշափեալ. ։ Ցօհ. գլ. ։ ։ ։ Բերանով Թովմայի դաճանեցին, Տէր մեր. և Աճ մեր։ ԱՀ եղեն առիթք երանութեճ այնոցիկ. որք ոչ տեսեալ՝ և հաճատասցեն։ Դարձեալ երևեցաւ նոցա. այսինքն առաքելոյ. յետեր տիքերեայ Ծովուն. որք գնայեալ էին որսալ զձուկն. և ՚ի գիշերն (՚ի յաճախ անհաճատութիճ) ողջոյն. ոչինչ կարեն որսալ. բանիւ Տ՚ն արկեալ զուռկանն (քարողութիճ) յաջակողմն նաճուն. այսինքն ՚ի ՀՀմարտութիճ լուսաճոր Աճետարանին. որսային յոյժ բազում, և ծանեան թէ Տ՚ն է։ ԱՀ եալ ՚ի ցամաք գտին հայ. և ձուկն եդեալ ՚ի վերայ կրակի. (յօրինակ Ջերմեռանդ սիրոյ Հրով՝ խսկ

զբանէ ընտրելոց ։) կերին ՚ի միասին, և առաքել և՝ հաստատեցան ՚ի հաճատս ։ Յայնժամ Յե ե-
րիւք հարցմամբ սիրոյ՝ քահեալ զերիս ուրացու-
թիեան Պետրոսի. վերստին կարգեաց զնա Առաք-
ելական հովուութիւն արածել զՀօտս իւր ։ Ընդ-
մայեաց և՝ նմա գնալ զկնի իւր խաչաչարչար
մահուամբ ։ իսկ վն Յոհաննու ասաց՝ Թէ կայցէ
դա՝ մինչև ես գամ։ Արար և զայլ բազում նշա-
նս՝ գրէ սուրբ Աւետարանիչն Յոհաննէս. որք
(ասէ) ոչ են գրեալ ՚ի գիրս այսմիկ ։ Այլ այս
այնչափ ինչ գրեցաւ, զի հաճատասջիք Թէ Յե
է Քն որդի Աւ. և զկեանս յաւիտենական
ընդ ունիցիք յանուն նորա։ Զի զայն ամ հրաշս
զորս արար Յե. երթէ գրեալ էին մի ըստ միոջէ
կարծեմ Թէ (ասէ) և ոչ ես բաւական էր տա-
նել զգիրսն, որք երթէ գրեալք էին։

Հ. Պատուհէր ինչ ՚ի՞ Քն առաքելոց իւրոց ։

Պ. Պատուիրեաց նոցա լինիլ վկայք Յարութե իւ-
րոյ. և քարոզել զԱւետարան իւր ընդ ամ ծագս
երկրի. աշակերտել զամ հեթանոսս. և մկրտել
զնոսա՝ Յանուն Հօր՝ և որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ.
և ուսուցանել նոցա պահել զամ զոր ինչ պա-
տուիրեաւ էր նոցա. և խոստացաւ լինիլ ինքն ընդ
նս և լ ամ հաճատացեալս իւր մինչև ՚ի կատարած
ծի։ Երթող նաև զայսոսիկ նշանս՝ որք երթայցեն
զՀետ այնոցիկ, որք հաճատան ՚ի նա։ Յանուն իմ
(ասէ) դեւս հանցեն. լեզուս խօսեսցին. ՚ի ձեռս
իւրեանց օձս բարձցեն՝ և նոցա ոչ ինչ մեղիցեն։
Եւ երթէ մահացու դեղ ինչ արբցեն՝ նոցա ոչինչ
վնասեսցէ ։ ՚ի վերայ հիւանդաց ձեռս դիցեն, և

քժշկեացինս (վայ ինձ անհաւատիս) բայց հրամայեաց եւս նոցա մի մեկնիլ յեկեմէ. և սպասել մինչև առաքեսցէ նոցա զՍոգին սուրբ. զի զգենուցուն զօրութիւնս ի բարձանց: Քանզի Յովհաննէս (ասէ) մկրտեաց ի ջուր. բայց դուք մկրտիցիք ի հուր և ի Հոգի սուրբ. ոչ յետ բազմաց ինչ աւուրցս այսոցիկ: Գործ. ։ 5։

Ղ. Ցետ Յարուցեալն. հրաման ժամանակ ետուց. Քո ի վերայ երկրի։

Պ. Քառասուն օր եկաց Քո յետ Յարուցեալն ի վերայ երկրի. յորս բազում նշանօք և արուեստիւք. այսինքն սքանչելեօք հաստատեաց զԱռաքեալսն ի հաճատս Հմարիտ մահուան և Յարուցեալն իւրոյ. զի աներկբայ եղիցին: Ապայ տարեալ զնոսա ի լեառն Ձիթենեաց. և ձեռն եդեալ ի գլուխս նոցա օրհնեաց զնոսա. և մեկնեալ ի նոցունց վերացաւ յերկինս: Իսկ մինչ նոքա սլաշուցեալ հայէին. ամպն կալաւ զնա յաչաց նոցա: Եւ ահա երկու հրեշտակք ի հանդերձս սպիտակս երևեալ նոցա ասացին. Արք գալիլացիք զի պշուցեալ հայիք յերկինս: Այս Ցն որ վերացաւն ի ձէնջ յարմնով յերկինս, գալոց է նովին մարմնովն ի դատել զկենդանիս և զմեռեալս: Ցայնժամ Առաքեալքն դարձան յեկեմ. և սպասէին գալստեան Հոգւոյն սրբոյ. զոր խոստացաւ նոցա Ցն։ Գործ. ։

Ղ. Քառասուն օր Ցնէն Քի ի վերայ երկրի. մինչ վասն հաստատելոյ զԱռաքեալսն էր. Թէ այլ խորհուրդ ևս ունէր։

Պ. Բայց ի հաստատելոյ զԱռաքեալսն, ունէր և զայս խորհուրդ. որ յերանելն Ղեղացւոյ Յակոպոսէ, երբեք բարկացուցին զԱՆ. քառասուն տարի ժա-

մանակ ետ նոցա դեգերիլ յանապատի անդ։ զի ապստամբքն այնոքիկ ամենեքին տապաստք անկցին։ և անմեղ ծնեալքն 'ի նոցունց մտցեն յերկիրն Աւետեաց։

Այժմ ևս իբրև անօրինեցան հրէայք. և Ած՝ որ վասն մահուան օծելոյն. ըստ դուշակութեան Եսա. Եզեկ. և Դանիէլի պատժելոց էր զնոսա. քառասուն տարի ժամանակ ետ նոցա. զի ընտրալքն 'ի նոցունց, հաւատացեալ 'ի Քս. մեկնիցին 'ի նոցունց, և ապրեսցին 'ի գալոց պատժոյն։ Եւ զի յայնժամ. 'ի Թու. 14. 34։ և Եզեկ. 4. 6։ օր ընդ տարւոյ եդ նոցա Ած ժամանակ։ վայ և այժմ Քսի քառասուն օր մնալովն 'ի վերայ երկրի. զկնի քառասուն ամաց գալոց պատիժն անհաւատ հրէից՝ յայտնեաց իւրոց հաւատացելոց։ որք և հաւատալով զեկուցմանցն Քսի. 'ի վերջին կործանմանն եէմայ ձեռամբ տիտոսի հռոմայեցւոյ. նոքա ամենեքին որք հաւատացեալ էին 'ի Քս, մեկնեալ յեէմայ ապրեցան։ որպէս և համաձայն գրեն ամ եկեղեցական պատմիչք։

ՊՐԱԿ ԺԲ։

Յաղագս վիճակեցման սրբոյն մատաթեայ յԱռաքելութի. և վասն գալստեան հոգւոյն սրբոյ։ և քարոզութե Առաքելոց։ Եւս և վասն կոչման սրբոյն Պօղոսի յառաքելութի Քրիստոսի։

Հ. 'Ի համբարձմանն Քսի՝ քանիք էին Առաքեալք։

Պ. Մետասան անձինք էին Առաքեալք. քանզի մինն յերկոտասանից յուդայ իսկարիօտացի՝ որ մատ-

Նեաց ՚ի մահ զՑ. յուսահատեալ խեղդեցաւ. որպէս գրեցաք ՚ի պրակ. 9. և Առաքեալք Ցնա-
ցին ԻԻ.

Հ. Ի՟Թ ԻԻ Ցնացին Առաքեալք. ապա ղհՈրդ մեք երկոտասան Թոռեմք.

Պ. Երկոտասան Թոռեմք. զի յետ Համբարձմանն Քեի. միաբանեալ մետասանից Առաքելոց՝ ընդ բազմութեի միւսոց Աշակերտաց. որք էին կա-
նամբք և մարըն Ցեի անձինք հարիւր և քսան. և հանապազորդեալք կային յաղօթս ՚ի վերնատան միում, սպասելով գալստեան Հոգւոյն սրբոյ. Ցարուցեալ Պետրոս ասէ. ահա մինն ՚ի մենջ կոչեաւ մատնողութե իւրով. որ ուրուցեալ հեր ձաւ ընդ մեջ. և հեղաւ ամ փոր նորա. Արդ պարտ է մեզ ընտրել զմի յարանցս յայսցանէ եկելոցս ընդ մեզ յամ ժամանակի. յորում եղ և մուտ առ մեզ Տր Ցե. սկսեալ ՚ի մկրտութե Ցովհաննու մինչև յօրն յորում վերացաւն ՚ի մենջ, վկայ Ցարութե նորա լինիլ ընդ մեզ միում ՚ի սոցանէ. Ընդ կացուցին զերկուս. զՑոսէփ որում բարսաբայն կոչէին, որ անուանեցաւ Ցուստոս. Ընդ զՄատաթիա. Ընդ կացեալ յաղօթս՝ արկին վիճակս, և եղ վիճակն Մատաթեայ. և համարե-
ցաւ ընդ մետասան Առաքեալսն. և լցաւ թիւ երկոտասանիցն. Գործ. գլ. ԻԻ. Ընդ ապա պարապեալ յաղօթս ՚ի վերնատանն՝ սպասէին գալստեան Հոգւոյն սրբոյ. ըստ պատուիրի Տն.

Հ. Ո՟ւմն էր Քե ինքն նախքան համբառնալ իւրում ՚ի ընտրեալ զոք յԱռաքելոցէ, և եթող ընտրել Աշակերտաց իւրոց.

Պ. Ասան այնուհետև եթող Քո ընտրել Աշակերտաց իւրոց. զի կրթեսցին նոքա յընտրութիւն անձանց արժանաւորաց. և թողցեն օրինակ հետևողաց իւրեանց զկերպ ընտրելոյ զոք, և կարգելոյ ի պաշտօն Աճային խորհրդոյ:

Ա. Ի՞րը եկն Հոգին սուրբ առ Առաքեալսն, և առ միաբանեալսն ընդ նոսա:

Պ. Զկնի համբարձմանն Քո՛ի տասներորդումն աւուրիկիւրակէի. որ էր յիսներորդ օր Յարութեն. վայ և ի Ցունաց կոչեցաւ Պենտեկոստէ:

Ա. Զի՞րդ տոն օր սպասել ետ Քո Առաքելոց. վասն գալստեան Հոգւոյն սրբոյ:

Պ. Նախ՝ վասն այն յամենայնի ի տոն աւուրս. զի Հոգեկան և մարմնական տանջանքին զգայարանք նոցա մաքրեսցին յ'ետայնոց իրաց. առ ի լինել ը ունակք Հոգւոյն սրբոյ: Երկրորդ՝ զի հաճատիցին նոքա. և ամ հաճատացեալք իւր՝ թէ անզեղջք են շնորհքն Աւ՝ և առաւել արդիւնաւոր լինի այնոցիկ, որք եթէ հաստատուն հաւատով, աներկբայ յուսով՝ և ջերմեռանդ սիրով և աղօթիւք սպասեն: Քանզի որպէս երկայնմիտ լինի չարաց՝ որ եթէ անզեղջ ճնասցեն, առաւել պատժիցին: այսպէս և երբեմն յամենայնէ զշնորհս առ քարիս զի համբերութիւք առաւել արդիւնաւոր եղիցին, թէ աստ՝ և թէ ի հանդերձեալն:

Ա. Արդ՝ ո՞ր, և որո՞վ նշանաւք եկն Հոգին սուրբ:

Պ. Իջ Հոգին սուրբ ի վերնատունն՝ ուր էին ժողովեալք, հնչմամբ իբրև սաստիկ հողմոյ: և ի հրեղէն լեզուս բաժանեալ երևմամբ հանգեաւ ի վերայ Առաքելոց. և ամ միաբանեցելոցն: որք էին

հարիւր և քսան ոգիք արք և կանայք. ընդ որս
էր և մայրն Յ̅ի։
Հ. Վասն էր սաստիկ հնչմամբ հողմոյ եկն. և զի-
ա̅րդ 'ի հրեղէն լեզուս բաժանեալ երևեցաւ։
Պ. Քանզի իբրև հողմոյ առ ա̅մ ծագս երկրի լսելի
լինելոց էր բարբառ նոցա։ և 'ի հրեղէն լեզուս
երևեցաւ, զի ես տաց ձեզ բերան և իմաստուի̅.
և թէ՝ հոգին հօր ձերոյ խօսեսցի 'ի ձեզ. ասաց։
Հ. Զի՞նչ զօրութի̅ ստացան յայնժամ Առաքեալք,
և միւս միաբանեալք։
Պ. Լցան ամենեքեան հոգւով սրբով. և սկսան
խօսիլ զանազան լեզուս. և իմանալ զբանս սրբոց
մարգարէից. և յիշել զայն ա̅մ զոր Յ̅ ասաց-
եալ էր նոցա։ որոց լսօղք ամենեքեան սքանչա-
նային. և ոմանք ասէին թէ արբեալք են։ Բայց
Պետրոս յարուցեալ մետասանիւքն հանդերձ ասէ
ցնոսա։ Մեք ո՛չ եմք քաղցոհալիցք. զի դեռ ե-
րեք ժամք են աւուր։ Այլ այս է 'ի լրումն մար-
գարէութի̅ Յովէլեայ. թէ յաւուրս յետինս հե-
ղից 'ի հոգւոյ իմմէ 'ի վերայ ա̅մ մարմնոյ. և̅ն։
Եւ հետևեցան վստահութի̅ աներկիւղ քարոզել
ազդու բանիւք, և հաւաստել զՅարութի̅ն Յ̅ի.
և վկայել թէ նա էր Մեսիայն որ յԾ գալոց էր.
և ուսուցանել նոցա զՃանապարհն փրկութի̅։ որ
և 'ի նմին իսկ աւուր Պէնտէկոստէի վկայութի̅
և քարոզութի̅ նոցա և սրբոյն Պետրոսի՝ երեք
հազար անձինք 'ի հրէից անտի հաւատացին 'ի Ք̅ս
և մկրտեցան յեէ̅մ քաղաքի։ Եւ յետ քանի մի
աւուրց հինգ հազար ոգիք ևս հաւատացեալ
մկրտեցան։ յորոց բազումք էին 'ի միաբանութի̅

խաչահանուաց։ որք բանիւք սրբոց Առաքելոց՝ զղջացեալ լային և ապաշխարէին զմեղս իւրեանց։

Եւ էին ամենեքեան միաբանեալք իբրև մի սիրտ և մի հոգի, և ամ ինչք նոցա էր հասարակաց։ գլ. 4. 32։ Եւ հետևաբար օր ըստ օրէ 'ի մէջ եէմի, և արտաքոյ նորա ևս՝ հաճատային յոյժ բազմութիւն. ոչ միայն 'ի հրէից. այլև 'ի զանազան ազգաց հեթանոսաց։ որոց նախկինն եղև սուրբ հարիւրապետն կուռնելիոս համայն իւրայնովք։ գլ. 10։ Որք և ամենեքին բանիւք սրբոյն Պետրոսի և միւս Առաքելոց հաճատացեալ՝ և ընկալեալ զՀոգին սուրբ յաճելանային 'ի թիւս հաճատացելոց. և միանային ընդ սրբոյ եկեղեցւոյն որ հիմնիլ և հաստատիլ սկսաւ յեէմ քաղաքի։

Ճ. Ապա զի՞նչ առնէին անհաճատ հրէայք. և քահանայապետք և դպիրք նոցա. որք տեսանէին օր ըստօրէ այնքան բազմութիւն հրէից յաճելուլ 'ի հաճատս Քս̄ի քարոզութիւն սրբոց Առաքելոց։

Պ. Յոյժ մախային դառնացեալ ոգւով. և սպառնային պատուհիրելով Աշակերտացն՝ մի ուռուցանել և քարոզել զանունն Յս̄ի. զորս և գանէին, և հալածէին. բայց չունէին իշխանութիւն մեռուցանելոյ։ Եւ մանաւանդ որ բազում զօրութիւս, և բժշկութիւս հիւանդաց տեսանէին առնել նոցա։ որպէս էր և 'ի մօրէ կաղ ծնեալ քառասնամեայ այրն. որ անկեալ դնիւր 'ի գեղեցիկ կոչեցեալ դրան տաճարին. գլ. 3։ 'ի խնդրել զողորմութիւն յայնցանէ որք անցանէին։ զոր Պետրոս և Յօհաննէս բժշկեցին միայն բանիւ սրբոյն Պետրոսի յանցանելն իւրեանց անտի. յորոց ակնունէր կաղն առնուլ ինչ. որոյ ասաց սուրբն Պետրոս, զոսկի և

զարծանէ ո՛չ ունիմ, այլ զոր ունիմս զայն տայ
քեզ· յոնուն Ցոի Քոի· արի և գնա՛ կանգնե-
ցաւ յոտին, և վազվազէր և օրհնէր զԱՆ ։ զայս
տեսեալ՝ բազումք հաւատացին ՚ի Քս ։ իսկ քա-
հանայապետքն կալեալ զառաքեալսն եդին ՚ի բանտ
ընդ երեկս ։ Իւ ընդ այգն ածեալ յատեանն ո՛չ
գինչ կարացին առնել վասն ահի ժողովրդեանն ·
և վասն մեծի նշանին՝ զի ներկայ էր և բժշկեալն։
վայ և պատուիրեցին սպառնալեօք մի ևս ուսու-
ցանել զանունն Ցոի։ գլ· Յ ։ Բայց նոքա առա-
ջեալ ևս ուսուցանելով՝ և բազում հրաշս գործե-
լով՝ զդևս հանելով · և զհիւանդս բժշկելով ·
զմեծ բազմութի՛ն հաւատացելոց ածէին ՚ի հաւատս
Աս որ կարի՛ զայրացեալ նոցա՝ վերստին կալեալ
զԱռաքեալսն զամենեսեան եդին ՚ի բանտ · և կընդ-
դեալ զդրունս կացուցին պահապանս ; ալն ը այգն
մեծ ատեան կարգեալ դատեցցեն զնոսա ։ զորս
հրեշտակ Տ՚ն ելհան զամենեսեան դրօք փակելօք ՚ի
դիշերի և հրամայեաց գնալ առաւօտուն ՚ի տա-
ճարն, և քարոզել զանունն Ցոի ։ Իւ հրէ-
ապք ընդ այգն՝ ելբև բացեալ զբանտն ո՛չ գտին
զնոսա զարմացան յայժ։ Բայց լուեալ թէ ՚ի տա-
ճարի անդ քարոզեն · գնացեալ ածին զնոսա ո՛չ
բռնութ, զի երկնչէին ՚ի ժողովրդենէն ։ Իւ քա-
հանայապետքն ՚ի յատենին սպառնացան նոք, թէ
ո՛չ պատուիրեցաք ձեզ՝ մի՛ ևս ուսուցանել զա-
նունն այն։ որոց ՚ի պատասխանի՛ն Առաքելոյ՝ թէ
ԱՅ պարտ է անսալ և ո՛չ ձեզ, Աէ ։ դառնացա-
եալ նոցա յայժ, խորհէին սպանանել ։ իսկ խրա-
տիւք Գամաղիէլի մեծի վարդապետի ի՛ւրեանց ·
թէև ՚ի բաց կացին ՚ի նոցունց, բայց դանդաղեալ
սպառնացան մի՛ ևս քարոզել զանունն Ցոի։ գլ· Ե·

Սակայն նոքա առաւել քան զյառաջն քարոզելով, և զհրաշս առնելով, զթիւ հաւատացելոց կարի բազմացուցանէին։ Եւ անհաւատ հրէայք յայտնի չար ինչ ոչ կարելով առնել. և ոչ ևս սպանանել, ոխային յոյժ և ծարաւիք էին արեան նց։ վայ և զսբն ստեփաննոս, ապստամբուբ քար կոծեցին, յամի Տն. 31. որ եղև առաջին վկայ Քսի։ որոյ մահուան կամակից և յորդորիչ էր սողոս, կամ սաւուղ անուանեալն։

Այսպէս և զսուրբն Յակոբ, զեղբայրն Յոհաննու Աւետարանչի. 'ի 42. յամի Տն. մատնեցին հրէայք Անթիպաս հերօդէի չորրորդապետի, գլխատօղի սրբոյն Յոհաննու մկրտչի. և ետուն նմա գլխատել։ Եւ նորա տեսեալ թէ հաճոյ է հրէից կալեալ և զսուրբն Պետրոս եդ 'ի բանտի. և յետ տօնին՝ կամէր ընդ ապգն գլխատել և զնա։ գլ. 12։ Բայց 'ի գիշերի այնմիկ մինչ պահապանքն պահէին զփակեալ և կնքեալ դուռն բանտին, հրեշտակ Տն լուծեալ զնա 'ի կրկին շղթայից. և դրօք փակելօք էհան 'ի բանտէն. և 'ի քաղաքէն. որոյ երկաթի փակեալ դուռն ինքնին բացաւ. և սբն Պետրոս զերծեալ՝ գնաց յայլ ուրեք 'ի քարոզել։

Նմանապէս և եղբայր Տն անուանեալ զսուրբն Յակոբոս. որ էր նախկին սիւնն. և Առաջնորդն նորահաստատ եկեղեցւոյն Քսի. 'ի 62. ամի Տն. հրամանաւ անանիա քահանայապետի արկմամբ յաշտարակէ տաճարին 'ի վայր. և բրօք թափչի հարմամբ գլխոյն մեռուցին (ըստ Յովսեփոսի պատմչի հրէից։) Իսկ միւս Առաքեալք 'ի 32. յամի Տն տարածեալ առ ամ ծագս երկրի, քարոզէին հրէից՝ և մանաւանդ թէ հեթանոսաց. և լուսա-

Հորեակ զնոսա ածէլն ՚ի հաճատս Քսի ։ Ցորոց և մինն էր սուրբ Առաքեալն փիլիպպոս, որ զՀրէից օպայիչ ներքինին կանդակայ Թագուհւոյն էած ՚ի հաճատս. գլ. 8. յորմէ և հապիղք լուսաճորեցան. որք ՚ի սաքայ դշխոյէ տեղեկացեալ էին օրինացն Մովսէսի ։

Ֆ. ԼՐվ էր այդ սօղօսն կամ սաճուղն. որ յորդորիչ եղև քարկոծման սրբոյն Ստեփաննոսի ։

Պ. Սօղօս, կամ սաճուղ անուանեալն էր սուրբ առաքեալն Պաղոս. որ ՚ի նախնումն սօղոս կամ սաճուղ կոչիւր. և յայժ ընդդէմ էր Անուանն Ցնէ. մինչ զի յետ քարկոծման սրբոյն ստեփաննոսի, հալածանս մեծ յարոյց եկեղեցւոյն. այսինքն հաւատացեալոց. որ բաց ԱԼուսալեմէ ամենեքեան ցրուեցան յերկիր ՚ի սամարիայ և յայլ տեղիս ։ Նա սաճուղ հրամանագիր առեալ ՚ի քահանայապետէ երթայր ջօրականօք ՚ի դամասկոս. զի և անդ եղեալ զհաւատացեալս կապանօք առցէ յերկիր զի պատժեսցին։ գլ. 9 ։

Բայց ՚ի ճանապարհին մերձ ՚ի դամասկոս. ահեղ լուսաճորութիւն երևեալ նմա Ցնէ յերկնից գոչեաց սաճուղ. սաճուղ. զի հալածես զիս. և նա կրծանեալ գոլով յերկիւղ. եհարց՝ Թէ ով ես Տէր. Նա ձայնն ասէ. ես եմ Ցնէ զոր դու հալածես. խիստ է քեզ ընդդէմ խթանի ազացեր ։ Նա նա ասէ Տէր զի՞նչ կամիս զիս առնել ։ Նա Ցնէ ասէ. արի և մուտ ՚ի դամասկոս. և անդ՝ յուսցին քեզ Թէ զի պարտ ես լինել վկայ անուան իմոյ ։ Նա յարուցեալ երմուտ ՚ի դամասկոս՝ կալեալ զձեռանէ. զի կուրացեալ էր աչօք բացօք վ սաստիկ լուսաճորութիւն ճաճանչիցն զոր ետես ։

*

Ի՛ւ յետ երից աւուրց եկին առ նա հրաժեշտ տ՚ն սուրբն Անանիա. և մկրտեաց զնա. որոյ վերայ հանգեաւ հոգին սուրբ. և լուսաւորեցան աչք նր. յամի տ՚ն. 33։

Ցանժամ հալածիչն սօղոս, եղև Պօղոս քարոզիչ Քի՛. և երեքտասանեւորդ գլխաւոր Առաքեալ նորա ՚ի հեթանոսս. որպէս և սրբազանն Պետրոս էր առ հրէայս։ Ի՛ւ կոչեցաւ անօթ ընտրութեա՛ ՚ի տ՚ն։ լեզու Ցո՛ի, բերան Քո՛ի, և վար դապետ հեթանոսաց՝ և եկեղեցւոյ։ որոյ գլխաւորք Ճոխացեալ պայծառացաւ սուրբ եկեղեցին Քո՛ի։ մինչ զի ասացաւ, եթէ չէր Պողոս, համր էր եկեղեցին։ որ և զանթիւ անձինս լուսաւորեալ ՚ի հրէից և ՚ի հեթանոսաց. դարձոյց ՚ի խաչար տգիտութե՛ անօ՛ կռապաշտութե՛ց ՚ի լոյս ճշմարտութե՛ միոյն Աւ՛. ունելով ինքեան ծակից զբն քառնաբաս. և տիմոթէոս։ և զայլ Աշակերտս իւր. սկսեալ յԵրմէ՝ քարոզեաց յԱսիա. ՚ի Ցունաստան. և յԻլիրոպիայ. կրելով բազում վիշս և չարչարանս վասն անուանն Ցո՛ի։

Ի՛ւ վերջացեա՛ յամի տ՚ն 60. գնաց կապեալ ՚ի Հռօմ. և անդ ևս սերմանեալ զբանն կենաց. զանթիւ անձինս ՚ի հռօմայեցւոց՝ և ՚ի սահմանաց նորա լուսաւորեալ դարձոյց ՚ի հաւատս Քո՛ի. ըստ վկայելոյ թղթոյ նորա որ առ հռօմայեցիս։

Ի՛ւ անդ ՚ի Հռօմ. յամի տ՚ն. 66. դրդմամբ և նախանձու անհաւատ հրէից. ՚ի չար ներքոն կացսեր հռօմայեցւոց հեղմամբ արեան մարտիրոսացան ՚ի միասին ընդ սրբոյն Պետրոսի. ըստ գրելոյ հռօմէական եկեղեցւոյ Պատմութեան։

Հ. Ուստի ընկալաք մեք Քրիստոնեայք զայս ամ

պատմութիւն. որ վասն գալստեան և տնորէնութեան Քն. և Առաքելոց նորին: Եւ ոյք էին նախկինք, որք գրեցին զայս ամ:

Պ. Զճշմարտութիւս զայսոսիկ ընկալաք նախ 'ի սրբոյ Աւետարանէն Քն. որոյ գրօղք էին չորեքին սըր բազան Աւետարանիչք. որոց անուանք են:

Մատթէոս. Մարկոս. Ղուկաս, և Յօհաննէս: Եւ զմնացեալս տեղեկացաք 'ի գործք առաքելոց անուանեալ գրքոյն: զոր սուրբ Աւետարանիչն Ղուկաս 'ի խնդրոյ սրբոյ քաջին Թէօփիլէի գրեաց: յորոց բանից արտահանեալ և մեք գրեցաք աստէն, կարի համառօտ. և պարզ ոճիւ, առ 'ի ուսումն և 'ի վերծանութիւն նորավարժ մանկանց սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց:

Վերջ Երկրորդի Մասին գրքոյս:

ՀԱՄԱՌՕՏ ԾԱՆՈՒՑՄՈՒՆՔ Ի՞ԱՍՆ ԿՈՉՄԱՆ ՀԱՑՍՑ Ի ՀԱՒԱՏՏ ՔՐԵ։

Հ. Ի՞ՐԲ. և ՊՐպէս ընկալաւ ազգ մեր Հայոց զՀաւատս Քրե։

Պ. Վ֊ԽԼԵ մեզ աուրբն Մօսէս խորենացի. Թէ ՚ի ժամանակս փրկչին, Թագաւորէր ՚ի վ֊ր Հայոց Ցե֊դեսիայ քաղաքի՝ որ է ուրհայ։ Պարթևազուն Արշակունի Աբգար մեծ աուրբ Թագաւորն մեր. որ քանի մի ամօք յառաջ դնայեալ էր ՚ի Պարսս առ ազգակիցս իւր ՚ի Թագաւորս Պարսից. վասն Հանդարտելոյ զնոսա ՚ի վիճէից իւրեանց՝ զոր երեք եղբարք առնէին վասն յաջորդելոյ յաթոռ նոցին Թագաւորութեան։ Ու անդ վասն վատուժեր օդոյն՝ քորոտեալ դարձաւ յերդեսիայ յաթոռ իւր, զկնի խաղաղելոյ զնոսա։ Ու ո֊չ գտանելով Հնար ապաքինութեան ՚ի բժշկաց. լուաւ վասն Հրաշից և բժշկութեան Ցե֊ի. զոր առնէր ընդ ամ Հրէաստան՝ և յԵԶմ. Հաճատաց Թէ պարտ է. լինել նմա Աե, կամ որդի Այ՝ որ առնէ զայսպիսի Հրաշս։ գրեաց նմա Թուղթ այսու օրինակաւ։

„Աբգար Արշամայ իշխան ճի. առ Ցհսուս փրկիչ և քարերար. որ երևեցար ՚ի եզմայուս ողջոյն. լուեալ է իմ վասն քո. և վասն բժշկութեդ՝ որք լինին ՚ի ձեռս քո առանց դեղոց և արմատոց. որպէս զի ասի, դու տաս կուրայ տեսանել. և կաղայ գնալ. և զբորոտս սրբես, և զայս պիղծս և զդևս հանես. և որք միանգամ չարչարեալ են ընդ երկար հիւանդութեամբ բժշկես. դու և զմեռեալս յարուցանես։ Ու իբրև լուայ վասն քո զայս ամ. եդի ՚ի մտի ամենայն մի յերկուց աոտի։

կամ Թէ դու Աճ ինչս ինձեալ յերկինից. և գոր-
ծեա զայդ. կամ որդի ինչս Ամ և զայդ առնեա ։
Արդ վասն այսորիկ գրեցի ես առ քեզ՝ աղաչել
զքեզ. զի աշխատ լինիցիս. և եկեսցես առիս. և
բժշկեսցես զհիւանդութիւնս զոր ունիմ ես ։ Նա և
լուեայ զի հրէայք տրտնջէն զքէն. և կամին չար-
չարել զքեզ ։ Ասացէ քաղաք մի փոքրիկ և գեղ-
ցիկ ե իմ. քաճական է մեզ երկոցունցս ։

Յե առաքեաց զայս գիր հաճատոց յեԷմ առ Ց՚ն.
ընդ Անանէ սուրհանդակի իւրոց ընդ քանի մի
անձանց. և հրաժիրեաց գալ զեդեսիայ և բժշկել
զինքն, և լինիլ անդ պատուով զերծեալ ՝ի մա-
խանայ հրէից։ տոհեալ էր նաև պատոհէր արանց
իւրոց՝ որ եթէ ուչ հաճեսցի գալոյ Ց՚ն յեդեսիայ,
զպատկեր նորին նկարեալ բերցեն առինքն։ Նկին
նոքա յեԷմ յաճուր ծաղկազարդի. և ՝ի ձեռն փի-
լիպպեայ և Անդրէի առաքելոց մատուցին Ց՚ի
զԹուղթն, Ցօհ. ԻԲ. ՀՕ ։ Պատասխանեաց Ց՚.
հասեալ է ժամ զի փառաւորեսցի որդի մարդոյ.
և հրաժարեցաւ յերթալոյ, զի մերձեալ էին ա-
ՀուՀք չարչարանաց իւրոց. քայլ հրամայեաց Թո-
մային առաքելոյ գրել Թուղթ առ Աբգար. այսու
ձրինակաւ ։

,,Երանի ինչ այնմ որ հաճատայ ինձ. ինքը ուչ
ինչ նորա տեսեալ զիս. զի գրեալ է վասն իմ
այսպէս. զի որք տեսանենն զիս. ուչ հաճատասցեն
և որք ուչն տեսանեն, նոքա հաճատասցեն, և կեց-
ցեն։ Իսկ վասն այնր, զի գրեցեր դու առիս, գալ
ինձ առ քեզ. արժան է ինձ կատարել աստ զամ-
ինչ, որոյ վասն առաքեցայ ես. Յե ինքեա կատա-
րեցից զայս. ապա համբարձայց առ այն՝ որ առա-

քեացն զիս. և յորժամ համբարձայց. առաքեցից զմի յԱշակերտաց աստի իմոյ. զի զցաւս քո բըժշկեսցէ. և կեանս քեզ. և որոց ընդ քեզ են շնորհեսցէ։

Զայս գիր ստորագրեալ Յս առաքեաց նմա խոստանալով՝ յետ վերացման իւրոյ առ հայր՝ յղել զմի յԱշակերտաց իւրոց զի բժշկեսցէ զնա և զիւրայինսն, որպէս և գրեալ է 'ի վերոյ։

Եւ նկարիչն Աբգարու. որ կամեր նկարել ըզ պատկերն Յսի. և բազմիցս աշխատեալ ոչ կարելովն նմանեցուցանել. գթացեալ Յսի՝ եդ ըզ դաստառակն 'ի վերայ Աճային դիմաց իւրոց. և անձեռագործի տպաւորեալ 'ի նմա զպատկեր իւր ետ նոցա. և առաքեաց գրով իւրով առ Աբգար. զոր հաճատով ընկալեալ՝ իսկոյն զդաց զթեթևութի ցաւոց իւրոց. և մեծաւ փափաքանօք սպասէր զգալուստ Առաքելոյն։ Յետ համբարձմանն Քսի, սուրբ Առաքեալն Թադէոս գնաց յեդեսիայ. և քարոզեալ անդ մկրտեաց զսուրբ Թագաւորն Աբգար. որ իսկոյն բժշկեցաւ։ մկրտեաց նա և զամ ընտանիս նորա. և զամ իշխանս՝ և զնախարարս, և զբոլոր քաղաքացիս. որք ամենեքեան հաճատացեալ 'ի Քս. փակեցին զմեհեանս կռոց։ Եւ Առաքեալն Թադէոս, Եպիս ձեռանդրեալ զսուրբն Ադդէ կարգեաց զնա առաջին հայրապետ հայոց յեդեսիայ քաղաքի։

Ապայ հրովարտակաւ Թագաւորին, գնաց սուրբ Առաքեալն յԱրտազ քաղաք հայոց առ սանատրուկ քեռորդին Աբգարու. որ նորին հրամանաւ նստէր անդ իբր փոխ արքայ. և մկրտեաց զնա, և զնախարարս՝ և զիշխանս՝ և զհամայն ժողովուրդն.

և ձեռնադրեաց անդ ևս՝ Զաքարիա անուամբ
ոմն Իշխիս. և ինքն գնաց յայլ ուրեք ի քարո-
զել։ Զկնի փոքուց եկն ի հայս և սուրբ Առաք-
եալն Բարդուղիմէոս. և զգազուամն լուսաւորեաց
ի սուրբ հաճատս Քրիստի։

Իսկ յետ մահուան սրբոյն Աբգարու, յամի Տեառն Անանուն որդի նորին Աբգարու, թագա-
ւորեալ յեղեսիայ փոխանակ հօրն, և թերլադրու-
թեամբ առ յերեսս, և առ ահի սրբոյն Աբգարու
սուտ հաճատացեալ իշխանային հայոց՝ երաց զմե-
հեանս կռոց՝ և ուրացաւ զՔրիստ։ Ապա սպան և
զսուրբ հայրապետն Ադդէ սրով հատմամբ սրու-
նիցն մինչ քարոզէր յեկեղեցւոջ։ Իւ զկնի փո-
քուց ինքն Անանուն ևս՝ անկմամբ մեծագոյն կաճ-
եայ սեան ի վերայ ոտից իւրոց, և խորտակմամբ
արունիցն մեռաւ. ընկալեալ զհատուցումն ի Տեառնէ։
Ցայնժամ սանատրուկ՝ որ գունի թագաւորեալ
էր յԱրտազ. և յահէ նախարարացն վերստին
դարձեալ ի կռապաշտութիւն, եկեալ տիրեաց Իշ-
դեսոյ՝ և զոլորը թագաւորութիւնն հայոց, խոստմամբ
ոչ խափանել զՔրիստոնէութիւն. և ոչ նեղել
զոք։ Բայց ստեալ երդմանն սպան նաև զսուրբ
առաքեալն, և զդուստրն իւր զսրբուհին սան-
դուխտ. ևս և զքոյրն իւր զսրբուհին թագուհի
վասն Քրիստոնէական հաճատոյ։ և յարոյց հա-
լածանս Քրիստոնէից. որոյ յաճուրս բազումք
նահատակեցան յաղգէ հայոց։ Իւ բազումք ևս
ծածուկ մնային ի հաճատս. որք նեղութիւն և անձ
կուիթն սլաշտէին զՔն։ Իւ այսպէս ի ծա-
ծուկ տևեաց քրիստոնէութիւնն յաղգի մերում՝ ի
մէջ հալածանաց մինչև ի ժամանակս սրբոյ հօրն

մերոյ Գրիգորի լուսաւորչին • որ զքաղաքը Հայաստան միանգամայն աճեալ ՚ի սուրբ Հաւատն Քրիստոս կոչեցաւ• լուսաւորիչ Հայոց ։

Հ• Ո՞վ էր այդ սուրբ Գրիգոր լուսաւորիչ ։

Պ• Գրի ՚ի պատմութեն սրբոյն խորենացւոյ՝ թէ յամի Տն• 226• Արտաշիր սպասնեան կոչեցեալ իշխան ոմն Պարսից• ապստամբեալ ՚ի պարթևազունի արշակունիէ Արտաւանայ թագաւորէ Պարսից, սպան զնա ՚ի պատերազմի• և արտաշիր ինքն թագաւորեաց փոխանակ նորա ՚ի վերայ Պարսից ։

Զայս լուեալ Պարթևազուն Արշակունի մեծն խոսրով թագաւորն Հայոց• յոյժ ցասեաւ ընդդէմ Արտաշրի վասն մահուան արենակցի իւրոյ Արտաւանայ • և յարոյց սաստիկ պատերազմ ՚ի վերայ Պարսից, որ տեւեաց աւելի քան զամս տասն, և Հալածական արար զԱրտաշիր ՚ի սահմանս Հնդկաց։

Տեսեալ արտաշրի, որ ՚ի կենդանութեն խոսրովայ, չէ հնար ինքեան թագաւորել • մեծամեծ պարգևս և իշխանութիւնս խոստացաւ այնմ• որ նեղգործէ զորդի սպանանիցէ զխոսրով ։ Անակ անուն Պարթևազեան Արշակունեաց տոհմէ սիւրենեան Պահլաւ մականուանեալ իշխան ոմն, յանձն առեալ զայս նենգական դաւաճանութիւն• և իբր թէ թշնամացեալ ընդ Պարսից վասն արեան արտաւանայ• առ ելեաս Հալածական եղեալ՝ որպէս թէ փախստեայ գայ առ Հայս, եղբարբ և ընտանեօք Հանդերձ առ խոսրով ազգական իւր։ Իւ նա իբր արենակցի, և թշնամւոյ արտաշրի ընկալեալ սիրով զԱնակ՝ ուներ ՚ի պատուի։ Իսկ անակ և եղբայր իւր՝ դիպուկս որոնէին սպանանել զխոսրով ։

Ցաճուր միում մինչ զնացեալ էին յորս. ա-նակ՝ և եղբայր իւր խոյանէ յուզել մեկուսացուցեալ զնոսորով յանտառ ինչ՝ իբր թէ գաղտնի խոր-հուրդ իմն մեծ ունին նմա յայտնել՝ և յետուստ կողմանէ սաստիկ վիրաւորեալ զնա փախեան։

Իմացեալ զբոյց խոսրովայ՝ հետամուտ եղէն նոցա. և կալեալ զանոցս գետոյն երասխայ. հոսե-ցին զնոսա ՚ի գետն. և հեղձամուղձ արարին։ Իսկ խոսրով մինչ տակաւին շունչն քինքեան էր՝ հրա-մայեաց բնաջինջ առնել սրով զընտանիս Անա-կայ։ զորս և զամենեսին ՚ի սուր քարշեցին. բաց յերկուց ստնդեայ արու մանկանց. զորս դայեակք նոցա պահեալ փախուցին։ Յորոց մինն էր սուրբն գրիգոր լուսաւորիչ տակաւին միամեայ տղայ. որ ՚ի գաղն անակայ ՚ի Պարսից յերկիրն առ հայս, ՚ի Ճանապարհին յղացեալ էր զնա մայրն։ և ասի թէ ՚ի մատաղ գերեզմանի սրբոյ նշաքելոյն Թադ-էոսի հանդիպեցաւ յղացումն նորա։

Արդ յայնժամ մինչ կոտորէին զընտանիս Անակայ. սօֆիա անուն ծառուկ քրիստոնեայ ստն-տու մանկանն (գրիգորի) առեալ զտղայն միամեայ փախեաւ ընդ առն իւրոյ ՚ի կեսարիայ. և անդ մկրտեալ զնա անուանեաց Գրիգոր, ազգմամբ հրեշտակի Այ։ ուր սնեալ և զարգացեալ վար-ժեցաւ յաւսումն քրիստոնէականի հաճատոյ ՚ի Ցոյն լեզու։ Յւ ապա ամուսնացեալ ընդ պար-կեշտուհի օրիորդին Մարիամայ դստեր գաճեթայ առն բարեպաշտի. յորմէ և ծնաւ զթէոդոս և Աբիստակէս անուանեալ զերկուս որդիս։

Իսկ Արտաշէր յետ մահուան խոսրովու, դար-ձեալ ՚ի հնդկայս սահմանէ ՚ի Պարսս, և հաստա-

տեալ 'ի նմին թագաւորութեան, դիմեաց բազմութեան զօրաց 'յԾ Հայոց. և տիրեալ երկրին, սպան զազգատոհմս խոսրովու. յորոց միայն մանկուհի դուստրը մի խոսրովիդուխտ անուն, հոգածութեան օտայ անուն նախարարի. և մանուկ մի տրդատ անուն, ջանիւ ստնտուի իւրոյ ապրեցան փախստեամբ յայլ տէրութիւն: Տրդատ որդի խոսրովու տարեալ եղև 'ի Հռօմ. ուր զարգացեալ յարեցաւ առ իշխանն լիկիանոս. և զի կարի զօրեղ էր բազում մեծամեծ քաջութիւնս արարեալ. յոյժ պատուեցաւ 'ի Դիոկղետիանոսէ կայսերէ Հռօմէացւոց. յորմէ և ընկալեալ օգնութիւն զօրաց՝ դիմեաց 'ի Հայս տիրել թագաւորութեան հօր իւրոյ:

Բայց գիտացեալ յառաջմանէ սրբոյն գրիգորի զլինիլն տրդատայ 'ի Հռօմ. հաւանութեամբ Ամուսնոյն իւրոյ՝ հրաժարեալ 'ի նմանէ գնաց 'ի Հռօմ. և յարեցաւ 'ի պաշտօն տրդատայ, և ծառայէր նմա հաւատարմութեամբ յանծանօթի. և յոյժ սիրելի եղև նմա. զի ոչ գիտէր թէ Հայրասպանի իւրոյ Անակայ որդի իցէ. բայց սուրբն գիտութեամբ ծառայէր: Իսկ սրբուհին Մարիամ ամուսին սրբոյն՝ գնաց 'ի վանս կուսանաց ընդ Արիստակեայ կրտսեր որդւովն. ուր զարգացեալ եղև կուսակրօն քահանայ: Եւ վրթանէս մնաց առ ընթեր սօֆիայի. որ չափահասակ լեալ ամուսնացաւ. որոյ և ծնան յուսիկ և գրիգորիս:

Արդ՝ մինչ եկն Տրդատ 'ի Հայս զօրօք Հռօմէացւոց. և յօժարակամ նպաստութեամբ նախարարաց Հայոց. տիրեաց թագաւորութեան հօր իւրոյ. յամի Տն. 286. մատոյց զոհս շնորհակալութեան կռոց

Անահիտայ. այսինքն տիանայի. հրաւիրեաց նաև սրբոյն գրիգորի. (անգէտ գոլով նորին Քրիստոնէութեան.) զոհել և երկիրպագանել անահիտայ: իսկ սրբոյն չառնուլ յանձն՝ գիտացեալ Տրդատայ թէ Քրիստոնեայ է սուրբն, մատնեաց զնա յանտանելի չարչարանս. և սուրբն ժուժեաց երկոտասան մահացուցիչ տանջանաց. յորոց ոչ մեռանիլն սրբոյն, զարմացաւ Տրդատ համայն իւրայնովք: Եւ հարցաքննեալ տեղեկացաւ որ որդի էր անակայ հայրասպանի իւրոյ. հրամայեաց արկանել զնա կենդանւոյն 'ի վիրապն օձաբնակ յԱրտաշատ քաղաքի: ուր եկաց սուրբն անվնաս և կենդանի յամս իբր չորեքտասան. որ հրամանաւ հրեշտակի ԱՄ, կին մի պառաւ արկմամբ հացի կերակրէր:

Եւ 'ի 300 ամի Տն 'ի սպանանել տրդատայ անըմբերելի չարչարանօք զերանելի կուսանս հռիփսիմեանս. որք 'ի հռօմայ եկեալ էին փախստեայ 'ի հայս. առ 'ի զերծանիլ 'ի բռնութէ Դիոկղետիանոսի կայսեր. որ կամէր բռնի 'ի կնութի առնուլ զհրաշագեղ սրբուհի կոյսն հռիփսիմէ. որոյ Տրդատ տեղեկացեալ 'ի գրութէ դիոկղետիանոսի, ինքն ևս տռփացեալ կամեցաւ բռնութբ առնուլ զնա 'ի կնութի: Իսկ սրբուհի կուսին 'ի դիմամարտիլն՝ և յաղթելն զնա՝ և փախչիլն 'ի հնձանն առ ընկերակից իւր կուսանս: հրամայեաց Տրդատ դառն տանջանօք սպանանել. ընդ նմին և զսրբուհին գայիանէ մայրապետ նոցա, ընդ երեսուն և վեց ընկերակից սրբուհի կուսանաց:

Եւ թագաւորն Տրդատ՝ որ յայլ խելս եղեալ էր վասն սիրոյ անչափ այսինքն անհամեմատ գե-

ղեցկութեան սրբուհւոյն հռիփսխմեայ. պատժեալ 'ի Տնէ այսահարեցաւ, և 'ի կերպարանս վարաղ վայրենի կնճի, այսինքն խողի փոխեալ՝ եմուտ յանտառս շամբից, այսինքն ղամշից։ Այսպէս և բազում նախարարք, և Արքունի Պալատականք. և քաղաքացիք այսահարեալք տանջեցան 'ի դիւաց։

Յայնժամ հրեշտակ Տն՝ հնգիցս երևեալ 'ի տեսլեան խոսրովիդխտոյ քեռ տրդատայ թագաւորի. պատուիրեաց սպառնալեօք հանել զսուրբն գրիգոր 'ի վիրապէն. և անսալ բանից նորա. զի բժշկիցին ամենեքին յախտէ իւրեանց։ Եւ նոցա թէև ոչքան անհաւատալի էր կենդանի մնալն անդ սրբոյն, բայց վասն հրամանի քեռն տրդատայ. նախարարն օտայ ընդ բազմութեան անձանց գնացեալ գտին զնա կենդանի. զոր հանեալ 'ի վիրապէն բերին 'ի վաղարշապատ. ուր ամ նախարարք և բազմութիւն քաղաքակցաց անկեալ առ ոտս սրբոյն ներումն խնդրէին։ Յայնժամ և թագաւորն խողակերպ՝ եկեալ յանտառէն. անկաւ առաջի նր. և կողկողագին հայեցմամբ խնդրէր զներումն և բժշկութիւն։

Եւ սուրբն նախքան զամենեսին ժողովեալ զանապական մնացեալ մարմինս սրբուհի կուսանացն՝ ամփոփեաց 'ի յատուկ յատուկ յարկեղս՝ պատառոտուն հանդերձիւք նոցին։

Եւ ապա հրամայեաց առ հասարակ ամենեցուն հինկ օր անսուաղ պահել. (որ յետոյ սոյն հինկ օր կոչեցաւ Առաջաւորաց. կամ սուրբ սարգսի պահք։) նաև վաթսուն օր ևս հրամայեաց ծոմով և աղօթիւք ունկնդնել Ածային բանից, զոր տիւ

և գիշեր քարողէր և ուսուցանէր զՅաճատս ամ-
նասուրբ երրորդութեէ։ և մարմնաւիկ տնօրէնու-
թեան վերկէն ։ Լու ՚ի լրանալ աւուրցն քաժշկեաց
աղօթիւք զամենեսին ՚ի դիւաբախող մոլեգնուէց ։

Լու Թադաւորն Տրդատ դարձեալ ՚ի նախկին
կերպարան իւր, հաճատաց ՚ի Քն ։ ընդ հանուր
ազգաւն հայոց։ Լու այսպէս սուրբն գրիգոր լու-
սաւորիչ ։ միանգամայն ծնաւ զազգ մի ողջոյն։ ըստ
Մարգարէութեէ Ես։ ի լրհաւ ։ ո ետես այսպիսի
ինչ ։ եթէ երկնեաց երկիր ՚ի միում աւուր ։ և
ծնաւ ազգ մի ողջոյն միանգամայն ։ գլ։ 66։ 8։
Լու ապայ կառոյց զերիս վկայարանս ՚ի վերայ շիր-
մից սրբուհեաց։ Լու պարսպեաց խաչ կանգնեաց
՚ի տեղի լուսանկար սրբոյ տաճարին Էջմիածնի ։
(որ յետոյ ՚ի 307 ամի Տն։ կառոյց ըստ ձևոյն զոր
միածին որդին ԱՄ յիջանելն իւր անդ՝ ցուցեալ
էր սրբոյն գրիգորի լուսով զգաղափար նորա։ ոչ
երբեմն Մօսէսի ցուցաւ ՚ի սինա զձև և զօրինակ
խորանին վկայութեէ։) Լու յետայնորիկ հետևեցաւ
ընդ Թագաւորին ՚ի կործանել զմեհեանս և զբա-
գինս կռոց՝ որ ՚ի բոլոր Հայաստան ։

Ապայ յղեաց Թագաւորն զսուրբն գրիգոր մե-
ծաւ հանդիսիւ ՚ի կեսարիա ։ որ ընկալեալ զկարգ
քահանայապետութեէ ՚ի սրբոյն Լևոնդիէ Պատ-
րիարքէ Ցունաց։ և դարձ արարեալ ՚ի Հայս՝ մկրտե-
աց զանթիւ բազմութեէ հայոց ։ Լու զսուրբ Թա-
գաւորն զՏրդատ մկրտեալ անուանեաց զնա Ց ո-
հաննէս ։ ՚ի պատիւ սրբոց նշխարաց սրբոյն Ց ո-
հաննու կարապետին։ զոր սուրբ հայրապետն Լ և-
ոնդիէ ։ շնորհեալ էր նմա՝ ընդ նշխարաց սրբոց
հայրապետին աթծանագինէն։ (և ՚ի սմանէ եղև զոր

հայք ունին զգառն Այ 'ի դրօշակի իւրեանց 'ի պատիւ սրբոյն. Յ. մկրտչի:) Յետ որոյ սուրբ հայրապետն լուսաւորիչ. և սուրբ Թագաւորն Յօհաննէս տրդատ միաբանեալ շրջէին յամ սահմանս հայաստան Ծի. կործանէին զմեհեանս, և խորտակէին զբագինս. կառուցանէին զեկեղեցիս և զվանորայս. մկրտէին զամենեսին. և ձեռնադրէին զեպակասունս և զքահանայս. և բարւոք կարգադրութեամբ և ուղաղափառութեամբ պայծառացուցանէին զազգն. որ կայ և տևէ աղօթիւք սրբոյն, և շնորհօք Այն մերոյ և փրկչին Յն Քն մինչև ց'այսօր և ց'կատարած 'ի նոյն ուղղափառ դաւանութեամբ սրբոյ հօրն մերոյ գրիգորի լուսաւորչին հայստնեայցս Ծի:

Հ. Հռօմէացիք, և Յոյնք՝ և այլ միւս ազգք քրիստոնէից. Ճրբ ընկալան զհաւատն քրիստոսի:

Պ. Որպէս ասացաք վասն ազգի մերոյ՝ թէ 'ի ժամանակս սրբոց Առաքելոց Թադէոսի և բարդուղիմէոսի 'ի կենի սրբոյն Աբգարու ընկալաք զհաւատն, բայց յետոյ Թագաւորք մեր ուրացեալ զՔն. յարուցին հալածանս. և որք մնացին յազգէ մերմէ 'ի հաւատս՝ ծածկաբար պաշտէին զՔն. Թէև յոյժ սակաւք էին քան 'ի Յունացն և 'ի հռօմայեցւոց: Այսպէս և 'ի հռօմայեցիս և 'ի յոյնս, բաց 'ի Թագաւորաց. Թէև յոյժ բազումք էին քրիստոնեայք և սուրբ հայրապետք, 'ի ժամանակէ սրբոց Առաքելոց շարունակաբար տևեալք. սակայն 'ի ծածուկ և 'ի հալածանս էին որպէս զմերայինս. յորոց և անթիւք նահատակեցան. մինչև որ 'ի 314 ամի Տն՝ մեծն Կոստնդիանոս կայսր հռօմայ հաւատաց 'ի Քն. յորում ամի և սուրբն Սեղբեստրոս

նստաւ յաթոռ հայրապետութեան ի հռոմ. յայն ժամ և Ցունաց Պատրիարքութիւնք (որք ի սկզբ անդրեկ. և ի սրբոյն Յովհաննու Աճետարանչէ ընկալեալ էին ձեռնադրութիւն.) յայտնեցան. և հաստատեալ պաշտեցին զՔ։ Այսպէս և Աստրիս եղեալ հայրապետը և քրիստոնեայք։

Իսկ վերք ի ժամանակի սրբոյն Գրիգորի լուսաւորչին՝ եկին ի հաճատս քարոզութեան և սքանչելագործութեան սրբուհւոյ կուսին Նունեայ. որ էր յընկերակցաց սրբուհեայն Հռիփսիմեանց. և գկարգ քահանայութեան ի սրբոյն լուսաւորչէ ընկալան։ Եւ ի ժամանակի այսմիկ ի Պարսս և ի Հնդիկս եւս տարածեցաւ սուրբ հաճատն։ Եւ յետոյ միւս աղգք եվրոպեականաց. և ռուսաց. ի ժամանակս ժամանակս ոմանք ի հռոմայեցւոց. և ոմանք ի յունաց. ընկալան։

Ե. Յորդւոց և ի թոռանց լուսաւորչին. նստան յԱթոռ հայրապետութեան ի հայս։

Պ. Ցետ սրբոյ լուսաւորչին, որ մշտ առանձնանայր ի լերինս ի Ճգնել. խնդրանօք սրբոյ Թադէոսին Տրդատայ ի 318 ամի Տ՚ն՝ զսուրբն Արիստակէս որդի իւր ձեռնադրեալ եպիս, նստոյց յԱթոռ հայրապետութեան։ Ցայնժամ խնդաւ հրաժարեալ յԾէ գնոյ Ճգնել ի լեառն սեպուհ յայրն մանեայ և անդ հանգեաւ։ Ապա յաջորդեաց սուրբն Վրթանէս երէց որդի սրբոյն Գրիգորի ի 339 յամի Տ՚ն։ Ցետոյ սքն Ցուսիկ՝ որդի սրբոյն վրթանէսի, որ էր եղբայր սրբոյն Գրիգորիսի Աղուանից կաթուղիկոսի՝ ի 356. ամի Տ՚ն։ Ցետ նորա ի 364 ամի Տ՚ն. սուրբն Ներսէս մեծն՝ որդի Աթանագինեայ

թոռն Յուսկան ։ Ապայ. 390 յամի Տն սուրբն Իսահակ պարթև որդի սրբոյ մեծին Ներսէսի։

Եւ յետ ժամանակաց 'ի սերնդոց սրբուհւոյն Ճուշանայ դստեր սրբոյն Իսահակայ Պարթևի. 'ի 1065 ամի Տն. սուրբն Գրիգոր վկայասէր որդի սրբոյն Գրիգորի Մագիստրոսի, նստաւ յաթոռ հայրապետութեան ։ Յետ սորա. 'ի 1113 ամի Տն սուրբն Գրիգորիս Պահլաւունի, որդի Ապիրատայ։ Յետ այնորիկ եղբայր սորա սուրբն Ներսէս շնորհալի։ 'ի 1166 յամի Տն։ Ապայ 'ի 1173 ամի Տն։ սուրբն Գրիգոր տղայ կոչեցեալն. որդի վասլի եղբօր շնորհալւոյն։ Յետոյ 'ի 1191 յամի Տն. սուրբն Գրիգոր մանուկ քարավէժն եղբօր որդի . կամ քեռորդի սրբոյն Գրիգորի տղայի։ Յետ ամենեցուն սուրբն Գրիգոր . որդի Ճահանայ եղբօր շնորհալւոյն. 'ի 1195 յամի Տն ։ Եւ այսքան առ այս բաւ ։

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

Վասն Ընորհական օրինաց, և արդեանց նորին ։ Եւս և վասն սահմանի հաւատոյ ընդհանրական Եկեղեցւոյն Քրիստոսի ։

Հրամայեաց Ած Մօսէսի վասն հնոյ խորանին վկայութեան. Զգոյշ լեր որպէս ցուցաւ քեզ օրինակ 'ի լերինն՝ արասցես։ Ելից. 25. 40 ։ Այսուբանիւ կամեցաւ Ած զեկուցանել Ամբոխի իւրոյ՝ թէ այլ իմն իսկական նախատիպ խորան վկայութեան. այսինքն ուխտի. ցուցեալ էր Մօսէսի . որոյ ըստ օրինակի հրամայէր ձևակերտել զայն՝ զոր առնե-

լոց էր վասն հնոյ ամբոխին. որ լինելոց էր ըստ-
ուճեր և օրինակ այնմ իսկականին, զոր եցոյց նմա
Ի լերինն. որ էր Ընդհանրական օրէնքն. զոր Ի ձեռն
որդւոյ իւրոյ Յիսի Քրիստի ընդհանրելոց էր ապագի մարդ-
կան Ի լրման ժամանակի։ վեց և սրբա-
զանն Մովսէս պատուիրեաց նոցին ամբոխի՝ լսել
բանի՝ մեծի Մարգարէի. այսինքն Մեսիային։ Եւ
զի առաւել և բարւոք հմտասցին որդիքն իսրա-
թիւն մարդկան տնօրինէր։ Ի մերձենալ ժամանա-
կի գալստեան Մեսիայի բացայայտ խօսեցաւ Երե-
միայ Մարգարէին. թէ ահա աւուրք եկեսցեն ասէ
Տէր. եդից Ի վերայ տանն իսրայէլի. և Ի վերայ տանն
յուդայ ուխտ նոր. ոչ ըստ ուխտին զոր եդի ընդ
հարս նոցա. եւն զոր քաւական մեկնէ սուրբն Պո-
ղոս. յԵբր. գլ. 7. և 8։ Եւ այս նոր ուխտն Աե-
ային, հաստատելոց էր նոյն մանուկն ծնեալ. զոր
Ընայի գուշակեաց. 9. 6. թէ իշխանութիւն իւր Ի
վերայ ուսոյց իւրոց. և անուն նորա է Հրեշտակ
(այսինքն միջնորդ կամ դեսպան առաքեալ ԱԱՅ
Տեառն.) մեծի խորհրդոյ. աքանչելի խորհրդակից (ԱՅ | հր
Հօր և հոգւոյն սրբոյ.) Աե հզօր. իշխան. և հայր
հանդերձելոց դարու. որոյ մեծ է իշխանութիւն նորա
և խաղաղութիւն նորա չի՛ք սահման. և նստցի յա-
թոռն դաւթի։ ըստ աւետելոյ հրեշտակապետին
նոյնոյ սրբուհւոյ կուսին, զոր Ընայի յառաջագոյն
գուշակեաց, թէ՝ ԱՅա կոյս յղասցի և ծնցի որ-
դի. և կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ. որ է
ընդ մեզ Աե։ Որոյ գալստեան մինչ անհանդուրժ
սպասէին նախնի հաճատացեալ հրէայք. և աճա-
պարէին տեսանել. Մաղաքիա վերջին մարգարէ-

յուսադրեաց զնոսա. 'ի դիմաց նոյնոյ Մեսիայի ասելովն Ահա ես առաքեմ զհրեշտակ իմ. (զսուրբն Յոհաննէս մկրտիչ.) և տեսցէ. այսինքն յարդարեսցէ զճանապարհս իմ առաջի իմ. և յանկարծակի եկեսցէ 'ի տաճար իւր Տր՝ զոր դուքն խնդրէք. (որ է) հրեշտակն ուխտի՝ զորդուք կամիք։ գլ. 3. 1։ Ահաւասիկ գայ ասէ Տր Ամենակալ։ Արդարև յանկարծակի. զի յանծանօթի եկն առ այն հրէայս՝ որք ոչ էին իբրև զնախնի հոգեսէր հրէայս, որք զհոգւոյնն և զերկնայինն խնդրէին. Այլ մարմին եղեալ գոլով՝ ոչ ունէին զաչս տեսանելոյ զնշանսն զորս տեսանէին, և ոչ զունկս լսելոյ զբանսն՝ զորս լսէին. զի թանձրացեալ էին սիրտք իւրեանց ըստ մարգար Ես. 6. 9. և 10։ Վոյ և ոչ ծանեան զնա։ Իսկ մեք Քրիստոնեայք. որք հաւատալով 'ի նա. ստացաք նովաւ զաչս և զունկս հոգւոյ 'ի տեսանել և 'ի լսել. ջանասցուք 'ի վերծանել զարդիւնս սոյնոյ նորոյ ուխտի շնորհական օրինաց. ընդ նմին և փոքր 'ի շատէ տեղեկանալ սահմանի և խորհրդոց սրբոյ ընդ հանրական Եկեղեցւոյ նորին. զի կարասցուք լինիլ ժառանգորդք պարգևացն խոստացելոց։ զոր ահա ըստ կարի համբակ մտաց իմոց՝ մատչիմ 'ի գրել զհակիրճ բանս. վասն օգտի նորակիրթ մանկանց։

Յաղագս շնորհական օրինաց։

ՊՐԱԿ. Ա։

Վասն ստոմերական օրինացն Մօսէսի՝ 'ի լոյս ճշմարտութեան փոխանակելոյն Քս̄ի։ Եբ̄ս և վասն պարգևաց երջանկութեան յաւիտենականի կենաց։

Հ. Օրէնքն Մօսէսի զի՞նչ արդիւնս ունէին. և զինչ փրկութիւն գործեցին մարդկային սեռի։

Պ. Արդիւնք օրինացն Մօսէսի. ներածեաց զմարմնացեալ. այսինքն զզգալեաց ծառայող մարդիկս 'ի կռապաշտութեան 'ի ծանօթութիւն աներևոյթ ճշմարտին Ա՛յ. և 'ի վարձատրութիւն ժամանակաւոր բարեաց սոյնոյ կենի։

Իսկ վերածել զմարդիկ 'ի յաւիտենական երկնային երջանկութիւն. և յԱզատութիւն 'ի զգալեաց ծառայութեան, վերապահեցեալ էր միայն մեսիայի. այսինքն Յս̄ի Քս̄ի միածնի որդւոյն Ա՛յ. որ նա միայն էր կարող ազատելոյ. ըստ իւրոյ բանի. զի եթէ որդին ազատեսցէ զձեզ ճշմարիտ Ազատք լինիջիք։ Յօհ. 8. 36։ Եւ նա միայն ունէր իշխանութիւն պարգեւելոյ զկեանս յաւիտենականս։ որ հաւատայ յիս, թէպէտ և մեռանիցի՝ կեցցէ։ 11. 25։

Ա՛ս̄յ և պատուիրեաց Մօսէս ամբոխի իւրոյ ունկնդիր լինիլ մեծի մարգարէին։ քանզի օրէնքն Մօսէսի. ըստ սրբոյ առաքելոյն Պօղոսի. Եբր. 10. 1։ զստուեր հանդերձելոց բարեացն ունէին, և ոչ զնոյն կերպարան իրացն։ քանզի ոչ ինչ կատարումն գործեցին օրէնքն՝ և մուտ ազնօւականի յուսոյն, որով մեձենամք առ Ա՛ծ. այլ 'ի հե-

ռուստ տեսին և ցնծացան։ զի օրինօք ոչ ոք արդարանայ առաջի Աստ. այն յայտ եսկ է. զի արդարն ասէ ՚ի հաւատոյ կեցցէ։

Յե. Քո փրկիչն մեր՝ ելոյծ զօրէնսն Մովսէսի։

Պ. Ո՛չ ՚ի լուծանել զօրէնս և զմարգարէս, այլ լնուլ։ այսինքն. զստուերն ՚ի լոյս և ՚ի ճշմարտութիւն փոխանակել։ եկի ասացեր որպէս և փոխանակ Ջատիկական անարատ գառին զնման, և արեան նորին. նաև վասն բաղարջին, և դառն եղեգին, ետ մեզ զանապրիմ Մարմին իւր հայց անխմոր։ Ու զդառնակսկիծ չարչարանս իւր՝ իբր զդառն եղեգ. զի ունիցիմք զղջումն և զապաշխարութիւն ընդ Առաքինական վարուց։ Ու զԱմենասուրբ Արիւն իւր ՚ի դէպ գրուածն մտից սենեկի սրտից մերոց. զի մի մտցէ հոդւոց սատակիչ հրեշտակն անգրանկածախ։ Ու սոքօք արար մեզ Ջատիկ. այսինքն անցք, կամ ելք յերկիստասարս դժոխոց. և ազատեալ ՚ի բռնէն դերութենէ անմարմին փարաւօնի քեվլատայ։ Որ և գաճազանաւ խաչին պատառելով զծով մեղաց ՚ճի. անցոյց զմեզ անթաց ոտիւք. այսինքն Թարց մարմնային աղտից՝ յայնկոյս Երկնային յաֆնապատն ՚ի տեղի անկելոց հրեշտակաց։ Ըղկեցոյց և զհարմամբ տիգաւ ցայց (որով խոցեցաւ ՚ի կողն.) իբր յանշունչ վիմէ. անհատարար ջուր և արիւն ՚ի լուացմունն մեզ և յարքունին։ Ու տեղեաց զմանանայ ՚ի կերակուր. զկենատու բան իւր։ Ու սիւն լուսոյ շնորհեաց մեզ զՄուրբ Աստուածան իւր. ՚ի լուսաւորութենէ խաւարի դիշերոյ տգիտութենէ. և յառաջնորդութենէ ՚ի բանակետզ ճշմարտութենէ։ Ու ամպ հովանի արար մեզ զՀնոր-հրս հոգւոյն սրբոյ. զի մի նեղիցուք ՚ի վտանգիչ

տապոյ ջերմախտից մարմնոյ՝ Եվ, և ամանայն ։
Նա ՚ի նորոգութենէ հանդերձից և կօշկաց՝ պարգևա-
հայ մեզ զղջմամբ և ապաշխարութեամբ ըստացումն
չնորհայ պատմուճանին լուսոյ ըստ անառակի որդ-
ւոյն, զոր զգեցուք սկրտութեամբ սրբոյ Աբազանին ։
Այլ և կանդնեայ մեզ տաղաչար զսուրբ Լիկե-
ղեցի. ուր համախմբեալ տօնիւք յիշելով զժա-
մանակ ընակութենէ մերոյ յանապատի անձն կռա-
պուշտութենէ. և առնեմք զնաճակատիս տաղաչարա-
հարայ օրհնելով և փառաբանելով զձեռ ուրա-
խութենէ, վասն մտանելոյ յերկիրն աբեհտեայ ՚ի
վերինն Հիմ առաջնորդութենէ խսկականին Քես-
ոմայ Քրի. որ մարդեղութենէ իւրով է Ճշմա-
րիտ տապանակ Այ նորոյ ուխտի. յորմէ լինին
միշտ Աճախօսութիւնք սուրբ Աբեհտարանաձն, ՚ի
խորանին վկայութենէ սրբոյ Լիկեղեցւոյ. Սոյին նը-
ման և զայլ բազում տոհերական և զօրինակա-
կան օրէնս Մօսէսի, ՚ի լայս և ՚ի Ճշմարտութենէ փո-
խանակեաց։

Ղ. Իբրև Մօսէսի օրէնս ինչ դատապտանական Մդ
Քո հաճատայելոյ իւրոց ։

Պ. Սուրբն Քօհաննէս վկայեաց վասն Քրի, թէ օ-
րէնքն ՚ի ձեռն Մօսէսի տուան. Ընորհք և Ճշմար-
տութիւն ՚ի ձեռն Քրի եղեն ։ Քանզի ամենայն
բանք բերանոյ նորա. լայս՝ կեանք՝ և Ճշմարտուն
էին. և ոչ ծանրութենէ բեռանոյ օրինայ. այլ թե-
թևութենէ և հանգիստ։ որպէս և ասայ. եկայք
առիս ամ աշխատեալք և բեռանաձորեալք (օրի-
նօք) և ես հանգուցից զձեզ ։ զի լուծն իմ քաղցր
է, և բեռն իմ փոքրոգի. այսինքն թեթեւ. որ է
՚ի սուրբ սրտէ սէր առ Աձ՝ և առ ընկերս ։ նաև

զայս ամենայսոցիկ պատճիրան՝ թէ եղերուք սուրբք և վճռակք, որպէս և Հայրն ձեր երկնաւոր սուրբ է և ողորմած: Այս այսպէս սիրել զՔ՝ամ սրտիդ. յամ անձնէդ. յամ մտաց. և յամ զօրութենէ մերմէ: Ամին նման սիրել և զընկերն իբրև զանձն մեր. զի լսուածն օրինաց՝ սէր է ասացեալ. և նշան հաւատացելոց իւրոց՝ է սիրել զմիմեանս. որով և ճանաչելոց ենք թէ աշակերտք ենք Քրիստոսի: Զգուշացայք նաև մի գայթակղեցուցանել բնաւ զոք ի փոքրկանցս ի հաւատոյ բանիւք չարեօք: Այս մի և լինիլ չար օրինակ այլոց՝ ագահութիւն, փառամոլութիւն, կեղծաւոր առաքինութիւն ըստ փարիսեցւոց. կամ տգեղ և անառակ վարուք: այսինքն շռայլութիւն. զեղխութիւն. և գարշ պղտեղութիւն: Այլ ըստ ամի պարկեշտութիւն հետևիլ բարեգործութեան. զի տեսանելով այլոց զգործս մեր բարիս, փառաւորեսցեն զՔ՝ Հայր մեր որ յերկինս է: Մատ. 5. 16: Իսկ վասն այսոցիկ Տային գործոց դատաստանականաց. առ ի համակերպիլ օրինաց՝ ի մի բան համառօտեաց: Թէ մի կամ հակառակ չարիք. այլ զամ զոր ինչ կամիք զի արասցեն ձեզ մարդիկ՝ զայն արասջիք և դուք նոցա. և զոր ինչ կամիք զի մի արասցեն ձեզ մարդիկ, մի առնէք և դուք նոցա: և ինքեայ թէ ամ օրինք և մարգարէք ի սմանէ կախեալ կան: Մատ. 7. 12:

Ե. Այսու շնորհական օրինօք. այլ ևս գերազոյն պարգևս՝ և երջանկութիւնս ինչ խոստացաւ Քս մեզ. զոր Մովսէս, և այլ մարգարէք ոչ կարացին, և ոչ ևս կարէին խոստանալ:

Պ. Խոստացաւ մեզ Քս վերստին ծննդեամբ բանիւ իւրով՝ ի հոգւոյ՝ ստանալ զանմահութիւն, և

անապական կեանք յաւիտենական, և ժառանգու-
թիւն արքայութեան Աւ։

Ե. Որով ծնանիմք վերստին ի հոգւոյ. և լինիմք ժա-
ռանգք արքայութեան Աւ։

Պ. Մկրտիլով և հաւատալով յամենասուրբ երրոր-
դութենն, ի հայր՝ և յորդի՝ և ի սուրբ հոգին. և
ի մարմնառութեի միածնի որդւոյն Աւ. որով և
ծնանիմք հոգւով, և սատանայմք զանմահութեի, և
կեանք յաւիտենական. և ժառանգութեի արքայու-
թեան Աւ։ Թարց որոյ չէ կարելի ատանալ. ըստ
Տն բանի. եթէ ոք ոչ ծնցի ի ջրոյ և ի հոգւոյ՝
ոչ կարէ մտանել յարքայութեի Աւ. զի ծնեալն
ի մարմնոյ մարմին է. և ծնեալն ի հոգւոյ՝ հոգի։
որ և ծնանելով ի հոգւոյ՝ ճանաչեմք զմիայն ճշմ
մարիտն Աե. և զոր Առաքեացն պՅ Քա ։ Ըստ
հաւատալով ծնանիմք յԱՀ. Յօհ. ։ 13։ և ըն-
կալնումք զանմահութեի. ըստ իւրոյ բանի. Թէ՝ որ
հաւատայ յիս. և պահէ զբանս իմ, զմահ մի ճա-
շակեսցէ յաւիտեան. որ եթէ մեռանիցի և կեց-
ցէ. զի ես յարուցից զնա ։ Քանզի ես-եմ հացն
յերկնից իջեալ. եթէ ոք ուտիցէ ի հացէս յայս-
մանէ կեցցէ յաւիտեան ։ Եւ հացն զոր ես տայ
մարմին իմ է. զոր ես տայ վասն կենաց Տի ։ Եւ
որ ուտէ զմարմին իմ. և ըմպէ զԱրիւն իմ, ունի
զկեանս յանդիման. զի որպէս Հայր յարուցանէ զմե-
ռեալս և կենդանի առնէ. նոյնպէս և որդի՝ զորս
կամի կենդանի առնէ. զի ես իսկ եմ Յարութեի
և կեանք։

Ե. Սոյն յաւիտենական կեանք, հրպիսի երջանկութեի
և փառաւորութեի ունի ։

Պ. Յա Քա ինքն զեկոյց մեզ զփառաւորութեէ և

զերջանկութիւնէ նորա. թէ ի տեսանել մեր զվատս իւր, զոր ունի ի ծոց հօր իսկզբանէ. եւ լինիլ մեր ի փառս Աւ, միանալով ընդ ինքեան Քրիստոս. և նովաւ ընդ Աւ հօր ։ և լինիլ մի, որպէս և նոքա մի են ։

Երջանիկ կեանքն է, որ Ցո Քո միմնայ ընդ մեզ՝ որպէս թէ յանդաման իւր. և սկզբն յաճախեցնական՝ զոր հայր ունի վասն որդւոյ իւրոյ զՀոգին սուրբ, սփռելով ի վերայ մեր լցուցանել զմեզ նովին պարգեւօք. որով և մեք յայտնի և լուսաւորը տեսութիւն, Ճանաչելմք զմիայն Ճշմարիտն Ած, և զոր առաքեացն զՑո Քո ։ Եւ այսու լուսաւորը տեսութիւն տպաւորի և կատարունակի ի մեզ պատկերն Աւ անթերի. և լինիմք նման նման. զի տեսանեմք զնա որպէս և էն ։ Եւ այնոյ տեսութեանէ հետեւի սէր մի անսպառ. և անպըղտ ուրախութիւն մի անտրտում, և անձառելի։ Աչելուխա մի. և ամէն մի յաճախեցնական. քանզի վտարին ի մէնջ եամ եղկելի Ցային թշուառութիւնք. և լցանան հանգիստ բաղձանք երանականք. և ոչ ինչ այլ ինչ՝ բայց եթէ՝ օրհնել՝ գովել՝ և փառաբանել զԱծ այնի բարերարութէ ։

Ա՝ասն զի Ցո Քո յաճախեցնականապէս միացեալ ընդ ընտրեալս իւր՝ ոչ ևս կոչէ զնոսա ծառայս, այլ բարեկամս և սիրելիս. որոց վասն և ետ զանձն իւր. որք և եղեն նման անդամք և մարմին. ուստի և Հայրն յաճախեցնական. ոչ ևս Հայր ի նոսա ունի որդւոց ապստամբից. այլ Հայր ի գլուխ նոցա ի Ցո Քո. որոյ ի սէր ոչ ևս դատապարտել զնոսա, այլ մանաւանդ թէ սփռէ ի վերայ նոցա զանհուն սէր իւր, վասն որդւոյ իւրոյ սիրելոյ. զի նոյն ինքն

որդին է որ ո՛չ կամի բաժանիլ 'ի մարդկանց զորս ստացեալ է արեամբ իւրով. վ՞ս և խնդրեաց 'ի հօրէ 'ի վերջնում յաւուր փոխման իւրոյ յԾէ թէ՝ հայր կամիմ զի ուր եսն եմ և նոքա ընդիս իցեն, և եղիցին ընդ մեզ մի՛, որպէս և մեք մի եմք։ Յօհ. 17. 11։ և 24։ Նաև լցցին 'ի հոգւոյ իմմէ. և վայելեսցեն զփառս իմ. և հաղորդ լիցին Աթոռոյ անվախճան թագաւորութեան իմոյ։ Յայտ. 3։ 21։

Ահաւասիկ արդիւնք և պարգևք շնորհական օրինաց. զոր ոչ ո՛ք 'ի մարգարէից կարէր երբէք 'ի բերան առնուլ կամ խոստանալ. Այլ միայն Յ՞ս Ք՞ ունէր զայս կարողութի՛ զոր շնորհեաց ընդհանրական Եկեղեցւոյ իւրոյ։

ՊՐԱԿ. Բ։

Յաղագս հաստատելոյ Ք՞ի զխորհրդաւոր ընդհանրական եկեղեցի իւր 'ի վերայ վիմի դաւանութեան սրբոյն Պետրոսի։

Հ. Ք՞ Տ՞ն մեր հաստատեաց ուրեմն վասն իւր եկեղեցի։

Պ. Այո՛, հաստատեաց Ք՞ զխորհրդաւոր ընդ հանրական Եկեղեցի. այսինքն զհաւատացեալս իւր՝ 'ի վերայ վիմի հաւատոյ և դաւանութեան ջերմեռանդ սիրով նախկին դաւանօղի՝ սրբոյ առաքելոյն սիմօնի. ըստ գրելոյ սրբոյ Աւետարանչին Յօհաննու. թէ՝ իբրև լուաւ 'ի սրբոյ Առաքելոյն Անդրէի յեղբօրէ իւրմէ թէ՝ գտաք զՄեսիա, (որ թարգմանի Ք՞։) իսկոյն դիմեաց առ նա կարի ջերմեռանդ սիրով և կատարեալ հաւատով

մինչեւ տեսեալն էր։ Այսուհետ Ցոհ՝ զերանուելեան արժանի զհաստատուն հաճատս նորա, ասէ. դու ես սիմոն որդի յովնանու. դու կոչեսցիս կեփաս (որ Ասորւոց լեզուաւ ասի վէմ։ Ցոհ. ։. 42։ որ թարգմանի Պետրոս) Յս ապայ ըստ սրբոյն Մատ. գլ. 16. 18։ Կրկին՝ ի դաւանելն զՔս վերստին կոչեաց զնա վէմ, այսինքն Պետրոս ըստ լատին բարբառոյ. որ զմի և զնոյն նշանակութիւն կեփասի ունի։ Զի ի բերե զվէմ հաստատուն եդիտ զնա՝ ի նախկին հաճատս իւր. վայ և երանելի տոճեալ ասաց՝ թէ՝ ի վերայ այդր վիմի դաւանութեանդ հաստատեցից զեկեղեցի իմ. այսինքն ըստ խոստմանն հաճատացելոց. և շնորհեաց սոյնպէս ընդհանրական սուրբ եկեղեցւոյ. անխախտ և անյաղթելի մինչեւ ի բերե զվէմ. և դրունք դժոխոց. (այսինքն բերանք հերիտիկոսաց) զնա մի յաղթահարեսցեն։ այսինքն զդաւանութիւդ այդ մի պայքարեսցեն։

Ցոհ. Զինչ էր դաւանութիւն սրբոյն Պետրոսի։

Պ. ՝ի հարցանելն Քեզ Առաքելոց իւրոց՝ իսկ դուք զո՞ ասէք զինէն թէ ի՞նչ եմ։ Պատասխանեաց սուրբն Պետրոս. (որպէս և հաճատացեալն էր նախասէնն) Դու ես Քրիստոս որդի Այ կենդանւոյ։ Այսու բանիւ դաւանեաց նաև զերկրորդութիւնն՝ ի միութեան. զի կենդանի բառս աստէն նշանակէ զհոգին սուրբ. զի անբաժանելի և առինչք են միմեանց։ Յս զի յուրբ առաքեալն խոսելով զՔեզ՝ զերկրորդութիւնն ևս ՝ի միասին դաւանեաց. վայ և ընկալաւ զերանութիւնն ՝ի Քեզ։ երանի ի քեզ սիմոն. զի մարմին և արիւն ոչ յայտնեաց քեզ. այլ Հայրն իմ որ յերկինս։ Յս յայժամ կրկին վէմ անուանեաց զնա. դու ես վէմ. այսինքն նախկին իբրև զվէմ

հաստատուն հաճատացօղ և դաճանօղ. և 'ի վերայ այդր վիմի (դաճանութեան) հաստատեցից զեկեղեցի իմ. այսինքն զհաճատացեալս իմ. և դրունք դժոխոց զնա մի՛ յաղթահարեսցեն. (մինչև 'ի կատարած ծի) Ահա այսու դաճանութեամբ. Նախ քան զամենեսին առաջին և հիմնական վէմ եկեղեցւոյ կոչեցաւ սուրբն սիմօն Պետրոս. յօրինակ ամ հաճատացելոց։ Եւ այսպէս Քս 'ի վ ր սոյնոյ դաճանութեան վիմի հաստատեաց զեկեղեցի իւր. և ոչ թէ 'ի վ ր անձին սրբազանին Պետրոսի. զի մի՛ եկեղեցի իւր լինիցէր եկեղեցի Պետրոսի. վայ և 'ի վ ր այդր վիմի ասաց. և ոչ 'ի վ ր քումդ վիմի. ոպ և մեկնեն ամ սբ հարք. և վերահաստատէ սբն ներսէս շնորհալի, յերգս արարչականին. Տուն շինեցեր զեկեղեցի. վէմդ 'ի վ ր վիմին բանի. այսինքն դաճանութեան։

Ա. Ո՞ւր է այժմ այս ընդհանրական Եկեղեցին հաստատեալն 'ի Քսէ։

Պ. Սոյն միակ և ընդհանրական Եկեղեցին։ այսինքն խումբն հաճատացելոց՝ որ նախ 'ի Քսէ՝ և 'ի սրբոց առաքելոց իւրոց հաստատեցաւ յեէմ. է տարածեալ յայնմ հետէ՝ նովին միութեամբ առ ընդհանուր ոլորտս տիեզերի, ուր և գտանին ճշմարիտ հաճատացեալք իբրև մի սիրտ և մի հոգի, այնու վիմական դաճանութեամբ միաճորեալք 'ի Քս. ունելով մի երկին, և մի արեգակն զՔս. որոց և իւրաքանչիւրքն պարգևօքն Քսի կոչին վէմք. ըստ գրելոյ սրբազանին Պետրոսի։ 1. Պետ. 2. 4։

„Առ որ մատուցեալ վէմն կենդանի, որ թէպէտ 'ի մարդկանէ անարգեալ. այլ առ յԱյ ընտրեալ և պատուական է։ Եւ դուք իբրև զվէմըս կենդանիս շինիք տաճար հոգևոր. յանարատ

քահանայութիւն մատուցանել զՀոգևոր պատարագս՝
Հաճոյս ԱՅ, ՚ի ձեռն ՅՍի ՔՍի։ Քանզի կայ իսկ
՚ի գրի. Թէ ահաւասիկ դնեմ ՚ի սիօն վէմ ընտիր
գլուխ անկեան պատուական. և որ հաւատասցէ ՚ի
նա՝ մի ամաչեսցէ։ ձեզ այսուհետև հաւատացեալ-
ոց. (նա) է վէմ պատուական։ ևն։ Այսու քա-
նիւք յայտնեաց սուրբ առաքեալն, թէ ամ որ
հաւատայ թէ ՅՍ է ՔՍն որդի ԱՅ կենդանւոյ.
պարգևօքն ՔՍի, կենդանի վէմ է Հոգևոր՝ մա-
տուցեալ առ իսկական վէմն կենդանի իբրև ան-
դամ. և նա է գլուխ նոցա. և քնակի ՚ի նոսա ոչ
թէ յեկեղեցւոջ օթարանի իւրում։

Ա՛. Գո՞յ և նիւթաւոր եկեղեցի։

Պ. Այո. գոն և նիւթաւոր սուրբ եկեղեցիք քա-
զումք կատուցեալք ՚ի քրիստոնէից առ ամ հաւա-
տացեալ ազգս, յամ տեղիս. որք կոչին տունք
ԱՅ. և տաճար կամ տեղի Աղօթից։ Այս իւրա-
քանչիւր ազգ՝ ունի իւրեան յատուկ հայրապետս։
եպիս վերատեսուչս. և վարդապետ ուսուցիչս.
նաև քահանայս մատակարարս խորհրդոց եկեղեց-
ւոյ. և զսարկաւագունս և զդպիրս պաշտեննայս
Աճային խորհրդոյ. որք և ամենքեքին կոչին վէմք
և անդամք միոյ եկեղեցւոյ։ յորս ժողովեալ ուղ-
ղափառ դաւանութիւն. և ջերմեռանդ հաւատով
լինին ընդ ամ տալակայ ուղղափառ ազգաց իբրև
մի սիրտ և մի հոգի թարց խտրութեան։ Այս իւր-
աքանչիւրն ըստ չափի արարողութեանց
իւրեանց կատարեն ՚ի նոսա զպաշտամունս եօթանց
խորհրդոց ընդհանրական սրբոյ Եկեղեցւոյ. որով
և լինի քաւութիւն և թողութիւն մեղաց. և պարգևք
Աճային շնորհաբաշխութեանց։

ՊՐԱԿ. Գ։

Յաղագս եօթն խորհրդոց ընդհանրական եկեղեցւոյ։

Հ. Ո՞յք են վերոյիշեալ եօթն խորհուրդք ընդհանրական Եկեղեցւոյ։

Պ. Եօթն խորհուրդք եկեղեցւոյ են սոքին։ Մկրտութիւն. Դրոշմ, Ապաշխարութիւն. Հաղորդութիւն. Կարգ քահանայութեան. Սբ Ամուսնութիւն. և վերջին օծումն։ որոց երեքն անջնջելիք են, և Պսակն մահուամբ լուծանի։

Հ. Զի՞նչ է խորհուրդ մկրտութեան։

Պ. Մկրտութիւն է՝ խորհուրդ անջնջելի. որ լուացմամբ սրբոյ Աւազանին Յանուն Հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ. ազատիմք 'ի սկզբնական մեղաց նախահօրն. և զերծանիմք 'ի ծառայութեան դիւաց։ Եւ հաւատալով յԱմենասուրբ երրորդութիւն, և 'ի մարմնառութիւն բանին Այ. և մկրտութեան մեռանելով վասն Ծի՝ յառնեմք ընդ Քս՝ ծնանելով վերստին 'ի հոգւոյ. և զգեցեալ զՔս՝ որդեգրիմք հօրն երկնաւորի. և լինիմք յարմար ընդունելոյ զհոգին սուրբ։

Հ. Զի՞նչ է խորհուրդ Դրոշմին։

Պ. Դրոշմն է՝ խորհուրդ անջնջելի. որ օծմամբ սրբ բալոյս Մեռոնաւ ընկալնումք զհոգին սուրբ ոտ Առաքելոց 'ի վերնատանն, որով զօրացեալ և սպառազինեալ յաղթեմք 'ի մարտի թշնամեաց հոգւոյ. և ընկալեալ զպսակն յաղթանակութեան՝ լինիմք ժառանգորդք յաւիտենականի կենաց յԱրքայութեան Այ։

Հ. Զի՞նչ է խորհուրդ Ապաշխարութեան։

Պ. Ապաշխարութիւն է՝ զղջալ և յետս չդարձիլ յամ կերպէ ներգործական մեղաց, զոր գործեմք մարդկային տկարութիւն. և ճնշելով զնձս մարմնոյ ՚ի բաց կալ յՅայնմ անկարգ հեշտութեց. և խոկալով միշտ Աճայնոյ՝ վերաստանալ զշնորհս հոգւոյն սրբոյ զոր կորուսանեմք մեղօք. և կրթիլով ՚ի վարս Առաքինականս՝ լինիլ սուրբ և պատրաստ օթևարան ԱՅ և հաղորդ Ճաի քո։

Հ. Զինչ է խորհուրդ հաղորդութե։

Պ. Հաղորդութիւն է՝ սրբութիւն և արժանաճորութիւն ընկալուլ զԱմենասուրբ Մարմին և Արիւն Քո. և խորհդաբար հաղորդիլ այսինքն միաճորիլ ընդ նմա, և ի նմ հաստատելոյ. և լինիլ մի ի Քով և ի անդամոց նր. և ամենքումբք առ Աճ. ըստ իւրոյ բանի, թէ եղիցին և սոքա ընդ մեզ մի. ոչ և մեք մի եմք։ Քանզի սուլա բնակի Քս ՚ի մեզ ըստ խոստման իւրոյ. թէ որ ուտէ զմարմին իմ, և զարիւն իմ (արժանաճորութե) նա յիս բնակի, և ես ՚ի նա։

Հ. Զինչ է կարգ քահանայութե. և քանի՞ աստիճանս, և զինչ զօրութիս ունի. և հիք են։

Պ. Կարգ քահանայութե՝ է խորհուրդ անջնջելի. և ունի բազում զօրութիս. և աստիճանս եօթն։ և է հրաժարիլ յՅայնմ զգաղմանց՝ փարթամութեց՝ փառաց՝ և ամ հեշտալի վայելչութեց և հաճոյութեց. և հետևիլ միայն Աճայնոյ. որպէս և մինչ ընկալնուն զկարգն՝ ասեն. Տր բաժին ժառանգութեան իմոյ։ վայ և երդմամբ յանձն առեալ խոստանան և ուխտեն ազաչի ԱՅ՝ զկատարած աղաչութիւն. մշտնջենաւոր ոչնախոհութե. և զկատարեալ հնազանդութիւն հրամանի Տն իւրեանց՝

հանգոյն Առաքելոց ։ զի ստացեալ կրկին հոգի ,
և զզօրութիւնն ՚ի բարձանց . կարիցին սաստել դի-
ւաց՝ և հալածել . բժշկել զհիւանդս և զլաստա-
ժեաս. և շնորհելով զհոգի սուրբ թողուլ զմեղս
Անուն Ցոյն ։ Եւ գոլով ներհմտացեալ Աճապին
օրինաց՝ լինիլ ախոյեան եկեղեցւոյ ՚ի կարկել զլե-
զուս հերետիկոսաց . և ուսուցանելով հաճատա-
ցելոց զուղղափառութի և զձանապարհ Արքայութե
երկնից՝ կրթել զնոսա ՚ի բարեգործութի և ՚ի
վարս Առաքինականս . և մատակարարելով նոցա
զնորհուրդս եկեղեցւոյ՝ ընդ զնոսա շնորհօք Հոգ-
ւոյն սրբոյ ։ Եւ սոյն կարդ քահանայութե մի և
նոյն արժանաւորութի ունի առ ՅՄ քահանայա-
ցեալս . բայց յիշխանութե և ՚ի կառավարութե
Հպիսկոպոսական և Ճայրապետական գերազանց պատուոյ՝
և աստիճանի ։ Քանզի եօթն են աստիճանք հա-
մայն եկեղեցական հասարակ ալսարդութե ։ և կո-
չին առ հասարակ կղերիկոսք. այսինքն եկեղեցական
վիճակաւորք կամ ժառանգաւորք ։ Եւ ելանեն
յաստիճան. այսու կարգաւ ։

Նախ՝ յԱռաջնում Աստիճանի. խուզէ սրբա-
զան Հպիսն զսակաւ ինչ հերս ՚ի գագաթանէ ըն-
ծայեցելոյն . ՚ի նշանակ հրաժարեցման յ՚ԵՆ և
յ՚ԵՍՈՅՈ . զի հատուածն հերաց՝ Ե բացարկութե
երկրային ընչից և զգաղմանց. և հետևուածն Քրի-
ստոս առաքելոց ։ թէ՝ ահա թողաք մեք զամ , և
եկաք զկնի քո։ հրամայէ նաև գերծուլ զգագաթն
բոլորակաձև, նոյնպէս և ունիլ վարսս բոլորակաձև
հատեալ . ՚ի նշան և յիշատակ փուշ պսակին Քրի-
ստոսի . զի թէ չարչարակից՝ և խաչակիր Ե նորա ։ առ
՚ի լինիլ նման արժանի , և աշակերտ ։ Ապայ տայ

նմա և զբանալիս եկեղեցւոյ. ընդ նմին և աւել 'ի ձեռս. և հրամայէ բանալ զդրունս եկեղեցւոյ, և ածելով 'ի նմին աւել՝ սրբել և մաքրել յազբիւսաց։ որ նշանակէ բանալ զունկս դրանց կենդանի տաճարին ԱՄ, 'ի լսել զպատգամս նորա. և աւել ածմամբ սրբել զսիրտ իւր յծային աղտեղութեաց և ընչասիրութեաց, ըստ սարասի Առաքելոց. զի յարդարեալ լիցի ընկալնլոյ զշնորհս հոգւոյն սրբոյ. որ եկեալ Քս բնակեսցի 'ի մաքրեալ տանն այնմիկ ընդ հօր և ընդ հոգւոյն սբ՟յ։ Ես և Հայր իմ առ նա եկեսցուք, և օթևանս առ նմա արասցուք։

Երկրորդ աստիճանն կոչի ընթերցող. զի տալով նմա Եպկ՟ն զեկեղեցական ժամակարգութեան գրեանս, հրամայէ ասել զփոխս յեկեղեցւոջ։ որ նշանակէ թէ տայ նմա շնորհս իմանալոյ և վերծանելոյ, և մանաւանդ թէ ուսանելոյ զբանս Ածային պատգամաց, ընթերցմամբ սրբոց գրեանց։

Երորդ աստիճանն կոչի երդմնեցուցիչ. որոյ տայ եպկ՟ն զմաշտոցն, և պատուիրէ հմտանալ խորհրդոց սրբոյ եկեղեցւոյ. և խոկալով զԱծայինս՝ վերահասու լինիլ սրբոյ Աւետարանականի ճշմարտութեան, առ 'ի ընկալնլոյ զառաքելական շնորհս։ վ՟ս և տայ նմա զօրութիւն, և իշխանութիւն երդմնեցուցանելով յանուն Ց՟ի սաստել և հանել զդևս. և դնելով զձեռս 'ի վերայ հիւանդաց բժշկել զնոսա։ որպէս և Քս ետ Առաքելոց իւրոց զզօրութիւնս և զիշխանութիւնս զայսոսիկ՝ զկնի ուսուցանելոյ զնոսա։ ըստ գրելոյ սրբոյն Մատթէոսի։

Չորրորդ աստիճանն կոչի ջահընկալ. նաև դպիր. այսինքն օրէնսգէտ։ որոյ տայ Եպիսն ըզ վառեալ ջահն, և հրամայէ լուսաւորել զեկեղեցին լուցանելով զմոմս, և զկանթեղս նորին. և ընթեռնուլ յեկեղեցւոջ զմարգարէական և զառաքելական գրեանս։ որ նշանակէ. թէ զկնի վարժիլոյ նորա յԱծային գիտութիւն. և ստանալոյ զզօրութիւն երից նախնթաց աստիճանաց. և զիշխանութիւն 'ի վերայ դիւաց. և զշնորհս բժշկութեանց. հետևեսցի 'ի լուսաւորել զեկեղեցին. այսինքն զժողովուրդն, որք են բանաւոր մոմք և կանթեղք յեկեղեցւոջ Քս̄ի։ և բանիւք մեկնութ Ածային գրեանց. և գործովք ստացեալ զօրութեանցն՝ լինիլ ջահ և մշտավառ աշտանակ լուսոյ 'ի տանն Այ. ըստ բանի Տն̄, թէ դուք էք լոյս Ծի։

Հինկերորդ՝ աստիճանն կոչի կիսասարկաւագ. որոյ տայ եպիսն կրել 'ի բազկի զուրարն. այսինքն զլուծն Քս̄ի. և կարգէ զնա ասել զքարոզս աղօթից ժամերգութեց. և սպասաւորել խորհրդոց եկեղեցւոյ. և տայ նմա իշխանութիւն խնկարկելոյ բուրվառաւ 'ի ժամ աղօթից. և կալով 'ի բեմին առնել խնկարկութիւն սրբոյ Պատարագին։ որ նշանակէ զկարգ հրեշտակային. որ զաղօթս և զբարեգործութիւն հաւատացելոց իբրև զխունկս 'ի հոտ անուշից՝ ընդ ջերմեռանդ հրով սիրոյ նոցա հանեալ յերկինս մատուցանէ Այ։ Եւ զփոխարէնն զօրհնութիւն և զշնորհս Այ՝ բերեալ մատուցանէ ժողովրդեանն խնկարկութիւն։

Վեցերորդ աստիճանն կոչի աւագ սարկաւագ. որոյ տայ Եպիսն կրել զուրարն՝ 'ի ուս իւր՝ իբր

*

կատարեալ ընակիր Քրիստոսի և տայ իշխանութիւն ընթեռնուլ յեկեղեցւոջ զսուրբ Աշետարանն ի ժամ սրբոյ Պատարագի. և ընկալմամբ ի ձեռս զսրբացեալ զսկիհն և զմաղդմանն հալիլ ի սաշտօն Աճային սրբոյ ընծայիցն. այսինքն օրհնեալ հացին և բաժակին ի վերաբերմանն. և գոլով առ ընթեր քահանային, ընդ միջակաւս սպասաւորել խորհրդոյ սրբոյ Պատարագին. նաև ի ժամ հաղորդութեան ժողովրդոյ, ունիլ ձեռամբ զսուրբ սկիհն։ որ նշանակէ զկարդ հրեշտակապետական լինել պատգամաբեր և Աշետաբեր մարմնաւորութեան բանին շրջաբերմամբ և ընթերցմամբ սրբոյ Աշետարանին։ իսկ վերաբերմամբ ընծայիցն. գալ և բազմիլն Քրի ի սեղանի ի վերնատանն, և ենթադրելն կամաւ պատարագիլ ի խաչ և ի մահ։ Եւ ունելով զսկիհն ի ձեռին ի ժամ հաղորդութեան ժողովրդոյ՝ նշանակէ երբեմն զներոքինն ունելեօք մերձենալ ի բերան հաւատացելոյ գհուրն Աճային սեղանոյ. զոր կանխաւ ետես և ընկալաւ Մարգարէն Եսայի։ գլ. 6. 6. 7։

Նօթինեորդն է լուսին ամ աստիճանաց, և կոչի կարդ քահանայութեան. որ զինի ստանալոյ լսակս զզօրութիւնս և զներգործութիւնս վերոգրեալ վեցից աստիճանաց. ընկալնու յայնժամ ի սրբազան եպիսկ հրամանն մատակարարելոյ զխորհուրդս սրբոյ եկեղեցւոյ. և անմիջապէս պատարագելոյ զՔ. և զնուիրաւորը Հայն և զԳինին. քանի Տն. այսինքն ըստ գործոյ գործեցելոյն. յերկրպագելն Աճային Մարմնին և Արեան Քրի դպատիո. խելոյ։ շնորհել նաև ի խորհուրդ մկրտութեան և դրոշմի զՀոգի սուրբ. Եւ ի խոստովանութեան և

յապաշխարութիւն՝ թողլոյ և քաւելոյ զմեղս։ Եւ լինելով միջնորդ Այ և մարդկան հաշտեցուցանել զԱծ ընդ մեղուցեալ մարդոյն. ըստ գրութիւն մեծին վարդանայ 'ի մեկնութիւն 131 սաղմոսին 'ի տանն երիցունք քո զգեցցին զԱրդարութիւն. և՝։

Իսկ Եպկսութիւն է գերագոյն իշխանութիւն. և առաքելական կառավարութիւն, որ ընկալնու 'ի սրբազանակատար հայրապետէ. և է գործ յոյժ բարւոք. ըստ գրելոյ սրբոյն Պողոսի առ Տիմէթէոս, և 'ի Տիտոս։ տեսջիք նաև 'ի ընդհանրականի Ընորհալւոյն։

Եւ հայրապետականն գերազանց իշխանութիւն, է փոխանորդութիւն Քս̄ի. որ լինի ընտրութիւ̄ և հաճութիւ̄ ժողովրդեանն՝ և եկեղեցականաց ազգին։ յորմէ իբրև անսպառ յաղբերէ զեղանին ընդհանուր Ածային շնորհք. և շնորհաբաշխութիւնք։

Հ. Զի՞նչ է խորհուրդ սրբոյ Ամուսնութիւն։

Պ. Վասն սրբոյ ամուսնութիւն. գրէ սրբազանն Պողոս. խորհուրդս այս մեծ է. բայց ես ասեմ 'ի Քս̄ և յ'Եկեղեցի։ Եփես. 5. 32։ Այսու սակաւ բանիւք զբազում խորհուրդս բացայայտեաց։ Քանզի սովաւ մնայ հաստատուն անպարտելի ընդհանրական խորհրդաւոր՝ սուրբ եկեղեցին Քս̄ի. ըստորում այսու սուրբ և անխառն յամուսնութէ, ծնանին միշտ հետևաբար նոր 'ի նորոյ ուստերք և դստերք Այ, անդամք Քս̄ի՝ և ընտրեալք իսկզբանէ Ծի, իւրաքանչիւրն 'ի սահմանեալ յիւրում ժամանակի։

Եւ սովաւ աճին՝ զարգանան և կրթին մանկունք տածողութիւ̄ ծնողաց իւրեանց 'ի սուրբ հաւատս Քս̄ի. և 'ի վարս առաքինականս, և յու-

սուրբ Աճային օրինաց։ Ալ և սոյն անձառելի խորհուրդ նախ քան զամենեսին ԱՀ յինքեանէ ջրհնեալ հաստատեցաւ նախկին մարդոյն. վասն ապացուցի խորհրդոցն անբաժանելի միաճութեան քանին ԱՀ ընդ մարդկութեանէ. և քանի ընդ սրբոյ եկեղեցւոյ իւրոյ։ սակս որոյ և այնքան մեծաւ աբ- ժանաճոլութեամբ դրոճատեաց զսա սուրբ առաք- եալն Պողոս. Ցերբ. ե3. 4։ ԼԷ՝ Պատուհական է ամուսնութիւնն, և սուրբ են անկողինք նոցա. Եւ եթէ ամուսինք ինքեանք ևս սուրբ պահեսցեն։ քանզի խառնակութիւն պղծի. և որ թարոյ մահու անխզելի և անմեկնելի էր, պոռնկութեամբ լուծանի։ Մատ. 5. 32։ Ալ ասեն զի արու և էգ արար զնոսա Աճ, Ծննն. ։. 28։ և ոչ արուք և էգ. կամ էգք և արու։ Ու հրամայեաց առն՝ երթալ զկետ կնոջ իւրոյ, և ոչ կանանց։ Ու կնոջն ասաց՝ ե- զկոյկ դարձ քո առ այր քո. և ոչ առ արս. Նաև ասաց՝ ԼԷ եղկոյնն երկուքն ի մարմին մի. և ոչ երեքն կամ չորքն. որով բանիւք արգելեաց զնմ պոռնկութիւնս, և զբազմակնութիւնս. և զբազմայրու- թիւնս։ զի ասաց Աճ, և Նա տիրեսցէ քեզ. և ոչ ԼԷ՝ Նա տիրեսցէ ձեզ. կամ Նոքա տիրեսցեն քեզ։ Ու տիրեսցէ ասէլովն՝ պատուիրեաց կնոջն՝ հլու և հպատակ լինիլ առն իւրոյ. որպէս սուրբ Եկեղեցին Հնազանդ է Քրի։ Ու ԼԷ սկզբն, սի- րեսցէ զկին իւր իբրև զանձն իւր. որպէս և Քրս սիրեաց զեկեղեցի. և կինն երկնչցի յառնէ իւրմէ։ զի գլուխ իւր է. որպէս և Քրս գլուխ է եկեղեց- ւոյ։ ըստ գրելոյ սրբոյն Պողոսի առ Ափեսացիս ի բերանոյ Քրի։

Իսկ զոր Ած զուգեաց, մարդ մի մեկնեսցէ վճռելն Քս̄ի, պատուհիրեաց՝ մի ոք բռնութիւն. կամ նենգալի դաւաճանութիւն մեկնեսցէ զնոսա. այլ անբաժ միաւորութիւն և սիրով կեցցեն 'ի միասին մինչև ց'մահ. որպէս և Քս̄ կայ անանջատ ընդ եկեղեցւոյ իւրոյ մինչև 'ի կատարած Ծի։ Եւ ես ընդ ձեզ եմ զա̄մ աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի։ Մատ. գլ. 28. 20։

Հ. Զի՞նչ է խորհուրդ վերջին օծման։

Պ. Վերջին օծումն է օժանդակութի̄ խորհրդոց սրբ̄յ եկեղեցւոյ վասն թողութի̄ ներելի մեղաց. նաև 'ի լրումն անկատար մնացեալ Ապաշխարանաց։ Եւ ես և վասն բժշկութեան հիւանդաց։ Յակոբ. 5. 14. 15։

ՊՐԱԿ. Դ։

Յաղագս հայր մերին. և մեկնութի̄ նորա։

Հ. Քս̄ փրկիչն մեր՝ ուսոյց մեզ զկերպ աղօթելոյ։

Պ. Այո՛. ուսոյց մեզ Աղօթս յոյժ գերազանցս. և պատուհիրեաց մի լինիլ շատախօսս յաղօթելն իբրև զհեթանոսս. Մատ. 6. 7։ կամ իբրև զփարիսեցիս և զդպիրս հրէից. որք պատճառանօք երկարէին զաղօթս. զի աւելի դատաստանս. այսինքն դատապարտութի̄ս ընկալցին։ Մատ. 23. 14։ Այլ մտանել 'ի սենեակ (սրտի) և փակել զդրունս (զգայարանաց) և կալ 'ի ծածուկ յաղօթս առ հայր. Մատ. 6. և ասել զհայր մերն մտադրութ̄. որպէս գրի. 'ի համար։ 9։

Հ. Ո՞պի աղօթք է հայր մերն. և քանի բանք են 'ի նմին։

Պ. Այս է հայր մերն՝ զոր Քս ուսոյց. և զեօթնեսին բանս ունի. և են սոքին:

1. Նախ՝ հայր մեր որ յերկինս ես՝ սուրբ եղիցի անուն քո:

2. Երկրորդ՝ Եկեսցէ արքայութիւն քո:

3. Երրորդ՝ Եղիցին կամք քո. ոպ յերկինս և յերկրի:

4. Չորրորդ՝ զհաց մեր հանապազորդն՝ տուր մեզ այսօր:

5. Հինկերորդ թող մեզ զպարտիս մեր, ոպ և մեք թողումք մերոց պարտապանաց:

6. Վեցերորդ՝ մի տանիր զմեզ 'ի փորձութիւն:

7. Եօթներորդ՝ Այլ փրկեա՛ զմեզ 'ի չարէ:

Հ. Զի՞նչ մեկնութիւս ունին բանքս այսոքիկ:

Պ. Յոյժ խորին է մեկնութիւն սոցա և լայնատարած, որ պատկանի հոգեշունչ և երկնային մտաց. և ո՛չ իմապիսի մեղօք զդածեալ, և երկրային զբաղանօք շաղախեալ առն մտաց. բայց վասն նորակիրթ մանկանց մերազնէից՝ իբր կաթն ինչ ջամբելոյ աղագաւ, համառօտ բան ինչ ըստ իմոյ տկար իմացուծոյ ասացից:

ա. Նախ. Հայր մեր ասելովն՝ ուսոոյց մեզ Քս, թէ պարտ եմք իսկական և առաջին բարեբուն և բարեխնամ հայր ճանաչել և կոչել մեզ միայն զԱրարիչն Ած, և ո՛չ զայլ ոք. որպէս և պատուիրեաց. Մ'ատ. 23. 9: Եւ հայր մի կոչէք ձեզ յերկրի. զի մի է հայր ձեր որ յերկինս է: զի արդարև նա է ճշմարիտ հայր Արարչութ իւրով. զի մեք ո՛չ էաք, և նա արար զմեզ. այսինքն ծնաւ և էած 'ի չգոյէ 'ի գոյութիւն: որ յերկինս ես ասելովն՝ կամեցաւ զեկուցանել մեզ որ թէև առ

ամ տեղիս է Ած. և չէ հնար նմա ամփոփիլ և պարունակիլ յիմիք տեղւոջ. զի զերկին և զերկիր ես լնում, ասէ Տր ամենակալ։ Սակայն գոլով Անեղ՝ ինքնագոյ՝ անսկիզբն, աննիւթ, և ամենապարզ անվախճան էութիւն. և որպէս անսահմանաբար բարձր են երկինք յերկրէ. Այսպէս և Ած անդր քան զսահման զատեալ է 'ի նիւթական և յերկրային իրաց. (զորս միայն բանիւն իւրով ունի կալեալ.) և բնակի 'ի բարձունս 'ի վեր քան զամ յերկինս. այսինքն. ինքն յինքեան. իբր թէ յիսկական յԱթոռ իւր։ ուրեմն գոլով մեք որդիք նորա. պարտեմք ունիլ զմիտս և զսիրտս մեր անդ՝ ուր հայր մեր է։ այսինքն 'ի բաց արկեալ զամ երկրային հակեցմունս, և զնիւթական խոկմունս. և լինիլ հոգւով և մտօք յերկինս առ ընթեր հօր մերոյ Այ. և հոգւով և ճշմարտութ ծառայելով և երկիրպագանելով նմա, զնա միայն խնդրել. և նմա միայնոյ մատուցանել փառս՝ պատիւս, և երկիրպագութիւն։ ըստ պատուիրի փրկչին թէ՝ հոգի է Ած. այսինքն. աննիւթ. և ամենպարզ սուրբ էութիւն. և երկրպագուաց նորա հոգւով և ճշմարտութ պարտ է երկրպագանել. քանչի և հայր զայնպիսի երկպագուս իւր խնդրէ։ Յօհ. 4. 23։ սուրբ եղիցի անուն քո ասելովն, ծանոյց մեզ խնդրել յերկնաւոր հօրէ մերմէ, թէ որովհետև ծանեաք զքեզ Արարիչ մեր. և մի միայն սուրբ և աննիւթ Ած մեր և հայր. և դուևս հաճեցար կոչիլ մեզ հայր բերանով մարգարէին թէ ես եղէց ձեզ 'ի հայր. և դուք եղիջիք ինձ յուստերս և 'ի դստերս։ Երեմ. 31. 9։ և 2. Կորն. 6. 18։ Ուրեմն սուրբ արա՛ 'ի մեզ զանուն

քո սուրբ. այսինքն սրբեա՛ զմեզ. զի սուրբ եղի-
ցուք անուամբ քով. որպէս և խնդրեաց 'ի քէն
միածին որդի քո. թէ՝ սուրբ արա՛ զնոսա ճշմար-
տութ՟ քով. զի քո բանդ ճշմարտութ՟ է. որ
և նոյն բան քո ինքն ևս խոստացաւ սուրբ առ-
նել զանձն իւր 'ի վերայ մեր. Յօհ. 18. 17. 19.
զի և մեք սրբեալ եղիցուք ճշմարտութ՟. այսինքն
բանիւ քով: Արդ՝ հայր մեր որ յերկինս ես՝ սբ
եղիցի անուն քո. այսինքն սուրբ արա՛ զմեզ զի
արժանաւոր որդի եղիցուք կրելոյ զամենասուրբ
անուն քո 'ի վերայ մեր. և մի անսրբութ՟ մերով՝
անուն քո սուրբ հայհոյիցի 'ի մէջ անհաւատից.
և մեք զրկիցուք յորդիութ՟ և 'ի հաղորդակացուէ
քումմէ:

բ. Եկեսցէ արքայութ՟ քո: Երկնաւոր հայր.
որովհետև ընկալար զմեզ յորդիութ՟ քո. դու
միայն թագաւորեա՛ 'ի վերայ մեր ամենազօր ար-
քայութ՟ քով. և մի բառնար 'ի մէնջ զհովանա-
ւորութ՟ քո. զի մի տիրեսցեն մեզ չարակամ
թշնամիք մեր. որք են. Ծ. մարմին, և սատանայ
առիթք ա՟մ մեղաց. յորոց թելադրութ՟ և 'ի
հրապուրանաց պահեա՛ զմեզ զի մի ստունգանելով
պատուիրանաց քոյ իբրև զնախածինս մեր՝ կորու-
սեալ զԱղատականն որդիութիւն՝ մատնիցուք 'ի
ծառայութ՟. զի ա՟մ որ գործէ զմեղս՝ ծառայ է
մեղաց, վճռեաց միածին որդի քո. Այլ եղիցուք
հպատակեալք և պահպանեալք միշտ ընդ հովա-
նեաւ Արքայութ՟ քո իբրև որդիք Ազատք, և
ոչ հոգասցուք. կամ խնդրեսցուք զայլ ինչ՝ բայց
միայն թէ՝ Արքայութ՟ քո եկեսցէ 'ի մեզ. և ե-
ղիցի 'ի վերայ մեր:

գ. Հղիցին կամք քո. որպէս յերկինս և յեր-
կրի: Ասյր ամենակար. Մի բարձի Թողն առներ
զմեզ գնալ ըստ կամաց անձանց մերոց. որպէս
երբեմն ապստամբացան ի Բելի. սաղմոս. 80. 13: այլ
որպէս զոր ինչ և կամեցար՝ զայն արարեր յեր-
կինս և յերկրի. և նոքա պարտաճանդեալ հրամա-
նաց քոյոց կամաց, ոչ անցանեն ընդ սահմանաւն
զոր եդեր: Սաղմ. 38. 6: Այսպէս և ամ գործ
և արարք մեր՝ հղիցին ըստ կամաց քոյ: Քանզի
որպէս ծայրագոյն բարի ես դու, հաճատամբ բո-
լորով սրտիւ. որ ամենասուրբ կամք քո ես՝ բա-
րի ե և ամենաբարի. և զոր ինչ առնես բարի առ-
նես. ըստ վկայելոյ սուրբ գրոյն, Ծննն. 1. 31:
Եւ զոր ինչ արար Աճ՝ եառես զի բարի են և յոյժ
բարի: ուրեմն խնդրեմք ՚ի քէն զի ամ իրք և
իրակութիւնք մեր հղիցին ըստ կամաց քոյ. և տուր
մեզ ընդրկս համակերպիլ միածնի որդւոյ քո՝ և
ասել միշտ. ոչ իմ կամաւ այլ քոյդ լիցի. զի այ-
սու համակերպութիւն հղիցուք և մեք հնազանդ
որդիք հօրդ երկնաւորի. և զոր ինչ և առնիցեմք՝
հղիցին ըստ հաճոյից, և կամաց քոց:

դ. Զհաց մեր հանապազորդն տուր մեզ այ-
սօր: Ասյր ամենաստ. զհանապազորդեայ հացն
թրական որով բուժանիմք և սպրիմք ըստ մարմ-
նոյ. որպէս ետուր միշտ, տուր և այսօր արդար
վաստակօք մերովք: քանզի դու միայն ես որ բա-
նաս զձեռն քո և կերակրես զամենայնսն քաղցրու-
թեամբ կամօք քովք. Սաղմ. 144. 16: զոր և
միայն ՚ի քէն խնդրեմք: Քանզի մեք յուսացեալքս
՚ի քեզ՝ ոչ խորհիմք, կամ պանծամք ըստ հե-
թանոսաց և ապերախտից, թէ գիտութիւն, կամ

ջանիւք աշխատանաց. և արհեստեստիւք մերովք
հնարեմք զհաց մեր և զապրուստ։ Եւ կամ ոպ
հանգոյն տգէտ փարթամաց՝ ո՛չ ապաստանիմք ոպ
Է եկամտիւք կայից և ստացուածոց մերոց գնեմք
զպիտոյս մեր և բուծանիմք։ զի գիտեմք հաւաս-
տեաւ, որ եթէ դու ո՛չ տացես, ինչք մեր ո՛չ օգ-
տեն մեզ յաւուր նեղութեան մերում։ Առա. 11. 4։
և Սոփոն. 1. 18։ որպէս և անթիւ իմաստունք.
և ճարտարք արուեստից. և ճոխ փարթամք. 'ի
ժամանակի բարկութեան քո՝ յամլանալ երկրի վասն
անօրէնութեաց մերոց, կորեան 'ի սովու. մինչ զի և
բազումք զմիմեանս՝ և ոչ սակաւք զզաւակունս
իւրեանց կերին և ո՛չ յագեցան. այլ մեռան 'ի
քաղցս իւրեանց։ ուրեմն նայեա՛ց 'ի խոնարհութիւն
մեր, և ո՛չ յիշելով զմեղս՝ եղջերացն խոզից կեր-
լեաց կարոտելոց անառակ որդւոցս, բա՛ց զձեռն
ողորմութեան քոյ. և տո՛ւր մեզ նաև այսօր զհանա-
պազորդեայ հացն մեր։ Այսօր ասեմք, և զաւուրն
միայն խնդրեմք. զի եթէ հաճիցիս կամօք քո կե-
ցուցանել զմեզ և յայլ բազում յաւուրս, հար-
կեալ լիցուք յա՛մում աւուր խոնարհութեան խըն-
դրել 'ի քէն զօրական ապրուստն մեր. և մի՛ մո-
ռասցուք զամենառատ ողորմութիւն քո. որ միայն
գթութեան քով կերակրես, և լցուցանես զմեզ
յանհուն բարութեան քումմէ՝ յա՛մ աւուրս կենաց
մերոց։ քանզի թէև լցեալ իցեն շտեմարանք մեր՝
և արկեղք, ո՛չ եմք տեարք նց. և ենթ հրամանի
քո են ամենեքին. որ եթէ թուլատրեսցես փոր-
ձողին՝ կորնչին ամենեքին 'ի միում վայրկենի իբրև
զՅօբայն կայիս։ Նաև զառօրեայն խնդրեմք, և ո՛չ

զբազմամեայն. զի մի՛ ըստ մեծատանն անմտաբար ասելով թէ՝ անձն իմ ունիս բազում բարութիւն ամբարեալ ամաց բազմաց՝ հանգի՛ր կե՛ր ա՛րբ և ուրախ լե՛ր. լուիցուք 'ի քէն ասել մեզ թէ՝ ա՛ն-միտ, յայսմ գիշերի (խաւար տգիտութեան քո.) զհոգիդ 'ի քէն 'ի բաց պահանջիցեն. իսկ զոր պատրաստեցերն ո՞ւմ լինիցի:

Այլ և հայր ամենառատ 'ի խնդրելն մեր զհացն մարմնային, դիտեմք նախ և յառաջ և աղաչեմք զքեզ. զի նախ քան զմարմնաւորն՝ զհացն երկնային շնորհեսցես մեզ, որ է բան քո. զի հացն երկրային զմարմինն բուծանէ. իսկ բան քո զհոգին կեցուցանէ: վ՞ոյ խնդրեմք 'ի քէն մի՛ տար մեզ զսովն այն՝ որ ո՛չ է հացի և ջրոյ, այլ լսելոյ զբան Տ՞ն: Ամովս. 8. 11: Ուրեմն տուր մեզ այսօր և յա՞մ ժամանակի նախ զբան քո հոգեւոր. զի մի՛ մեռանիցուք ըստ հոգւոյ. այլ կեցցուք քև վասն քոյ յաւիտեան: զի բան քո միայն տայ մեզ կեանս. որպէս և ասացեր. զբանն զոր խօսեցայ ընդ ձեզ հոգի է, և կեանք. և որ ուտէ 'ի հացէ յայսմանէ մի՛ մեռցի յաւիտեան:

ե. Թո՛ղ մեզ զպարտիս մեր. որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց: Անոխակալ հայր. արդարև անհուն են պարտաւորութիւնք մեր 'ի քեզ. զի մեք ո՛չ էաք, և դու անսպառ բարութեան քով 'ի գոյութիւն ածեր զմեզ՝ առնելով ըստ պատկերի և նմանութեան քո՝ փչմամբդ զկենդանի Ամենառուրբ շունչ քո: Եւ մեք թէև ստունգանելով պատուիրանի քո, բարկացուցեալ զքեզ՝ կորուսաք զշնորհեցեալ հոգին: Այլ դու անոխակալ մարդասիրութեան քով խոստացար ներել մեզ տա-

լոյ զաճակ 'ի խորտակել զդլուխ սայթաքողին մերոյ. և 'ի բոլոր կեանս մեր՝ կերակրելով և խնամելով տածեր և զարգացուցեր. և զԱմենազօր աջ քո հովանի առնելով պահպանեցեր զմեզ 'ի համայն արկածից՝ և յորոգայթից դաժան դաճաճանից՝ մինչև որ ըստ Աճային խոստմանդ առաքեցեր զզաճակն խոստացեալ զմիածին որդի քո 'ի գտումն մոլորեալ ոչխարին, և 'ի նորոգումն աղաճաղեալ պատկերիդ. որ կրելով զդառնակսկիծ չարչարանս, մեռաւ 'ի խաչին հեղմամբ արեան. և բարձեալ զմեզ 'ի ուս իւր՝ կորզեաց 'ի ժանեաց անմարմին գազանին: Ապայ առաքելով զսուրբ հոգիդ օծեր զմեզ՝ և ծնար վերստին 'ի կեանս յաճիտենականս՝ ածելովդ 'ի գիտութիւն ճշմարտութեան սրբոյ Աճետարանին, և 'ի հաճատս Ամենասուրբ երրորդութեան և միոյ Աճութեան քո: Եւս և հաղորդս առնելով կենարար Մարմնոյ և արեան միածնի որդւոյ քո՝ միացուցեր զմեզ ընդ նմա. և նովաւ ընդ քեզ, և ընդ հոգւոյդ սրբոյ. Եւ աթոռակից որդւոյդ առնելով զմեզ՝ արարեր ժառանգորդս երկնային և անվախճան թագաճորութեան քո:

Արդ մեք այսքան անհուն երախտիս և բարերարութիւնս ընկալեալ 'ի քէն. նոր 'ի նորոյ հանապազ ապստամբ անօրէնութեամբ և ապերախտութեամբ մերով՝ ընդվզեալ պարտաճորիմք քեզ. և դու որպէս անյիշաչար հայր խոստանաս միշտ ներել մեզ: ուրեմն աղաչեմք վքեզ թող մեզ այսքան անվճարելի զպարտիս մեր. որպէս և մեք՝ գոլով տկար և չնչին ծառայք. թողումք մերոց պարտապանաց: Եւ թէպէտ պարտիք և յանցանք նոցա առ

մեզ . և բարերարուԹիւնք և երախտիք մեր առ նոսա. ՚ի բաղդատուԹիւն քոյին առ մեզ եղեալ ե_ րախտեաց՝ և բարերարուԹեց . և ՚ի մէնջ առ քեզ այսարեալ ապերախտուԹեց և պարտաճո_ րուԹեց , ոչ այլ ինչ ևն, բայց եԹէ փոշեկ մի , այսինքն հիւլէ մի նշուղիչ Արեգական , կամ ոչ ինչ ։ սակայն ըստ պատկանելոյ իւրաքանչիւրոյ աս_ տիճանի՝ պահանջի ամ ներգործուԹիւն. զի ըստ առն և զօրուԹի իւր. և ըստ Ա՛ն և ամենառատ ողոր_ մուԹի իւր։ ուրեմն մի ընկալցիս ՚ի մէնջ զաղօԹս զայս իբրև զպայման . այլ՝ տուր ՚ի վէր վշնորհս քո առաքո. զի կարելով մեր Ժողովոյ զնուիրապետի յան_ ցանս և զպարտիս նոցա որ առ մեզ՝ արժանաւորք եղիցուք ընկալելոյ ՚ի քէն զԹողուԹիւն անհուն և անվհատելի պարտուց մերոց որ առ քեզ ։ զի մի լիցուք իբրև չար ծառային, որ ընկալեալ ՚ի Տ՚նէ իւրմէ զԹողուԹիւն բիւր քանքարեաց զոր պարտն էր. զծառայակիցն իւր վ՚ա հարիւր քանքարի իւրոց առ նելեաց . որոյ ոչ կարելով իսկոյն հատուցանել՝ խնդրէր ժամանակ. անդԹուԹիւ էարկ ՚ի բանտ . զոր լուեալ Տ՚ն իւրոյ՝ կշտամբանօք մատնեաց դա_ հճի , զի հատուսցէ զբիւր քանքար պարտսն՝ զոր չնորհեալ էր նմա ։

Քանզի անդառնալի է վճիռ անդրանկի որդ_ ւոյ քո՝ դատաՀորի կենդանեաց և մեռելոց . որ յուսուցանելն մեզ զաղօԹս զայս՝ կնքեաց. զի ե_ ԹէԹ Թողուցուք դուք մարդկան զյանցանս նոցա . Թողցէ և ձեզ Հայրն ձեր երկնաՀոր զյանցանս ձեր . Ապա ԹէԹ ոչ Թողուցուք դուք մարդկան զյանցանս նոցա. և ոչ Հայրն ձեր երկնաւոր Թող ցէ ձեզ զյանցանս ձեր։ Մատ. 6. 14. և 15 ։

զ. Մի տանիր զմեզ ՚ի փորձուԹիւն։ ամենա-
փրկիչ Հայր. Մի ընկենուր զմեզ յերեսաց քոց.
և զՀոգի քո սուրբ մի հաներ ՚ի մէնջ. զի մի ան-
զգայ եղեալ խաբիցուք ՚ի փորձիչ բանսարկուէն
իբրև զԵճա նախամայրն մեր. Այլ տուր մեզ սիրտ
սուրբ. և զՀոգի ուղիղ նորոգելով ՚ի մեզ հաս-
տատեա Հոգւով զօրուԹիւն. զի կարասցուք ընդ-
դէմ կալ հնարից փորձողին։ Քանզի ոչ կարեմք
համբերել որպէս երանելին Յօբ։ Նա ոչ ևս
ունիմք մեղկն կար իբրև անդրանկի որդւոյ քո
յաղԹել վիրաւորողին և սաստել նմա ԹՀ՝ ԵրԹ
յետս իմ սատանայ։ ուրեմն դու զօրայոյ զմեզ. և
տուր մեզ ընդհանս զգաստուԹեան՝ կալոյ յաղԹիս
արԹիւնուԹիւն Հոգւոյ ըստ խրատուն, զոր ետ որդւոյ
քո Առաքելոյ իւրոյ. ԱրԹուն կացէք և աղԹիս
արարէք զի մի անկանիցիք ՚ի փորձուԹիւն ։ Մարկ.
14. 38։

է. Այլ փրկեա զմեզ ՚ի չարէ ։ Ամենաբարի
Հայր, գիտես դու. որ միտք մեր հաստատեալ են
՚ի մանկուԹենէ մերմէ ՚ի խնամս չարին. Ծննն. 8.
21։ և չար են արարք մեր և ընդաբոյս չարուԹիւնք
մեր։ փրկեա զմեզ ՚ի չարէ մերմէ. զի մի որս լի-
ցուք ոսոխի մերոյ չարի. որ իբրև զառիւծ գոչէ,
շրջի խնդրէ Թէ զո՞ կլանիցէ. 1. Պետ. 5. 8։ այս
ինքն մեռուսցէ անձեղջ ՚ի չարիս ։ ուրեմն փրկեա
զմեզ և պահեա ՚ի չարէ վասն խնդրանացն միածնի
որդւոյ քո՝ որ ՚ի վերջնումն գիշերի. Ես զայս աղա-
չեմ զի բաւեցես զնոսա Ժէ. այլ զի պահեսցես
՚ի չարէ։ Ցօհ. 17. 15։ զի մի զրկեալ ՚ի ներողու-
Թէ քումմէ, անձեղջ մեռանիցուք ՚ի չարիս մեր,
որ է իսկական չար. զի մահ մեղաՀորին չար է։

Սաղմ. 33. 22։ որ մեքմեղեն ոչ կարեմք փրկիլ. բայց եթէ դու կամիս՝ կարող ես փրկել զմեզ. և սրբել 'ի չար բորոտութեն մերմէ. այսինքն 'ի մեղայ. և յամ փորձութեն. և չարեաց։ զի քո է Արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս Ամէն։

ՊՐԱԿ. Ե։

Յաղագս հանգանակի ընդ հանուր հաւատամքին, և թէ ճրբ և ոչ սահմանեցաւ։

Հ. Առաքեալքն Քսի, եդի՞ն սահմանս ինչ հաւատոյ։

Պ. Ամենայն բանք և գրեանք առաքելոց՝ որ 'ի նոր կտակարանի գրեցեալք. սահմանք են հաւատոյ և հիմունք դաւանութեն ընդհանուր Եկեղեցւոյ։ իսկ համառօտութիւնք բանից նոցին՝ նախնի սուրբ Հայրապետք արտահանեալ 'ի գրեանց նոցին՝ սահմանեցին զՀանգանակն հաւատոյ. և իբրև կտակ անջրելի. և որպէս անշարժ վէմ հաստատուն կանգնեցին իմէջ ընդհանրական սրբոյ Եկեղեցւոյ։

Հ. Ո՞րն է այդ հանգանակն հաւատոյ։

Պ. Է Հաւատամքն ընդհանրական. որ ընթեռնանի յեկեղեցիս ամ ազգաց ուղղափառ Քրիստոնէից 'ի ժամ սրբոյ Պատարագին. որք են Երկոտասան բանք երկոտասանից սրբոց Առաքելոց զոր սուրբ Հայրապետք 'ի մի շարակարգեալ սահմանեցեն այսպէս։

Հաւատամբ 'ի մի Աճ հայրն ամենակալ յարարիչն երկնի և երկրի երևելեաց և աներևութից։

Ուր ՝ի մի Տր Ցե Քս որդին ԱՅ ծնեալ յ'ԱՅ հօրէ միածին . այսինքն էութէ հօր : Աե յ'ԱՅ. լոյս ՝ի լուսոյ՝ Աե ճշմարիտ . ԱՅՅ ճշմարտէ ծը_ նունդ և ոչ արարած՝ Նոյն ինքն ՝ի բնութէ հօր՝ որով ամենայն ինչ եղև յերկինս և յերկրի. երև_ ելիք և աներևոյթք, որ յաղագս մեր Մարդկան . և վասն մերոյ փրկութէ իջեալ յերկինից մարմնա_ ցաւ մարդացաւ ծնաւ կատարեալպէս ՝ի Մարիա_ ամայ սրբուհւոյ կուսէն հոգւովն սրբով . (որով եաւ զմարմին ճոզի և զհոգի և զմիտ և զամ որ ինչ է ՝ի մարդ ճշմարտապէս և ոչ կարծեօք :) Չարչա_ րեալ՝ խաչեալ՝ թաղեալ . յերրորդ աւուր յարու_ ցեալ եղեալ յերկինս նովին մարմնով նստաւ ընդ աջմէ հօր : Գալոյ է նովին մարմնովն և փառաք հօր ՝ի դատել զկենդանիս և զմեռեալս. որոյ թա_ գաւորութէ ոչ գոյ վախճան :

Հաւատամք և ՝ի սուրբ Հոգին յանեղն և ՝ի կատարեալն. որ խօսեցաւ յօրէնս և ՝ի մարգարէս. և ԱՀետարանս որ էջն ՝ի յորդանան քարոզեաց զԱռաքեալն, և բնակիւցաւ ՝ի սուրբսն :

Հաւատամք և ՝ի մի միայն ընդհանրական և Առաքելական սուրբ Եկեղեցի . ՝ի մի մկրտութէ յապաշխարութէ ՝ի քաւութէ և ՝ի թողութէ մե_ ղաց : ՝ի յարութէ մեռելոց ՝ի դատաստանն յաւի_ տենից. Հոգւոց և մարմնոց ԱՐքայութէ երկնից. և ՝ի կեանսն յաւիտենականս :

Հ. Ա_ման ՔՐ. ՔՐԵ. և ՌԸր Հաստատեցաւ սոյն հան_ գանակն հաւատոյ :

Պ. ՝ի կզգան չորրորդի դարուն Քսի. մինչ յայտնե_ ցան երանելի սուրբ Հայրապետքն, սուրբն Գրիգոր լուսաւորիչ ՝ի Հայաստան. և սուրբն Սեղբեստրոս

'ի հռօմ. և լուսաւորեալ զերջանիկ թագաւորս զսուրբն տրդատ 'ի հայս. 300 ամի Տն, և զսուրբն Կոստանդիանոս. 'ի 314 յամի Տն 'ի Հռօմ. և ածին զընդհանուր ազգս իւրեանց 'ի ճշմարիտ հաւատս Քսի. և բարձան կռապաշտութիւնք յազգացն. և հալածանք 'ի սրբոյ եկեղեցւոյն. և երևեցան բազմութիւնք Քրիստոնէից և սրբոց հարց. որք 'ի ժամանակէ անտի Առաքելոց հետևաբար շարունակեալ քարոզէին և պաշտէին զՔս Ած. Եւ զԱմենասուրբ երորդութիւն մի Ած. և երեք համագոյ՝ համազօր՝ և համահաւասար էուբ և իշխանութբ կատարեալ անձինք անբաժանելի միութեամբ 'ի մի Ածուն կատարեալ դաւանէին, ընդդէմ շփոթութեան անձանցն՝ չարափառին սաբէլի։

Երևեցաւ յայնժամ չար աղանդաւորն Արիոս յոյն քահանայ հերիտիկոսապետ առաւել չարագոյն քան զսաբէլ՝ և զայլ հերիտիկոսս որք էին յառաջ քան զինքն, և սերմանելով զչար աղանդիւր՝ մոլորեցուցեալ դարձոյց զբազումս 'ի հերիտիկոսութիւն ընդդէմ կատարեալ Ածութեան Քսի չարաչար բաժանմամբ զԱմենասուրբ երրորդութիւնն։

'Ի նմին ժամանակի ջանիւ սրբոց հայրապետաց սրբոյն Սեղբեստրոսի հայրապետին հռոմայ. և հաւանութբ կոստանդիանոսի մեծի կայսեր հռօմայ. 'ի 325 ամի Տն. համախմբեցան 'ի նիկիայ երեքհարիւր ութուտասան սուրբ հայրապետք. յորոց և մինն էր սուրբ հայրապետն մեր Արիստակէս որդի սրբոյ Գրիգորի լուսաւորչին (որ էր հայրապետ հայոց փոխանակ հօրն. ըստորում սուրբն երկոտասան ամօք յառաջ մեկուսացեալ յԾէ ճգնէր

'ի լերինս, փախչելով 'ի փառաւորութէ Նային պատուոյ։)

Արդ 'ի նոյն սուրբ ժողովն նիկիոյ. խումբ սրբոց հայրապետաց. զՔս, բան՝ և որդի հօր Այ՝ կատարեալ Ած. և կատարեալ մարդ. համագոյ և հաւասար հօր և հոգւոյ, անբաժանելի էութբ՝ մի Ածութի դաւանեալ՝ սահմանեցին զհանգանակն հաւատոյ. (որպէս գրեցաւ 'ի վերոյ.) որ յայնմ հետէ ընթեռնանի յեկեղեցիս ամ ազգաց ուղղափառ Քրիստոնէից մինչև ցայսօր 'ի ժամ սրբոյ Պատարագին։ Եւ զհերիտիկոսապետն Արիոս նզովեցին. որ ըստ արժանւոյն իւրոյ պատժեցաւ 'ի գարշելիսն։

ՊՐԱԿ Զ։

Յաղագս մի կամ երկու ասութեց բնութեցն Քսի։

Հ. 'Ի սոյն ընդհանուր հաւատամքի. ոչինչ յիշի վս մի, կամ երկու բնութեց Քսի. ապա այժմ զիարդ է սոյն տարաձայնութի 'ի մէջ միոյ ընդհանրական սրբոյ Եկեղեցւոյն Քսի։

Պ. 'Ի նախնումն ոչինչ ասութի գոյր վասն բնութեց Քսի 'ի սուրբ հարս։ Քանզի ո՛չ սրբազան Աւետարանիչք գրեցին. և ո՛չ ևս սրբազան Առաքեալք պատուիրեցին, մի՝ կամ երկու բնութի ասել 'ի Քս։ Այլ մանաւանդ թէ արգելին 'ի քննելոյ զանքննելի և զանիմանալի խորհուրդ անճառ միաւորութե բանին Այ՝ ընդ մարդկութե. որ 'ի վեր և անհաս է մտաց եղականաց։ վսյ և վճռեցին թէ՝ Հաւատալն է Արդարութի, և քննելն յանդգնութի։ ըստ բանի Առաքելոյն։ Եւ

քստ օրինաքայ. բարձրագոյնսն քան զքեզ մի յու-
զեսցես ։ Իբ սուրբն օգոստինոս ասէ. քարձր զա-
ռարկութիւն, ուր խնդրի հաճատն ։

Բայց ՚ի 429 ամի Տ֊ն. Նեստոր անուամբ յազ
գէ Ճունաց ոմն՝ նստաւ Պատրիարք ՚ի կոստանդ-
նուպոլիս. որ եղև չար աղանդապետ հերիսից կո-
սաց. և յանդգնաբար քննելով զմի Քն յերկուս
բաժանեաց, տալով նմա զերկուս անձինս. և զեր
կուս բաժանեալ քնութիւն. այսինքն Աճային և
մարդկային անձինք. ունելով երկաքանչիւրն բա-
ժանաքար գնութիւն ։ (Ահաճասիկ
դառն արմատ, և չար պտուղ յանդուդն քննու-
թեան)։

Ընդդէմ որոյ ՚ի 431 ամի Տ֊ն, ժողով արա-
րեալ երկու հարիւր սրբոց Հայրապետաց յԷփեսոս
քաղաքի. մի Անձն Աճային, մի դէմ. և յերկուց
միաձորեալ մի քնութիւն ՚ի մի Քն դաւանեցին
ասելով. մի է քնութիւն Բանին մարմնացելոյ. այս-
ինքն Աճային և մարդկային քնութիւնք անխառն և
անշփոթ միաձորութիւք անբաժանելապէս միաձո-
րեալ ՚ի մի Աճային Անձն՝ մի քնութիւն մի դէմ.
և մի Քն դաւանեցին. (ըստ օրինակի երկուց զա-
նազանեալ քնութեց հոգւոյ և մարմնոյ, անշփո-
թաքար միաձորեցելոց ՚ի մի անձն մարդոյ՝ մի
քնութիւն անուանեցեալ, անկորուստ պահելով եր-
կաքանչիւրն զնութիւն ՚ի միութեն անձին
մարդկայնոյ։ Սակայն սոյն քնութիւն հոգւոյ և մար-
մնոյ. ՚ի մեռանիլ մարդոյն՝ բաժանին յերերից ։
Իսկ Քեի Աճային և մարդկային քնութիւնք այս-
ինքն էութիւնք, ՚ի մեռանիլն Քեի ոչ բաժանեցան
՚ի միմեանց, որպէս և յետ Յարութեն էր կատա-

բեալ Աճ՝ և կատարեալ Մարդ անքաժանելի. զի ես նոյն եմ ասայ ։ և առաքեալն ասէ. Ցի Քի երէկ և այսօր, նոյն և յաւիտեան։) Ի՛ այսու ան խառն և անշփոթ անքաժանելի միաւորութիւն. մի Աճային անձն, մի դէմ. և անշփոթաբար միաւո բեալ մի բնութիւն ի՛ մի Քի, դաճանեալ սուրբ հարքն եփեսոսի Ժողովոյն, նզովեալ զՆերիտիկո սասլետն նեստոր, հերքեցեն ի՛ ընդհանարկան սը ւկեղեցւոյն ։ Ի՛ զսուրբ կոյսն Մարիամ Աճա ծին դաճանեցին ։ Զսոյն Ժողով և ազգ մեր Հայոց յօժարութիւն ընկալաւ. զի և ի՛ Հայոց գոյն ի՛ նոյն կողմ յաշակերտաց սրբոյն Իսահակայ Պարթևի. և սրբոյն Ս՛եսրոպայ երանելւոյն Մաշ տոցի։ որք բերին զպատմուչին Ժողովոյն ի՛ Հայս ։

Հ. Ապա ե՞րբ. վասն ի՞ր. և կամ ո՞ւր ասացաւ բառն երկու ։

Պ. Զինի Նեստորի՝ երևեցաւ և այլ ոմն մոլորեալ չար հերիտիկոս՝ և յանդուգն քննիչ յազգէ Ցու նայ Ի՛ւտիքէ անուն ։ և յանկուցեալ յինքեան զբազումս, յորոց և մինն ասեն Թէ էր դէոսկորոս Ասորի, Պատրիարք Աղեքսանդրեայ. իբր գլխաւոր ջատագով Ի՛ւտիքեայ. որք ընդդէմ քաժանմանն Նեստորի, շփոթեալ մի բնութիւն. կամ էութիւն քարոզեցին ընդդէմ ճշմարտութեանն սուրբ Ժողո վոյն Ի՛ փեսոսի ։ իբրու Թէ էութիւն քանին է Թանձրացեալ ի՛ մարմնի միայն, Թարց մարդկային կատարեալ բնութիւն առեցման ։

Սակս որոյ ի՛ 452 ամի Տն Ժողով արարեալ ի՛ քաղկեդոն. երկու զանազանեալ և կատարեալ։ այսինքն Աճային և մարդկային բնութիւնք, կամ էութիւնք. անխառն և անշփոթաբար անքաժանե

լապէս միաւորեալ 'ի մի Ածային անձն միոյն Քս̄ի, երկու բնութի̄ ասացին ։ Եւ յայնմ հետէ. երկու բառն եմուտ 'ի Յոյնս՝ և 'ի հռօմէացիս, և 'ի նս̄ յարեցեալ ազգս, ընդդէմ շփոթութի̄ Եւտիքեայ։

Իսկ ազգ մեր հայոց՝ որ 'ի վրդովանաց և խռովութի̄ց յարուցելոց 'ի մէջ ազգի մերոյ՝ աղմկեալ էր յայնմ ժամանակի՝ յաղագս բարձման թագաւորութի̄ Արշակունեաց. և տարագրութի̄ սրբոյ հայրապետին Իսահակայ Պարթևի։ նաև վասն հետևեալ պատերազմին սրբոց վարդանեանց 'ի վերայ Քրիստոնէականի հաւատոյ՝ ընդ անօրէն Յազկերտի թագաւորին Պարսից. և վասն նահատակութի̄ սրբոց Ղևոնդեանց՝ և սրբոյ հայրապետին Յօսեփայ. ոչ ո՛ք գտաւ 'ի մէնջ 'ի նոյն ժողովն քաղկեդոնի. վս̄յ և իսկութի̄ մտաց բանին ո՛չ գոլով տեղեակ. և յոմանց յԱսորոց ևս՝ ներհակ լուր ընկալեալ. ո՛չ ընդունեցաք զբառն Երկու. խրտնիլով յերկուս բաժանմանէն նեստորի։ Եւ մինչ հետևէաք իմանալ զուղղութի̄ մտաց ժողովոյն. 'ի 482 ամին 'ի հայրապետութի̄ Յօհաննու մանդակունւոյ. Զենոն կայսր Յունաց 'ի կոստանդնուպոլսոյ նամակաւ իւրով, երկբայելի լինիլ եցոյց զժողովն քաղկեդոնի. վս̄յ և մեք առաւել ևս չոգաք յետս։ Եւ սոյն շփոթ ևաղմուկ մնաց 'ի մէջ յունաց. և ո՛չ 'ի սակաւ ժամանակս նաև 'ի մէջ հռօմէացւոց. մինչև որ մեծն Յուստինեանոս կայսրն կոստանդնուպօլսոյ, վերստին հաստատեաց 'ի 527. ամի Տն̄։

Եւ թէպէտ 'ի 628 ամի Տն̄ հերակլ կայսր կոստանդնուպօլսոյ՝ զկնի ազատութի̄ 'ի գերութի̄ Պարսից՝ իսկական սրբոյ խաչի Տն̄, եկեալ 'ի կա-

ին, ետ ածել 'ի դոմնայ իբր թէ բռնի անդ 'ի կարին, զեղր կաթուղիկոսն հայոց. և մեկնական բանիւք հաճաստելով՝ թէ բնաւ ըստ նեստորի՝ դիտումն բաժանմանց բնութեանցն Քս̄ի չէ մտեալ երբէք 'ի ժողովն քաղկեդոնի. այլ միայն ընդդէմ Եմտիքեայ չարափառի շփոթութեանց, երկուց անշփոթ և անանջատ միաճորութ̄ միաճորեալ՝ զանազան բնութեանցն, կամ էութեանցն իսկութիւն հրատարակելոյ վս̄ երկու ասացին։ Եւ այսու բանիւք հաճանեցոյց հայրապետին եզրի ընկալնուլ զժողովն։ բայց յետոյ վասն գոռոզութեան յունաց, և անըմբերելի վարեցմանց նոցա ընդդէմ վաղեմի լուսաճորչասահման ծիսից՝ և եկեղեցական արարողութեանց մերոց. նաև վասն մեծի թշնամանաց և ոխորտանաց 'ի վերայ ազգի մերոյ. 'ի միտ ածեալ մերայնոց զնամակն Զենոնի կայսեր. նաև 'ի գրգռելոյ Ասորւոց՝ վերստին 'ի բաց կացին հայք 'ի միաբանութեան յունաց. այսինքն ընկալնոյ զժողովն քաղկեդոնի։

Եւ այսպ̄ մնացաք ըստ սահմանադրութեանց նախնի սրբոց հարցն եփեսոսի ժողովոյն՝ վս̄ երկուց բնութեանցն Քս̄ի անխառն և անշփոթ միաճորութ̄ անբաժանելապէս միաճորեալ մի բնութիւն ասելոյ. նզովելով զբաժանումն նեստորի, և զշփոթութիւն Եմտիքեայ։ որպէս և ոմանք ազգք Քրիստոնէից համաձայնին մերոյ ասութեան. որք են Ասորիք, գբտիք հապէշք. և այլք։

Եւ այս անխառն անշփոթ անբաժանելապէս յերկուց միաճորեալ մի բնութիւն ասելն մեր ո՛չ է 'ի մէնջ հնարեալ, այլ 'ի ընդհանարկան սրբոյ եկեղեցւոյն. որ և ո՛չ թէ միայն զուտ ճշմարտութիւն է.

այլ և յոյժ գովելի՝ պատկանաւոր, և ընդունելի է։ Քանզի ճշմարիտ է՝ որ եթէ ինքեանք հռոմայեցիք, և Յոյնք. և թէ միւս ամ ազգք Քրիստոնէից. որպէս ընդ մեզ հայոց. Երեք կատարեալ և անշփոթաբար յատկացեալ անբաժանելի անձինք խոստովանելով 'ի սուրբ Երրորդուն. մի Աճուն. մի էութի. մի կամք. և մի բնութիւն ասելովն՝ ոչ շփոթեն զանձինսն՝ որպէս չարափառին Սաբէլի։ Այսպէս և մեք հայք. կատարեալ Աճային, և մարդկային բնութիւն Քս. համաձայն ընդ նախնի սրբոց հայրապետաց. անխառն և անշփոթ միաւորութեամբ՝ անբաժանելապէս միաւորեալ մի բնութի ասելով. ոչ թէ շփոթեմք ըստ մոլորուն Եւտիքեայ. Այլ զմիութի Անձինն ջատագովեմք, և խոստովանիմք։ ուրեմն 'ի զուր բամ բասեն զմեզ. վասն ոչ ընկալնլոյ մեր զնորամուտ զբառն երկու, խրտնիլով 'ի չարափառութէ նեստորի։ Եւ եթէ մի ասութեան մերոյ՝ հարկաւորին և այլ մեկնական բառք բացայայտիչք. զի մի շփոթեալ իմասցի ըստ Եւ տիքեայ։ Այսպէս և Երկու ասուն նոցին՝ հարկաւորին և այլ մեկնական բառք բացայայտիչք. զի մի բաժանեալ իմասցի ըստ նեստորի։ ուրեմն մինչ 'ի դիտաւորութիւն նկատի ճշմարտութիւն և հաւատն, և ոչ միայն 'ի սոսկ բառս. ապա զիարդ 'ի զուր հակառակիլ իրերաց. մինչ վախճան դիտաւորութեաց մի և նոյն ճշմարտութի է։

Ա. Եղէն երբէք 'ի վերայ այսու բանի հարցմունք, կամ վիճմունք ինչ 'ի սրբոց հարց հռոմայեցւոց և 'ի Յունաց. ընդ մերոյ սրբոց հարց և երիցանց

Պ. Այո. բազմիցս անգամ եղև 'ի նոցունց վէճ և

հարցմունք 'ի մերայնոց. և մանաւանդ թէ 'ի ժամանակի թոռանց սրբոյ լուսաւորչին 'ի սրբոց հայրապետացն. 'ի սրբոյն Գրիգորիսէ. 'ի սրբոյն Ներսէսէ շնորհալւոյն. 'ի սրբոյն Գրիգորէ տղայ կոչեցելոյ. և 'ի սրբոյն Ներսէսէ լամբրօնացւոյն 'ի 1165 ամի Տն մինչ կամէին ընդ Կիռ Մանուէլի բարեպաշտ կայսերն կոստանդնուպոլսոյ առնել միաբանութիւն ընդ Յունաց. նաև ը հռոմէացւոց:

Որոց պատասխանեցին յիշեալ որ հարք մեր. թէ մեք փախչիլով յերկուս բաժանմանէն նեստորի. հետևիմք ժողովոյ սրբոց հարց Եփեսոսի. և սրբոյն կիւրղի և սրբոյն գրիգորի Ածաբանին. և այլոց. որք յառաջքան զժողովն քաղկեդոնի. մի է բնութիւն բանին մարմնացելոյ ասացին ընդդէմ նեստորի և 'ի սոյն դաւանութեան մնաց ընդհանուր եկեղեցին յայնքան ամս. որ ոչ ոք կարէ ասել թէ մոլորեալք էին: որոց համաձայնեալ և մեք ըստ Գրիգորի Ածաբանին մի ասեմք վասն անձառ միաւորութեան հրատարակիչ. և ոչ թէ զբնութեանցն կորուստ: ըստ Եւտիքեայ չարափառին:

Որպէս է տեսանել 'ի ընդ հանրական գրքոջ երկարապէս գրեցեալ. նմանապէս և 'ի թուղթն Շնորհալւոյն որ առ իշխանն առիւծ: Եւ մանաւանդ 'ի Յս որդի գրքոջ շնորհալւոյն որ ասէթէ, երկուս ասել դարձեալ զբնութիւն, վասն յերկուց գոլ միութիւն. չէ այս օտար ճշմարտութիւն, թէ չբաժանեն յերկուս զմուն: Տեսջիք նաև յԱտենաբանութեան սրբոյն Ներսէսի լամբրօնացւոյն. որք զբազում բանս գրեալ 'ի վերայ սոյնոյ վիճի՝ յայտնի ցուցին, թէ մի և նոյն ուղղութիւն և ճշմարտութիւն է դիտաւորութիւն երկոցունց կողմանց. և ոչ ընդ-

դէմ ճշմատութեան՝ մինչ մեկնական բանիւք բա-
ցայայտիցին։

ՊՐԱԿ. Է.

Յաղագս բղխման հոգւոյն սրբոյ. Եւս և վասն վեր-
ջաւորութեան գրքոյս։

Հ. Ապա զի՞նչ է և այս վէճ. որ լինի 'ի վերայ բղ-
խման հոգւոյն սրբոյ. որ հռոմէական սրբազան
հարք 'ի հօրէ և յորդւոյ բղխիլ ասեն, և միւս
ամենայն ազգք Քրիստոնէից միայն 'ի հօրէ յիշա-
տակեն։

Պ. Յայտ իսկ է ամենեցուն. որ Մակեդոն անուան-
եալ չար հայհոյիչ Յոյն Պատրիարքն կոստանդ-
նուպոլսոյ 'ի 381 ամի Տն, դատապարտեցաւ 'ի
սուրբ ժողովոյն կոստանդնուպօլսոյ 'ի հարիւր յի-
սուն սրբոց հայրապետաց. (յորոց և մինն էր սբ
հայրապետն մեր Երանելին մեծն Ներսէս։) որ
հայհոյիչն մակեդոն՝ զանքննելին և զանհասանելին
յարարածոցս զամենասուրբ Երրորդութիւն՝ յանդ-
գնաբար քննել կամելով՝ չարաչար հայհոյեաց՝ թէ
հոգին սուրբ ոչ է համագոյ՝ համազօր՝ և հաւա-
սար համապատիւ հօր և որդւոյ։

Որոյ աղագաւ հարիւր և յիսնից վերոյիշեալ
սրբոց հայրապետաց ժողով արարեալ 'ի կոս-
տանդնուպօլիս, նզովեցին զՄակեդօն՝ և զչար ա-
ղանդ նորա։

Եւ զսուրբ հոգին՝ համաբուն՝ համագոյ՝ համ-
իշխան՝ և հաւասար համապատիւ հօր և որդւոյ
խոստովանեալ դաւանեցին՝ թէ Անսկիզբն հայր
անժամանակաբար սկիզբն՝ պատճառ և ծնօղ է որդ

Հոգ, և անմիջապէս բղխող հոգւոյն սրբոյ, որ է առնչական Աբր, և հոգի հօր և որդւոյ։ որպէս և համարձակ խոստովանի և քարոզէ ընդհանրական սուրբ Եկեղեցին Քրիստոս։ այսինքն. եմ ազգք քրիստոնէից։

Բայց յետոյ ելին ոմանք որք ասացին թէ հոգին սուրբ միայն ՚ի հօրէ բղխի. և ոչ ՚ի որդւոյ։ որ հռոմայեցւոց սրբոց հարց՝ ընդդէմ թուրեալ դաւանութեանն սրբոյ ժողովոյն կոստանդնուպոլսոյ. թէ թերուի վերաբերի առնչուէն ամենասուրբ Երրորդութեան. սահմանեցին թէ ըստորում հոգին սբ, է սէր, և հոգի հօր և որդւոյ. ուրեմն բղխի ընդ միջապէս՝ և ոչ սկզբնաբար նաև ՚ի որդւոյ։ զի հայր ունի առնչութիւն ընդ որդւոյ ծնողութիւն. և ընդ հոգւոյն բղխողութիւն։ Եւ որդին՝ ունի առնչութիւն ընդ հօր ծնելութիւն, և ընդ հոգւոյն տսէողութիւն։ Եւ հոգին սուրբ ևս՝ ունի առնչութիւն ընդ հօր ելողութիւն, և ընդ որդւոյ առողութիւն։ ըստ քանի ի իրկչին՝ թէ հոգին Աչմարտութիւն՝ որ ՚ի հօրէ ելոյ նէ։ Եւ թէ (հոգին սուրբ) յիմմէ անտի առնու, և պատմեսցէ ձեզ. զի զամ ինչ զոր ունի հայր՝ իմ է։ ես։ Ցհ. 15. 26։ և 16. 14. 15։ Եւ ահա վասն սոյնոյ կատարեալ առնչութեան նոցին, մերս հայաստանեայց սուրբ Եկեղեցի՝ հաւատայ ընդ այլոց Եկեղեցեաց միշտ երդէ վասն հոգւոյն սրբոյ, թէ՝ բղխումն հօր անքննաբար. աւրդ որդւոյ անձառաբար։ զի է հոգի հօր և որդւոյ. և ունին ընդ միմեանս անբաժանելաբար կատարեալ առնչութիւն։

Աղ և սուրբ առաքեալն Պողոս՝ գրէ առ գաղատացիս. 4. 6։ Առաքեաց Աստուած զհոգի որդւոյ

իւրոյ 'ի սիրտս մեր։ Եւ մերս հայաստանեայց սբ եկեղեցի՝ յերգելն զսուրբ Ածն խաչեցարիւ 'ի դէմս յատուկ որդւոյ, ասէ զաղօթս զայս նախնթաց. խաղաղութիւն մեր և կեանք, որ 'ի հօրէ առաքեցար Միածին որդի Այ Տր մեր և փրկիչ Յս Քս. տուր մեզ զխաղաղութիւն քո՝ զոր շնորհեցեր սրբոց քոց Առաքելոց փչմամբ քո 'ի նս. զկենդանացուցիչ և զամենազօր հոգիդ քո սուրբ։

Այսպէս և յունական և հռոմէական սուրբ Եկեղեցիք, առեալ յԱՀետարանական ճշմարտութենէ խոստովանին ընդ մեզ. թէ հոգին սուրբ՝ է բղխումն հօր անքննաբար, առօղ յորդւոյ անճառաբար. և է հոգի զօրութիւն և իմաստութիւն. այսինքն հօր և որդւոյ։ նմանապէս և ամ ազգք Քրիստոնէից համաձայն խոստովանին։

Արդ՝ յիշեալ սրբազան հայրապետք հռօմայ. 'ի սահմանելն զկատարեալ առնչութիւն երից անձանց. սահմանեցին նաև ընդդէմ ոչ 'ի որդւոյ ասօղաց. թէ հոգին սուրբ գոլով առնչկան սէր հօր և որդւոյ. բղխի սկզբնաբար և անմիջապէս 'ի հօրէ՝ իբրև 'ի սկզբնական պատճառէ։ Եւ որդի գոլով համագոյ և հաճասար էակից, և անբա ժանելապէս մի ընդ հօր. վայ և հոգին սուրբ ընդ միջապէս բղխի և յորդւոյ։ այսինքն առնու և յորդւոյ։ Եւ սոյն առնու բառին փոխանակ, եդին ըզբառն բղխի։ զոր և յաճելեալ մուծին զբառս այս բղխի և 'ի որդւոյ. 'ի հանգանակն ընդ հանուր հաճատամքին։

Որոյ սակս՝ և Փօցիոս Յունաց Պատրիարքն Կոստանդնուպօլսոյ. 'ի 878 ամի Տն ժողով արարեալ 'ի կոստանդնուպոլիս. ուր էին ներկայ և տե-

ղակալ այսինքն փոխանորդ Եպկսք Յօհաննու ութերորդ սրբազան Պապին, առաքեցեալք 'ի հռօմայ. որոց հաճանութ՟ և ստորագրութ՟. սոյն 'ի որդւոյ բղխի բառն աճելորդ և նորամուտ համարելով 'ի հաճատամքն, ո՛չ ընդունեցին։ Քանզի թարց մեկնական բանից. իբր երկու սկիզբն տալ իմանի սրբոյ հոգւոյն՝ ո՛չ բարւոք վերահասու եղելոց՝ իսկական մտաց հռօմէականի սրբոյ Եկեղեցւոյն։ վ՟ս և իրաճունս համարեալ Յոյնք, բաժանեցան 'ի միաբանութ՟ հռօմէացւոց։ նմանապէս և միւս ազգք Քրիստոնէից և՛ աճելորդ և նորամուտ բառ վարկելով. ո՛չ ընկալան. թէև ամենեքին առօղ յորդւոյ խոստովանին։

Եւ յետ ժամանակաց 'ի 1439. ամի Տ՟ն. հայրապետք հռօմայ կրկին ընդհանուր ժողով արարեալ 'ի ֆիօրէնցայ քաղաքի. կամեցան զի և Յոյնք ընկալնուցուն զնորամուտ բառն բղխի և յորդւոյ. բայց ո՛չ յաջողեցաւ. և մնացին այսպէս 'ի տարաձայնութ՟։

Հ. Գտանի՞ սոյն բղխի բառս 'ի հօրէ. կամ 'ի հօրէ և յորդւոյ. յայտնապէս գրեցեալ 'ի գիրս. մանաճանդ թէ 'ի նո՞ր կտակարանի։

Պ. 'Ի համայն սուրբ գրեանս Աճային հնոյ կտակարանի. լի է որ ասի հոգի Ա՟յ. և հոգի Տ՟ն։ Իսկ 'ի սուրբ Աճետարանոջ բացայայտ ասէ Քս՟ թէ՝ հոգին ճշմարտութ՟ որ 'ի հօրէ ելանէ։ Եւ յայլ տեղիս 'ի բոլոր նոր կտակարանի բազմիցս քարոզի վասն հոգւոյն սրբոյ՝ թէ է հոգի հօր. և հոգի որդւոյ։ սէր հօր. և սէր որդւոյ։ նաև թէ առաքի շնորհի, փչի, և բաշխի կատարելապէս հոգին սբ՟ և յորդւոյ. որպէս և ասի վասն հօր։ Իսկ բղխի

քառա՝ ոչ վասն հօր. և ոչ վասն որդւոյ գրի ու-
նէք յայտնապէս . քայց միայն ՚ի միում տեղւոջ
՚ի սուրբ Աւետարանին Ցոհաննու Առաքեր բա-
նիւք, գրի այսպէս. վասն հաճատացելոց՝ Կայր Ցե
՚ի տաճարին, աղաղակէր և ասէր, եթէ ոք ծարա-
ւի է՝ եկեսցէ առ իս և արբցէ։ որ հաճատայ յիս
որպէս ասէն գիրք. (Առա. 18. 4։) Գետք յորո-
վայնէ նորա բղխեսցեն ջրոյ կենդանութեան։ Զայս
ասէր Ցե վասն հոգւոյն զոր ընդունելոց էին. զի
չէ էր (տուեալ) հոգի. քանզի Ցե չէ էր փառա-
ւորեալ։ գլ. 7. 37. ՚ի 39։ այսինքն խաչեալ՝ մա-
ռեալ . և յարուցեալ ։ որ և յետ Ցարութեան
իչեաց յԱռաքեալսն և ասէ. Առէք հոգի սուրբ։
գլ. 20. 22։ որ նախքան զՑարութիւն իւր այսպէս
չէր տուեալ ումեք ։

Ե. Այդոքիկ զոր ասացեր՝ եթէ վասն դաւանութեան
երից անձնաւորութեան ամենասուրբ Երրորդութեան.
և թէ վասն ներմարմնուեան և մնօքինութեան բանին
Այ Ցին Քին ։ և եթէ վասն բղխման հոգւոյն
սրբոյ , յայտնի երևի որ ՚ի բանի դաւանութեան
քնաւ տարաձայնութիւն ինչ՝ ոչ գոյ ՚ի մէջ ընդհան-
րական եկեղեցւոյն Քին , քայց եթէ խրտնութիւն
՚ի քանի մի զանազանեալ բառից՝ գոլով նոցին ՚ի
մի և ՚ի նոյն դիտաւորութիւն բանից։ Ապա զնաւրդ
է սոյն ներհակութիւն իրերաց. որպէս և տեսանեմք
որ հայք և Ասորիք խրտնին յերկու բառէն խոս-
տովանելով զերկու բնութիւնսն Քին ։ Ու Ցոյնք
և հռոմայեցիք խոստովանելով զանբաժանելի մի-
աւորութիւն. խրտնին ՚ի մի բառէն զոր ինքեանք սահ
մանեցին ՚ի ժողովն եփեսոսի ։ Նմանապէս Ցոյնք
և հայք և միւս ամ աղգք Քրիստոնէից խրտնին

և 'ի որդւոյ բղխի բառէն վասն հոգւոյն սրբոյ, խոստովանելով զառումն հոգւոյն 'ի որդւոյ: որք և զզանազանութիւն բառիցս այսոցիկ՝ աւելորդ և նորամուտ պատճառելով՝ տարաձայնեալ. ո՛չ թէ միայն մեղադրեն զմիմեանս, այլ և ատեն և թշնամանեն զիրեարս. փոխանակ. ըստ պատուիրի Տն, սիրելոյ և 'ի միաբանութիւն կալոյ:

Պ. Յիրաւի և ինձ թուի, որ 'ի բանի հաւատոյ՝ և դաւանութիւն՝ ո՛չինչ անհամաձայնութիւն գտանի 'ի դիտաւորութիւնս՝ բաց 'ի զանազանութիւն նորամուտ բառից: Սակայն թէև գոլով ես համբակ ոչինչ գիտեմ. գուցէ որ նոքա ևս՝ ո՛չ բարւոք վերծանեն զմիտս և զասուիս իրերաց. և կամ թէ վասն այլ և այլ պատճառանաց՝ վիճելով ընդ միմեանց՝ զծէսս՝ և զբառս, և զարարողութիւնս աւանդութիւնց միայն առիթ բերեալ՝ ո՛չ կամին միաբանիլ:

Հ. Ունիմն ուրեմն և զայլ արտաքին վէճս ընդ միմեանց՝ որք արգելուն 'ի միաբանիլոյ:

Պ. Այնպէս երևի, որ ունին և զայլ անվաւէր պահանջողական վէճս, որոց ո՛չ գոլով 'ի վերայ բանի դաւանութիւն ուղղափառ հաւատոյ. վիճեն երևելապէս 'ի վերայ նորամուտ բառից, ծիսից՝ և արարողութիւնց իւրաքանչիւր ազգաց հետ զհետէ ընկալեցելոց 'ի նախնի սրբոց հարց իւրեանց 'ի ժամանակս ժամանակս, վասն բարւոք կարգաւորութիւն իւրաքանչիւր ազգաց ըստ դրութիւն նոցին: որոյ վասն բարւոք համարեցայ զանց առնուլն՝ քան թէ գրելով աստէն աշխատ առնել զընթերցօղս. ըստորում երանելի սուրբն Ներսէս շնորհալի բաւական բացայայտութիւն գրէ 'ի ընդհանրական գրքոջ իւրում առ սուրբ ժողովն Յունաց. կամ

առ յոմանս եկեղեցականս հայոց. և ցուցանէ թէ՝ եթէ այսպէս և եթէ այնպէս ամենեքին ընդունելիք են Այ. եթէ ուղիղ և սուրբ դիտաւորութ. և սերտ հաւատով մտածեալ լիցին. վոյ և անդէպ է քրիստոնէից վիճել ընդ իրեարս վասն այսպիսեաց և՝ն։ որ արդարև զարմանք մեծ է. որք զկարի հարկաւորեալ պատուերն Այ՝ զսէրն և զմիաբանութիւն 'ի բաց թողեալ, ոչ հաւանելով ծիսից միմեանց՝ վիճեն և ոգորին ընդ իրերաց. պահանջելով իւրաքանչիւրն թողուլ զսովորական ծէսս և զարարողութիւս իւրեանց՝ զորս ունին յաւանդութէ նախնեաց սրբոց. և ընկալնուլ զմիոյնն. կամ զմիւսոյնն. որ իբր թէ նոքին այլ առաւել փրկաւէտք իցեն քան զմիւսս։ վոյ զանց արարեալ յայսպիսեաց՝ և հետևելով բանից սրբազանին Պօղօսի. թէ 'ի գործոց օրինաց. այսինքն. ծիսից ոչոք արդարանայ առաջի Այ. այլ արդարն ասէ 'ի հաւատոց կեցցէ։ Հռօմ. 3. 20. և Գաղա. 3. 11։ Բաւական համարեցայ զհամառօտ գրեցեալսն 'ի սմին արտահանմամբ 'ի Հին և 'ի Նոր Կտակարանաց ընծայ մատուցանել ազգի իմոյ վասն կրթութեան նորաբողբոջ ուսումնասէր մանկանց մերազնէից. որք եթէ այսու սակաւուք ոչ բաւեսցին, բազմին ևս ոչ ունելոց են բաւականութիւն։

Հ. Ա երջապէս հարցից և զայս՝ որ ասացեր թէ համառօտ և սակաւ գրեցաք. բայց տեսանեմք զբազումս այսպիսի հարց ու պատասխանական գրութեաց 'ի վերայ Քրիստոնէականի ուսմանց. որք յոյժ համառօտք են 'ի սմանէ, և անաշխատ առ ուսումն մանկանց. սա՛ վասն էր այսպէս երկար

բանիւք պատասխանեցաւ. որ դժուարութիւն լինի մանկանց. և ձանձրութիւն պատճառէ առանց հետազոտութիւն ընթերցողաց:

Պ. Այո, ունիս իրաւունս. որ ՚ի քաղում հարցմունս կարի երկար պատասխանեցաւ. և իբր թէ մեկնութիւն լինչ ևս արարի ըստ վարկելոյ տկար մտաց իմոց. բայց ոչ ՚ի դերևս յանձն առի զաշխատանս. և ոչ ևս կամեցայ իբր թէ գրոց լինչ աշակերտ երևիլ: քանզի դիտաւորութիւն իմ. ոչ թէ վասն դիտնոյ. այլ ՚ի նպաստ լինչ լինել նորահիւթ մանկանց և անուսից մերոց էր: Լաւ ոչ ևս վէ քննդիր հետազօտաց. և կամ վասն անփոյթ եղելոց ՚ի գիտութիւնս մասանց հաճատոյ իւրեանց, առարի: ուստի և դատեցի. զի մի իբրև անծեղի, կամ թաւթակի դիւրաւ ՚ի միտ առեալ անուսք զպատասխանիս հարցմանց վասն համառօտութեան. և ՚ի զօրութիւն խորհրդոց և իմացողաճոյ բանից՝ անտեղեակ ծնալով. յարատևեսցեն ՚ի տգիտութիւս:

Այլ և ՚ի տեղիս տեղիս երկար գրեցաւ. մանաւանդ թէ ՚ի բանս Հնոյ Կտակարանաց. որք են ստուերք նորոյս Հաստատութեան. զի ՚ի նոսին եղեալ խորհուրդք յայտնի երևեսցին ուսումնատենչից. և այնու հմտասցին թէ հայ կառավարեր Աստ զամբոխն իւր՝ յորմէ շառաւիղելոց էր Մեսիան փրկիչ Ծին: և որպիսի նախատես պատրաստութիւք զեկուցանէր նոցա՝ զամ տնօրէնութիւս նորին, բազմապատիկ օրինակօք. և կրթէր զնոսա սպասել ընկալնուլ Մեսիայիւ զերկնային և հոգևոր փառս և յաւիտենականի կենաց երջանկութիւս, և ոչ աստ ունայն և սին անցաւոր փառս և թագաւորութիւս: Լաւ և թէ որպէս կանուխ կամ անա-

գան կատարէին քանք Մարգարէից ՚ի տահ՛ւանեալ ժամանակի իւրեանց։ (որոց վասն, քան ՚ի սմին գրեցելոց՝ առաւել ընդարձակագոյնս ունիմ գրեալ ՚ի կտակագիր անուանեալ գրքոյ Յերկոսին Հատորի, որ ՚ի 1794 ամի Տ՚ն աշխատասիրեցաւ ՚ի Նէն։)

Ուրեմն այնոքիկ որք ունէին ջերմեռանդ սէրս առ հոգևորական բանս, և գիտեն զպարտաւորութիւնս իւրեանց՝ որք հարկադրեալք են ՚ի գիտել զՀարկաւոր գիտելիս Քրիստոնէական հաւատոյ. յուսամ որք ոչ տաղտկացեալք յերկարութիւնէ քանիցս. սակաւ մի ևս վասն օգտի հոգւոյ իւրեանց՝ յանձն առնուցուն գոյն ինչ աշխատանս ընթեռնուլոյ, և ուսանելոյ. ոչ և կրեն զազգումս ճգունս՝ դնեգերելով հանապազ վասն օգտի մարմնոյ. և վասն արդեանց նանիր և խաբէիլ անցաւոր երազահանգոյն Ծի. և ՚ի նման պարտաւոր հոգւոյ իւրեանց առաջի Աստ և ՚ի հանդերձեալն, վասն զանցառութեանէ հոգևորին, և անանց յաւիտենին։ Արդ աղաչեմ ընթերցօղաց՝ մի եպերել զաշխատանս իմ, վասն համբակութեանէ գրչիս՝ և յանձախութեանէ բանիցս՝ այլ եթէ մտադիր ընթերցմամբ օգուտ ինչ արտահանիցեն ՚ի սմանէ, յիշեսցեն զիս և զծնօղս իմ ՚ի մաքրափայլ յաղթիս իւրեանց։

Եւ Քո՛յ յուսոյն մերոյ փառք յաւիտեանս Ամէն։

Վ՞երջ։



Մատիր ո՞վ մարդ իմաստնապէս, զմիտս գրոց՝ քննեա՛
և տես.
մի՝ զբաղիր նկարագրօք, զխորհրդականս փութա՛
'ի տես:
Արտաքին դէմս մի՛ նկատեր, այլ մո՛ւտ 'ի ներս հոգ-
ւոյն հրաճէր.
զիա՞րդ դրոշմի 'ի դէմս նորին, զերրորդութեանն
զպատկեր տես:
Բաբունօրէն գրեալ գտցես, զես ասացին՝ թէ Աճ
իցես,
թէ երկբայիս մո՛ւտ ընթերցիր, 'ի վարժարան
շնորհաց և տես:
Գործք արարչին՝ յերկրի յերկինս, սքանչելեօք որք
երև ինս,
մեզ անդադար աղաղակեն, զնշանս զարոճեստս
նորին ճկ տես:
Ամենեքին գիրք են հրաշից. սոյն ընդհանուր գոյակք
էից.
որոյ զցանկ եթէ կամիս, զտեսակ մարդոյն նկա-
տեա՛ տես:
Բենականին անսա՛ բանի, որ առ վիմին Սրբազանի,
թո՛ղ զխորհիլն որ ըզմարդոյն, բաց զաչս հոգ-
ւոյդ զԱյսն տես:

Յարմար համարեցայ 'գրել աստէն զբան ումեմն բանաստեղծի որ ասէ թէ.

Գաստի եարէ քիմի յա՛ր յա՛ր տէմիշ. քիմիսի էլիֆ.
Ճիւմլէնին մագսուտի պիր էմմա ըիվայեթ միւխթէլիֆ։

Թարգմանութիւն.

Հասակի սիրելւոյն ոմն բարտի. կամ հագնի ասացեալ է. և ոմն նոճի. (որ է տառն էլիֆ.) համայնից դիտումն է զբարձրուղէշ գոլն նորին յայտնել. բայց բառքն, կամ ասութիւնքն են զանազանեալք։

Ոպ թէ՝ ոմանք մի. և ոմանք երկու ասեն բնուեցն ՔԵ. բայց համայնքն անխառն և անշփոթ անբաժանելապէս միաւորեալ դաւանին։ նմանապէս. ոմն բղխի և յորդւոյ. և ոմանք առնու յորդւոյ ասեն վս հոգւոյն սրբոյ. սակայն անսկիզբն հայր՝ է սկիզբ և պատճառ որդւոյ և հոգւոյ խոստովանին ամենեքին։

Գիտնականին ձայն մժեխի՝ սաստիկ հնչիւն, իսկ անգիտին՝ շեփոր թմբուկ, նուազ հնչիւն։

Համառօտ բանք արտահանեալք 'ի հոգեշահ գրեանց.

Հ. Ո՞վ է մարդ բանական և իմաստուն. և ո՞վ է տգէտ անբան 'ի կերպարանի Մարդոյ։

Պ. Նա է մարդ բանական և իմաստուն. որ ճանաչէ զԱԾ՝ և զինքն. և գիտէ զայնս գիտելիս, զորս պարտ է մարդոյն գիտել. առ 'ի խոկալ նոքօք զԱԾայինսն՝ վասն ստանալոյ զկեանս յաւիտենականս։ Եւ նա է անբան անասուն 'ի կերպարանի մարդոյ. որ ո՛չ ճանաչելով զԱԾ և զինքն, ո՛չ գիտէ նաև զգիտելիս հաւատոյ՝ և փրկութեան իւրոյ՝ և յանդգնեալ մարդ համարէ զինքն։

Հ. Ո՞վ է Արի և ազատ 'ի մէջ մարդկանց. և ո՞վ տկար և գերի։

Պ. Նա է արի և ազատ. որ յաղթէ իւրոյ ախտից, և ո՛չ ծառայէ մոլութեան։ Եւ նա է տկար և գերի. որ ո՛չ խոկալով թէ առ ինչ վախճան ստեղ ծեալ է. իբրև անասուն զքաղի զգալեօք. և ծառայէ ախտից։

Հ. Ո՞վ է երջանիկ և փարթամ 'ի մէջ մարդկանց, և ո՞է թշոմառ, և ողորմելի աղքատ։

Պ. Նա է երջանիկ և հարուստ. որ ունելով զկերակուր և զհանդերձ շատանայ նոքօք (ըստ բանի Առաքելոյն.) կամ ստանայ արդար վաստակօք՝ թարց նենգութեան խաբելոյ և կողոպտելոյ զայլս. և ապրի ըստ կարելութեան անկարօտ յումեքէ։ ըստ բանի սաղմոսին. թէ զվաստակս ձեռաց քոց կերիցես, երանի է քեզ և բարի եղիցի։

Եւ նա է թշոմառ ողորմելի և աղքատ. որ ստացեալ է մեծ ժառանգութիւն. և ունելով բազում կայիս և եկամուտս. ո՛չ շատանայ նոքօք. այլ հոգայ և վարանի միշտ առաւել ևս աւելուլ. ս՛չինչ բաժին հանելով Ա.Յ. այսինքն կարօտելոց և անդամոցն Քս̄ի. այլ միայն 'ի փառասիրութիւն և 'ի վայելչութիւն իւր, և յաջորդաց իւրոց թողուլ մտածէ. վասն սին փառաց Ծի համբաւոյ։ Արդարև ողորմելի է այնպիսին ըստ բանի փրկչին, Զի՞նչ օգուտ է մարդոյ եթէ զԾս ամենայն շահեսցի, և զանձն իւր տուժեսցէ, կամ կորուսցէ զնա։ վասն Ծի։

Արդ՝

Զէ փոյթ այժմոյս եթէ յարգանք սմա յուստեք ոչ
լինիցի.
Քանզի բանք այս հոգւոյ ունկամբ մտադրիցին օր
լինիցի.

Ցանկ գրքոյս

Ցանկ Պրակաց առաջնոյ մասին, որ վը բանից հնոց կտակարանին։

Գիրք Ա. Դար. 1։

Պրակ. Էրէս.

Ա. Ցաղագս Լինելուէ ընդհանուր Ճի. և ամ գոյից, մի միայն կամեցողուէ և բանիւն Աւ։ 1։

Բ. Ցաղագս ստեղծման երևելի գոյից։ Լուս և վը անբան կենդանեաց. և մարդոյ։ - 3։

Գ. Ցաղագս յատուկ Ճառի ստեղծման մարդոյ։ և թէ որճվ եղև պատկեր Աւ։ - - - 6։

Դ. Ցաղագս պատուիրանազանցուէթե մարդոյ՝ և արտաքսեցմանն 'ի դրախտէն, և վճռոյ մահու։ 7։

Ե. Ցաղագս սերնդոց Ադամայ, և բազմանալոյ ազգի մարկան, և վասն չարանալոյ նոցա։ 10։

Զ. Ցաղագս ջրհեղեղին, և փրկուէ նոյայ իւրոյ նովը. և ամ տեսակաց անբանից։ - - 13։

Գիրք Բ. Դար. 2։

Ա. Ցաղագս նորոգուէ Ճի. և վերստին բազմանալոյ մարդկանէ. և օրհնուէթե ամ կենդանեայ. և ուխտի հաշտուէթե Աւ։ - - 15։

Բ. Ցաղագս տնկելոյ նոյայ զայգի. և օրհնելոյ զսէմ և զՑաբէթ, և անիծելոյ զքանան. Լուս և վասն մահու նոյայ։ - - - 17։

Գ. Ցաղագս սերնդոց որդւոյ նոյի. և վը աշտարակաշինուէթե. և բաժանման լեզուաց, ազգաց՝ և երկրից. - - - - - 19։

Պրակ. Երեսն:
Դ. Յաղագս անկանելոյ մարդկան 'ի կռապաշտութիւն: - - - - - - - - 20:

Գիրք. Գ. Դար. 3:

Ա. Յաղագս կոչման Աբրահամու հօրն հաւատոյ: 24:
Բ: Յաղագս պատերազմելոյ Աբրահամու, և ազատութեան ղօտայ. և օրհնելոյ Մելքիսեդեկայ զԱբրահամ: - - - - - - - - 26:
Գ. Յաղագս ծննդեան իսմայէլայ. և ուխտի թըլփատուեան. և խոստմանն ԱՄ զիսահակ 'ի սարայէ: - - - - - - - - - 29:
Դ. Յաղագս Հիւրընկալուեան Աբրահամու զԱԾ. և կրկին խոստումն իսահակայ. և վասն կործանման սոդոմէացւոց: Եւ սերնդոց ղօտայ: 31:
Ե. Յաղագս ծննդեան իսահակայ՝ և մատչիլոյ 'ի զոհ ԱՄ, և օրհնիլոյն 'ի նմանէ. և վ̅ս̅ մահու սարրայի. և Ամուսնուեան իսահակայ: Եւս և վ̅ս̅ քետուրայ հարձին Աբրահամու. և վասն մահու սրբոյ նահապետին: - - - 35:
Զ. Յաղագս ծննդեան Եսաւայ և Յակոբայ. և գնելոյ յակոբայ զանդրանկուեան եղբօրն, և օրհնիլոյն 'ի հօրէ իւրմէ: - - - - - 40:
Է. Յաղագս փախստեան յակոբայ առ լաբան. և ամուսնուեան ն̅ր̅ անդ. և ծննդեան երկոտասան ցեղապետից. և դարձի ն̅ր̅ առ իսահակ հայր իւր: Եւ վասն մահու իսահակայ: - - 47:
Ը. Յաղագս վաճառման Յովսեփայ յեգիպտոս և լինելոյ ն̅ր̅ անդ երկրորդ փարաւօնի: Եւ իջանելոյ Յակոբայ ընտանեօք յեգիպտոս: Եւս և վ̅ս̅ մահու Յակոբայ. և Յովսեփայ: 56:
Թ. Յաղագս տառապանաց իէլացւոց յեգիպտոս:

Պրակ. Երեսս.
Եւ վն ծննդեան Մօսէսի, և որդեգրութեան նորա դստերն փարաւօնի։ Եւ վն փախչելոյ նորա յերկիրն մադիանու։ - - - 65։
Ժ. Յաղագս երևելոյ ԱՅ Մօսէսի 'ի մորենւոջն. և կարգելոյ զնա 'ի հանել զիէլացիս 'ի ծառայութէ եգիպտացւոց։ և վն 10. պատժոց նոցա։ - - - - - - - - 69։

Գիրք. Դ. Դար. 4։

Ա. Յաղագս ելից յեգիպտոսէ իէլացւոց. և անցանելոյ ընդ ծով կարմիր. և հեղձանիլոյն փարաւօնի։ - - - - - - - 75։
Բ. Յաղագս քառասնամեայ կառավարելոյ ԱՅ զիէլացիս յանապատի անդ. Եւ վասն տասն պատգամացն՝ և օրինադրութեան։ Եւս և վասն տապանակի ուխտին. և խորանին վկայութեան. և այլն։ - - - - - - - - 77։
Գ. Յաղագս քառասնամեայ տևելոյ նոցա յանապատի անդ. և տապաստ անկանելոյ նոցա ամենեցուն, որք ելին յեգիպտոսէ։ - - 81։
Դ. Յաղագս մահու Ահարօնի, և յաջորդելոյ որդւոյ նր եղիազարու. Եւ վն մահու Մօսէսի։ 89։
Ե. Յաղագս Յեսուայ. և մտից իէլացւոց յերկիրն Աւետեաց։ և վն մահու Յեսուայ։ 95։
Զ. Յաղագս Դատաւորաց իէլի։ - - - 97։
Է. Յաղագս թագաւորութեան սաւուղայ. և ընտրելոյ ԱՅ զդաւիթ 'ի թագաւոր։ - - - 100։

Գիրք. Ե. Դար. 5։

Ա. Յաղագս թագաւորութեան սօղօմոնի. և շինութեան տաճարին, որ կոչեցաւ սօղօմոնեան։ - 107։

Պրակ. Երեսն.
Բ. Յաղագս յերկուս բաժանման թագաւորութեան ի՞էլի: - - - - - - - - - 112:
Գ. Յաղագս թագաւորաց ի՞էլի, և յանցանաց նսցա: - - - - - - - - - 113:
Դ. Յաղագս հետևեալ այլ և այլ թագաւորաց տասանց ցեղիցն. և մարգարէից՝ որք երևեցան ՚ի նոսին: - - - - - - 117:
Ե. Յաղագս վերանալոյ Եղիայի, և յաջորդելոյ Եղիսէի: Եւս և վ՞ս սքանչելեաց Եղիսէի. և կործանման տանն Աքաաբու: - - 128:
Զ. Յաղագս բարձման թագաւորութեան տասն ցեղիցն ի՞էլի: Եւ վասն մարգարէից՝ որք երևեցան ՚ի նոսին: - - - - - - 134:
Է. Յաղագս թագաւորացն Յուդայ. և վ՞ս բարեպաշտ եզեկիա արքայի: և մարգարէից: 136:
Ը. Յաղագս բարձման թագաւորութեան յուդայ. և գերութեան ն՞ց ՚ի բաբիլօն: Եւս և վասն մարգարէից: - - - - - - - 139:

Գիրք. Զ. Դար. 6:

Ա. Յաղագս դարձի յուդայեանց ՚ի գերութ՞. և շինութեան երկրորդի տաճարին: նա և վասն վերջնոց մարգարէից: - - - - - - 145:
Բ. Յաղագս երջանիկ խաղաղութեան յուդայեանց, և զօրանալոյ ն՞ց: Եւ վ՞ս թարգմանութեան Աճաշունչ գրոց ՚ի հելլէն լեզու: - - - 147:
Գ. Յաղագս վրդովման խաղաղութեան ն՞ց՝ և քաջութեան մակաբայեցւոց: Եւս և վասն թագաւորութեան շմաւօնեանց. և բարձման նորին: - - 150:
Դ. Յաղագս քսան և չորից սրբոց մարգարէից: 153:

Պրակ. Երեսս

Ե. Յաղագս երևելի դարուց Ծի. և վ՛ն վերջին կործանման Եէմայ՝ տաճարին. և բոլոր ազգին: - - - - - - - - - 157:

Յաղագս 'ի ճշմարիտ աւանդուն՝ գրելոյ սրբազանին Մօսէսի զճառն ծննդոց. և զպատմութի՝ նախահարց: - - - - - - 161:

Մասն Երկրորդ.

Յաղագս գալստեան և տնօրէնուն՝ Տ՚ն մերոյ և փրկչին Յ՚ի Քս՚ի: և թէ վասն է՞ր առաքեցաւ: - - - - - - - - 167:

Ա. Յաղագս թէ ո՞յք են քրիստոնեայք. և թէ զի՞նչ նշանակէ քրիստոնեայ ասելն: Եւս թէ զի՞նչ է հաւատն Քրիստոնէի: - - 172:

Բ. Յաղագս Աւետման հրեշտակապետին, և մարմնառութե՝ բանին Այ: - - - 175:

Գ. Յաղագս յղացման և ծննդեան սրբոյն Յօհաննու մկրտչի: - - - - - - 176:

Դ. Յաղագս ծննդեան Տ՚ն մերոյ, և փրկչին Յ՚ի Քս՚ի: - - - - - - - - - 178:

Ե. Յաղագս մկրտութեան Յ՚ի, և յայտնութե՝ սրբոյ Երրորդութեան: - - - - 183:

Զ. Յաղագս երից փորձութեանց սատանայի և յաղթութե՝ Քս՚ի: - - - - - - 190:

Է. Յաղագս ընտրութեան առաքելոց. և հրաշից և քարոզութեան Յ՚ի. և վասն անհաւատութեան հրէից: - - - - - - 191:

Ը. Յաղագս մատնուն՝ և չարչարանաց Քս՚ի: 196:

Թ. Յաղագս խաչելութե՝ Տ՚ն. և եօթն բանից՝ զոր խօսեցաւ 'ի խաչին: - - - - 202:

Պրակ. Երեսն:
Ժ. Յաղագս մահու և թաղման Քն̄ի: 211:
ԺԱ. Յաղագս Յարուն̄ և համբարձման Քն̄ի: 214:
ԺԲ. Յաղագս վիճակեցման սրբոյն մատաթեայ յառաքելութի̄: Եւ վ̄ գալստեան հոգւոյն սրբոյ. և քարոզութե̄ առաքելոց: Եւս և վասն կոչման սրբոյն Պօղոսի յԱռաքելութի̄ Քն̄ի: - - - - - - - - - 220:

Համառօտ ծանուցմունք վասն կոչման հայոց 'ի հաւատս Քն̄ի: - - - - - - 230:

Մասն Երրորդ.

Յաղագս շնորհական օրինաց. և արդեանց նորին: Եւս և վ̄ սահմանի հաւատոյ ընդ-հանրական եկեղեցւոյն: - - - - - 242:
Ա. Յաղագս ստուերական օրինացն Մօսէսի, 'ի լոյս ճշմարտուն̄ փոխանակելոյն Քն̄ի: Եւս և վ̄ պարգևաց երջանկուն̄ յաւիտենականի կենաց: - - - - - - - - - - 245:
Բ. Յաղագս հաստատելոյ Քն̄ի զխորհրդաւոր ը̄ հանրական զեկեղեցի իւր 'ի վ̄ ը̄ վիմի դաւա-նութեան սրբոյն Պետրոսի: - - - - 251:
Գ. Յաղագս եօթն խորհրդոց ընդհանրական ե-կեղեցւոյն: - - - - - - - - - 255:
Դ. Յաղագս հայր մերին, և մեկնութե̄ նորա: 263:
Ե. Յաղագս հանգանակի ընդհանուր հաւատամ-քին: և թէ վ̄ է̄ր. և ե̄րբ սահմանեցաւ: 273:
Զ. Յաղագս մի կամ երկու ասութե̄ց բնուե̄ցն Քն̄ի: - - - - - - - - - 276:

Պրակ. Երեռ.

Լ. Յաղագս բղխման հոգւոյն սրբոյ։ Եւ վասն վերջաւորութեան գրքոյս։ - - - 283։

Այլև քանի մի համառօտ բանք պիտանիք։

Վ Ե Ր Ջ։





ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՍՌՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникиана
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ